Арм $\frac{1}{51}$
ХИМНИ

Арм $\frac{1}{51}$

2015148489

1

Варфоломей блаженный,
Петр Аррагонский
Назидательные и
душеполезные проповеди
. – Венеция, 1784

# ԽՐԱՏԱԿԱՆՔ

2756

# ԵՒ

# ՀՈԳԵՇԱՀՔ

# ՔԱՐՈԶՔ

Շարադրեալ յերկոցունց Ա̃ծաբա-
նից և յոգնահանճարից Վարդա-
պետաց ի կարգէ քարոզողաց,
այսինքն, երանեցելոյն Բար-
դուղիմէոսի, և Պետրո-
սի Արագոնացւոյ,

Տպեցեալ ծախիւք Ամենապայծառ
Շէհրիմանեանց, բարեպաշտ և
Ա̃ծասէր Պարոն Մուրատի որդի,
Պարոն Սահրատին, որ ի
հոգևոր շահաբերութի̃
մերոց Հայկազուն
Քրիստոնէից:

Յամի փրկչին. 1704. փետր. Ը.

Ի ՎԵՆԵՏԻԿ:

Մեծաւորաց Հրամանաւ:

Всесоюзная
БИБЛИОТЕКА
имени
В. И. ЛЕНИНА

63,937 45



# ԱՄԵՆԱՍՐԲՈՒՀԻ
## Մօր Այ միշտ Կուսի.
## ՄԱՐԻԱՄ.



Ամենայն խոնարհութեամբ և ամենայն սրտի ջերմեռանդութեամբ քեզ նուիրեմ ո՛վ երկնից երամնեաց Ամենամաքուր Մայր Աստուծոյ միշտ Կոյս ամենասրբուհի զայս Հոգեշնորհական և խրատական զաւետարանական բանս որդւոյ քո Մխածնի, զորս բացայայտեալս և պարզաբանեալս ունիմք յօգուտ անձանց մերոց ՚ի համատարմադաւանելեաց և յուսումնարագունեղեց ծառայից քոց ՚ի Սբ Թօմայէ Ագուլեցւոյ, ՚ի երանելեացն Բար-



[library stamp]

դուղձմկոսէ , և ՚յայլոց Սբց և Ք՟ջա-
քանից Մ վարդապետաց ։ Նու Թէպէտ է՛
սա՛ սակա՛ւ ամսամնեա՛ և նիւթական նո-
՛ւէր ամենամեծ արժանա՛ւորութե՟ քո՛,
սակայն քանզի սորին յոյժ հաճոյք են քեզ՝
և ընդունելիք , քանզի առողջարարք են
հոգւոց մարդկան, և ազդեցուցիչք, սգաս
տացուցիչք և զարդուչիք , որք նընջեան ՚ի
քուն մահու, մահու չափ մեղացն, սուուն-
գանելով զպատուիրանսն Ք՟յ, և զյա՛ւի-
տենական օրէնսն նորին ամենասուրբ ։
Արդ՝ ընկա՛լ զսա՛ վեհագունեղ տիրուհի,
և ամենաբարձր Թագուհի , և ընդ հո-
վանեաւ ամենամաքրութեանց քոց ամրա-
փակեա՛ , պահպանեա՛ Թևաքողելով
զքարեսէր ընթերցողս սորայ և զհոգե-
շահ և զառողջարար խօսս և զխրատս
սորայ զօրացո՝ և ներշնչեա՛ ՚ի ներքին
լսելիս հաւատացելոց , զի զմարմնական
և զՔ՟ջանական ազդմունսն ՚ի գործ ածե-
լով ամենայն սբց պատուիրանաց պահ-
պանողութե՟ք պտղատուք լիցին յա՛ւի-
տենական կենացն , և բարեխօսամբ միջ-
նորդութե՟ք քով ամենեքեանքս արժանա-
՛ւորք լիցուք լսել զձայնն երանական ՚յոր-
հնեալ ՚յամենահ Թագա՛ւորէն , Քէ
Յէ , զոր ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ և
զերջանկուհի զՄայրն Ք՟յ բարեբանես-
ցուք

ցուք հանդերձ ամենայն Սրբովք յաւի-
տեանս յաւիտենից, Ամէն։

Ամենասուրբ Աստուածութեան քո, և Ամենա-
մաքուր կուսութեան։

Նուաստագունեղ և Ջերմե-
ռանդագունեղ ծառայ Սա՟-
բաստ Ր Էհրիխմանեան։

# Առ բարեսէր ընթերցողս ։

Ի ժամանակս Գողթանտան Գէորգ իշխանին , որոյ էր եղբայր հարազատ Յովհաննէս Եպիսկոպոս Երնջեցի , այր իմաստուն քան զընտիր , և ամենայն առաքինութեամբ զարդարեալ , և վ̅ս ուղղափառ հաւատոյ հանգոյն հարցն Սրբոց ամենամեծ ջատագով ։ Համադիպելով սորայ ամենաքարի , և քաղցրուսոյց վարդապետին Բարթուղիմէոսի Եպիսկոպոսի , որ այժմս ասի երանեցեալ , և ընդ նմա զամենայն աշխատասէս յանձին կալեալ . և արիաբա՛ր ջա՛ն եդեալ զամենիմաստ Վարդապետս ժողովելով Հայոց և Լատինացւոց , մ̅ծ դարձուցանելո՛յ ՚ի հայկական բարբառ զՍ. Տաքմանական և զճշմարտաբան Մատեանս Լատինացւոց ։ Որոց վերակացու էր ՚ժրաջան և յոգնահանճար մեծ Վարդապետն Պետրոս Արագոնացին ։ Որք և քաջապէ՛ս և երջանկաբա՛ր ամենայնիւ՛ ճարտարութեամբ ըստուգապէ՛ս թարգմանեցին զայսոսիկ զհետևեցեալ գրեանս , այսինքն . Ալբերթ , Առա-

քինու-

քննութեց, Մոլութեանց, Մեցօրէից,
Քարոզ գիրք բազումք, և այլք բա-
զումք Ճարտասանականք և Փիլիսոփայա-
կանք, որք 'ի տեղիս տեղիս բազումս
մինչև ցարդ գտանին 'ի մէջ Հայոց,
և մանաւանդ 'ի գաւառն Նախիջևա-
նու 'ի Վանս Ամենայն Սրբոց ։ Իսկ
'յասացանէ գրեանցս զքարոզ գրքին միայն
զօրինակն առեալ Ամենապայծառ Տէ-
Հրիմանեանց, գերապայծառ Պարոն,
Պարոն Պասքալին, որ ունի 'ի Սպա-
հան զչորեսին մաստունսն նորին, և զայլ
չորսան աստ ընդ ինքեան 'ի վայելուչ
քաղաքիս Վենետիկ, որոց մի՛ մասն այս
է՛ որ տպեցաւ 'ի հոգևոր զուարճու-
թի և 'յօգտութի Հայկազունեաց ձա-
մարտասխրաց ։ Արդ՝ որք հանդիպիք
սմա, ընթեռնլով և կամ լսանելով
զշահաւէտ գիրս, և կամ 'ի սմանէ օգ-
տելով, յիշեսջիք 'ի մաքրափայլ 'յաղօթս
ձեր զամենաբարերար պատճառ 'ի լոյս
ածողսն սորին, և զայլ արդիւնաւոր
երախտաւորսն, և դուք արժանիք լի-
ջիք յիշմանն սմին՝ յորժամ գայցէ Ար-
քայութեն իւրով և փառօք, ընդ ամե-
նայն հրեշտակաց և Սրբոց, որ կեն-
դանի է՛ և թագաւորէ 'ի յաւիտեանս
յաւիտենից ։ Ամէն ։


I.N.R.I.
V.F.

# ԳՐԱՒՈՐ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ

## Առաջին չորեքշաբթի : Աղուհացիցն :



ՐԻ Ի ԽՈՍՏՈՎԱՆ-
նութեն ՛ի սկզբան եւ ՛ի գլուխ
պահոց քո՝ եւ հեղ
գանձուտ քո երկնա
գձուր ՛յերկինս՝ յաղ-
քոցն ·դ· Աստ՝ երանելին Ներսէսեա ,
նախահայրն մեր Ադամ մի կերակրոյ
ծառոյն գիտութե ; ուտելովն ՛ի նախա-
նձէ ընդդէմ հրամանացն այյ · դ · այդ պա-
կասութիւն եւ անկումն երբեր եղեն եւ
ծննդոց նորոց : Առաջինն անկումն՝ յամա-
մէ-

մեղութէն 'ի մեղս զի 'ի սկիզբն ստեղ-
ծմանն՝ մարդկայինն բնութիւնս ան մեղ
ստեղծաւ 'յա̄յ որպէս ասէ՛ 'յառաջագոյն,
արար Տ̄ր Ա̄Ծ զմարդն ուղիղ, այսինքն,
առանց ամենայն թիւրութե̄ և ծռու-
թե̄ և արատոյ. բ̄. անկումնէր 'ի մահ,
զի յառաջ քան զմեղանչելն ո՛չ էր պար-
տական մահու, զի ո՛չ այլ ինչ է՛ մահուն՝
եթէ ո՛չ պատիժ մեղաց, վ̄նզ ասէ՛ ա-
ռաքեալն թագաւորեաց մա՛հ 'յԱդամայ
մինչև 'ի Մովսէս, այսինքն, մեղքն 'յորմէ
յառաջ եկն մահն, վասնայնորիկ ասաց
Ա̄Ծ Ադամայ, 'յորում աւուր ուտի-
ցէք 'ի նմանէ մահու մեռանիջիք, այ-
սինքն, անկանիջիք 'ի մահ մեղաց և պա-
տաժոց. գ̄. անկումնէր 'ի շնորհացն, զի
զնախկինն իւր Ա̄Ծ լի՛ և կատարեալ ես-
տեղծ, որպէս զհրեշտակս լի՛ շնորհօք
ստեղծեաց, զարեգակն, և զլուսինն և
զաստեղս լի՛ լուսով և պայծառութ̄բ,
զթռչո՛ւնս երկնից զչորքոտանիս, և
զծառս լի՛ պտղով հասուն, այսպէս և
զմարդն առաջինն լի՛ և կատարեալ շնոր-
հօք, զորս կորոյս պատրանօ՛քն սատա-
նայի, վ̄նզ ասէ՛ ծննդոցն փչեաց 'յե-
րեսս նր̄ շունչ կենդանի. դ̄. անկումն էր 'ի
փառացն զի յայնժամ մերձէր ա՛ռ փառ-
քն քան այժմ, վ̄նզ ասէ՛ բնաբանն որ՛
'ի

'ի խոստովանութիւն ։ Անկումն այս օրի_
նակեցաւ 'յայլմն՝ որ գրի 'յաւետարանն
ղուկասու ասելով՝ այր մի՛ իջանէր
յերմէ 'յերիքով և անկաւ 'ի ձեռս աւա_
զակաց որք մերկացուցին զնա, և վէրս 'ի
վր եդին թողին կիսամահ և գնացին, Երմ
թարգմանի տեսութիւն խաղաղութեան և
նշանակէր զդրախտն 'յորում կայր միշտ
խաղաղութիւն հոգևոր և մարմնաւոր,
մարմնաւոր խաղաղութիւն կայր 'ի դրախտն
զի ո՛չ էր անդ փոփոխմունք օդոյ և որո_
տմունք ամպոց կամ կարկուտ ։ Իսկ
հոգևոր խաղաղութիւն կայր 'ի դրախտն,
զի անդ՝ մարմինն առաջին մարդոյն հնա_
զանդէր հոգոյն, և հոգին այ, և ամե_
նայն ստեղծուածք հնազանդքէին մար_
դոյն, որպէս ասէ՛ Ամս զամենայն ինչ
հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նր զխաշինս
և զարջառս և զամենայն ինչ ես և զե_
րէվայրի ։ Իսկ կարգս այս փոխեցաւ, զի
հոգին անհնազանդ գտաւ այ՝ մարմինն
անհնազանդ եղև հոգոյն, նա՛ և ամե_
նայն ստեղծուածք ո՛չ միայն անհնա_
զանդք եղեն մարդոյն, այլ և վնասեն
նմա, զի օձն խածանէ, կարիճք խայթեն,
գայլք պատառեն, լուք և ճանճք նեղա_
ցուցանեն, և այսոցիկ ամենեցունց պատ_
ճառն է՛ մեղքն և անհնազանդութին Ադա_
մայ ։

մայ ։ Նաև Լորիքօլ Թարգմանն լուսին և
նշանակէ զաշխարհս, զի որպէս լուսինն է՛
փոփոխական և ոչ մնա՛ 'ի նոյն կայումն,
այլ երբեմն նուազէ՛ և երբեմն հնանամ, այսպէս
և աշխարհս ժամանակ մի՛ ամառն և ձմե֊
ռն, գարունն և աշունն, հիւանդութի̃ն և ա֊
ռողջութի̃, հարստութի̃ և աղքատութի̃,
խաղաղութիւն և պատերազմ, 'յայս
ամենայն պակասութի̃ս անկար մարդ֊
կայինն ընութի̃ս, վասնզի ասէ՛ այր ։ Երր̃֊
որդ է՛ յարուցանող սորայ եթէ ոչ սա֊
մարացին, որ նշանակէր զՔ̃ս, որ արար
զողորմութի̃ անկելոյն 'ի ձեռս աւազա֊
կաց ։ ե̃ ։ է՛ յարուցումն որ ասէ՛ գթա֊
ցաւ 'ի նմա, գթութին Ք̃ի՛ նշանակէ ո֊
ղորմութ̃ք իջանելն 'յաշխարհս, զի ասէ՛
առաքեալն ոչ ըստ արդարութեան զոր
արարաք մեք, այլ ըստ իւրում ողոր֊
մութ̃են ապրեցոյց զմեզ, զի վասնզի էջ
'յերկնից, զի զմեզ յարուսցէ և բար֊
ձրացուսցէ ։ ը̃ ։ յարուցանելն է՛ պատել
զվէր նորա, որպէս ասէ՛ մատուցեալ
պատեաց զվէրսն, պատուանք վիրացնեն
բանք մխիթարականք և յուսադրութիք
զորս Ք̃ս աւանդէ 'յաւետարանն, ա֊
ռաջինն է՛ այն, որ ասէ՛ ցնծացէ՛ք և ու֊
րախ լերուք, զի անուանք ձեր գրեալ ք
են 'յերկինս, 'յերկինս գրեցն մեծ խն֊

ղու֊

դութի է՛, զի է՛ անջնջելի, զի անա_
պականէ՛ զհոգին և որ դրէ զնա, այսինքն,
հաստատութիւն այ · բ· պատճառք մխիթա_
րական է՛, որ տայ՛ եկայք օրհնեալք հօր
իմոյ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ
զարքայութիւն երկնից ։ եկայք տայ՛ ընդ_
դեմ այնմ՝ որ տայ՛ գնացէք յինէն ։ օրհնելք
տայ՛, ընդդեմ անիծանացն ։ հօր տայ՛,
ցուցանելով զանսկզբնական իշխանութիւն
ծնանելով զորդի և բխելով զոգին սբ ։
գ· յարուցումն է՛ որ տայ՛ եդ ՚ի վերայ
գրաստու իւրոյ, դրաստ է՛ խաչն քի՛
՚յոր քս բարձրանալովն և բևեռելովն
բարձրացոյց զմեզ · դ· յարուցանելով՛
ածելովն ՚ի բարձրագոյն վայրս, այսինքն,
՚յեկեղեցի որ է՛ շինեալ ՚ի վր բարձրա_
գոյն լերին, այսինքն, ՚ի վր վիմին Պե_
տրոսի որպէս ասաց քս դու ես վէմ և
՚ի վր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ ·
և վասն տայ՛ մարգարէն Եսայի՝ եղ ՚ի վր
լերինն բարձու աւետարանիչդ սիոնի, վասնզի
տայ՛ արի՛ ՚ի խոստովանութի ։ Երկրորդ_
բա՛ն ընդաբանիս է՛, որ տայ՛, ՚ի խոստովա_
նութի ։ ՚յորում · ե· իրս տեսանելի է՛ ·
նախ թէ ու՛մ պարտէ խոստովանիլ · բ·
զի՛նչ իրս խոստովանիլ · գ· թէ քանի՛ բանս
պարագայք մեղացն · դ· թէ զի՛նչ է՛ խոստո_
վանութիւն · ե· թէ զի՛նչ է՛ ձև խոստո_

տովա_

տոկանութեան, վասն առաջնոյն գիտելի է՛ թէ ոչ է՛ պարտ ամենայնի խոստովանիլ, այլ արժանէ խոստովանիլ ուղղափառ քահանայի ունելով զբանալիսն զայն որ ասէ՛ տաց քեզ զփականս արքայութեան երկնից և զոր կապեսցես ՛յերկրի եղիցի կապեալ ՛յերկինս, և զոր արձակեսցես ՛յերկրի եղիցի արձակեալ ՛յերկինս։ Որք՝ բանալիս այս կրկին է՛, այսինքն, բանալի իշխանութե, և բանալի գիտութե, բանալի իշխանութե է՛ զի քահանայն ոչ լինիցի բանադրեալ և կամ հերձուածող, զի յայնժամ զբանալիս զայս ունի կապեալ յինքեան, զի ժողովուրդն որ է՛ դուռն բարձած է ՛ի նմանէ և ոչ կարէ ՛ի գործ ածել զբանալիս զայս. Բ. բանալի է՛ գիտութեան, զի քահանայն պարտէ որ գիտուն լինի, զի կարասցէ ճանաչել ՛ի մէջ գոթութեան և ոչ գոթութեան, զի ասէ՛ Մաղաքեայ շրթունք քահանայից զգուշասցեն գիտութե, և օրէնք խնդրեսցեն, ՛ի նմանէ, զի հրեշտակ տն ամենակալի է՛ և Պետրոս ասէ՛ պատրաստ լինիջիք տալ պատասխանի ամենայնի որ խնդրէ զբանն որ է՛ ձեր հաւատոյ և յուսոյն ձերոյ, վս երկուցն գիտելի է՛ թէ հասարակաբար պարտէ խոստովանիլ զմեղս

մահու.

մահու չափս որքեն գլխաւորքն այսո_
քիկ . ա. հպարտութիւն . բ. նախանձն
գ. բարկութիւն . դ. ծուլութիւն , և
անբան տրտմութիւն . ե. ագահութիւն
զ. որկորամոլութիւն . է. պոռնկութիւն
կարգաւ զիւրաքանչիւրն ասասցէ , նա և
զմեղսն ներքինս որքեն դատարկաբանու_
թիւն, անյարմար ծիծաղելն շարժել զայլս
՚ի ծաղր , անհամեստութիւնն , անջերմե_
ռանդութիւն ՚յաղօթս և ՚ի բարի գործս.
խօսել զանօգուտս , ըստապօք ուտել ՚ի
սեղանն, զանց առնել զկարգեալ աղօթսն,
նա և զժամանակն և այլք սոցին նմանք ։
դարձեալ պարտէ զգուշանալ խոստովա_
նահայրն , և խոստովանողն , խոստովա_
նահայրն՝ զի մանրամասնաբար որոնես_
ցէ զհոգին և զմարմինն մեղաւորին և
ճանաչեսցէ զանցեալ մեղսն զներկայն և
զապառնին պատճառսն նոցին , և այ_
սու օրինակաւ արտաքս քարշէ ՚ի հո_
գոյ մեղաւորին զթիւնալից օձն , և ո՛չ
ուսուսցէ զմեղս զորս նա ո՛չ գիտէ , նա՛
և մի՛ քարշեսցէ ՚ի մեղս , և ո՛չ յայտ_
նեսցէ բանիւ և կամ նշանաւ զմեղս
ուրուք , զի ասէ՛ ՚յառակաց խելամտու_
թբ ծանիր զերեսս խաշանց քոց , խաշին_
քեն ժողովուրդք հա՛ւատացելոցն որք
յանձնեալքեն քահանայից որպէս հօտք ,

որ_

որպէս ասաց տրն̃ ցՊետրոս. սիրես զիս՝
արածեա՛ զոչխարսն իմ, իսկ երեսք ոչխա֊
րաց այսոցիկ են միտք նց̃, որ կարի՛ խոր է՛,
վասնայնորիկ ասէ՛ յառակն̃ Ջրհոր խորէ՛
սրտի առն, և այր իմաստուն քամես֊
ցէ զնա, այր իմաստուն է՛ քահանայն
զի պարտանա երկար քննութեն ՚ի հոգւոյ
մեղաւորին արտաքս քարշեսցէ զջուր
փորձութեցն և զհեշտախտութեցն, իսկ
խոստովանողն պարտի զգուշանալ, զի մի՛
ծածկեսցէ զմեղսն, զի ասէ՛ գիր՝ ասա՛
դու նախ զանօրէնութիս քո, զի արդա֊
րասցիս, և ՚յառակացն ասէ՛, արդարն
իսկզբանէ խոսիցն ամբաստանող է՛ ին֊
քեան, նա՛ և զգուշասցի՝ զի մի՛ պատա֊
ռոտեսցէ զմեղս, զմի՛ մասն ասասցէ
միոյ քահանայի, և զմիւս մասն այ֊
լոյ քահանայի, այլ զբոլորն ասասցէ միոյ
քահանայի, նա՛ և զմեղս իւրս ասասցէ
և ո՛չ զայլոց: Ս̃ը երկրորդին գիտելի է՛
զի պարագայք մեղացն բազումքեն առա֊
ջին ծանրացուցանող պարագայ է՛ անձն
գործողին զոր օրինակ եթէ ոք խոստո֊
վանեսցի զպոռնկական մեղս, արդ՝
պոռնկութիս այս ծանրագոյնէ՛ ՚ի պա֊
տուեալ անձինս քան ՚ի գռեհիկս, այ֊
սինքն, ՚ի քահանայսն և ՚յուխտաւորսն
քան ՚ի փողոցեցի մարդ մի՛, նա և ծան֊

րագոյն

րագոյն է՝ ՚ի գիտունսն քան ՚յանգէտսն։ որպէս ասէ՝ տ՟րն՝ որ գիտէ և ոչ գործէ արբցէ գան սաստիկ։ Դարձեալ ծանրագոյն է՝ ՚ի ծերսն քան ՚յերիտասարդսն, որքան ՚յարբունս մանկութ՟ե, զի ասէ՝ յառակաց, ատէ՝ Տ՟ր զծեր պոռնիկ և զստախօս հարուստն ։ ե՟· Ծանրացուցանող պարագայ է՝ տեղիքն, զի ծանրագոյն էր մեղք դիւացն որք ՚յերկինսն հպարտացան, որք ունէին զբազում պատճառս խոնարհութ՟ե, ևս և ծանր էր մեղքն Ադամայ զի էր ՚ի դրախտն՝ և էր սկիզբն մարդկային բնութեան, զի ամենեքեան ՚ի նմա մեղանչեցին ըստ առաքելոյն ։ նմա և ծանրագոյն էր մեղք խաչահանուացն և քահանայապետիցն, զի ՚յԵ՟րմ խաչեցին զտ՟րն Ք՟ս, որ էր տեղիք խաղաղութ՟ե ։ Դարձեալ ծանրագոյն է՝ մեղանչել ՚յեկեղեցին քան արտաքոյ եկեղեցոյ, զի եկեղեցին է՝ նուիրեալ և սրբեալ տաճար այ, զի ասէ՝ ՚յԴ՟· Թագ՟ւ՟ թեց զտունս զայս սրբեցի ինձ լինել անուան իմոյ անդ՝ յաւիտեան ։ և տ՟րն ասէ՝ տուն իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք արարէք զդա այր աւազակաց ։ զ՟· Ծանրացուցանող պարագայ է՝ ժամանակն, զի [illegible] ժողովոյն ամենայն իրաց ժամ է և ժամանակ ՚ի վ՟ր երկրի, այսինքն, պատուա-

պահել զսբ̄ ժամանակն՝ որպէս ասէ՛ ՚յԵ̄·
օրէնքն։ յիշեա՛ զի սրբեսցես զօր շբ̄թուն՝
որ զամենայն տօնս քրիստոնէից նշանա-
կէր, այսինքն, զտօնս տէրունականս
զծննդեանն, զյարութե̄ն, զպայծառակերպու-
թեանն, զԱ̄ծածնին։ և ս և զտօնս առաքե-
լականս, և զմարտիրոսականս, այսո̄ք հար-
կէ մե̄զ պահել ՚ի մեղաց և ՚ի գլխա-
ւոր քրէականաց։ Առ̄ չորրորդին գիտելի
է՛ զի սահման խոստովանութե̄ն է՛ այս՝
խոստովանութի է՛ որ յուսով թողութե̄ն
յայտնեսցին ծածկե̄լ բիծք սրտին։ խնդրի
թէ խոստովանութե̄ն քանիքեն մասունք։
Ասելի է՛ թէ ·գ̄·են մասունք խոստովանու-
թե̄ն, այսինքն, զղջումն, խոստովանութի,
և ապաշխարութի, զի մարդն ·գ̄· կերպիւ
մեղանչէ, այսինքն, խորհրդով, բանիւ և
գործով։ ընդդէմ խորհրդոյ մեղացն՝ է՛
զղջումն, ընդդէմ բանիւ մեղանչելոյն՝
խոստովանութին, ընդդէմ գործոյ մե-
ղացն՝ է՛ ապաշխարութին։ սոքայ են երեք
օրեա՛ ճանապարհքն, որո̄վ ասացին Ի̄էլ-
ացիքն ՚յելքն։ երթիցուք երից աւուրց ճա-
նապարհս առ Ա̄Ծ, և զոհեսցուք ա̄յ մե-
րոյ ՚յ անապատի անդ։ Արդ՝ առ̄ջին աւուր
ճանապարհ է՛ զղջումն ·բ̄· աւուր ճանա-
պարհ է՛ խոստովանութին ·գ̄· աւուր ճա-
նապ̄րհ է՛ ապաշխարութին։ ՚յ աւուրս այս

բա-

քարոզական զօրէն զՔ՚ն, զի ասէ՝ զու_
կասու: զօրէն զմանուկն Յ՚ն ՚ի մէջ տա_
ճարին յետ երից աւուրց, որ նշանակէ զե_
րիս քարոզութիւն զայս, այսինքն, զզղջումն
զխոստովանութիւն, և զապաշխարութիւն:
վասնզի ասէ՝ արի ՚ի խոստովանութիւն ՚ի սկիզբն
և ՚ի գլուխ պահոյ քո: Ղուաքեայն ասէ՝
եթէ քունն և արմատն սէ, այսպ՛ և ու_
տքն, որ նշանակէ զսկիզբն քառասնորդաց
պահոցս, զի ՚յըսկզբանն սորա հարկէ
սրբել զմեզ բազում ճգնութ̄բք և ա_
ղօթութ̄բ որպէս ասէ՝ մարգարէն: սրբե_
ցէք պահս քարոզեցէք պաղատանս, և
այս յայտէ ՚ի ՙՆինուէացոցն, զի ընդ քարո_
զելն Յովնանու, ասէր. Գ. աւուրք և ՙՆի_
նուէ կործանեսցի: յայնժամ ՚ի փոքուանց
մինչև ցմեծամեծս ըզգեցան զքուրձ և սր_
բեցին պահս և ցանեցին հող ՚ի գլուխս իւ_
րեանց և լուաւ նց̄ Տ՚Ր և անցոյց ՚ի նց̄նէ
զբարկութիւն կործանմանն, սոյն ասէ՝ սբ̄ն
Օգոստինոս մեծ է՝ զօրութիւն ապաշխա_
րութեան և անհուն է՝ զթութիւն ողորմու_
թեան այ̄՝ որ զհատանել վճիռ բարկութեան
այ̄ դարձոյց ՚յանտեսականութիւն: Նոյնս
յայտէ և ՚ի ՙԱքաաբ ՚ի Գ. Թգ̄ւրութեց, զի
յորժամ մեղաւ նա՛ ՚ի կնոջն ուրիայի քետա_
ցւոյ՝ եկն. առ նա՛ ՙՆաթան մարգարէ
առակաւ. Ճ. ոչխարացն և սաաց

 դու_

դուես յանցաւորն այն, և ասէ՛ Դա-
ւիթ մեղա՛ տն, և Նա՛թան ասէ՛ և
Տր անցոյց զքև զմեղս քո, այսպէս և
հարկէ և մեզ մեղաւորացս ՚ի սկիզբն պա-
հոցս սգենալ քուրձս ՚ի վե՛ր մարմնոյ մե-
րոյ, և զամենայն փափուկսն եթէ ՚ի կե-
րակուրս և եթէ ՚ի հանդերձս և եթէ
՚յայլ նիւթս, որք պատճառեն զմեղս ՚ի
բաց ընկենուլ ՚ի մեզանէ, և բուռն հար-
կանել զխոնարհութե որ է՛ զարդ և կա-
տարումն ամենայն առաքինութեց, զի ասէ՛
երանելին Գրիգորիոս։ ամենայն առաք-
նութի առանց խոնարհութե՝ է՛ երբև
զյարդ առանց ցորենոյ, որ ՚ի հողմոյ
հպարտութեն բարձրացեալ լինի՝ և
ցրուեալ ընդ ամենայն խորշս ՚յերկրի։ այս-
պէս և մարդ որ է՛ առանց խոնարհութե
՚ի սկիզբն պահոցս՝ ցրուեալ լինի ՚ի խորս
տանջանաց։ Պարծեալ այսու երևի մարդն
խոնարհն՝ որ ճանաչէ զինքն, և թէ ուստի է՛
և յի՞նչ դառնալոց է՛, և այսու օրինակաւ
հող դնեմք այսօր ՚ի գլուխս մեր՝ ասելով
քահանայնին զբանն՝ զոր ասաց ԱԾ Ա-
դամայ, հողէր և ՚ի հող դարձցիս։ և Ա-
բրահամ ասաց, այլ ես հողեմ և մոխիր և
սկսայ խօսել ընդ տն։ և Երեմիա ասէ,
դուստր ժողովրդեան իմոյ զգեցիր քուրձ,
և ցանեա մոխիր և շրջեա զքաղաքաւ։

մո-

մոխիրս այս ունին լուացողական զօրութիւն, եթէ տակառ ինչ ջուր դնիցի ընդ նմին, և լինի օճառ լուանալեաց, ջուր խառնեալ մոխրոյս այս՝ է՛ ջերմ արտասուքն որով հոգին սրբի 'ի մեղաց, վասն ասէ՛ Երեմիայ, լալով ելաց 'ի գիշերի և արտասուք իւր 'ի վերայ ծնօտից իւրոց: Յարտասուօքս այս ընկղմին դևքն որպէս ընկղմեցան եգիպտացիքն և փարաւոն 'ի ծովն կարմիր: սա՛ բարձրացուցանէ զայր արդար 'յերկնային փառսն, որպէս ասէ՛ ծննդոց բարձրացաւ ջուրն և վերացոյց զտապանն: և հեղ զսիրտ քո իբրև զջուր 'յերկիր: բնական է՛ զի ամենայն հեղուկ նիւթ յորժամ 'յամանէ ինչ դատարկի՝ 'ի հոտոյն մնացորդ ինչ դեռ ևս մնայ 'յամանն, իսկ 'ի ջրոյն ոչինչ մնայ, այլ ամենևին թափի: զոր օրինակ եթէ ձէթ, կամ նօթ, կամ մեղր, կամ իւղ, թափես 'յամանէ ինչ հոտն գայ դեռևս, իսկ 'ի ջրոյն ոչ ինչ հոտ գայ: այսպէս պարտ է՛ թափել 'ի մեղաց 'ի սկիզբն պահոցս, և զսիրտս լուանալ, զի կատարելապէս մաքրիցի և ոչ պահեսցէ 'յինքն մնացորդ ինչ մեղաց և անօրէնութեանց, վասն ասէ՛ հեղ զսիրտ քո իբրև զջուր 'յերկիր: և Քի փառք:

# ՔԱՐՈԶ.

## Խոստովանութեան Տէր թող զմեղս իմ։

ԱՊԱ՛ եթէ խոստովան լինիմք զմեղս մեր հաւատարիմ է նա և արդար թող ՚ի թողուլ զմեղս մեր։ Յհ. ա. Ոմն կամեցաւ որսալ աղաւնիս, և նախ սնոյց ընտանի աղաւնի մի՛ մեղրով եփած ցորենով, և յորժամ սնոյց և սովորեցաւ ՚ի տունն աղաւնին այն՝ յայնժամ թռոյց զնա տան տէրն, և երթեալ աղաւնին այն տեսեալ զերամս վայրի աղաւնեաց՝ նստաւ ՚ի մէջ նոցա և շրջէր ընդ նոսա, և վայրի աղաւնիքն յորժամ տեսին զգեղեցիկ հաւս ՚ի նմանէ, այլ ոչ բաժանեցան ՚ի նմանէ՛ այլ երթային ընդ հետ նորա, և յորժամ դարձաւ աղաւնին ՚ի տունն տեառն իւրոյ, գնային ընդ նմա՛ և ջոկք աղաւնեացն և մտային անդ՝ և ՚յ այն անուշ կերակրոյն որոյ զհամն առեալ էին յառաջ կերան։ Տանուտէրն Քս է՛, և վայրի աղաւնիքն մարդիք, որք էին օտարացեալք ՚ի այ, և յորժամ ետես Քս թէ երկինքն դատարկէ ՚ի մարդկանէ, և սա-

տանայ զբաղումս որսոյ և տանի ՚ի
դժոխս, վասնզի մաքուր աղաւնի մի՛ որ է՛
նշանի Աստուածածնին ընտրեաց ՚ի մարդկանէ և
սնոյց զնա՛ ՚ի տան նուրում, այսինքն,
՚յերկինքն, զի Թէպէտ նշանի կոյսն մարմնով
՚յաշխարհն էր՝ այլ հոգւովն խոկմամբ ՚յեր-
կինքն էր։ և նման է՛ նշանի կոյսն աղաւնոյ, վասն
զի է՛ կերպմի աղաւնի որ յորժամ արեգակն
՚ի վեր ծագէ՝ փետուր պարանոցի նորա՝ գոյն
զգոյն երևի, այսպէս նշանի կոյսն Թէպէտ
զարդարեալ էր գեղեցիկ փետրով, այսինքն,
զանազան առաքինութեամբ յառաջ քան զաւետիս
հրեշտակապետին, այլ յորժամ ծագեաց
՚ի վեր նորա շնորհք հոգւոյն սրբոյ և յղացաւ
զբանն այ՝ յայնժամ երևեցաւ զանազան
առաքինութիւն նորա։ զի իմաստութիւն յայտնե-
ցաւ, յորժամ ասաց՝ երբ լինիցի ինձ այս
քանզի զայր ո՛չ գիտեմ, և կուսութիւն եմ
ուխտեալ ։ և խոնարհութիւն երևեցաւ
յորժամ ասաց ահաւասիկ կամ աղախին
տն, և այս աղաւնիս սնաւ ՚ի գիրկս այ
հատով ցորենոյ, այսինքն, առաքինու-
թբ, պահօք, և աղօթիւք, և խառնեալ
էր մեղրով շնորհաց հոգւոյն սբյ, և յոր-
ժամ եկն նշանի կոյսն ՚ի մէջ մարդկան՝ բու-
րեաց ՚ի նման է՛ հոտ Աստուածային, զի ծնաւ
զորդին այ, և բովանդակ ամենայն վարք
և բանք նորա բուրէր զհոտ արքայութեան ։

վասն վայրի աղաւնիքն, այսինքն, դասք
առաքելոց, կուսանաց, և այլոց սրբոց, յոր-
ժամ առին զանուշ հոտ նոցա, այլ ոչ մեկ-
նեցան ՚ի նմանէ, և յորժամ դարձաւ սբ̄հի
Ածածինն ՚յերկինս՝ գնացին զհետ նորա
բազումք ՚ի մարդկանէ և լցին զերկինս,
և ՚ի կերակրոյ հրեշտակացն որոյ աստ
զհոտն առին՝ գնացեալ ՚յ երկինս կերան
յա՛գ: Նա՛ և պարտ է՛ հետևել զկնի այս
անուշահոտ աղաւնոյս՝ և արժանի լինել
կերակրոյ հրեշտակացն ՚յ երկինս, վասն ող-
ջոյն տացուք կենսաբեր սբ̄հի Ածածնին:
Ապա՛ եթէ խոստովան լինիմք զմեղս մեր:
՚Յհն. ա̄. Վարդապետք ասեն թէ ա̄յ դա-
տաստանն քաղցրագոյն է՛ քան զաշխարհիս
դատաստանն, նա՛ և դատաստան նոր օ-
րինացս քաղցր և դիւրին է՛, քան ըզդա-
տաստան հին օրինացն: Ի դատաստանն
աշխարհիս որ առաւել ծածկէ զմեղս իւր՝
առաւել արդարանայ, և որ յայտնէ զմեղս
իւր՝ առաւել դատապարտի, որպէս գողք
և աւազակք, որք խոստովանին զմեղս իւ-
րեանց՝ չարաչար մեռանին, և այսպիսի
խոստովանութիւն դժուար է՛ և դառն:
որպիսինէր հին օրէնքն և խոստովանու-
թիւն իւր, որպէս գրեալ է՛ ՚ի գիրս Յեսուա՛.
Է. գլուխ է̄ն Աքարն որ գողացաւ ՚յա-
նծեցն Երիքովի և եկն բարկութիւն ա̄յ

՚ի է̄ն

՚ի վեր ժողովրդեանն , և կացուցել զԱքար
՚ի մէջ ատենին ասէ՛ ցնա՛ Յեսու , Աքար`
տուր փառս այ` և խոստովան լեր զմեղս
քո՛ և մի՛ ծածկեր , և նա՛ խոստովանե-
ցաւ զմեղս իւր` և փոխանակ Թողութեան
քարկոծեցաւ ՚ի ժողովրդենէն : բայց
այ դատաստանն որ ՚ի նոր օրէնքս է՛ , այլ
ազգէ , քանզի որ Թագուցանէ զմեղս իւր
առաջի խոստովանահօրն , որ ՚ի տեղի այ
է՛ ո՛չ գտանէ այնպիսին զԹողութի ՚յայ , այլ
յայտնելոց է՛ մեղք նր ՚յա՛ւուրն դատաս-
տանի առաջի ամենայն արարածոց , իսկ
որք Ճշմարտութբ և խոնարհութբ խոս-
տովանին զմեղս իւրեանց` Թողութի լի-
նի , և ծածկէ Աձ զմեղս նց , և այսպիսի
խոստովանութիւս երանելի է՛ որպէս ասէ՛
Դաւիթ : Երանի ում Թողութի եղև մե-
ղաց` և ծածկեցան ամենայն յանցանք
նորա : վմնզ Յհս ասէ՛ զայսպիսի խոստո-
վանութիւնս , ապա՛ եԹէ խոստովան լինիք :
Իւ արդ` վասն խոստովանութեանն խոր-
հրդոյս բազում ինչ գիտելի է՛ : Նա՛խ
գիտելի է՛ զի ·է· ան· ինչ պիտոյ է՛ որ խոս-
տովանութիւն կատարեալ լինի : քանզի
Վարդապետք ասեն` Թէ բազում ինչ
է՛ ՚ի հարկաւորութե խոստովանութե :
Առաջինն` պիտոյ է՛ զի խոստովանու-
Թիւն իմաստութբ և Ճարտարութբ լի-
նիցի ,

նոցա , և այս իմաստութիւն խոստովանու_
թեան .գ. ազգէ ։ ա. զի զիւրաքանչիւր
մահու չափ մեղս առանձինն՝ և որոշ
որոշ խոստովանեսցի , որպէս ասէ Դա_
ւիթ ։ լուացի զամենայն գիշեր զմա_
հիճս իմ , և արտասուօք իմովք զան_
կողինս իմ թացի ։ զայս կամի ցուցանել
թէ լուացի զամենայն մահու չափ մեղս
որ է՛ գիշեր, յանկողինս խղճի մտաց իմոց
ջրով արտասուաց , և ոչ միայն բաւա_
կան է՛ առ հասարակ խոստովանել զմեղս,
կամ ասել՝ թէ բազում մեղքեմ գործել,
և առանձինն ոչ ասել զմեղաց անուանս ։
բ. զի ընտրեսցէ զխոստովանահայրն՝ որ
գիտիցէ ճանաչել զմեղս , և ունիցի զիշ_
խանութիւն կապելոյ՝ և արձակելոյ ։ և թէ
ոք կամաւ երթայ առ տգէտ քահա_
նայ՝ և խոստովանի ասելով ՚ի միտս՝
թէ սա զիմ մեղքն չճանաչէ և ինձ սա_
կաւ ապաշխարանք դնէ՝ անօգուտ է՛ այն_
պիսոյն խոստովանութիւնն ։ դ. զի զմահու
չափ մեղսն ծանր , և առաւել զղջմամբ
խոստովանեսցի՝ և որ ծանրագոյն է՛ ՚ի մէջ
մահու չափ մեղացն՝ ևս ծանրագոյն զղջ_
մամբ խոստովանեսցի ։ Երկրորդ պիտոյ է՛ , որ
խոստովանութիւնն կամաւ լինի և ոչ բռնու_
թեամբ , որպէս ասէ Սաղմոս ։ Ես կամօք իմօք
խոստովան եղէց նմա , զի թէ բռնութեամբ
խոս_

խոստովանին ոմն գողն, որ յորժամ ՚ի չան-
կալն ձգեն զնա, յայնժամ խոստովանի
զմեղս իւր առաջի դատապարտողին, այսպէս
են որք ոչ խոստովանին՝ մինչև առքէ ՚ի
նոսա Ած հիւանդութիւն մահու, և
յայնժամ խոստովանին վասն ահի դժո-
խոցն, և ոչ վասն սիրոյն այ, այսպիսի
խոստովանութիւն ոչ փրկէ, զի պարտ է
որկամաւ լինել և ոչ ակամայ, և վս սի-
րոյն Քի այ: Երկրորդ պիտոյ է, զի խոս-
տովանութիւն սրբ լինի, այսինքն, վս իւր
հոգւոյն փրկութեան՝ և ոչ վս երեսաց մար-
դկան: Երրորդ զի համարձակ լինի ՚ի խոս-
տովանելն, և ոչ ծածկէ վասն ամօթոյ
զմեղս իւր, և թէ .ա. փոքրագոյն մեղք
ծածկէ վս ամօթոյ՝ և ոչ ասէ, նման է,
որ ՚ի կալ մի՝ կրակ անկանի և վառի՝ յերբ
իմանան՝ շիջուցանեն զնա, բայց մնայ
՚ի մէջ կալին պէծ մի կրակ՝ և անհոգա-
նան վս փոքր կրակին այն՝ և ոչ շիջու-
ցանեն, այլ յետոյ սակաւ սակաւ զօրա-
նայ, և շուրջ պատէ զկալն՝ և այրի: Այսպէս
լինի նց՝ որք զմեղս իւրեանց ծածկեն և ոչ
ասեն, և ոչ բառնան ՚ի միջոյ հոգւոյն:
դարձեալ մի գաղեալ մեղքն ՚ի սիրտ՝
քարշէ զմարդն ՚յ այլ մեղս և ՚ի կորուստ
մատնէ զնոքն: Չորրորդ պարտ է,
զի ամօթխածութեամբ խոստովանի զմեղս
իւր,

նուր, և ո՛չ պարծենալով առաջի մարդկան թէ զայսպիսի մեղս գործեցեմ ես։ Վեցերորդ պիտոյ է՛ զի հոգւորապէս, և արտասուօք և ցաւագին սրտիւ խոստովանի, և մարմնաւորապէս ևս թէ կարող է՛ արտասուեսցէ կատարեալ խոստովանութեամբ և զղջմամբ, զի արտասուօքն՝ հիւանդութեան հոգւոյն արագապէս բժշկեսցի, զի յորժամ հիւանդն քրտնի՛, և քրտունքն ՚ի մտից մինչև ցգլուխն լինին՝ և տաք լինի և յոյժ հոտած՝ այն բարի նշան է՛ հիւանդին, զի այնպիսի քրտունքն հանէ զցաւն։ այսպէս՝ յորժամ ո՛ք արտասուօք հառաչէ վասն ամենայն մեղաց իւրոց, և ջերմեռանդ սրտիւ խոստովանի և իւր մեղքն իւրեանն հոտած և գարշելի երևի՝ այս բարի նշան է՛ զի առողջանալ կամի ՚ի հոգևոր հիւանդութենէ։ բայց հի՛ւանդի միոյ, որոյ ծանր է՛ ցաւն՝ և ինքն սկսանի ծիծաղել, և ո՛չ կարէ ճանաչել զցաւս իւր՝ վատ նշան է։ այսպէս որ ծանր մեղք է՛ գործել, և ծիծաղի ՚ի ժամ խոստովանութեան ո՛չ է՛ բարի նշան։ Եօթներորդ պիտոյ է՛ զի խոստովանութիւն խոնարհութեամբ լինի, որ զինքն ակար, հի՛ւանդ և ողորմելի ճանաչէ, և լինի հնազանդ խոստովանահօրն, որ զինչ կանոն ՚ի վե՛ր դնէ՛ խոնարհութեամբ յանձն

առնու

առնու և կատար է: Ութներորդ պիտոյ է, զի խոստովանութիւն՝ հաւատարմութեամբ լինի, և ·Գ· ինչ պիտոյ է: Ա· զի խոստովանողն և խոստովանահայրն ճշմարիտ ուղղափառ և կաթուղիկէ հաւատովք լինելն՝ և ուսմամբ սրբոյ եկեղեցւոյ, և ոչ ըստ մոլորութեան հերձուածողաց: Բ· զի միայն թողութեան յուսայնիցէ խոստովանութիւն, և ոչ որպէս յուդա́ մատնօղն որ խոստովանեցաւ ասելով մեղայ՝ զի մատնեցի զարիւն արդար, բայց անյոյս լեալ խեղդեցաւ, անօգուտ է այսպիսի խոստովանութիւն: Գ· զի ՚ի խոստովանութեան սուտ չասէ այլ զճշմարիտն, քանզի խոստովանութիւն առաջի Այ լինի՝ սուտ ասելն ծանր մեղք է և յոյժ պատժոց արժանի, քանզի մեղաց պատճառն սուտն է և սատանայ, որ ամենեւին սուտ է և սուտութեամբ ձգէ զմարդիկ ՚ի մեղս, որ զխաբուս աշխարհիս և զհեշտութիւնս քաղցր ցուցանէ՝ և անանց, որ դառն է քան զլեղի, և անցանի որպէս զծուխ: այլ պարտ է որ խոստովանութիւն ճշմարտութեամբ լինի՝ և ոչ երբէք ստութեամբ, քանզի ասէ Սաղմոս: ատեցեր Տէր դու զայնոսիկ, որք գործեն զանօրէնութիւն, և կորուսանես զամենեսեան, որք խօսին սուտ: և այս սուտ խօսելն մանաւանդ Թէ լինի

նի 'ի խոստովանութեան , զի կործանիչն մեծ-
պատիժ է' քան զատելի լինելն , ապաու-
րեմն սուտ ասելն 'ի խոստովանութեան մեծ
մեղք է' քան զմեղք գործելն։ Պարզ̄ ոչ կայ
այնպիսի մեղք որ զխարդ կորուսանէ' թէ
ստոյգ խոստովանի , այլ վ̄ն սուտ ասելոյն
'ի խոստովանութեան կործանի մարդ , յոր-
ժամ ծանր մեղք է' գործեալ և ուրանայ
առաջի խոստովանահօրն ։ Պարզեալ ոչ
է' արժանի 'ի խոստովանութեան սուտ ա-
սել վ̄ն խոնարհութե̄ , զի կարէ ասել
համարձակաբար թէ մեղաւորեմ , և ոչ
ասել զայն մեղքն թէ արարեալեմ որ չի-
նի արարեալ , և կամ արարեալն թաքու-
ցանէ ։ Եւ աստ գիտելի է' , զի որ խոս-
տովանի զամենայն մեղս իւր' և թէ ունի
կամս այլ գործելոյ զայն մեղքն' այն-
պիսոյն խոստովանութի̄ն ոչ է' ընդու-
նելի , և ոչ է' պարտ զայնպիսին արձա-
կել , վ̄ն զի արմատ մեղացն մնացեալ
է' 'ի սիրտ նո̄ ։ քանզի նման է' որ քաղէ
զփուշն կարելով և ոչ արմատաքի խլէ ,
և որ զմազն ածելէ յետոյ առաւել բու-
սանի , այսպէս թէպէտ խոստովանի ոք'
և զկամս մեղացն ունի 'ի սրտի իւր'
'յայն չար արմատէն բազում այլ մեղք
բուսանին , որպ̄ ասէ' Բ̄ն Ս̄րկս ․Է․ Զի
'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան' խորհուր-

դք չա-

դք չարութե երանենն։ չնութիւք։ պոռնկու-
թիւք : ապականութիւք : գողութիւք : ագա-
հութիւք : չարութիւք , նենգութիւք : գի-
ջութի չարախօսութի : հայհոյութի :
ամբարտաւանութի : անզգամութի։ Այս
ամենայն չարիք ՚ի ներքուստ ելանեն ,
և պղծեն զմարդն : և որք ունին զկամս
յետ պահոցն դառնալ ՚ի նոյն մեղս , այս-
պէս խոստովանութիւն սուտ է՛ և ընդու-
նայն , զի սոքայ զտուտն դժոխոց օձին
միայն հատանեն՝ և ոչ կատարելապէս
ապականեն զգլուխ և զմարմին , այլ այն
թունալից օձին մասն ինչ ՚ի գլխոյ կող-
մանէ թողուն ՚ի հոգիս և ՚ի սիրտս
խորեանց : և այս յայտնութի օձին է՛,
զի թէ գլուխ օձին մնայ .բ. մասն կամ .գ.
ընդ մարմնոյն կարէ ապրիլ : և գլուխ
օձին է՛ չար խորհուրդն հեշտութե , և
մարմին օձին է՛ հաւանիլ մեղացն , և
տուտն է՛ ՚ի գործ ածելն : այսպիսիքս
կտրեն զտուտն օձին՝ որ ժամանակ մի՛ ՚ի
բաց կան ՚ի մեղացն գործելոյ , այլ գլուխ
և մարմինն անդ է՛ , այսինքն , չարխոր-
հուրդն , և հաւանելն : և ոմանք ոչ թո-
ղուն զմեղքն՝ այլ մեղքն զնոսա թողու ,
զի ոչ ունին զկարողութի կատարել զմե-
ղս , կամ վս ծերութե կամ վս տկարու-
թե : այլ ունին զկամս մեղացն , զի թէ

կա-

կարէին առնել՝ յօժարապէս առնէին
զմեղսն: այսպիսի խոստովանութիւն ՚ի զու-
րէ՛ , ընդ վայրէ՛ , ոչինչ է՛ : Իններորդ պի-
տոյ է՛ , զի կատարեալ լինի խոստովանու-
թիւն որպէս ասէ՛ Սղս : խոստովան եղեց
քեզ Տր բոլորով սրտիւ իմով : և ոչ է
պարտ կիսակատար խոստովանիլ , զի ոչ
է՛ պարտ զմեղաց կէսն ասել՝ և զկէսն
պահել , կամ զկէսն միոյ քահանայի խոս-
տովանիլ՝ և զկէսն միւս այլ քահանայի ,
և որ զայս առնէ՛ կամաւ վասն ամօթոյ՝
և ոչ թէ մոռանալով , այնպիսոյն սու-
տ է խոստովանութիւն : այլ որքան մեղք
՚ի միտն է՛ , պարտ է՛ որ ՚ի մասունն և կա-
տարեալ ուղղափառ կաթուղիկէ և ըն-
տրեալ քահանայի ասէ՛ : և որ բաժա-
նէ և կիսատէ զմեղս իւր , ոչ առնու
զթողութիւն յԱյ , զի Ած կատարեալ է ճշ-
մարիտ և արդար : կամ բոլորովին թո-
ղու զմեղս՝ կամ բնաւ ոչ թողու : և
այնպիսոյն պարտ է՛ նոր սկիզբն առնել
և խոստովանիլ զամենայն մեղս իւր , այլ
թէ մոռացեալ է՛ զմեղ ինչ՝ զմոռացեալն
միայն պարտ է՛ խոստովանիլ : և որ
խոստովանի զամենայն մեղս իւր՝ բայց
զմի՛ մահու չափ մեղս թագուցանէ վս
ամօթոյ՝ նման է՛ նաւի ՚ի վր ծովու՝
որ ունիցի զհարիւր ծակ՝ զիննսուն և
ինն

Ընդ կալնու և զմինն ոչ՝ և Թողու զայն բանց, ընդ որ մտանէ ջուրն և ընկղմէ զնաւն: կամ որ ունիցի .Ճ. նաւս ցրցեալ ՚ի մարմինն իւր՝ զամենն քարշէ՝ և զմինն Թողու, մի նաւն այն մնեալ ՚ի միջոտս՝ կարէ սպանանել զնաւ: Նա դարձեալ են ոմանք, որք ոչ Թագուցանեն զմեղս գարշելիս և ծանունս, բայց պատրուակաւ խոստովանին, այսինքն, գաղտագողի, այսր անդր փախչելով, զի խոստովանահայրն ոչ գիտասցէ, այսպիսի խոստովանուԹիւն ևս սուտ է: այլ պարտ է այնպէս խոստովանիլ զմեղսն յայտնի և պարզ և իրաւ ոպ̄ և գործեալ է, Թէպէտ և յոյժ ամաչի, սակայն այնչափ առաւել ԹողուԹի̄ գտանէ, և Թէ վն̄ ամօԹոյ զծանր մեղքն Թագուցանէ լինի նման՝ որպէս եղև կնոջ միոյ այլոյ, որ յոյժ մեծ անուն ունէր, և ունէր երեք որդի, և սատանայ ընկէց զկինն ՚ի մեղս և ծընաւ .Բ. որդի ՚ի պոռնըկուԹէ՝ և զերկուսինն էսպան՝ և զայս մեղս ամենևին ոչ խոստովանէր վն̄ ամօԹոյ՝ զի մի՛ պակասեսցի Հարկէք իւր: մեռաւ կինն, այս մեղօքս և իջաւ ՚ի դժոխս: և երեք որդին նր̄՝ աղօԹք և պատարագ մատուցանէր և խնդրէր՝ Թէ Տր̄ ցոյց ինձ զմայրնիմ, Թէ ՚յ որ դասս հրեշտակաց կար-

գեալ կայ, և 'ի վերջն պատարագին ե-
րևեցաւ մայրն իւր՝ յոյժ ահարկու տես-
լեամբ և ·Բ· վիշապք պատատեալ զնո-
վաւ, և բերանք վիշապացն՝ մինն 'ի մի
ծծէն և մինն 'ի միւսէն, ողորմեցաւ
նմա որդին և ասէ՛, ո՞վ ես դու՝ և նա՛
ասէ՛, եսեմ մայրն քո՛, եհարց զի՞նչ եղև
քեզ՝ պատասխանի ետ նմա, թէ իջայ
'ի դժոխս, ասէ՛ որդին՝ ես գիտէի թէ 'ի
հրեշտակաց դասն կարգեալ ես, զի բա-
զում բարութիւնս արարեր ։ այսքան պա-
հք, աղօթք, ողորմութի, արդ՝ զի՞նչ
եղև պատճառ՝ և այդ վիշապքդ զի՞նչ
նշանակեն ։ ասէ՛ մայրն զի զծածուկ մեղս
իմ թագուցի 'ի խոստովանութեան վս ամօ-
թոյ, և զամենայն բարիս վասնէ արանեի՝ որ
իմ հարկիքս չկորչէր, վասնէ այժմ յոյժ ա-
մօթ և նախատինք եղէ ։ յաւել և զայս
·Բ· վիշապս, որք ·Բ· սատանայքեն, որ-
կու ծըծեն զծիծս իմ ·Բ· որդւոյ տեղն,
զոր ծնայ, և սպանի զնոսա և ո՛չ կերան
զկաթն իմ, սակս այն՝ տանջեն զիս ։
զայս ասաց և դարձաւ 'ի դժոխս ։ ա-
պաուրեմն ո՛չ է՛ պարտ թագուցանել
զմեղս վս ամօթոյ ։ քանի զի խոցոտ մար-
դն և աղքատն նստի 'ի դրունս եկեղեցոյ
և ողորմութի խնդրէ՝ զայն անդամն որ
առողջ է՛ ո՛չ ցուցանէ՝ այլ ծածկէ և
խո-

խոցոտեալն ցուցանէ, իսկ՝ որ ծածկէ զխոցոտեալն՝ և զողջն ցուցանէ՝ տգէտ է՛ և ո՛չ առնու ողորմութիւն ։ այսպէս և խոստովանութիւնն դուռն է՛ երկնայինն եկեղեցւոյն, որ է՛ ՚ի մահու չափ մեղս՝ խոց ունի ՚ի հոգին, վասնզի պարտ է՛ որ զխիստ ծանր մեղքն յայտնէ առաջի խոստովանահօրն որ է՛ դուռն երկնից, զի առցէ ողորմութիւն ՚յա̃յ և ՚ի հրեշտակաց ։ իսկ՝ որք զխոցս ծածկեն, այսինքն, զմահու չափ մեղսն և զողջ տեղն ցուցանեն՝ որպէս թէ բարիք երևելն կեղծաւորելով՝ այնպիսիքն ո՛չ առնուն զողորմութիւն ՚յա̃յ, այլ զատանջանս յաւիտենականս ։ Տասներորդ պիտոյ է՛, զի խոստովանութիւն յատուկ վասն իւրեանց լինի, և մարդիկքն զիւր մեղքն խոստովանի՝ և ո՛չ զայլոց, զի չէ՛ պարտ որ կինն պանդատի ՚յառնէն՝ և զն̅ր մեղքն յայտնէ, և ո՛չ այրն զկնոջ մեղքն յայտնէ, և ո՛չ ո՛ք զմեղս թշնամոյ իւրոյ, նա՛ և ո՛չ պարտի որ իւր մեղացն թէր լինի և ՚յայլոց վ̅ր ձգէ, այլ պարտ է՛ որ զիւրքն ասասցէ, և ո՛չ զգործակցին անունն յիշէ ՚ի խոստովանութեան, թէ կայ հնար որ առանց գործակցին զբ́ո մեղքն միայն յայտնել կարասցես ։ Եւ ասա գիտելի է՛ զի որ խոստովանի և խուսէ հետ այլոց՝ և ո՛չ

 կամի

կամի հաշտիլ՝ ո՛չ է՛ պարտ զնա՛ արձակել
մինչև հաշտիցի, զի Տ̅ր̅ ասէ՛ ՚յա՛ւե-
տարանն, եթէ դուք ո՛չ թողուցուք՝ և
ո՛չ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս
ձեր ։ Մետասաներորդ պիտոյ է՛, զի
խոստովանութիւն ՚ի ծածուկ լինի թէ ՚ի կող-
մանէ խոստովանողացն՝ և թէ ՚ի կողմանէ
խոստովանահօրն, զի ո՛չ է՛ պարտ խոս-
տովանողին յայտնի ասել զմեղս իւր առա-
ջի մարդկան, զի բազում գայթակղին
՚յայնմանէ և պատճառ չարեաց առ-
նուն՝ և անկանին ՚ի մեղս, ասելով թէ նա՛
այսպիսի ծանր մեղս գործեաց՝ և թո-
ղութիւն կու գտանէ, ես այլ ժամանակ
մի՛ հեշտացայց ՚ի փառս աշխարհի՝ և յե-
տոյ կու խոստովանիմ ։ Այլ և պարտ է՛
խոստովանահօրն ծածկել զմեղս խոստո-
վանողին, և ո՛չ ումեք յայտնել զնոսա՝ թէ
և մասան մասան արատցէն զնա՛, և թէ խիստ
նեղեն՝ կարէ երդնուլ թէ ես ո՛չ գիտեմ
զնորա մեղքն, և այս երդումն ճշմարիտ է՛,
զի ո՛չ գիտէ ՚յայն կողմանէն որ մարդ
է՛, այլ գիտէ ՚յայն կողմանէն որ ա̅յ ե-
րեսփոխան է՛, զի մեղաւորն ո՛չ խոստո-
վանի քահանային ՚յայն կողմանէն որ
մարդ է՛, այլ ՚յայն կողմանէն որ ա̅յ տեղն
է՛ ։ ս̅բ̅ն Օգոստինոս ասէ՛, թէ զո՛չ ինչ
այնպէս պատկառ գիտեմ, ո̅ր զայն որ

խոս-

խոստովանութիւն գիտեմ ։ այլ և զոր ինչ
գիտեմ՝ առաւելն գիտեմ, զի զայն ինչն որ
չգիտեմ՝ կարեմ ուսանիլ՝ և այլ յետ ասել,
այլ զոր խոստովանութիւն գիտեմ՝ ոչ կա-
րեմ գիտել՝ և կամ յետ ասել ։ և խոստո-
վանութիւն այնպիսի ասէր փակէ և կո-
պղայք՝ որ զայն բերանն կու փակէ, զի
զայն մեղքն որ Ճշմարիտ խոստովանեալ
է՝ Ա͞Ծ ոչ յայտնէ, և այնպէս ասէր
փակէ զբերան քահանային, որ նմա ոչ
է՝ արժան բնաւ յետ ասել՝ Թէպէտ սպա-
նանեն զնա ։ և քահանայն որ սատասացութի
ունէ և զխոստովանութիւն յայտնէ՝ ՚ի
կարգէն լուծանեն զնա և դնեն ՚ի զնդան
մինչև ՚ի մահ, զի այլ ոչ տեսցէ զարև,
քանզի յոյժ ծանր մեղք է՝ յայտնել զխոս-
տովանութիւն՝ և քակումն է՝ եկեղեցոյ, և ոչ
է՝ պարտ խոստովանիլ այնպիսի քահանային
որ զխոստովանութիւն յայտնէ և մեծ
ինքն առանց խոստովանութէ, այլ ըն-
տրել պատշաճ է՝ զխոստովանահայրն որ
զխոստովանութէ խորհուրդն մինչ ՚ի մահ
պահէ ։ Նա ասա գիտելի է՝, զի խոս-
տովանութէ խորհուրդն ՚ի սկիզբն քրիստո-
նէութեան ընդ հանուրբեր ՚յամենայն քրիս-
տոնեայս, այլ վ͞ս վատութէ խոստովա-
նահարց որք յայտնեալ են զմեղս՝ ՚ի քա-
ղմաց խափանեալ է, որպէս ՚յաշխարհն ա-

րնւելից ազգն նեստորաց և յակոբկեանց որք
բնաւ ոչ խոստովանին, և այլոց ազգաց,
որք խոստովանին յոյժ ահիւ և դողութ̄բ,
և դարձեալ երկնչին ՚ի չար քահանայից
խոստովանիլ թէ յայտնեն զմեղս նո-
րեանց ։ Երկոտասաներոր̄դ զի պիտոյ
է խոստովանութիւն բազում անգամ լի-
նել, և այս ·Բ̄· ազգ իմանի՝ մինն զի
թէ ՚ի մին մահու չափ մեղքն բազում
անգամ անկանի, պարտ է բազում ան-
գամ խոստովանիլ և այս հրամանք է և ոչ
խրատ ։ Բ̄· զի մահու չափ մեղքն որ մի-
անգամ խոստովանեալ է, թէ բազում
անգամ խոստովանի՝ օգտակար է, զի
քանի մարդն բազում անգամ խոստովա-
նի զխոստովանած մեղքն՝ տանջանք քա-
ւարանին թեթևանան, և ողորմու-
թիւն այ̄ իջանէ առատապէս ՚ի վր̄ նր̄,
և այս ոչ է հրամանք՝ այլ խրատ ։ զի
թէ որք զմին մահու չափ մեղքն ըստոյգ
խոստովանի մին անգամ՝ բաւական է առ
՚ի փրկութ̄ի ։ բայց թէ բազում անգամ
խոստովանի զնոյն մեղքն, բ̄զում լինի պսակ
նր̄ ։ Եւ աստ ·Գ̄· ինչ պիտելի է ·Ա̄· զի
յոյժ պատշաճ է, որ յառաջ քան զխոս-
տովանիլն խորհայ զամենայն զմեղս իւր՝
և ՚ի միտ ածէ, որ առաջի խոստովանա-
հօրն կրման ասէ, քանզի բազումք զան-
յան-

յանկարծակի 'ի խոստովանութիւն, և մոռանան և ոչ ինչ կարեն խոստովանել և այս ոչ է՛ բարի, զի հիւանդին յառաջ քան զդեղն շարպաթ տան ըմպելոյ որ կակղացնէ զցաւն և պատրաստէ, և ապա առնու զծանր դեղն և զդառն որ զբոլոր ցաւն հանէ ։ Այսպէս յառաջ քան զխոստովանութիւն որ դառն դեղ է՛, պարտ է՛ որ շարպաթ խմէ, այսինքն, զի խոկայ և 'ի միտ ածէ զամենայն մեղս իւր, զի 'ի ժամ խոստովանութեան զամէն 'ի վայր լնու ։ Բ. գիտելի է՛, զի 'ի խոստովանութեան ոչ է՛ պարտ խառնել պատմութիւն և խօսք, որ ոչ ունի զդիտաւորութիւն 'ի խոստովանութիւն, այլ միայն զմեղքն պարտ է՛ ասել՝ և չէ պարտ 'ի խոստովանութիւն զբարի գործքն ասել, այլ միայն զչարն, զի խոստովանութիւն նման է՛ երակ առնելոյ, յորժամ որ երակ առնու՝ յայնժամ է՛ օգուտ որ վատ արիւնն 'ի դուրս ելանէ և առողջն 'ի տեղն մնայ և սնուցանէ զմարմինն, այլ այն երակ առնուլն վնաս է՛, որ առողջ արիւնն 'ի դուրս ելանէ, և վատ արիւնն 'ի տեղն մնայ ։ բարի գործքն նման է՛ առողջ արեան, և չար գործքն վատ արեան, որ 'ի խոստովանելն զբարի գործքն թագուցանէ՝ այն բարի խոստովա-

նութիւն է՛ և յայտնէ ըզչար գործս նոր,
այլ որք յայտնեն զբարի գործս նորէց 'ի
խոստովանութիւն և ծածկեն զչար գոր-
ծս, այնպիսի խոստովանութիւն փոստա-
կարէ, խոստովանահայրն նման է՛ եր-
ակահատի, և լեզուն նման է՛ նշտարի,
որ հարկանէ զխիթ մեղաւորին, այ-
սինքն, որ իմաստութեամբ հարցանէ զզանա-
զան մեղսն։ Իսկ յորժամ երակ առնողին
աչքն պատառեալ լինին՝ և ձեռքն դողան, եր-
կեւղ կայ, զի յորժամ հարկանէ զերակն՝
զջիղն հատու և քաղում վնաս առնէ,
այնպէս խոստովանահայրն որ տգէտ է՛
կայրէ, որ ոչ գիտէ թէ որ է՛ մեղքն և որ ա-
ռաքինութիւն։ և որ է՛ մահու չափ մե-
ղք և ծանր՝ զայն մեղք ոչ համարի, և
որ ոչ է՛ մեղք՝ զայն մեղք հաշուէ և զայն
հարկանէ, և կու դողայ այն խոստովա-
նահօր ձեռն՝ որ ոչ առնէ ստոյգ դա-
տաստան մեղաւորին, այլ վ̄ս̄ կաշառե-
ուղղոյ դատաստանէն շարժի՝ և թող
տայ մեղաւորին մնալ 'ի մահու չափ
մեղքն, երկեւղ կայ խոստովանողին այնպի-
սեացն։ Գ. Գիտելի է՛, զի խոցն որ ծայրն
'ի դուրս է՛ և քաց դիւրաւ բժշկի, այլ
յորժամ 'ի ներքինկոյսն լինի խոցուածն՝
ոչ բժշկի, այլ զմարդն սպանանէ, այս-
պէս յորժամ քինաւորեալն վէրք մահու

չափ

չափ մեղացն խոստովանութիւն յայտնեն՝ նմա առաջ բժշկի, այլ յորժամ թագուցանէ զմեղքն ՚ի սիրտն և ոչ խոստովանի՝ նորա հոգին մեռանի ։ այլ լինի երբեմն որ խոցն ծայր առնէ և բացուի, այլ ծակն նեղ լինի և ամէն թարախն ՚ի դուրս ոչ գայ, վասնէ ջատահն նշտարովն արձակացնէ, որ բովանդակ թարախն ՚ի վայր թափի և շուտով բժշկի ։ այսպէս մեղաւորն որ յայտնէ զմեղս մեղաց իւրոց առաջի քահանային, այլ զծակ խոցին նեղ առնէ, զի ոչ յայտնէ զչափ մեղաց իւրոց, վասնայնորիկ պարտ է՝ որ խոստովանահայրն ոմ է՝ հոգևոր բժիշկ արձակացնէ զծակ խոցին մեղաց հարցանելովն ։ զոր օրինակ եկն ոմն առ խոստովանահայրն և ասէ՝, հարի զոմն կղերիկոս, և նա եհարց փայտով հարեր և թէ թրով՝ նա ասաց թրով, դարձեալ եհարց, թրին բերանովն հարեր և թէ կողովն՝ ասաց բերանովն, դարձեալ եհարց, խոցեցեր զնա՝ թէ սպաներ, ասաց թէ սպանի ։ Ասաց խոստովանահայրն ով թշուառական սպանեալես և ասես թէ հարի զկղերիկոսն, և որ չափ ծանր է՝ սպանանելն քան ընդհարկանելն ։ Բ․ գիտելի է՝, զի պարտ է՝ մեղաւորին առաջ խոստովանողին և ոչ յապաղել, այլ բա-

БИБЛИОТЕКА
имени
В. И. ЛЕНИНА

զում պատճառի ․ա․ զի թէ կրակ ան֊
կանի ՚ի տուն ումեք ոչ յապաղի տանու֊
տէրն, այլ շտապով անցուցանէ զկրակն
ջրով և բազմաւօք, այսպէս մահու չափ
մեղքն դժոխային հուրն է և այրէ զհոգին,
վսնկ պարտ է՛ փութով շիջուցանել զնա՛
ջրով արտասուաց և խոստովանութք, կամ
բազմաւօք չարչարանաց Ք̅Ի, և թէ ոչ
յանխնեաս այրի ։ բ․ է՛ զի մահն հանա֊
պազ սպասէ մարդոյն, և ոչ գիտեմք
զժամանակն զօրեղի մահուանն թէ երբ
կամ ո՛ր մեռանիմք, վսնկ պարտ է՛ հա֊
նապազ պատրաստել զմեզ խոստովա֊
նութք, քանզի բազումք որք ծուլանան ՚ի
խոստովանութիւն, և յանկարծակի մե֊
ռանին և իջանեն յատտակս դժոխոց ։ գ․
թէ ո՛ք զթշնամին իւր՝ որ բազում վնաս
առնէ՝ բազում ժամանակս պահեսցէ ՚ի
տունն իւր՝ այնպիսին յիմար է, այսպէս
սատանայ է՛ թշնամի մեր՝ և բազում վնաս
առնէ՛ ՚ի տունս մեր՝ որ է՛ հոգիս մեր,
և որք ծուլանան ՚ի խոստովանել զմեղս
իւրեանց բազում ժամանակս՝ զսատանայ
պահեն ՚ի տունս իւրեանց՝ և այս յոյժ
սոսկալի է՛, զի ոչ միայն մեր թշնամի է՛
այլ և Այ ։ և թէ ո՛ք զթշնամի թա֊
գաւորին թագուցանէ ՚ի տուն իւր, թա֊
գաւորն գիտասցեալ զայն՝ չար մահու֊

ամբ

ամբ կորուսանէ՛ զթագուցանողն իւ֊
րոյ թշնամոյն , վասնզի փութով պիտի
գնալ առ խոստովանահայրն որ է՛ 'ի տե֊
ղի այ , և մատնել զսատանայ՝ որ է՛ թշ֊
նամի այ ։ Դ. զի որ է՛ 'ի մահու չափ
մեղս՝ է՛ 'ի բերան սատանայի , և որք
ծուլանան 'ի խոստովանութիւն և ոչ կա֊
մին զերծանել 'ի սատանայի բերանէն յի֊
մարագոյնք են այսպիսիքս քան զանա֊
սուն , զի անասունն յորժամ անկանի 'ի
բերան պատառող գայլին՝ անդ աղա֊
ղակէ և հնար փրկութե խնդրէ , իսկ
անզգամ մեղաւորն բազում ամ է՝ որ 'ի
բերան սատանայի է՛, և ոչ երբեք աղա֊
ղակէ կամ խընդրէ հնար փրկութե .
վասնզի սատանայ զբազումս կլանէ և ի֊
ջուցանէ 'ի դժոխս որ է՛ փոր սատանայի։
Ե. զի որ ծանր հիւանդութի ունի՝ փու֊
թով երթայ առ բժիշկն՝ և ցուցանէ նմա,
զի յետ մահուն՝ բժիշկն այլ ոչ կարէ
օգնել։ իսկ հոգևոր հիւանդութին ծան֊
րագոյն է՛ քան զմարմնաւորն , վասնայ֊
նորիկ պարտ է՛ փութով երթալ առ հո֊
գևոր բժիշկն և խոստովանիլ , զի յետ
մահուանն ոչ կարէ օգնել խոստովա֊
նութիւն , քանզի դժոխայինքն յայտնա֊
պէս խոստովանին զմեղս իւրեանց , բայց
ոչ օգտեն ։ Զ. զի եթէ ոք եղեալ է՛ 'ի
բա֊

բանտի՝ զոր տարեալ սպանցեն, Թէ դու-
ռն ամրագոյն փակած լինի՝ չէ՛ զարմանք
Թէ ո՛չ փախչի բանտարգելն այն ,
այսպէս որ 'ի մահու չափ մեղս է՛ 'ի սա-
տանայի բանտն է՛ և մահապարտ է՛, դու-
ռն բանտին բերան մեղաւորին է՛ և այս
դուռս փակ ո՛չ ունի բնաւ , և յորժամ
բանայ մեղաւորն զբերանն առաջի խոս-
տովանահօրն 'ի նմին ժամու ելանէ 'ի
բանտէն սատանայի, վասնէ յիմարքեան այ-
նոքիկ, որք ծուլանան 'ի խոստովանութեն
և ո՛չ ելանեն 'ի բանտէն սատանայի ։ Է.
Թէ դրամաճանանց , այսինքն , սուտաք ,
կամ վաճառականն ո՛ք բանայ զգանձ իւր
և աղաղակէ առ ամենեսեան , որ ո՛ք
ունիցի զայլ դրամ՝ բերցէ առիս,
որ ես մաքուր ոսկոյ հետ փոխեմ , և
որք անմաքուր ոսկի ունէք՝ բերէք , որ-
ես պատուականն ոսկի հետ փոխեմ,
և յորժամ լսէին զայս մարդիք , ո՛չ ո՛ք
ծուլանայր՝ այլ փութով գային ։ վա-
ճառականս այս խոստովանահայրն է՛ և
վարդապետն , և գանձատուն նմա եկե-
ղեցին է՛ որ լի՛ է՛ բազում հոգևոր ոսկով-
քք և մարգարտով, յամէն օր կու կանչէ
յորժամ քարոզ կուտայ , Թէ օ՛վ մեղա-
ւորք բերէք զձեր մեղքդ որ զայլ փողէ,
և տամ ձեզ զմաքուր ոսկի և զմարգա-

ար-

արծաթ, այսինքն, զմեղաց թողու-
թիւն, բերէք զմեղքդ և զխոստովանու-
թիւդ որ ծանր է՛ քան զքար, և պնդու-
թիւն զերկաթ, և առէք զմարգարիտ
և ականս պատուականս, այսինքն,
զփառս հրեշտակաց, և մեղաւորք յոյժ
կու ծուլանան ՚յայս հոգևոր հարս-
տութէս և ըստակէս, և լուրեանցն ղալպ
է՛ և ոչ փոխեն ։ և Թէ այսպիսի ղալպ
ստակս, այսինքն, զմահու չափ մեղս
գտանէ Քծ ՚ի մահուան օրն ՚ի սնտուկ
մարդոյն, այսինքն, ՚ի հոգին՝ առա-
քէ զնա ՚ի դժոխքն ։ որպէս Թագաւոր
ոմն Թէ գտանէ զող, որ կտրեալ է՛ ղալպ
ստակ՝ հրամայէ սպանանել զնա, վասն
ոչ է՛ պարտ պահել զմեղքն՝ այլ փու-
Թով փոխել ընդ ոսկոյ, այսինքն, ընդ
սրբութե հոգոյ ։ Բ․ զի որչափ մար-
դն ՚ի մահու չափ մեղքն է՛ բարկու-
Թիւն Այ ՚ի վր նր է՛, և Քծ ունի ՚ի
ձեռին զնետ և զաղեղն զի սպանցէ
զմեղաւորն, որպէս ասէ Սղս ։ Թէ
զսուր իւր սրեալ է՛ և զաղեղն իւր լա-
րեալ, և որչափ մեղաւորն ՚ի մեղքն
յամէ՝ առաւել հեռանայ ՚յԱյ ։ Նետ,
այսինքն, դատաստանն, որ առաւել
հրականէ զմեղաւորն, և մեղաւորն ոչ
կարէ Թաքչել կամ փախչել ՚ի նետէ

քար-

քարկութեան այ, զի նեռն այ, հաստանէ յերկնից 'ի դժոխս և յարևելից յարևմուտս և 'ի հիւսիսոյ 'ի հարաւ, որպէս ասէ՛ մարգարէն։ Թէ ելանեմ յերկինս դու անդ ես, թէ 'ի ջանեմ 'ի դժոխս անդի մօտես, թէ առից զթևս իմ և բնակեցայց յեզերս ծովու՝ և անդ ձեռն քո հասանի։ 'Ի սոյն խորհուրդ միրաք ասէ՛ .Ե. գլուխ։ մի՛ յապաղեր դառնալ առ Տր՝ և մի՛ ընկեններ 'ի վաղիւն, զի յանկարծակի հասցէ բարկութիւն նր և կորուսցէ զքեզ յաւուր վրէժ խնդրութեան նր։ վասնզի փութօվ պիտի դառնալ 'ի բարկութենէն այ, և հաշտիլ ընդ նմա կանուխ մինչ առողջ է՛, հաշտի ընդ նմա և Քհ՝ խոստովանութեամբ առաջի խոստովանահօրն, որ 'ի տեղի այ է՛։ իսկ՝ որք ոչ խոստովանին մինչև 'ի հիւանդութիւն իւրեանց՝ յիմարքեն այնպիսիքն։ և այս ցուցանի .Ե. պատճառօք .ա. զի եթէ ոք 'ի հիւանդութեան յայտնէ զմեղս իւր առաջի հոգևոր բժշկին՝ յայնժամ զխրատ նր ոչ կարէ կատարել, զի 'ի հիւանդութեան ոչ կարէ աղօթել կամ պահք պահել, կամ այլ առաքինութիւն առնել, այլ լինի բազում անգամ որ 'ի հիւանդութեան լեզուն կապի՝ և ոչ կարէ խոստովանիլ զմեղս, և թէ լեզուն ար‿

ձակ

ձայն լինի ՚ի հիւանդութեան, այլ վս բա-
զում և խիստ ցաւոցն, և վս ընտանեաց
բազում հոգոցն ո՛չ կարէ այնպէս յստակ
և մաքուր խոստովանել, որպէս ՚ի ժամա-
նակս առողջութեան, վասնզի պարտ է՛ յառաջ
քան զհիւանդութիւն խոստովանել ։ Բ․ զի
որ յապաղէ և ո՛չ խոստովանի մինչ ՚ի
մահուան օրն՝ յայնժամ ծանր հիւանդ-
լինի, և թէ խոստովանի յայնժամ՝
խոստովանի վս ահի մահուն, և խոս-
տովանութիւն այն՝ չէ գեղեցիկ առա-
ջի այ, զի բռնութբ լինի և յերկիւղէ ։ քան-
զի զմուռն ․ Բ․ ազգ է ․ Ա․ այն է՛ որ ինքն
ըստ ինքեան ՚ի ծառէն իւրոյ գայ, և
երկրորդն այն է՛ որ բռնութբ գայ ծա-
ռէն ՚ի դուրս, յորժամ ծակծակեն
սով ։ այն որ ինքն յինքենէ եղանի՝ յոյժ
գեղեցիկ է՛ և անուշահոտ, այլ այն որ բռ-
նութբ եղանի չէ՛ այնպէս գեղեցիկ, արդ՝
զմուռս այս որ անուշահոտէ, բայց համն
դառնէ, վասնզի սպանանէ զորդունս և պա-
հէ անապականս զմարմինն ։ զխոստովանու-
թիւն ցուցանէ՝ որ գեղեցիկ հոտ ունի
առաջի այ, բայց համն դառնէ զի ա-
մաչէ խոստովանողն յայտնելով զաղտե-
ղութիս, սպանանէ զորդունս, այսինքն,
զանցեալ գործած մեղսն, և պահէ ըզ-
մարմինն անապականս, այսինքն, ՚ի մե-
ղացն

զայն որ գաւրոցէ, և այս հոգևոր զմտաւս որ է՛ խոստովանութիւն՝ յորժամ կամաւ լինի յոյժ գեղեցիկ է՛ ՚ի ժամանակս առողջութե ։ Գ․ որ յապաղէ մինչ ՚ի մահու հիւանդութիւն և ապա՛ խոստովանի՝ ոչ է՛ այնպէս պատուական, վասն ած՛ ասէ՛ սիրաք ․ԺԵ․ գլուխ ։ յորժամ կենդանի իցես և առողջ՝ խոստովանեա՛ և տուր փառս այ, և ճանաչես ողորմութեն այ ։ Դ․ զի որ յապաղէ զխոստովանութիւն մինչև ՚ի հիւանդութիւն կամ ՚ի ծերութիւն՝ լինի որ մոռանայ զմեղքն, և թէպէտ մարդն չիցէ մոռացեալ զմեղքն ՚ի ծերութեն, այլ ամաչէ խոստովանել զմեղքն որ ՚ի տղայութեն է՛ գործեալ, վասն լաւէ յորժամ մեղք գործեն շուտով խոստովանիլ ։ Ե․ զի քահանայն երթայ առ հիւանդն՝ վս ․Բ․ իրաց, այսինքն, խոստովանացուցանելոյ և հաղորդելոյ, և յորժամ հիւանդն կամի խոստովանիլ տունն չէ՛ լինի մարդօվ, յայնժամ դժուարէ ՚յերկարապէս խոստովանիլ զի մարդիքն դժարապէս ելանեն ՚ի դուրս, և թէ երանեն հիւանդն ամաչէ ՚յերկար խոստովանիլ ։ վասն պատրաստիլ պարտ է՛ խոստովանութք ՚յառողջութեն, զի յորժամ հի՛ւանդանամ, քահանայն յառաջ երթայ

՚ի տեսն

՚ի տես հիւանդին՝ եւ ՚ի լման զխոստովա-
նութիւն լսէ , եւ ապա յետոյ տանի
զհաղորդն ։ Այլ որք յապաղեն ՚ի
խոստովանել ՚յաղուհացեցն մինչեւ ՚ի յե-
տին շաբաթն՝ խիստ յիմարութի առնեն
վս .Ե. պատճառի ։ Ա. պատճառ զի
որպէս պարտ է՛ նախ զձեռն լուանալ եւ
ապա ուտել ըզմարմնաւոր կերակուրն
եւ անպատշաճ է՛ աղտոտ ձեռօք հաց
ուտել՝ այլ լուանալ ։ Այսպէս պահքն
եւ աղօթքն հոգեւոր կերակուրքեն պարտ
է՛ նախ լուանալ զհոգին խոստովանու-
թբ եւ ապա ուտել զնոսա , վսնզ յի-
մարքեն, որք նախ ուտեն զհոգեւոր կերա-
կուրն՝ եւ ապա լուանան զհոգին ,
այսինքն , որք պահեն զպահս՝ եւ մերձ ՚ի
զատիկն խոստովանին , զի պարտ է՛ նախ
զկարասն լուանալ եւ ապա զգինի ածել ՚ի
ներս ։ Բ. զի .Է. շաբաթու աշխատանքն
կորուսանեն՝ վս մին պահու աշխա-
տանացն , զի մին օր պահք յետ խոս-
տովանութեն , որ մին պահ կու խոս-
տովանի լաւ է՛ քան .Խ. աւուր պա-
հքն , որ մեղք ունէր եւ չէր խոստովա-
նեալ ։ Գ. զի կերակուրն որ Ա.ծ յառաջ
կու խնդրէ՝ դու յետոյ կուտաս , այսինքն ,
զխոստովանութիւն որ Ա.ծ յառաջն կու
խնդրէ քան զպահքն եւ զաղօթքն որպէս

ասէ՛ Սղ̅մ: կանխեսցուք առաջի նր̅ խոս-
տովանութբ̅, և ապա՛ Սղ̅մ̅իւք աղաղա-
կեսցուք առ նա՛: Թէ զայս կարգս փո-
խես՝ քո՛ հոգևոր հայցներուած և պա-
տիւն՝ ո՛չ թո՛ւի այ̅ քաղցր և հեշտ:
Դ. զի որք յետ քան զպահքն խոստո-
վանին, նմանեն այնոցիկ ո՛ր նախ զար-
տն հնձեն և ապա՛ քաղհանեն կամ
որք զայգին կթեն, և ապա՛ բրեն և յա-
տեն; վ̅ս զի պահքն և աղօթքն և ողոր-
մութիւն հունձք են և կութք, նախ խոս-
տովանելովն՝ քաղհանելէ՛ և յատել և
բրել: Ե. զի որք յետոյ քան զպահքն
խոստովանին նմանեն այնոցիկ որ դեղ
դնեն ՚ի վ̅ր խոցին, բայց սլաք նետին
դեռ ՚ի ներս լինի, նախ պարտ է՛ զսլաք մա-
հու չափ մեղացն ՚ի բաց հանել խոստո-
վանութբ̅՝ և ապա՛ զդեղ պահոց և
աղօթից ՚ի վ̅ր դնել՝ որ փութով առող-
ջանա՛: յայտնանէ՛ երևի թէ ո՛չ է՛ պարտ
յապաղել ՚ի խոստովանութի̅, այլ պարտ
է՛ փութով խոստովանել, զի հի՛ւանդն
որ ջերմութբ̅ վառեալ է՛, յորժամ ածե-
լեն զմազ գլխոյ նր̅՝ թեթևանա՛յ ՚ի ցա-
՚ւոցն: այսպէս մեղաւորն որ այրի մա-
հու չափ մեղօք՝ յորժամ մաքրեն զհոգի
նր̅ ածելեաւ խոստովանութբ̅ն ՚ի մահու
չափ մեղացն թեթևանա հոգի նորա ՚ի

ծան-

ծանրութե̃ մեղացն վասն ․Ե․ գլխն Եզեկի֊
ելի հրամայէ Ա̃ծ ։ որդի մարդոյ ա՛ռ
քեզ սուր յեսանասուր , և ածիցես զայն
զգլխով քո և զմորուօք , և ածցես քեզ
կշեռս և կշռեսցես զնոսա , զչորրորդ֊
մասն հրով այրեսցես, և զչորրորդ մասն
կոտորեսցես սրով, և զչորրորդ մասն հոս֊
եսցես հողմոյ՝ և զսուրն արձակեսցես
զկնի նց̃, և առցես անտի սակաւ ինչ
թի՛ւոյ և ծրարեսցես 'ի տուտն հան֊
դերձի քո ։ Իսկ հոգև որպէս մաղ զմեղքն
ցուցանէ , և սուր ածելի զխոստովա֊
նութիւն, և խոստովանահայրն է՝ 'ի տեղի
սափրողին, այսինքն, դալաքի, պարտ է՝ որ
զհոգի մեղաւորին մաքրէ՝ յամենայն մե֊
ղաց որ մեղք չմնայ, զայս մասս պարտ է՝
դ̃․ բաժինս առնել՝ վս̃ զի մեղքն ․դ̃․
բաժինս է՝ ։ Առաջին մասն մեղացն աղ֊
տեղութիւնն է՝ , և զայս մասն պարտ է՝
հրով այրել, այսինքն, հրով հոգւոյն,վս̃ զի
հուր հոգւոյն որ է՝ Ա̃ծ այնն սէրն՝ մաքրէ
զամենայն աղտեղութ̃ի մեղաց ։ Երկրոր֊
մասն մեղացն է՝ գործ մեղացն, և զայս
մասն պարտ է՝ կոտորել սրով խոստո֊
վանութ̃ե̃ն մանր, զի ո՛չ է՝ պարտ զնոց
մեղացն խոստովանիլ միայն՝ այլ և զա֊
մենայն պարագայս մեղացն որ ծանրա֊
գոյն առնեն զմեղքն , զոր օրինակ զո֊

դութեն մահու չափ մեղք է՛, այլ բա-
զում ունի պարագայք, թէ գողացեալ է՛
յեկեղեցւոյ ծանրագոյն է՛, կամ յա՛ւուր
պահոց և տօնից արարեալ է՛ գողութի,
կամ թէ շատ գողացեալ է՛ թէ քիչ, և
թէ հարուստ գողացեալ է՛ և թէ յաղ-
քատէ, թէ բազում անգամ արարեալ է՛
համարօվ և թէ փոքր ։ այսպէս խոս-
տովանիլ մանր զամենայն ազգ մեղաց
պարագայսն ։ Երրորդ մասն մեղացն է՛
հեշտութի մեղացն պարտ է՛ զայն հողմով
հոսել, այսինքն, հեռացուցանել ՚ի սր-
տէն զհեշտութի մեղացն, որ այլ բնաւ
չանկանի ՚ի սիրտն, և թէ դարձեալ
սատանայ ձգէ ՚ի սիրտն զհեշտութի
անցեալ մեղացն՝ պարտ է՛ զսուր խոստ-
վանութեն քարշել ընդդէմ մեղացն, և
փախուցանել զնա՛, և ասել ո՛չ կամիմ
գործել, զի միւսանգամ խոստովանեցայց ։
և դարձեալ ամօթ և նախատինս կրե-
ցից յո՛յ, և ՚ի խոստովանահօրէն ։ Դ.
մասն է՛ գարշելի հոտ մեղացն և զայս
մասն պարտ է՛ ՚ի հանդերձս ծրարել,
այսինքն, զգարշահոտութի մեղացն միշտ
՚ի միտ ածել զի խոնարհեսցուք առա-
ջի այ, և զմեզ խոտանս համարես-
ցուք ։ Իսկ զսուր խոստովանութեն
պարտ է՛ ունել յեսանաւ, այսինքն, եր-
կեղիւ

կեղծիս դատաստանին ա՟յ , վ՟ս զի որ խոս-
տովանի և որ խոստովանութե՟ն լսէ՝ պար-
տին երկոքինքն ևս երկնչիլ յա՟յ ։ և մի՛
ծուլասցի խոստովանողն ՚յասելոյն՝ և
խոստովանահայրն ՚ի հարցանելոյն և Ք՟ն
օրհնեցելոյն փառք յաւիտեանս ։ Ամէն ։

# Ք Ա Ր Ո Զ

## Խոստովանութե՟ ։

ԱՐԴ՝ ԵՐԹԻՑՈՒՔ երից աւուրց ճանապարհ և
զոհեսցուք տ՟ն աստուծոյ ։
ելք ե՟. գլուխ ։ վարդապետք ասեն թէ
սրբ՟հի Ա՟ծածինն նմանէ լերինն վասն . գ՟ .
պատճառի ։ ա՟ . պատճառն՝ զի լեառն
հաստատ է՛ յոյժ , այսպէս սրբուհի
Ա՟ծածինն անշարժ է՛ և հաստատ ՚յու-
խտ կուսութե՟ն և ՚ի հաւատոյն Ք՟ի քան
զամենայն ս՟րբս , և անբիծ ՚ի վարս ա-
ռաքինութե՟ն և ո՛չ երբէք շարժեցաւ ։
վ՟նի ասէ՛ Սաղմոսն ։ յուսա՛ ՚ի Տ՟ր որպէս
լեառն սիոն , զի մի սասանեսցի յաւի-
տեան ։ Առաքեալքն թէպէտ նմանեն
լերինն , այլ յառաջ քան զգալուստ հո-
գւոյն սրբոյ շարժեցան ՚ի հաւատոցն
՚յաւուրս չարչարանացն Ք՟ի , որպէս
ասէ՛ Աւ՟տն ։ հեծմունք լերանց սասանե-

 ցան

ցան և խռովեցան ։ քանզի առաքեալքն
երկբայեցան 'ի Քս , վասն թողլն
զնա և փախեան , այլ սբհի Ածածինն
իբրև զլեառն սիոն անշարժ մնաց , և ոչ
երբէք երկբայեցաւ 'ի Քն Աստու֊
թէն , զի յորժամ ծնաւ՝ 'ի նմին ժամու
երկրպագեաց նմա , յորժամ ետես 'ի խա֊
չին բևեռեալ՝ ճշմարիտ Ած հաւատաց
զնա , վասն ոչ մեկնեցաւ 'ի նմանէ ։ և այս
յոյժ պատշաճէր , զի Արիստոտէլ ասէ՝ թէ
պարտ է՝ որ ամենայն գնացք և շար֊
ժումն 'ի վր հաստատ իրաց լինի , վասն ոչ
կարէ գնալ ոք 'ի վր օդոյ և ջրոյ , զի ոչ
է՝ հաստատ , այլ և գնալով 'ի վերայ ա֊
ւազոյ՝ փութով վաստակի ոք , զի ոչ է՝
կատարեալ հաստատ , այլ 'ի վր ցամաք
և հաստատ գետնի լաւ երթան , և զի
մեք երթամք 'յերկինս արքայութին ,
և մեր հիմն է՝ սբհի Ածածինն 'յոր֊
մէ ծնաւ Քս , վասն պարտ է՝ , զի նա
հաստատ և անշարժ լինիցի ։ Երկրորդ֊
պատճառ , զի լեառն բարձր է՝ քան զա֊
մենայն երկիր , այսպէս սբհի Ածածինն
բարձրագոյն սբհի է՝ քան զամենայն
սբս 'յայս կենդս մր վարուք , և 'ի
հանդերձեալն փառօք և մեծութբ , որպ
ասէ Եսայի . Բ . գլխ ։ յայտնի լիցի
լեառն տեառն 'ի վերայ գլխոց լերանց և

բար֊

բարձրացի 'ի վերայ ելլոց ։ և 'ի բար-
ձրութէ այս իմանալի լերինս որ է՛ ս̃բ հ̃ի
կոյսն ․ ե̃․ ազգ օգտութիւն երևի ․ ա̃․
զի 'ի գլուխ լերինն առողջարար լինի
օդն՝ և որ անդ բնակի՛ առողջանայ ,
այլ 'ի խոր ձորն օդն վատառողջ՝ և որ
անդ բնակի՛ բազում հի՛ւանդութիւն կրէ ,
այսպէս մարդիք , որք բնակին 'ի ձորս հե-
շտութե մեղացն 'յաշխարհս՝ սրտի մտօք
բազում ազգ հի՛ւանդութիւն կրեն ըստ
հոգւոյ ։ Այլ յորժամ բնակին 'ի լեառնս
իմանալի որ է՛ ս̃բ հ̃ի Ա̃ծածինն՝ առողջա-
նան հոգւով ։ ե̃․ օգտութիւն , զի այն-
պէս բարձր է՛ լեառնս այս որպէս լեառն
Ոլիմպոս՝ ուր ո՛չ լինի հողմ կամ ան-
ձրև և կամ ձիւն , ուր երթային իմաս-
տասէրքն և գրէին զգիր 'ի վերայ գետնի՝
և այնպէս խաղաղէր 'ի հողմոյ և 'յան-
ձրևէ , որ 'ի գալ տարին յորժամ երթային՝
դարձեալ անդր տեսանէին զնոյն գիրն
որ ո՛չ էր աւերեալ , այսպ̃ որ ինչ շնորհք
և առաքինութիւն , որք գրեցան 'ի սիրտ
Ա̃ծածնին 'ի հոգոյն ս̃բյ՝ ո՛չ երբէք ջն-
ջեցան , այսպէս բազում ինչ բարի գրեալ
լինի 'ի սիրտ մարդոյս , այլ անձրև և գէշ
ցանկութե , և հողմն հպարտութե ջնջէ
զայն ։ վ̃ն որ կամի ուսանել զԱ̃ծային
իմաստութի՝ երթայցէ առ ս̃բ հ̃ի Ա̃ծա-

ծննն որ է՛ վարժարան Ջայնին , և
ուսցի զճշմարիտ գիտութի : Նմ́ և զա-
շակերտաց պէտքն սրբհի Ճածնին առ-
նէ , զի սմ́ է՛ լեառն Քորեփ՝ որ Թար-
գմանի սեղան , զի սեղան հոգևոր է՛ լց-
եալ ամենայն հոգևոր կերակրօք : Ս ընկ
աղաչեսցուք զնմ́ , զի չնորհեսցէ մեզ խօ-
սել ինչ օգտակար : և վսնկ տաւք ողջոյն
սրհյ Ճածնին : Արդ երթիցուք երից
աւուրց ճանապարհ , յորժամ կամիցի ոք
երթալ ՚ի ճանապարհ ուրեք և ճանա-
պարհն լցեալ լինի աւազակօք , այլ և ոչ
գիտիցէ զճանապարհն այնպիսոյն . ք . ինչ
պէտք են նմա պիտոյ է՛ , զի բազում ըն-
կերք ժողովին , զի թէ ուրէք ուրեք երթան՝
սպանեալք լինին և կողոպտեալք ՚յ աւա-
զակացն , այլ յորժամ բազումք ճանա-
պարհորդակիցք գնան՝ երկնչին աւա-
զակքն և ոչ կարեն վնասել , զի իբրև-
զօրք երևին : ք . պիտոյ է՛ նմա այնպիսի ա-
ռաջնորդ որ զճանապարհն գիտիցէ : Հո-
գևորապէս այսպէս է՛ , զի իւրաքանչիւր
ոք կամի երթալ ՚յ երկնից արքայութին ,
այլ լցեալ է՛ ճանապարհն դժոխային ա-
ւազակօք , որք սպանեն մարդոյն , վսնկ թէ
քրիստոնեայքս բաժանեալք լինին ՚ի մի-
մեանց և այնպէս երթան զճանապարհս
զայս՝ երկիւղ կայ թէ անկանիցին ՚ի ձեռս
դժո-

դժոխային առաջնորդացն, վասնզի պարտ է՛
որ ամենայն քրիստոնեայք ժողովին ՚ի
միաբանութիւն և գնան ընդ Քահանայապե-
տին արքայութեան և այսպէս էին ՚ի սկզ-
բն ՚յաւուրս առաքելոցն, վասնզի ասէ՛
Երգ. Զ. գլուխ: հետևին ընդ միաբանու-
թիւն և ընդ գեղեցկութիւն սրբոյ եկեղեցւոյ
ասելով, ո՞վ է՛ սա որ ելանէ իբրև զա-
ռաւօտ գեղեցիկ, և իբրև զլուսին ըն-
տիր, և որպ զարեգակն լուսաւոր իբրև
զհետևացումն կարգեալ զօրաց: յորժամ ա-
մենայն քրիստոնեայք միաբանին և ընդ
մի գնան զՔահանայապետն երկնից արքայու-
թեան՝ յոյժ ահարկու երևի դիւաց, այլ
այժմ որ բաժանեալքեն ՚ի միմեանց և
այնպէս գնան, կատարի ՚ի վերայ սոցա-
բանն որ ասէ յաւետարանն այր մի իջա-
նէր ՚յԵղմէ ՚յԵրիքով՝ անկաւ ՚ի ձեռս ա-
ւազակաց: քանզի միայն ընթանայր, ապաւ-
րեմն պիտոյ է՛, որ ո՞վ ոք ընթանայ ՚յերկնից
արքայութիւն բազում ընկերս ունիցի, այլ
այս միայն ո՛չ է՛ բաւական, այլ երկրորդ
պիտոյ է՛, զի բարի առաջնորդ լինիցի ՚ի
Քահանայապետին և գլխաւոր, որ զբարի Քա-
հանայապետն գտանիցէ, զի ՚ի կեանս ՚յայս՝
Գ. Քահանայապետ երևի, Քահանայապետ կե-
նաց՝ և Քահանայապետ մահու, որպէս ասէ՛
Երեմիոյ. ԺԳ. գլխ: ահաւասիկ ես ե-

դի

դի առաջի երեսաց քոց զճանապարհս
կենաց և զճանապարհս մահու և սի-
րաք . ԺԵ. գլխ : առաջի մարդոյն կեանք
և մահ, բարի և չար, և զորինչ կամի
՚յայնցանէ տուեալէ նմա : Առաջինն՝ բա-
րի ճանապարհ Քս̅ է, զի գրեալէ ՚յա-
ւետարանն՝ վարդապետ բարի գիտեմք,
զի ճշմարիտես և զճանապարհն Այ̅ ճշ-
մարտութբ̅ ուսուցանես : և դարձեալ
ասէ, եսեմ ճանապարհ ճշմարտու-
թի և կեանք : Նա բարի առաջնորդն եւս
ինքն Քս̅ է, որ խրատ տայ մեզ թողուլ
զճանապարհն մահու՝ և գնալ ՚ի ճա-
նապարհ կենաց, վասն զի գրեալէ ՚ի գիրս
ծննդոց . ԻԶ. գլխ : երևեցաւ Տր̅ Իսա-
հակայ և ասէ, մի իջաներ ՚յԵգիպտոս՝
այլ բնակեա ՚յերկրին, որում ասացի,
քեզ, և պանդխտեաց ՚յերկրիս ՚յայսմիկ,
և եղեց ընդ քեզ՝ և օրհնեցից զքեզ :
Իսահակ զապաշխարողս ցուցանէ, զի Ի-
սահակ ծաղր Թարգմանի, զի զի ապաշխա-
րողն ուրախացուցանէ զվերինն Երուսա-
ղէմ, զի ուրախանան Ած̅ և հրեշտակք
ընդ ապաշխարութի միոյն, որպէս ասէ
աւետարանն, Թէ եղիցի ուրախութի
՚յերկինս վս̅ միոյ մեղաւորի որ ապաշխա-
րիցէ, այսպիսոյս բարի խրատ տայ Ած̅
չդառնալ ՚յԵգիպտոս, այսինքն, ՚ի մահու

չափ

չափ մեղս որ է՛ ի դուռն դժոխոց, այլ պանդխտել յապաշխարութիւն: զի աստ ոչ ունիմք գաւառ՝ այլ պանդխտիմք, քանզի աշխարհս այս ոչ է՛ մեր քաղաք, այլ երկինքն: յոյժ յիմարքեն այնոքիկ՝ որք թողուն զերկինքն, այսինքն, արքայութիւն՝ եւ վազեն ՚ի դժոխս: եւ այն որ մեր քաղաքէ՛ ՚ի մօտէ, զի ասէ՛ աւետարանն ապաշխարեցէք, զի մերձեալ է՛ արքայութիւն երկնից, եւ այնպէս մերձեալ է՛ որ ․գ․ օրեամ ճանապարհաւ կարեմք անդր հասանել: վասն ասէ՛ ՚ի գիրս ելիցն, թէ Ա՟ծ եբրայեցւոցն կոչեաց զմեզ առ ինքն: արդ երթիցուք երից աւուրց ճանապարհ յանապատն, եւ զոհեսցուք Տ՟ն ա՟յ մերոյ, գուցէ պատահիցէ մեզ ժանտ կամ սպանումն: Եգիպտոս զմահու չափ մեղքն ցուցանէ, կամ զդժոխքն, քանզի Թարգմանի Եգիպտոս խաւար կամ նեղութի՟, իսկ խաւարին եւ նեղութիւն է՛ ՚ի մահու չափ մեղքն՝ եւս առաւել ՚ի դժոխքն, ապաուրեմն որ կամի հասանել յերկնից արքայութիւն՝ հարկէ նմա ելանել յԵգիպտոսէ, այսինքն, ՚ի մահու չափ մեղացն, որ է՛ դուռն դժոխոց, եւ երթալ յանապատ երից աւուրց ճանապարհ՝ որք են ․ա․ զղջումն ․բ․ խոստովանութիւն ․գ․ ապաշխարութիւն: գուցէ պատահիցէ ՚ի վերայ նոցա

տան

տանջանք քաւարանին որ է՛ ժամը, և սպառնումն որ է՛ տանջանք դժոխոցն և յաւիտենականն մահն ։ Եւ նախ ասասցուք այս երից աւուրց ճանապարհս հասարակաբար, և յետոյ ասասցուք յիւրաքանչիւրոցն առանձինն որոշ որոշ, նախ ՚ի զղջմանէն . բ. ՚ի խոստովանութենէն . գ. յապաշխարութենէն։ Եւ վասն երից աւուրց ճանապարհս հասարակաբար . ա. ինչ գիտելի է՛ . ա. զի նոքին որք միմեանց հակառակք են առողջացուցանեն զիրեարս . որպէս տաք դեղն զհով ցաւն հանէ ։ Իսկ մեղաւորն . գ. ազգ պատերազմի ընդ ԱԾ, նախ խորհրդով մեղօքն ։ բ. բանիւ մեղօքն։ գ. գործով մեղօքն ։ վասն այնորիկ . գ. կերպիւ՛ պարտ է՛ հաշտեցուցանել զԱԾ ։ նախ զղջմամբ սրտին ։ բ. բանիւ խոստովանութեամբ ։ գ. գործով ապաշխարութեամբ ։ Երկրորդ գիտելի է՛, զի այս երից աւուրց ճանապարհս ապաշխարութեան, ցուցանէ զայն . գ. աւուրքն, յորս Քն մեռեալ էր և յարեաւ ։ այլ այն . գ. աւուրցն Քի, առաջին օրն կարճէր, և ոչէր ՚ի լման, զի ուրբաթի օրն յետին ժամուն աւանդեաց զհոգին ։ Իսկ երկրորդ օրն ՚ի լմանէր և երկայն ։ բայց երրորդն կարճէր, զի ոչէր ՚ի լման, զի յառաւօտու միաշաբաթին յարեաւ ։ այսպիսի հոգւոյ մեռելութէ և

մեք

մեք յետերից աւուրց յառնեմք , այլ ա-
ռաջին օրն կարճէ , և ոչ է՛ ՚ի լման օր ,
այսինքն, զղջումն սրտին , զի սակաւ մարդ-
կանցն որ կատարեալ ցաւ ունի՛ ՚ի սիրտն
իւր մեղացն , զի թէ ցաւ և հեծե-
ծումն սրտին ՚ի լման լինէր այնպէս՝ որ
սիրտ մարդոյն ճաքէր ՚ի յոյժ տրտմու-
թէ մեղացն , և մարդն մեռանէր՝ ՚ի
նոյն ժամայն թռչէր ՚յերկնից արքայու-
թիւն : իսկ երկրորդ օրն երկայնէ , զի պարտ
է՛ որ խոստովանութիւն ՚ի լման լինի որ
կամաւ զմեղքն չծածկէ , զի եթէ զմին
մահու չափ մեղքն կամաւ ծածկէ՛ այն
խոստովանութիւն ոչինչ է՛ : բայց երրորդ
օրն ես կարճէ , քն զի ապաշխարութիւն
որ աստ կրեմք՝ ոչ լինի երբեմն ՚ի լման ,
քան զի սակաւ մարդ կարէ կատարեալ
ապաշխարել ՚յայս կենանքս , այլ բա-
ժին մի՛ աստ , և բաժին մի՛ ՚ի քա-
ւարանն : Երրորդ գիտելի է՛ , զի երից ա-
ւուրց ճանապարհս այս ցուցանէ այն ·դ·
աւուր ճանապարհն , որ սէ̄հի Ս̄ծածկին
զիւր որդին կորուսեալէր և գտաւ : և
այսպէս ամենայն ոք որ կորուսանէ զոր-
դին ա̄յ մահու չափ մեղօք կարէ գտա-
նել զնա զղջմամբ , խոստովանութբ , և
ապաշխարութբ : Չորրորդ գիտելի է՛, զի
մեղաւորն երթայ ՚ի դժոխս · դ· աւուրց

ճա-

Ճանապարհ . ա. խորհրդով մեղացն . բ.
հաւանելով մեղացն . գ. 'ի գործելն զմե-
ղքն . դ. հաւանել մեղաց իւրոց՝ և ան-
զեղջ մնալ 'ի մեղս մահու չափ մինչև 'ի
մահ ։ Յերից աւուրց Ճանապարհէն դար-
ձուցանէ Տ՟ր զմեղաւորն , այլ 'ի չորրորդ-
աւուր Ճանապարհէն ոչ դարձուցանէ
զնա յետ , վ՟նի ասէ Ամօվս . ա. գլուխ ։
և ասէ Տ՟ր 'ի վ՟ր երից ամբարշտութեցն
Դամասկոսի , և 'ի չորիցն ոչ դարձուցից
զնա ։ Հոգևորապէս զայս ցուցանէ բանս
մարգարէիս թէ . գ. ազգ մեղացն որ է՛ . դ.
աւուր Ճանապարհ որ տանի 'ի դժոխքն՝
զմեղաւորն դարձուցանել , այսինքն , 'ի
չար խորհրդոցն , և 'ի հաւանելոյն , և 'ի
գործելոյն դարձուցանէ երից աւուրց
Ճանապարհաւն՝ որ է՛ զղջմամբ , խոս-
տովանութբ , և ապաշխարութեամբ ։
այլ յորժամ մեղաւորն յաւելու զչորրորդ-
աւուր Ճանապարհն՝ որ է՛ անզեղջ մնալն
'ի մեղքն մինչ յօր մահուն՝ յայնժամ ոչ
դարձուցանէ Տ՟ր զմեղաւորն , զի հա-
սեալ է՛ 'ի նաւահանգիստն դժոխոց ։ Հինգ
երրորդ գիտելի է՛ զի գրեալ է՛ յաւետա-
րանն թէ . գ. մեռեալս յարոյց Ք՟ս 'ի մե-
ռելոց , բայց զանազանութի է՛ 'ի մէջ նց
բ. ազգ ։ ա. զի առաջին մեռեալն որ
աղջիկէր՝ 'ի տանն յարոյց , և զերկր-

մե-

մեռելոյն որ պատանի էր որդի այրւոյն՝
՚ի դուռն քաղաքին յարոյց, զերրորդ-
մեռելոյն որ էր Ղազար՝ ՚ի գերեզմանէն
յարոյց ։ Ե․ զհանգամանութիւն, զի զառաջին
մեռելոյն հեշտ յարոյց՝ բանիւ միայն ա-
սելով աղջիկ քեզ ասեմ արի ։ զերկրորդն՝
տեսաւ մի աշխատութեամբ յարոյց, զի մեր-
ձեցաւ ՚ի դագաղն և կոչեաց զնա և
յարոյց ։ այլ զերրորդն յոյժ աշխատա-
նօք յարոյց, զի եկաց ՚ի վերայ Ղազարու՝
և աղօթեաց առ Ած և ասէ՝ ցՄար-
թա՛ և ցՄարիամ ՚ի բաց արարէք զվէ-
մդ, և ինքն ՚ի ձայն մեծ և բարձր ա-
ղաղակեաց և ասէ՝ Ղազարէ՛ արի՛ եկ
արտաքս, և հրամայեաց առաքելոցն լու-
ծանել զնա, և ՚ի վեր երրորդ մեռելոյս
ամենեքեան զբաղեալք էին ո՛չ թէ դժու-
արին էր ՚Քի յարուցանել զմեռեալս,
զի կատարեալ Ած էր և զօրութիւն նրա ան-
չափ, այլ այսպէս արար, զի ծանուս-
ցէ թէ մեղք քան զմեղք ծանրագոյնք են ։
զի այս ․Գ․ ազգ մեռեալքս՝ Գ․ ազգ մեղքն
ցուցանեն ․ Ա․ մեռեալն որ աղջիկն էր ՚ի
տանն՝ զխորհրդով մեղքն ցուցանէ, զի յոր-
ժամ խորհրդովս հաւանի՛ մեղացն մե-
ռանի՛ հոգին այլ ՚ի տանն, ո՛չ յայտնի ար-
տաքոյ ․ Բ․ մեռեալն որ պատանին էր ՚ի
դուռն քաղաքին, ցուցանէ զայն՝ որ մեղք
է՛ գործ-

է՛ գործեալ մահու չափ 'ի միտքն , և
յայտնէ զմեղս նոր, լեզուաւն խոսելով
զխեղկատակութի , զոր ինչ խորհրդով
ունէր 'ի սիրտն , և այս ծանր մեղք է՛ ։
Իսկ երրորդ մեռեալն որ Ղազարոս էր ,
ցուցանէ զայն՝ որ զմահու չափ մեղքն
գործով է՛ կատարեալ և այս յոյժ ծան_
րագոյնէ՛ , և ս առաւել յորժամ 'ի մե_
ղքն սովորեալ է՛ , վասնայնորիկ գրեալէ
Թէ Ղազար չորեքօրեայն 'ի գերեզմանի
հոտեալէ ։ Արդ այս ․դ․ մահուրցս ,
առաջին օրն՝ չարխորհուրդն նշանակէ ։
․բ․ հաճանիլն ։ ․գ․ գործով կատարելն ։ ․դ․
սովորիլ 'ի մեղքն ։ այսպիսի մեղաւորս յոյժ
հոտեալէ՛ առաջի այ և հրեշտակաց ։ և
այս ․դ․ ազգ մեռեալս յարուցանէ ․ ․դ․ ազգ ա_
պաշխարութբ , առաջինն դիւրաւ զղջ_
մամբ սրտի ։ ․բ․ դժուարաւ խոստովանելով
լեզուաւն ։ ․գ․ և ս ծանրագոյն գործով
ապաշխարութեն ։ Իսկ յորժամ ոք սո_
վորեալէ՛ 'ի մեղս պիղծ է՛ , զի ամենեքեան
հոգան զնա , զի եկեղեցին արտաքսէ և
աղօթէ վասն նր և զվէմն 'ի բաց առնու ,
այսինքն , զամենայն արգելմունս որ ոչ թո_
ղու դառնալ զնա , և Քս կենդանա_
ցուցանէ զնա , և քահանայքն որքեն 'ի
տեղի առքելոցն արձակեն զնա , Վեցեր_
րորդ գիտելի է՛ , զի ապաշխարութիւն նշա_
նակէ

նմանեցաւ սանդղաւն Յակոբայ որ հաս_
տատեալ կայր յերկրի, որոյ գլուխն հա_
սանէր յերկինս, և հրեշտակք այ ելանէին
և իջանէին ընդ նմա, և Տր հաստատեալ
կայր ի նմա ։ Այս հոգևոր սանդուխս ·
դ· աստիճանս ունի ։ ա· զղջումն ։ բ· խոս_
տովանութիւն ։ գ· գործով ապաշխարու_
թիւն ։ ընդ այս սանդուխս ի վեր ելա_
նել յոյժ դժուարին է՛, զի առաջին աս_
տիճանն որ է՛ զղջումն՝ ցաւ բազում ու_
նի ։ բ· խոստովանելն է՛ ամօթ բազում ու_
նի ։ գ· որ ապաշխարելն է՛ նեղութիւք և
աշխատանք բազում ունի ։ Իսկ բա_
զում օգտութիւն առնէ սանդուխս այս,
զի յերկինս հանէ զապաշխարօղն ։ և ո՛չ
կայ այլ հնար՝ որով մեղաւորն յարքայու_
թիւն կարիցէ հասանել, եթէ ո՛չ այսու սան_
դխով ։ Արդ՝ մի՛ երկիցէ մեղաւորն ե_
լանել ընդ այս սանդուխս ի վեր, վս զի
պատուիրանն Քի և հրեշտակք օգնել և
մխիթարել զնա, զի հրեշտակքն իջանեն
առ նա, որք յապաշխարութիւն են, պա_
հեն և խրատեն զնա, և ելանեն ի նորա_
նէ յերկինս, զպահս և զաղօթս նորա
տանին առաջի այ ։ այլ և Յս Քս
Ածն մեր հաստատեալ յերկինս ի գլուխ
սանդղոյս է՛ · գ· պատճառի ։ ա· զի որ
ընդ այս սանդուխս ի վեր ելանէ Քս

լինի նմին պատճառաւն, զի մի՛ թեքեալ ան-
կցի ՚ի վայր, այսինքն ՚ի մեղս։ Գ.րդ պահէ
զնա՛, այսինքն, հաւատով, յուսով,
և սիրով։ Բ. Ձեռնտու լինի ապաշխա-
րողին, զի որ աշխատանօք ելանէ ընդ այս
սանդուխս` ՚ի Ք.ս հայի՛, և զամենայն
հոգս իւր ՚ի նմա ընկենու, զի հեշտու-
թեամբ ելցէ ՚ի վեր։ Եւ աստ գիտելի է՛,
զի լինի երբեմն որ երթայ ո՛ք ուրեք և
լինի առաջի նորա Բ. ճանապարհ մինն շի-
տակ և ստոյգ, և միւսն կեռ և խոտոր;
թէ ստոյգ ճանապարհն երթայ` շուտով
հասանի ուր երթալոցէ, եթէ ընդ ծուռ
ճանապարհն երթայ` յուշ հասանի։ զոր
օրինակ Իսրայէլացիքն որք ՚յանապատէն
կամէին երթալ ՚յերկիրն աւետեաց, թէ
՚ի ուղիղ և ստոյգ ճանապարհնէին
գնացեալ` շուտով էին հասեալ անդ, այլ
ծուռ ճանապարհաւն գնացին, մինչ զի
Խ. տարի զմի՛ լեռամբն ՚ի շուրջ եկին, և ՚ի
կատարածին այնպէս հեռի էին ՚յերկրէն
իւրեանց` որպէս ՚ի սկիզբն։ այնպէս ՚յայս
կենացս ՚յերկնից արքայութիւն. Բ. Ճա-
նապարհ կայ, մինն ստոյգ և կարճ, և
միւսն կեռ և հեռի, նոքա երթան զստոյգ
ճանապարհն` որք զկատարեալ ապաշխա-
րութիւն աստ կրեն, և ՚յօր մահուան թռչին
՚յերկնից արքայութիւն։ նոքա երթան կեռ
և

և ծուռ ճանապարհն, որք ՚յառաջ եր-
թան ՚ի քաւարանն՝ որ մօտ է ՚ի դժոխքն.
և այս ՚յերկնից արքայութիւն։ և զայս
քան ՚յերկարութիւն քարշեն և զբազում
տանջանս կրեն քան զնոսա՝ որք ընդ-
ստոյգ ճանապարհն գնան։ Արդ ասա-
ցաք ՚յերից աւուրց ճանապարհէս ՚յայս
հասարակաբար, պարտ է՛ այժմ ասել ինչ
՚յիւրաքանչիւրումեքէ։ Առաջին աւուր
ճանապարհ արքայութեան՝ է՛ զղջումն,
՚յայս զղջմանէս յիշէ Եսայի. լը. գլխ։
խօսի Եզեկիայ ընդ այ̄ և ասէ՛։ դա-
ձեալ խորհեցայց զամենայն ամս իմ ՚ի
դառնութիւն անձին իմոյ։ զի պիտոյ է՛ որ
մեղաւորն զամենայն ամս իւր ՚ի տրտմու-
թե̄ մինչև ՚ի ծերութիւն խորհեսցի, և
ուրանեսցէ զամենայն մեղս զոր գործեալ է՛
զանցեալ ժամանակս. և զդ̄. եղանակս
տարւոյն ուրանեսցէ, թէ զինչ մեղք գոր-
ծեալ է՛ ՚ի նմա։ այլ դառնութբ̄ պարտ
է՛ խոկալ զմեղքն։ և այս է՛ պատճառն,
զի ասեն բժիշկք՝ թէ ազգ մի՛ հիւան-
դութե̄ կայ, որ ո՛չ առողջանայ առանց
յետքերելոյ և փոխելոյ։ այսպ̄ հոգևոր
հիւանդութիւն ո՛չ առողջանայ՝ մինչև
զամենայն մեղս իւր յետ բերէ և փոխէ
խոստովանութբ̄։ բայց այն կերպաւորութն որ
անխորժ է՛ մարդոյն չատա՛ փոխել. այլ է՛ ինչ

որ անախորժ և դառն է՝ այն տայ փոխել։ այսպէս որ ախորժ է՝ քաղցրութիւն ՚ի վ̅ր մեղաց իւրոց՝ ոչ փոխէ խոստովանութիւն։ այլ որ յոյժ դառնութիւն խորհի զմեղս իւր՝ այն է՝ որ փոխել տայ նմա և առողջացուցանէ զհոգին, և այն դառնութիւն ՚ի քաղցրութիւն կու փոխի։ քանզի այս դառնութիւնս որ կրէ ապաշխարողն կատարեալ զղջմամբ՝ ՚ի քաղցրութիւն և ՚ի խաղաղութիւն դառնայ, որպէս ասէ Եզեկիայ յեսայ ՚ի նոյն գլխ։ Թէ ահա ՚ի խաղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ։ դարձեալ ՚յ այսպիսի զղջմանէս ասէ՛ մարգարէն Յովէլ ·Բ· գլխ։ դարձարուք առ Տ̅ր ՚յ ամենայն սրտէ ձերմէ, պահօք լալով և կոծելով, պատառեցէք զսիրտս ձեր և մի՛ զհանդերձս, և դարձարուք առ Տ̅ր Ա̅Ծ ձեր, զի ողորմած է՝ և գթած, երկայնամիտ և բազում ողորմ, և զղջանայ ՚ի վ̅ր չարեաց մարդկան։ մարգարէս այս բարիոք խրատէ դառնալ առ Տ̅ր ՚յ ամենայն սրտէ։ զի ասեն բժիշկք Թէ ուր ցաւն է՝, պարտ է՝ զդեղն դնել անդ։ և արդ՝ հիւանդութիւն մեղացն ՚ի սիրտն է՝, վ̅ս զի նմանէ Թիւնոյ, որ երբ ՚ի սիրտն հասանի՝ սպանանէ զմարդն։ այսպէս յորժամ մահու չափ մեղքն՝ հասանի ՚ի սիրտն հաւանելովն, ՚ի նմին ժամու մե-

ռանի

ւանի հոգւոյն, վասնզի պատճառ է՛ որ զդեղ մեղացն
դնէ ՚ի սիրտն, այսինքն, սկսանի ցաւագին
զղջմամբ պատառել զսիրտն։ Բայց նեղ-
ծաւորքն ո՛չ առնեն այսպէս, չէ՛ զի անդ-
դնեն զդեղն՝ ուր ո՛չ կայ հիւանդութիւն,
զի պատառեն զհանդերձս և ո՛չ զսիրտս,
և տրտմեցուցանեն զերեսս իւրեանց, զի ե-
րևեսցին մարդկան թէ պահեն։ վասնզի մար-
գարէն աղաղակէ ընդդէմ նց̃։ պատա-
ռեցէք զսիրտս ձեր և մի՛ զհանդերձս ։
դարձեալ բարւոք խրատ տայ մարգա-
րէս, զի ասէ՛ դարձարուք առ Տր̃ Այ̃,
զի ողորմած է՛ և գթած ։ զամենայն սուտ
պատճառ՝ որ պատճառէ մեղաւորն ,
և ո՛չ դառնայ առ Տր̃՝ բառնա՛ մարգարէս։
Առաջին պատճառն զոր դնէ մեղաւորն
այս է՛, զի ասէ՛ թէ ես ոչ̃ կարգէն ե-
լեալ եմ և երևէ անկել եմ զիս այլ ո՛չ ըն-
դունի, այլ արտաքսէ զիս, և փակէ զդուռն
ընդդէմ իմ, և այս պատճառս սուտ է՛,
զի ասէ՛ Քս̃ ՚յ աւետարանն թէ որ գայ
առիս՝ ո՛չ հանից զնա արտաքս ։ Երկրոր-
դ պատճառ, զի ասէ՛ մեղաւորն թէ ես
զԱծ̃ վիրաւորեալ եմ, մինչ ՚ի մահ ո՛չ առնէ
ինձ թողութիւն, այլ սպանանէ զիս, և այս
պատճառս ևս սուտ է՛։ զի ասէ՛ մարգա-
րէն Եզեկիել . ԺԸ. գլխ։ մի՛ թէ կամելով
կամիմ զմահ մեղաւորին ասէ՛ Տր̃ Տր̃

որպէս զդառնալն նր̅ ՚ի չար ճանապար_
հէն և զկեալն ։ դ̅. պատճառ դնէ՛ մե_
ղաւորն ասելով, Թէպէտ ո՛չ սպանանէ
զիս Տ̅ր, այլ քաղցր աչօք ո՛չ հայի յիս,
կամ դարձուցանէ զերեսս իւր յինէն, և այս
ևս ոչինչ է՛ ։ զի ասէ՛ Սղմն ՚յ առակաց . ա̅.
գ̅լ̅ւ ։ դարձարուք ՚ի խրատս իմ և ես տաց
ձեզ զհոգի ։ դ̅. զի ասէ՛ մեղաւորն Թէ_
պէտ զիս ընդունի Տ̅ր̅ բայց իմ մեղքն յիշէ
և իմ երեսս տայ, և այս ևս ոչինչ է՛, և
սուտ ։ զի Եզեկիել . ԺԸ. գ̅լ̅ւ ասէ՛ ։ Թէ
անօրէնն դարձցի ՚յ ամենայն անօրէնութեց
իւրոց զոր արար, ամենայն անօրէնու_
Թիք նր̅ մի՛ յիշեսցին ։ Ե. պատճառ
դնէ մեղաւորն Թէ զրկեցայ յիմ
ժառանգութէն, այլ ո՛չ տայ յիս, և այս
պատճառս սուտ է՛, զի ասէ՛ Դաւիթ,
դու ես որ այսրէն դարձուցանես զժա_
ռանգութի իմ ։ զ̅. պատճառ դնէ մե_
ղաւորն Թէ ՚յ առաջին փառքն և պատիւն
ո՛չ հասուցանէ զիս և այս ևս ո՛չ ինչ
է՛ և սուտ ։ զի ասէ՛ Երեմիայ . ԺԵ.
գ̅լ̅ւ ։ Թէ դարձցիս այսրէն պատրաստե_
ցից զքեզ, և առաջի երեսաց իմոց կայց_
ցես ։ վ̅ս ո՛չ մեղաւոր ո՛չ ունիս նե_
րումն չդառնալոյդ առ Տ̅ր̅, զի բար_
ձեալքն ամենայն պատճառք քո՛ ։ և
հասանելոցես ՚յ առաջին պատւոյն քո՛ ։ և

ունիք

ունինք այսմ օրինակ զմատռուակն փա-
րաւոնի , որ վ~ս մեղաց իւրոց անկեա-
լէր 'ի պատուոյն , նաև յետ երից աւուրց
որպէս ասաց նմա յօվսէփ , հասաւ 'յառա-
ջին փառսն իւր : այսպէս որ մահուչափ
մեղօք անկանի 'ի փառաց իւրոց` յետ
երից աւուրց , այսինքն , զղջմամբ , խոս-
տովանութեամբ , և ապաշխարութեամբ հա-
սանելոցէ 'յառաջին փառսն իւր : Յայս-
մանէ երևի , թէ գեղեցիկ է՛ առաջին
աւուր ճանապարհ արքայութեան , որ է՛
զղջումն , և այս առաջին աւուր ճա-
նապարհս , որ է՛ զղջումն` կարճ է՛ , զի ·գ·
մղէ՛ , այսինքն , ·գ· ազգ ցաւ կայ 'յայս
զղջումս , քանզի զղջումն վ~ս մեղացն է՛
և մեղքն ·գ· ազգ պատճառութի և չար
բերէ 'ի վ~ր մեղաւորին : Նախ զի զնա՛
դժոխոցն արժանի առնէ : ·բ· զի կո-
րուսանէ զնա՛ 'յամենայն բարութէ շնոր-
հացն , 'յամենայն առաքինութէ , ըն-
կենու զնա՛ 'ի փառաց` և 'ի մեծութէ
արքայութեն : ·գ· զի բարկացուցանէ
զԱծ : և պարտէ՛ որ մեղաւորն զղջա-
նայ 'ի վ~ր մեղաց իւրոց , վ~ս այս ·գ·
պատճառաց : ·ա· թէ դժոխոցն արժա-
նի եղև : ·բ· թէ կորուսանեցաւ 'յամե-
նայն բարութէ շնորհաց , և ընկեցաւ 'ի
փառաց արքայութեն : ·գ· զի զԱծ

բարկացոյց և կորոյս, և ո՛չ երբէք կա-
րէ տեսանել զնա՛ և այսպէս զղջումն
դժուարինէ՛, զոր օրինակ հաստատեսցուք։
Էր ոմն մարդ որ ծանր մեղք էր գոր-
ծեալ, վասն բարկացոյց զԹագաւորն
և մատնեցաւ և անկաւ ՚ի խուօղութին նր։
սպասաւորք Թագաւորին մերկացուցին
զնա, կապեցին և տանէին որ ՚ի չան-
կայն ձգէին։ Թագաւորն համբերեցաւ
նմա ՚ի ճանապարհին, եհարց ցնա ո՛վ
մարդ ու՛ր երթաս։ Ասէ եթէ ՚ի
մահ երթամ։ ասաց Թագաւորն՝ Թէ ա-
րասցես, զոր հրամայեմ քեզ՝ ազատեցից
զքեզ ․գ․ ազգ չարութէ, որք հասալքեն
՚ի վ̃ր քո՛, և ծանր ինչ ո՛չ հրամայեմ քեզ
այլ Թեթև։ ասաց մեղապարտն Տ̃ր իմ
զոր ինչ հրամայես փութով կատարե-
ցից։ ասաց Թագաւորն՝ այսէ՛ իմ հրա-
մանն, որ տրտմիս վ̃ս մեղացն զոր գոր-
ծեցեր, և վ̃ս ՚ի մահ երթաս, և ես ազա-
տեմ զքեզ ՚ի մահուանէդ։ ասաց մե-
ղապարտն, յոյժ տրտում կամ։ Ասաց
Թագաւորն, դարձեալ հրամայեմ քեզ
տրտմիլ վ̃ս ամենայն բարեացն քոց՝ յո-
րոց մերկացար, և ես զգեցուցանեմ զքեզ։
Եւ ՚ի վ̃ր ամի հրամայեմ քեզ տրտմիլ զի
զիս բարկացուցեր, և ես հաշտիմ ընդ
քեզ՝ և եղիցիս իմ սիրելի։ յայնժամ յօժա-
րապէս

բանզի մեղաւորին այն ընկալաւ տրտմիլ
և լալ ։ նոյն ժամայն Թագաւորին ար֊
ձակեաց զնա, և ազատեաց ՚ի մահուա֊
նէն, և դարձոյց ՚ի նա զամենայն, զոր
ինչ յափշտակեալ էին ՚ի նմանէ, և հաշ֊
տեցաւ ընդ նմա ։ այսպէս մարդս յու֊
ցանէ զամենայն ոք, որ մահու չափ մե֊
ղօք բարկացուցանէ զԹագաւորն Թա֊
գաւորաց ՏՐ ։ Բայց` Թագաւորին ձոր֊
տեր են դևքն, որք մերկացուցանեն զմե֊
ղաւորն յամենայն բարութէ, ՚ի շնոր֊
հաց ; ՚ի մեծութէ և ՚ի փառաց հրեշ֊
տակաց, և կապեն զնա տուամբք մե֊
ղացն, և տանին ՚ի դժոխս ՚ի չանկալն
ձգել ։ զի ՚ի նմին ժամու յորժամ ան֊
կաւ ոք ՚ի մեղս մահու չափ` դատապար֊
տեցաւ կախիլ ՚ի դժոխս, և տուունք
կապեցան ՚ի պարանոց նր, որպէս ասէ
Սղմ ։ տուունք մեղաց պատեցան զինև ։
և Սղմոնն ասէ յառակս . Ե . գլխ ։ անօ֊
րէնութիւք որսան զայր, և ՚ի տուունս մե֊
ղաց կապի իւրաքանչիւր ոք ։ և այս մե֊
ղաց տուունքս` այնպիսի ամուր է, որ ոչ
ոք կարէ կտրել զնա, բայց յայ, որպէս
ասէ Սղմ ։ հատեր զկապանս իմ` քեզ
մատուցից պատարագս օրհնութե ։ այս֊
պիսի մեղապարտ մարդս որ կապեալ
է ՚ի դժոխս երթայ ։ Թագաւորաց Թագա֊
ւորին

ւորն Ած նմա հանդերձեալ, յորժամ զմեղս իւր և զվիշտս իւր ցուցանէ նմա, որպէս ասաց և առ Ադամ ուր ես: և Երեմիայ Գ. գլխ ասէ՛: ամբարձ զաչս քո և տես ո՞ւր ոչ թաթաւեցար: Դարձեալ ասէ՛ Ած ՚ի սիրոյ մեղաւորին, առնու տանի զքեզ սատանայ ՚ի դժոխս, և փոքր իրօք փրկեմ զքեզ, այսինքն, զի տրտմեսցիս վն գնալոյ քո ՚ի դժոխս, դիւրին է՛ մեղաւորին տրտմել, զի այս տրտմութիւն ոչ ինչ է՛ առ այն տրտմութիւն, որ ՚ի դժոխս պատահելոց է՛: Դարձեալ մահուչափ մեղքն՝ մերկացուցանէ զմեղաւորն յամենայն հոգևոր բարութեց, և վիրաւորէ զնա, և տկարացուցանէ ՚յամենայն բնական բարութեցն: վն այս ասէ՛ ղուկաս . Ժ. գլխ: Թէ այր մի՛ իջանէր ՚յԵմէ ՚յԵրիքով և անկաւ ՚ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա՛ և վէրս ՚ի վր եդին: այսպիսի մեղաւորին սիրոյն խօսի Ած: ո՛վ մարդ մերկացեար ՚յամենայն բարութեց քոց՝ և զրկեցեար յինէն, արդ՝ եթէ տրտմիս ոչ միայն վն մերկանալոյդ, այլ և վն սիրոյ իմոյ, ես դարձեալ զգեցուցանեմ զքեզ, և ընդունիմ զքեզ, և այլն: Ա.լ ասա հարցումն լինի թէ է՛ առաքինութի ինչ, որ ոչ է՛ հնար դարձեալ տալ ՚ի յայն, որ

կո-

կորոյս միանգամ ։ որպէս կոյսն , որ ապականէ զկուսութիւն իւր , ո՛չ կարէ դարձեալ կոյս լինել ։ այնի տամ թէ ո՛ր կորուսանէ . Ե. դեկան արծաթի և տայ նմա թագաւորին . Ե. դեկան ոսկի քարոզ գտաւ զկորուսածն իւր , զի թէպէտ զնոյնն ո՛չ գտաւ՝ այլ գտաւ այնպիսի ինչ որ քան զիւրն աւելի էր ։ դարձեալ օրինակ, թէ ուրեք լինի թաս, որ անկանի և բեկանի, ո՛չ է՛ հնար միաւորել զնա՛ որպէս զառաջինն, այլ ճարտար արուեստաւորն՝ կարէ կապել զնա՛ և զարդարել ոսկով և գեղեցիկ ակամբք, որ պատուականագոյն լինի քան զառաջինն ։ այսպէս թէպէտ կուսութիւն բեկեալ այլ ո՛չ ողջանայ, և կուսութի կորուսեալ այլ ո՛չ գտանի ։ այլ յորժամ կատարելապէս զղջանայ պոռնկեալն՝ Ա՟ծ ճարտարապետ է՛, կարող է՛ զարդարել զնա՛ ոսկով սիրոյն այ՟, և զանազան առաքինութբ՟ իբրև ակամբք , որ գեղեցկագոյն լինի քան զառաջինն ։ որպէս Մարիամ մագդաղենացին, որ է՛ր յոյժ մեղաւոր՝ բայց կատարելապէս զղջացաւ, Քս՟ այնպէս զարդարեաց զնա՝ որ յերկինս բարձրագոյն է՛ քան զբազում կուսանս ։ Դարձեալ մեղաւորն մահուչափ մեղօքն կորուսանէ զԱ՟ծ, և բարկա_

ցու_

ցուցանէ զնա։ Այլ խօսի Տ՟ր ՚ի սիրտ
մեղաւորին այսպէս, ահա՛ բարկացու-
ցեր զիս և կորուսեր, եթէ տրտմիս վ՟ս
բարկացուցանելոյն և կորուսանելոյն զիս,
ես փրկեմ զքեզ՝ և լինիս իմ բարեկամ,
և զիս քեզ բաշխեմ։ Եւ այսպէս տրտմիլ
և զղջանալ մեղաւորին՝ յոյժ դիւրին է՛
վ՟ս զի բարկացոյց զՏ՟ր։ Յայսմանէ երևի
թէ առաջին ա՛ւուր ճանապարհն որ է՛
զղջումն. դ. մղ է՛։ Առաջին մղն տրտմիլ
վ՟ս զի ՚ի դժոխս իջանէ։ Բ. տրտմիլ վ՟ս
մերկանալոյն ՚յամենայն հոգևոր բա-
րութեցն, և զրկելոյն ՚ի փառաց հրեշ-
տակացն։ Այլ այս. Բ. մղ ճանապարհս
ո՛չ է՛ բաւական, պարտ է՛ ՚ի հարկէ զե-
ր՟րդ միլն երթալ, զի ո՛չ է՛ բաւական
միայն մեղաւորին տրտմիլ վ՟ս իջանելոյն
՚ի դժոխս, և կորուսանելոյն զփառս ար-
քայութեն, այլ և պարտ է՛ նմա՛ տր-
տմիլ թէ կորոյս զՏ՟ր, և հեռացաւ
՚ի սիրոյն ա՟յ, և բարկացոյց զՏ՟ր։ Եւ
թէ ո՛չ առնու վարձս յա՟յ, զոր օրինա-
կաւ հաստատեսցուք, եթէ ո՛ք զօրն
ամենայն գործեալ իցէ ՚յայգոջն Պողո-
սի, և երեկոյն երթիցէ առ Պետրոս
խնդրել զվարձս իւր, կարէ՞ առնել ցնա Պե-
տրոսն երթ առ այն, որոյ արարեր զմշա-
կութիւն, և նմա՛ տայ քեզ զվարձս քո՛։ Այսպէս
եթէ

Եթէ մեղաւորն խորհի թէ դժոխքն չար և անկարգ տունն է, և բնակիլ անդ յոյժ վնաս է, և արքայութիւն յոյժ գեղեցիկ դարպաս է: և այսպէս մեղաւորն զղջանայ 'ի մեղաց իւրոց միայն վ͞ս ահի դժոխոցն, կամ վասն զի 'ի դժոխոցն զերծցի և մտցէ 'յ արքայութիւն, և ոչ զուտօրէն միայն վ͞ս Ա͞յ սիրոյն ոչ ունի վարձս: և թէ այսպիսի մարդս 'յաւուրն դատաստանի ասէ ցԱ͞ծ, բազում աշխատութիւն կրեալ եմ և բազում առաքինութիւն արարեալ եմ տուր զվարձսիմ: Ասէ նմա Ա͞ծ, թէ վ͞ս իմ սիրոյս ոչ գործեցեր զայդ՝ այլ վ͞ս ահի դժոխոցն, երթ 'ի դժոխոքն և տայ զվարձս քո: և կամ թէ վ͞ս արքայութեան միայն աշխատեցար, ա՛ռ արքայութեան, որ գայ քեզ 'ի խնդիր՝ և տայ զվարձս քո: ապաուրեմն յայտնի է թէ այս .Բ. մին ճանապարհս չէ բաւական, այլ և պարտ է զերրորդն ևս գնալ, զի պարտ է որ մեղաւորն տրտմի վ͞ս Ա͞յ սիրոյն, այսինքն, թէ զԱ͞ծ բարկացուցեալ է, և պարտ է որ մեղաւորն ասէ 'ի սրտի իւրում, ո՛վ քաղցր Յ͞ս, թէպէտ դժոխք ոչ լինէր ես քո սիրոյդ զղջանայի 'ի մեղաց իմոց և ծառայէի քեզ, վ͞ս զի դու ստեղծօղ իմ ես և Հայր, ըստեղծո՛ւածն պատուէ զստեղծօղ.

ղծողն ։ և որդին պատուէ զհայրն , ոչ վ՟ս երկիւղի տանջանայն , և ոչ վ՟ս ժառանգելոյ զհայրենիսն , այլ վ՟ս բնական սիրոյն զոր ունի ստեղծուածն ընդ զստեղծողն ։ և որդին ընդ հայրն ։ այսպէս պարտ է՛ զղջանալ 'ի մեղաց , և գործել զամենայն բարիս վ՟ս այ սիրոյն ։ որպէս ասէ՛ Պօղոս ։ Այդ՝ եթէ ուտիցէք և եթէ ըմպիցէք եթէ զի՞նչ և գործիցէք , զամենայն ինչ 'ի փառս այ արասջիք ։ առաջին աւուր Ճանապարհէն որ է՛ զղջումն այս չափ ասացաք ։ այժմ ասասցուք 'յերկ՟րդ աւուր Ճանապարհէն որ է՛ խոստովանութիւն ։ և Տ՟ր այ մեզ փառք Յաւիտեանս ։ Ամէն ։

## Վ՟ն Խոստովանութե՟ ։

ԵՒ Ի ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵ՟Ս այս ինչ ասելի է՛, նախ ասելի է՛ թէ զի՞նչ օգտէ խոստովանիլն ։ Գիտեմ և ասեմ թէ բազում օգտութի ունի ։ Առաջին օգտութիւն , զի փակէ զդուռն դժոխոց որպէս ասէ՛ Սղմ մերձեցան մինչև 'ի դրունս մահու , այսինքն , 'ի դժոխոյն ուր է՛ յաւիտենական մահն և մեղաւորքն յայժ մտանեն 'ի դժոխքն ,

խքն, զի որ է՛ ՚ի մէջս մահու չափ . բ. մա-
տին չափ հեռի չէ ՚ի դժոխոցն, զի Թէ .
բ. մատին չափ կարեն զխուչակն նոյն ծա-
մայն եղեալ հոգին իջանէ ՚ի դժոխքն ,
որպէս ասէ՛ Յոբ . իա: կատարեցին ՚ի
բարութԷ զկեանս իւրեանց , և ՚ի վայր-
կեան ժամանակի իջցեն ՚ի դժոխս : ա-
պաշխարեմ մեղաւորք խիստ մօտ են ՚ի
դժոխս , և դևք շուրջ պատեալ պատ-
րաստեն զնս ընկենուլ ՚ի դժոխս որպէս,
ասէ՛ Սղմ: շուրջանակի ամբարիշտք շրջին:
և Թէ անկանին ՚ի դժոխս , այլ հնար
չկայ ՚ի դուրս գալոյ : և որպէս ոք եղեալ
՚ի բարձր տեղւոյ և նուրբ ՚ի վայր հայե-
ցեալ տեսանէ զանհուն խորութիւն որ
առաջի իւր կայ , և խոկալով ՚ի միջոս
իւր , յանկարծակի ՚ի բազում երկիւղէն
անկանի ՚ի վայր : այսպէս մեղաւորն բա-
զում մահու չափ մեղօք բարձեալ և կան-
գնեալ ՚ի դուռն դժոխոց , և յորժամ ՚ի
միտ ածէ զանհուն խորութի դժոխոյն
զարմանքէ՛ որ ՚ի բազում յերկիւղէն ո՛չ
յիմարի և խելագարոյ : և ո առաւել զի կա-
տուցեալ է՛ ՚ի մի հիւսուածոյ սարդոս-
տայնն , այսինքն , կեանք մարդոյս որ
անկարէ քան զգործ սարդի : ապա այս-
պիսի մեղաւորս յորժամ բանայ զբե-
րան իւր առաջի խոստովանահօրն , և

ասէ՛

ասէ՛ Խոստովանիմ առաջի այ, և սր-
բուհոյ Ածածնին, և առաջի ամենայն
սրբոց, և առաջի քո հայր՝ զամենայն մե-
ղս զոր գործեալ եմ, քանզի մեղայ, և
այլն։ Նոյնժամայն այնպէս փակի դու-
ռն դժոխոցն ընդդէմ նր, զի ամե-
նայն դևքն ոչ կարեն զնա տանել ՚ի
դժոխքն։ Վասնզի ո՛վ մեղաւոր զղջա՛
յանկողնի քում, այսինքն, որ քան ՚ի
մարմնի ես զմահու չա՛փ մեղս քո, և ՚ի
միտ ա՛ծ զբազում վիշտս հոգոյ քո և
խոստովան լե՛ր կանուխ, զի մի՛ իջցես
՚ի դժոխս փութով։ Ասա՛ ընդ սիրտս
քո գոչելով ընդ մարգարէին Դաւթի։
Ասացի թէ խոստովանեցայց ընդդէմ իմ
զմեղս իմ, և դու թողցես զամենայն ամ-
բարշտութիւս մեղաց իմոց։ Տե՛ս որ քան
օգտութի ունի խոստովանութին, և որ-
պէս փակէ զդուռն դժոխոց։ Նմին
օգտութի խոստովանութեն է՛ զի զդուռն
երկնից արքայութեն բանայ, որ այն-
պէս փակեալ է՛ ընդդէմ մեղաւորին
որ է՛ ՚ի մահու չափ մեղս՝ զի եթէ ա-
մենայն սրբքն ջանան բանալ նմա զդուռն
արքայութե՝ ոչ կարեն, որ քան է՛ ՚ի մեղս
մահու չափ։ Վասնզի ասէ՛ ՚ի գիրս Ծննդոց
դ. գլուխ թէ յորժամ մահու չափ մեղօք
մեղաւ Ադամ՝ եհան արձակեաց զնա

՚ի դր.

՚ի դրախտէն փափկութե․ , և հրամայեաց
քերովբէից և բոցեղէն սրով պահել զճա֊
նապարհ ծառոյն կենաց ։ և որով հե֊
տև այս այսպէս է՝ յորժամ ասէ՝ մե֊
ղաւորն առաջի խոստովանահօրն, Խոս֊
տովանիմ առաջի այ, և սբհյ Ած֊
ածնին, և առաջի ամենայն սբց ։ և
այլն ։ ՚ի նմին ժամու բաց լինի նմա դուռն
երկնից արքայութե , ապաշխարելն օրհ֊
նեալ է՝ բանալի խոստովանութեն որ
փակէ զդուռն դժոխոց, և բանայ զդուռն
արքայութե ։ և փակէ զբերանն այ մինչ
զի ոչ կարէ դատապարտել զխոստովանող
մեղաւորն , և խնու ևս զբերանս դե֊
ւաց զի ոչ կարեն չարախօսել զնմա֊
նէ ։ և այնպէս փակէ զբերան Ճշմա֊
րիտ քահանայքն՝ որպէս թէ սնդուկն
կոտրի և կողպայքն ոչ բացցի ։ քան զի
բազում անգամ Ճշմարիտ քահանայքն
սպանանեալք լինին , և ոչ յայտնեն զխոս֊
տովանութիւն ։ քանզի գրեալ է՝ թէ ոմն
եսպան զմարդ մի՝ որ հայր էր քահա֊
նայի , և ապա զղջացեալ գնաց խոս֊
տովանութեան յոյժ լալով այն քահանային՝
որ որդի էր սպանելոյն , և յորժամ ետես
քահանայն թէ Ճշմարիտ խոստովանեցաւ
առաւել սիրեաց զնա , և թագոյց զմե֊
ղս նր ։ այլ կին սպանողին բարկացեալ

ընդ առն իւրում , երթեալ մատնեաց զայր իւր առ վերակացուս տեղոյն , թէ այրն իմ եսպան զհայր քահանային ։ և յորժամ կամեցան սպանանել զնա` քահանայն ջատագով լեալ , և բարեխօսէր վս̅ նր̅ , և ասէր առխնէ' խոստովանեալ` և 'ի սպանութէնդ այդ` ես ինչ ոչ գիտեմ, և երդմամբ ասեմ թէ քան զայս մարդս սբ̅ մարդ չկայ 'յայս քաղաքս ։ իսկ թշնամիք առն բարկացեալ` սպանին զքահանայն ։ և նա վս̅ խորհրդոյ խոստովանութեն մարտիրոս եղև և ոչ յայտնեաց զխոստովանութիւն ։ Երկրորդ օգտութի խոստովանութենն է', զի Ած̅ հաշտի ընդ մեղաւորին , քանզի այնպէս խռովութի է' 'ի մէջ այ̅ , և մեղաւորին որ մահու չափ մեղս գործեալ է' , զի ամենայն հրեշտակք և սբ̅ք ոչ կարեն հաշտեցուցանել զմեղաւորն ընդ Այ̅ , և կամ դարձուցանել զբարկութն այ̅ 'ի մեղաւորէն , որ քան է' 'ի մեղքն մահացու ։ Այլ յորժամ բանայ զբերանս իւր առաջի քահանային , և ասէ' խոստովանիմ առաջի Այ̅ ։ և այլն ։ 'ի նմին ժամու 'ի հաշտութի դառնայ Ած̅ 'ի վերայ նր̅ , և ընդունի զնա սիրով ։ և այս հաստատի բանիւն Քի̅ , որ ասէ' առակաւ Ղուկաս . ԺԵ. վս̅ անառակ որդոյն,

որ

որ վարանեաց զամենայն ինչս իւր :
՚յայս անառակ որդւոյս . գ. երք ցու-
ցանէ ա՛ւետարանն , նախ թէ որպէս ՚ի
հօրէն բաժանեցաւ : բ. ցուցանէ թէ
որպէս զղջացաւ և եկն առ հայրն , և
խոստովանեցաւ զմեղս իւր : գ. ցուցա-
նէ թէ որպէս հայրն ուրախութ̃ ընկա-
լաւ զնա : Առաջինն ՚ի . դ. մասն բա-
ժանի , զի այս անառակ որդին՝ զմեղա-
ւոր մարդն ցուցանէ , և հայրն՝ զԱծ :
մեղաւորն բաժանի ՚յԱյ մեղօք , և յոր-
ժամ զղջանայ՝ Ած մեծ ողորմութ̃
ընդունի զնա : Այս անառակ որդիս-
էառ ՚ի հօրէն զբաժինն իւր՝ և ոչ կամե-
ցաւ կալ ընդ հրամանաւ հօրն , այլ խն-
դրեաց ազատ կալ : և ՚յայն հպարտու-
թեան և ՚յազատութեան . դ. ցեղ մտաց ե-
ղև նմա : այսպէս մեղաւորն առեալ է՛
՚յԱյ զբաժինս իւր , այսինքն , զբնական
բարութիւն , և զհոգևոր բարիս : և
զանձնիշխան կամս , զի կամօք իւրովք
բարոյն հետևեսցի , և զբարի գործեսցէ ,
և բան զի կամօք իւրովք գնաց զհետ
չարին , և զչար գործեաց , այսինքն , զմե-
ղս մահացուս արար վասն . զ. ազգ պա-
կասութե պատահեաց նմա : ա. զի հե-
ռացաւ ՚յԱյ , վասն այն՝ թէ գնաց ՚յաշ-
խարհ հեռի : և յորժամ հեռացան մե-

ղաւորն յայ կորընչի ։ վա՛յ ասէ՛ Դա-
ւիթ, ՚ի Սղմ. հբ. Ահաւասիկ , որք
հեռի առնեն զանձինս իւրեանց ՚ի քէն՝
կորիցեն ։ և այլն ։ և ծը. Սղմսին
ասէ՛ հեռի է ՚ի մեղաւորաց փրկութի ։
իսկ՝ սբն Օգոստինոս ասէ՛ ծվ Տր՝
մեղաւորն յորժամ հեռանամ ՚ի քէն ո՞ւր
երթայ, ո՛չ կարէ՛ փախչիլ ՚ի քէն, այլ ՚ի
քէն հեռանամ և առ քեզ գայ, այսինքն ,
՚ի քաղցր տնէդ հեռանամ և գայ առա-
ջի բարկացեալ դատաւորին ։ Բ. վնաս է՛
վատնել զամենայն բարութիս , վասն ասէ՛
Թէ վատնեաց զամենայն ինչս իւր ։ զի
որ անկանի ՚ի մահու չափ մեղս՝ վատնէ
զամենայն հոգևոր բարութիս, այսինքն,
զշնորհս այ՝ և զանազան առաքինութիս ։
Գ. վնաս է՛ սաստիկ սովս հոգևոր կե-
րակրոյն , վասն ասէ՛ եղև սով սաստիկ
՚յ աշխարհին ՚յ այնմիկ, և սկսաւ ինքն չքա-
ւորիլ ։ քան զի որ ՚ի մահու չափ մեղս է՛
սովեալ է՛ ՚յ ամենայն հոգևոր բարու-
Թեց, զի յոյժ փառաւոր է՛ հոգևոր բա-
րութիւն առ Ած ։ և որ հեշտացեալ է՛
մարմնականն բարութէ՝ ո՛չ տայ նմա Ած
զհոգևորն , վասն սովամահ լինի հոգով ։
Դ. վնասն է՛ , որ ասէ՛ Թէ և գնացեալ
յարեցաւ ՚ի միումն քաղաքացւոց աշխար-
հին այնորիկ , այսինքն, առ սատանայ՝ որ

քա-

քաղաքացի է՛ դժոխոցն և մեղաւորին յա_
րենայ ծառայէ նմա, որպէս ասէ՛ յաւետա_
րանն Յհն. ը. գլխ: որ առնէ զմե_
ղս ծառայ է մեղացն: Է. Վասն զոր ա_
ռնէ մեղքն՝ է՛ արհամարհանքն; զի քա_
ղաքացին այն՝ յորժ արհամարհեաց զնա,
և յղեաց արածել զխոզս: ՚յարհամար_
հութիւն այս խօսի Երեմիաս. Բ. Թէ
արհամարհեցար յորժ կրկնել զճանա_
պարհս քո: յայնժամ արածէ մեղաւորն
զխոզս՝ յորժամ ՚ի պոռնկութիւն և ՚յար_
բեցութիւն է՛, վասն զի դևքն որք նմանեն
խոզի ՚յարբեցութեան և ՚ի պոռնկութեան
և ՚յաղտեղութեան յորժ հեշտանան: Որ_
պէս խոզն հանգչի՝ յորժամ թաւալի ՚ի
տիղմն: Նոյնպէս մեղաւորն որպէս խոզ
թաւալի ՚ի տիղմն մեղաց պոռնկութեան,
և զմարմին իւր որ է՛ նման խոզի՝ արա_
ծէ ՚յամենայն աղտեղի մեղս, վասն ասէ՛
Պետրոս եկրդ կթուղկց. Բ. գլխ: որպէս
շուն դառնայ անդրէն ՚ի փսխած իւր,
և խոզ լուացեալ ընդ տիղմն թաւա_
լի: որ խոստովանի զմեղս յաւուրս ա_
ղուհացիցն, և յետոյ դառնայ ՚ի թո_
ղեալ մեղսն՝ նման է՛ շան՝ որ փսխէ և
դառնայ ՚ի փսխած իւր, այլ և նման է՛
խոզի լուացելոյ, որ ՚ի տիղմն թաւալի:
զի եթէ խոզն կարէր խօսել՝ այսպէս ա_

մեր , թէ 'ի հաստատ տիղմն առաւել գեղեցիկ է' եւ քաղցր թա՛ւալիլն , քան թէ նստել 'ի բուրաստանս : նմանապէս եւս բղջախոհք ասեն' թէ հեշտութիւն եւ պոռնկութիւն , որ է' հոտեալ տիղմն' քաղցրագոյն է' քան զամենայն հոգեւոր քաղցրութիւս : վասն ասէ' մեր Ոգոստինոս : որպէս հպարտութիւն մեղքն զհրեշտակքն դեւս փոխեաց , այսպէս պոռնկութիւն մեղքն զմարդն խոզ կերպարանէ : եւ որպէս ասէ' Սողոմոն 'յառակաց . ժ. գլխ : որպէս գինդ ոսկի 'ի քիթ խոզի' նոյնպէս կնոջ չարի գեղեցկութիւն : զի թէ ոսկի օ՛ղ արկանես 'ի քիթ խոզին' ո՛չ գիտէ զնորա հարկիքն , եւ ո՛չ պահէ զնա՛ մբ̃ , այլ թա՛ւալէ զնա՛ 'ի մէջ տղմոյ : այսպէս Ած տուեալ է' մարդոյն ոսկի օղ' որ է' բանական հոգին , որ ստեղծեալ է' 'ի պատկեր այ̃ : իսկ բղջախոհն ո՛չ գիտէ զպատիւ հոգոյն , այլ շաղախէ զինքն 'ի տիղմն պոռնկութեն : վասն անառակ որդին որ վատնեաց զամենայն ինչս իւր 'ի հեշտութի մեղացն' այնպիսի արածէ զխոզսն : քանզի պոռնիկն զամենայն անդամս իւր , որ է' երամակ խոզից' պոռնկութբ̃ եւ ամենայն մեղօք արածէ : դ. երրորդ վընասէ' անյագ ցանկութեն , վասն ասէ' թէ ցանկայր լնուլ զորովայն 'յեղջեր_

դջերէն՝ զոր խօսքն ուտէին ։ Վս զի մե-
ղաւորն յարբեցութեն և ՚ի պոռնկու-
թեն որ է կերակուր սատանայի՝ ոչ եր-
բեք յագենայ, այլ որ չափ շատ ուտէ՝
առաւել սովի և ծարաւի ։ Երկրորդ ցու-
ցանէ ամենատարան անսատակ որդոյն,
թէ որպէս զղջացաւ այնու՝ որ ասէ ։
թէ եկեալ ՚ի միտս իւր ասէ, քանի
վարձկանք են ՚ի տան հօր իմոյ հացա-
լիցք, և ես աստ սովամահ կորնչիմ ։
Գ. ինչ ցուցանէ որ պէտք է մեղաւորին
յորժամ կամի դառնալ առ Այ ։ Նախ
պիտոյ է զի մեղաւորն գայ ՚ի միտս իւր
և խորհի թէ յո՛ւր և յորպիսի ինչ հա-
սեալ եմ ։ և աստ, Գ. ինչ պարտ է առ-
նել, Նախ խորհի թէ ուստի ՚ի վայր ան-
կեալ եմ, այսինքն, ՚ի յԱյ ։ և ո՛ւր գնացի,
այսինքն, առ սատանայ ։ վասնզի ասէ թէ
եկն ՚ի միտս իւր ։ Բ. խորհի թէ զի՞նչ էր
նախ քան զմեղանչելն՝ և զի՞նչ եղև նմա
վս մեղացն ։ քանզի նախ քան զմեղանչելն
Այ որդի էր, և յետ մեղանչելոյն եղև
որդի սատանայի, վասնզի ասէ թէ անսատակ
որդի ։ Գ. խորհի թէ զի՞նչ է կորուսեալ,
կամ զի՞նչ գտեալ ։ զի կորուսեալ է զա-
ռատ ողորմութին Այ, և գտեալ զատանի
և զդառն տանջանս դժոխոցն և զօձն ։
վասնզի ասէ և ես աստ սովամահ կորն-

 չիմ,

չիմ, և թէ քանի՞ վարձկանք են 'ի տան
հօր իմոյ հացալիցք: Հայր՝ Ա͞Ծ, և տուն
հօր՝ Եկեղեցի, որ տունն է՛ Ա͞Յ: վարձ-
կանքեն, որք ծառայեն ա͞յ, և առնուն
'ի նմանէ վարձ զարքայութին ա͞յ, այ-
սոքիկ առատ ունին զհաց բանին ա͞յ,
և զմարմինն Ք͞Ի: Գ. պիտոյ է՛ զի մե-
ղաւորն հաստատէ՛ զմիտսիւր դառ-
նալ առ Ա͞Ծ, և այս. Գ. ազգ լինի:
Ա͞Ռ. զղջմամբ, վասնայնորիկ ասէ՛ յարե-
աց: Բ͞. ապաշխարութ͞բ, վ͞սնկ ասէ՛ գնա-
ցից առ հայրն իմ, այսինքն, պահօք և
աղօթիւք: Գ. խոստովանութ͞բ, վ͞սնկ
ասէ՛, և ասացից ընա՛, Հայր՝ մեղա՛
'յերկինս և առաջի քո՛, և այլն. Գ. Նախ
խոստովանի, նա զիւր մեղքն՝ ասելով Հայր
մեղա՛: Բ͞. խոստովանի զինքն անարժան՝
ասելով չեմ արժանի կոչել որդի քո՛: Գ.
զի զԱ͞Ծ ողորմած խոստովանի ասելովն՝
արա՛ զիս իբրև զմի՛ 'ի վարձկանաց քոց:
Բայց այս երկուս միայն ո՛չ է՛ բա-
ւական, այսինքն, թէ մեղաւորն գայ
'ի միտս իւր, և ճանաչէ զմեղս իւր, և
հաստատէ զմիտս իւր դառնալ առ Ա͞Ծ:
Ա͞Յ և զերրորդն ևս պարտ է՛ առնել, այ-
սինքն, 'ի գործ ածել զբարի խորհուրդն:
վ͞սնկ ասէ՛ յարուցեալ գնացից առ հայր
իմ, և ասացից ընա՛: Հայր՝ մեղայ 'յեր-
կինս

կինս և առաջի քո : Այլ ոչ ևս եմ ար-
ժանի կոչել որդի քո : արա՛ զիս իբրև
զմի՛ 'ի վարձկանաց քոց : և այլն : Եր-
կրորդ ցուցանէ ամենատարածն, թէ ըն-
դունի ողորմածն Ա͞Ծ զղջացեալ մեղա-
ւորն և երկսին նմա, և այս : ͞դ. կերպիւ
ցուցանի . ͞ա. մեծ ողորմութ͞բ ընդունի
զնա՛, վ͞նզ ասէ՛ ետես զնա՛ հայրն և
գթացաւ : ͞բ. ընդունի փութով, վ͞նզ
ասէ՛ և ընթացաւ ընդ յառաջ որդւոյն,
͞գ. ընդունի զնա՛ սիրով, զի ասէ՛ ան-
կաւ զպարանոցաւ նորա և համբուր
եաց զնա՛, որ է՛ նշան սիրոյ, և խաղա-
ղութ͞ե, և ուրախութ͞ե : և այս իրա-
ւի, զի եթէ հրեշտակք յերկինս ուրա-
խանան 'ի վ͞ր միոյ մեղաւորի որ ապաշ-
խարեսցէ՝ ևս առաւել պարտի ուրախա-
նալ Ա͞Ծ որ հայր է՛, ծհ թէ որպիսի
գթած է՛ երկնաւոր հայրն, զի վազէ ըն-
առաջ մեղաւորին՝ որ ապաշխարէ, և
ոչ միայ, թէ մեղաւորն գա՛յ առ ինքն: և
ո՛չ յանդիմանէ զնա, և կամ յերեսս
տայ զմեղս իւր : այլ քաղցրութ͞բ և
սիրով համբուրէ զնա : և այլն : Այս-
պէս պարտ է՛ լինել խոստովանահօրն, զի
քաղցրութ͞բ ընդունիցի զճշմարիտ զղ-
ջացեալն՝ որ գայ 'ի խոստովանութ͞ի : և
թէ խոստովանահայրն անողորմ սիրտ ու-
նիցի

նոցա սա մեղուցեալն , և ՚ի ժամ խոս_
տովանութեան նախատէ զմեղաւորն չար
տոնէ : և անպատշաճէ՛ , որ այսպիսի
խոստովանահայրս դռնապան լինի երկ_
նից Արքայութեան : քանզի ո՛չ զո՛չ թողու_
գնալ անդր , այլ փակէ զդուռն արքայ_
ութե՛ ընդ դէմ մեղաւորաց : Այլ պատ_
շաճէ՛ նմա լինել դռնապան դժոխոցն ,
զի ո՛չ զո՛ք թողուցու երթալ անդր մտա_
նել : Զորոց ընդունի Քս զմեղաւորն
մեծ պատուով , զի ասէ՛ թէ հրամայեաց
հայրն ծառայս իւր՝ վաղվաղակի հանէք
զպատմուճանն առաջին , և զգեցուցէք
դմա : Դ. կերպիւ պատուէ զորդին :
Նախ զի զգեցուցանէ զնա գեղեցիկ
հանդերձիւ՝ վասն ասէ՛ վաղվաղակի հանէք
զպատմուճանն առաջին և ագուցէք
նմա : Բ. զի զարդարէ զնա : վասն ասէ՛ ,
և տուք՝ զմատանին ՚ի ձեռս նր : Գ. զի
տա՛ նմա զօրութի և առաքինութի , վասն
ասէ՛ , և տուք զկօշիկս ՚յ ոտս նր : Դ.
զի պատրաստէ նմա զանուշահամ կե_
րակուր : վասն ասէ՛ և ածէք զեզն պա_
րարակ , և զենէք : կերիցուք և ուրախ
լիցուք : Ու արդ՝ ծառայք այս հրեշ_
տակք են , որոց տեղի են քահանայք կամ
վարդապետք , և ասէ՛ ցնոսա Քս՝ բե_
րէք զպատմուճանն առաջին և զգեցու_
ցէք

ցեք զորդի իմ ։ առաջին պատմուճան՝
զանմեղութիւն ցուցանէ ։ զայս պատ-
մուճանս նախ Ադամ զգեցաւ ՚ի դրախ-
տին , այլ մեղօքն մերկացոյց զինքն և
զմեզ ։ բայց խոստովանութիւն այնպիսի
զօրութիւն ունի , որ յորժամ կատարեալ և
ճշմարիտ լինի՝ զառաջին պատմուճանն ,
որ է՛ անմեղութիւն՝ դարձեալ զգեցու-
ցանէ նմա ։ քանզի ՚ի նմին ժամու , յոր-
ժամ խոստովանի մեղաւորն՝ և արձակի
՚ի խոստովանահօրէն , այնպէս անմեղ է՛ ,
որպէս Ադամ ՚ի դրախտին , վասնզի ասէ՛
Սղմ . ՃԳ . խոստովանութիւն և մեծ-
վայելչութիւն զգեցար , և արկեր զլոյս
որպէս զօդոյ ։ իսկ մատանին ցուցանէ
զճշմարիտ հաւատն և զՀոգւոյն Սրբոյ ։
և ձեռքն ցուցանէ զգործքն ։ Արդ՝ ճշ-
մարիտ հաւատն , Հոգւոյն սիրովն , և
բարի գործօքն զարդարէ զհոգին ։ բայց
հաւատն առանց գործոց մեռեալ է՛ ,
վասն զի հարկ է՛ բարի գործօք կենդանա-
ցուցանել զհաւատն ։ Կօշիկ , որ ՚ի մե-
ռեալ մորթոյ լինի կազմեալ՝ ցուցանէ
զօրինակ Մեղացն , որք մեռան վասն ճշմա-
րտութեան , զայս կօշիկս հագանի , որ
զմեղս իւր կատարեալ զղջմամբ և ճշ-
մարտութեամբ խոստովանի , և հետևի մերոց
Հարցն հնոց՝ մեռելութեամբ մեղացն և

գոր-

գործելով զբարի ։ Նոյն պարապան ցու-
ցանէ զորդին Ա՟յ զ՟Ք՟Ս , որ ՚ի շնոր-
հաց Ոգւոյն ս՟բյ պարապեալ է՛ , և վ՟ս փր-
կութե աշխարհի զենեալ ։ ՚Յայսմանէ
եղէ պարապանէ ուսէ ոք , յորժամ յետ
խոստովանութեան ճաշակէ ՚ի մարմնոյ և
՚յարենէ Ք՟Ի ։ և ՚յայսմանէ յայտնի է՛ ,
զի որ զանմեղութե հանդերձն ոչ է՛ զգե-
ցեալ խոստովանութբ՝ նա՛ ՚ի ձեռսն իւ-
րում զիմաստանի ճշմարիտ և կենդանի
հաւատոյն՝ հանդերձ բարի գործօքն՝ ոչ
ունի ։ և զկօշիկս եւս ՚յոտս ոչ ունի ,
քանզի ոչ երթայ զհետ վարուց ս՟բցն ։
վ՟սյ և այնպիսին՝ ոչ է՛ արժանի ուտել
՚ի զենեալ պարապանէն Յ՟Ի Ք՟Ի ։ և այս-
պիսիքս են՝ այնոքիկ մեղաւորքն , որք
անզեղջք են ՚ի մեղս իւրեանց ։ և Հայրն
երկնաւոր ոչ ուրախանայ ընդ նոսայ
և ոչ առնէ տօն՝ այլ սուգ ։ Իսկ որք զղ-
ջանան ճշմարտապէս , և խոստովանին
զմեղս իւրեանց՝ Հայրն երկնաւոր ուրա-
խութի առնէ ընդ նոսայ , և տօն ։ և
տօնս այս՝ յոյժ փառաւորէ՛ , վ՟ս զի
տօնէ՛ Ծննդեան ։ քանզի մեղաւորն որ-
դի սատանայի է՛ , և յորժամ զղջմամբ
խոստովանի՝ նոր ծնանի Ա՟յ ։ և տօնէ՛
Յարութե՝ զի մեղաւորն յառնէ ՚ի մե-
ռելութէ մեղաց՝ , յորժամ ճշմարտա-
պէս

պէս մեղայ ասէ՛ առաջի խոստովանա-
հօրն՝, և առնու զնոր արձակումն ։ և
մինչ արժանի լինի ուտելոյ ՚ի կենդանարար
մարմնոյն Քի և ՚ի պատուականն յարենէն
վասն ասէ՛ Հայրն երկնաւոր՝ ածէք զեզն
պարարակ՝ և զենէք ։ կերիցուք և ուրախ
լիցուք ։ Զի այս որդի իմ մեռեալ էր՝
և եկեաց, կորուսեալ էր և գտաւ ։ Այլ
և է՛ տօն Սրբոյ պաղատեան, զի որ ճշ-
մարիտ խոստովանին ընդունին զՍրբին մէ ։ և
որպէս Թագաւոր մի յորժամ որսայ եղն
վայրի՝ այնու առաւել ուրախանայ՝ քան
զԺ․ եղն տանից ։ այսպէս Թագաւորն
Թագաւորաց Ած, և ամ հրեշտակքն
առաւել ուրախանան ընդ միոյ մեղա-
ւորի՝ որ ընդունի սրտով խոստովանու-
Թեան, քան ․Ժ․ արդարոցն, որք բնա-
կեալք են ՚ի տանն Այ ։ Ապաուրեմն
երեւի Թէ խոստովանութիւն մեծ զօրու-
Թի ունի, զի հաշտութիւն առնէ ընդ
Ած, և ընդ մեղաւորն, զոր ամ հրեշ-
տակք և ամ սրբքն ոչ կարեն առնել՝,
այսինքն, հաշտեցուցանել զԱծ ընդ
մեղաւորին ։ Չորրորդ օգտութիւն խոս-
տովանութեանն է՛, զի խոստովանութիւն
զԹիւնս մեղացն՝ փոխէ ՚ի Թիւս շնոր-
հացն Այ ։ վասն ասէ՛ Պողոս հռոմէից․
Ե․ գլխ ։ Թէ ուր առաւել եղեն մեղքն,

առա-

առնուլ եւ յաւելուլ շնորհքն ։ վասնզի ոչ
է՛ պարտ՝ թէպէտ եւ կարի մեղաւոր լի-
նի , յուսահատիլ ։ քանզի առնուլ մե-
ղուցեալն , յորժամ զղջանայ՝ առնուլ
շնորհաց հանդերձեալ ։ բայց ոչ վս այսո-
րիկ պարտ է՛ յաճախել 'ի մեղս , զի շնոր-
հքն բազմասցին՝ քան լիցի ։ քանզի որ
մեղանչէ՛ յուսով ողորմութեան Տ՟Ն՝ մե-
ղանչէ ընդդէմ Հոգւոյն սբյ , եւ խիստ
զարհուրելի է՛ բանս այս ։ քանզի Մ՝ատ-
թէի . ԺԲ. գլխ ասէ՛ ։ որ մեղանչէ ընդ-
դէմ Հոգւոյն սբյ՝ մի՛ թողցի նմա , մի՛
յայսմ աշխարհի , եւ մի՛ 'ի հանդերձե-
լումն , այսինքն , 'ի կողմանէ մեղացն ,
որ այն քան չարագունեղ է՛ ։ Օ՟ որ օրի-
նակ , եթէ ոք առաքեայ Եկեղեցւոյն
զմեղս ինչ գործեալ իցէ , սպանութի
կամ գողութի՝ եւ փախիցէ 'յԵկեղեցին՝
Եկեղեցին փրկէ զնա ։ իսկ եթէ 'ի ներս
Եկեղեցւոյն գործեալ իցէ մեղս սպա-
նութի , կամ գողութի՝ Եկեղեցին ոչ
փրկէ զնա , վս զի արհամարհեաց զԵկե-
ղեցին ։ Նոյնպէս եթէ ոք վս տկարու-
թեան եւ անգիտութեան մեղանչէ՝ ողորմու-
թի սբ Հոգւոյն փրկէ զնա , իսկ որ մե-
ղանչէ՛ ընդդէմ ողորմութեան սբ Հոգւոյն՝
ողորմութի սբ Հոգւոյն ոչ փրկէ զնա ։
Հինգերորդ օգտութի խոստովանութեան
է՛ ,

է՛, զի յորում ժամու մարդ մահու չափ
մեղս գործէ՝ 'ի նմին ժամու ջնջի 'ի դպ-
րութէ կենաց ։ որպէս ասէ՛ Սիր ։ ջն-
ջեսցին նոքայ 'ի դպրութէ կենաց՝ և
ընդ արդարս քո՛ մի՛ գրեսցին ։ այլ յոր-
ժամ ճշմարիտ խոստովանի, 'ի նմին ժա-
մու դարձեալ գրի 'ի դպրութե կենաց ։
որպէս ասէ՛ Ղուկ. Ժ. գլխ ։ այլ խն-
դացէք, զի անուա՛նք ձեր գրեալք են
յերկինս ։ քանզի գրեալ է՛ թէ հայր
ումն տեսանէր 'ի տեսլեան զհրեշտակ մի՛,
որ ունէր 'ի ձեռին իւրում գիրք մի՛ փո-
քրիկ, զոմանս գրէր անդ ոսկի գրով՝
և զոմանս ո՛չ գրէր 'ի ժողովրդենէն ։
Իսկ մեր հայրն ճշգրտիւ եհարց և քննեաց
զժողովուրդն և գիտաց, զի որ խոստո-
վանեալ էր զմեղս իւր՝ գրեալ լինէր 'ի
գիրսն յայն ։ և որ ո՛չ էր խոստովանեալ՝
ո՛չ լինէր գրեալ ։ Ապաւեմն յասացանէ ա-
սացելոցս մինչև ցայս յայտնի լինի,
թէ այս երկրորդ ա՛ւուր ճանապարհս
որ է՛ խոստովանիլն զմեղս իւր բերանով
առաջի խոստովանահօրն՝ յոյժ օգտա-
կար է՛, և գիտել զո՛րչ խոստովանու-
թեն, այսինքն, գիտենալ լա՛ւ խոստո-
վանիլ՝ բարձրագոյն է՛ քան զայլ գիտու-
թիւ ։ Վա՛յ պարտէ՛ զի վարդապետք և
խոստովանահարք քաջապէս և ուսուցա-
պէս

պէս գիտասցեն զգիտութիւն խոստովա-
նութեան՝ և զայլսն ուսուսցեն ։ Վս զի
այս գիտութիւն առաւել այլոց գիտու-
թեանց փրկութիւն գործէ ։ Իսկ այլք գիտու-
թիւք առանց սորա ո՛չ առնեն օգտու-
թիւն ինչ, կամ շատ՝ այլ սակաւ ։ Ո՛չ ինչ
օգուտ է՝ գիտել զբժշկականութիւն Հիպ-
պոկրատեա՛ և Գաղիանոսի, և զբնական
գիրս Արիստոտէլի, և զաստղաբաշխու-
թիւն Պտղոմէի, և զայլ գիրս իմաստա-
սիրաց ուսանիլ, և ո՛չ գիտել զգիրս ըն-
թեռնուլ խղճմտացն, և քննել անտի
զգիր մահու, այսինքն, զմեղացն, զղջ-
մանք, և խոստովանութիւն ։ Սուրբն
դատաստանին ո՛չ հարցանէ Ած զո՛ք 'ի
գիտութենէ և 'ի գրոց փիլիսոփայիցն ։ այլ
հարցանէ 'ի գրոց խղճմտացն, և 'ի գի-
տութենէ խոստովանութեան ։ Վյն ասէ՛
սբն Պեռնարդոս, թէ լաւ է՝ որ զքեզ
գիտասցես և ճանիցես, և 'ի գիր խղճ-
մտաց ընթեռնուլ գիտասցես զմեղս քո,
քան զայն, որ գիտասցես զգնացս Աս-
տեղաց, և զհիմունս երկրի, և զյատ-
կութիւնս բուսոց և տնկոց, և զբնութիւնս
մարդկան, և քան զամենայն գիտութիւնս
երկնաւորաց և երկրաւորաց և սանդարա-
մետականց ։ Նաև որպէս ո՛չ կարէ նա՛ վար-
դապետ լինել որ 'ի տարւոջն մի՛ անգամ
երթայ

երթայ 'ի դատաստանն , այսպէս որ 'ի
տարին միանգամ խոստովանի, և զայն ևս
շտապով , ո՛չ կարէ հասանել 'ի վր գի-
տութե խոստովանութեն : վսն բազում
անգամ պարտէ՛ խոստովանիլ , որպէս
ասէ՛ Դա՛ւիթ 'ի Սղմ: այլ ես խոստո-
վան եղէց առ Տր յոյժ բերանով իմով :
և որպէս ժիր գրոց աշակերտն 'ի մէջ գի-
շերի յառնէ , և ընթեռնու զգիրս յա-
ռաջ քան զդաս ասել վարդապետին: այս-
պէս 'ի մէջ գիշերի պարտէ՛ ընթեռնուլ
խղճմտացն զմեղս իւր , զի յորժամ ե-
կեսցէ առ խոստովանահայրն գիտասցէ
կարգաւ խոստովանիլ : 'յ այսմանէ երևի
թէ երկու ա՛ւուր ճանապարհս , այ-
սինքն , խոստովանութիւն բազում օգ-
տութի ունի , և այնոցիկ որք շուտով և
յօժարութբ խոստովանին , բազում օգ-
տութի լինի : ա. զի խոստովանողն մե-
ղաց թողութի առնու 'յ այ : բ. շնոր-
հքն այ դարձեալ պարգևի նմա : գ. 'ի
տանջանաց դժոխոցն ազատի : դ. զի
'ի ծառայութե սատանայի ազատի : ե.
զի հաղորդի ամենայն բարութե եկե-
ղեցւոյ , և առնու մասն և բաժին 'ի չար-
չարանացն Քի և սբցն : զ. զի ամե-
նայն բարի գործք , որ վն մահու չա՛փ
մեղացն մեռեալք՝ դարձեալ կենդանա-
 նայ,

նայ , և զխղճմտանս մեղաւորին ուրա_
խացուցանէ , զի նման ծանրէր իբրև
զլեառն և յոյժ երկնչէր , իսկ յորժամ
խոստովանեցաւ՝ թեթևացաւ և խաղա_
ղացաւ , թէ մեռանի՝ այլ ոչ երկնչի ։
Է. զի դարձեալ դառնայ ՚ի քաղաքն իւր ,
այսինքն , ՚յարքայութիւն ։ Ը. զի զսատա_
նայ տրտմեցուցանէ և ամաւկէ , և որ_
պէս գողք ոչ բնակեն անդ՝ ուր ճանա_
չին գործք նց և ՚յայտնին ծածուկք նց ։
այսպէս դևքն ոչ բնակեն մերձ առ այն
մարդն , որ ՚յայտնէ խոստովանութբ
զմեղս իւր ։ Թ. զի բարձում ամօթոյն
որ ՚ի խոստովանութեն կրէ՝ ատելի դառ_
նայ իւրեանն մեղքն և այլ ոչ գործէ ։
Ժ. զի այնչափ կարէ խոստովանիլ զմին
մեղքն՝ որ քաւարանի տանջանքն խա_
փանի , վս ամօթոյն որ կրէ , և վս զօ_
րութե արձակմանն՝ զոր ունի եկեղե_
ցի ։ ԺԱ. զի ՚յամենայն հոգևոր հի_
ւանդութե և ՚ի գողութե առողջա_
նա ։ յիմարն լինի այն հիւանդն և գո_
ղն՝ որ բանիւն միայն , այսինքն , թէ
բանայ զբերան իւր և ասէ՛ զցաւս իւր
բժշկի , իսկ նմ ծուլանայ բանալ զբե_
րանն իւր՝ արդարև յիմար է՛ այնպի_
սին ։ այսպէս մեղաւորն լռեալ է՛ գո_
ղութբ , և յորժամ բանայ զբերան իւր

և

և խոստովանին զմեղս իւր , ՚ի նմին ժա_
մու բժշկի հոգին , որպէս ասէ Ե_
սայի · Խգ· ասա՛ դու նախ զանօրէնու_
թիւն քո՛ և արդարասցիս ։ ՚յայս · Ժա·
օգտութիւն կու զրկի որ ո՛չ խոստովանի ։
նա՛ և զրկի ՚յայլ ամենայն օգտութեանց ,
որ լինի ՚ի խոստովանութենն , վ̄ս զի խոս_
տովանութիւն ընդ դէմ փորձութեանց և
ընդ դէմ յուսահատութե և տրտմութե
բազում օգտութի տանէ , որպէս ասէ
Սղմ ։ արդ՝ ընդէ՞ր տրտումես անձ_
նիմ կամ ընդէ՞ր խռովես զիս՝ յուսա՛
ա՛ռ Ա՞ծ , և խոստովանեմ՛ նմա՛ փրկիչ
երեսաց իմոց Ա՞ծ է՛ ։ ո՛չ կայ հնար
թէ կորընչի այն մեղաւորն որ ճշմա_
րիտ խոստովանի զմեղս իւր և ո՛չ դար_
ձեալ դառնայ ՚ի նոյն մեղս , այսինքն ,
այլ ո՛չ գործէ զնոյն մեղս և ո՛չ անկանի
՚յայլ մեղս , անհնար է՛ թէ կորընչի , ո՛չ
կորընչի նա՝ այլ փրկի ։ վ̄ս զի ասէ Սղմ ։
մի՛ մատներ գազանաց զանձն որ խոս_
տովանի առնին ա՛ռքեզ՝ և զանձինս տնան_
կաց քո՛ց մի՛ մոռանար իսպառ ։ և դար_
ձեալ ասէ՛ Սղմ ։ խոստովանութի և մեծ_
վայելչութի է՛ առաջի նորա ։ ՚ի խոստո_
վանութիւն · Գ· ինչ պատրաստեալ կայ ,
այսինքն , գեղեցկութի հոգոյ , և սրբու_
թի վարուց , և մեծութի հրեշտակաց ,

որ 'ի կատարածին առնու խոստովանողն ։
Երկրորդ ասելի է՛ , թէ երկրորդ մեւուր
ճանապարհն՝ որ է՛ խոստովանութիւն ․
Գ․ մի ճանապարհ է՛ ։ Առաջին մին
այս խոստովանութե՟ ճանապարհիս այն
է՛ որ խոստովանութիւն ողջ և 'ի լման
լինի և կատարեալ , զի թէ պարիսպ քա֊
ղաքին 'յամենայն կողմանց ողջ լինի ,
բայց 'ի մի՛ կողմանէ խու՝ թշնամիքն
ընդ այն մտանեն և առնուն զքաղաքն ,
այսպէս խոստովանութիւն որ է՛ պա֊
րիսպ հոգւոյն , թէ 'ի մին կողմանէ խու֊
ունենայ , այսինքն , զմի՛ մահու չա՛փ
մեղս կամաւ պահես և ո՛չ խոստովա֊
նիս , սատանայ ընդ այն մտեալ զերէ
զհոգին քո՛ , վ՟ն Եսայի ․ԺԴ․ գլխ ասէ՛ ։
Առ քնար շրջեա՛ ընդ քաղաք պոռ֊
նիկ մոռացեալ՝ քա՛ջ հա՛ր յաճախեա՛ եր֊
գել , զի քո՛ յիշատակ մնասցէ ։ բանս
այս , հոգեւորապէս զայս կամի ասել ։
ո՞վ մեղաւոր հոգի որ բաժանեցար 'յայ՟ ,
'յարդար փեսայէ քումմէ և գնացեր առ
սեխեխն քո՛ , և մոռացեալ եղեր 'յայ՟ ,
ա՛ռ զքնար զղջման և ածեալ շրջեա՛ ընդ
քաղաք , այսինքն , որոնեա զամենայն
մեղանս քո՛ 'ի մանկութե՟ մինչև 'ի ծերու֊
թիւ , և 'ի միտ ա՛ծ զամենայն մեղս քո՛ ,
և խոստովանութե՟ քա՛ջ հա՛ր զքնարս քո՛

և յա֊

և յաճախեմ ՚յերգս գեղեցիկս առաջի
խոստովանահօրն և մնասցէ յիշատակ քո
առաջի ա̅յ: և Ա̅ծ պայման արարեալ է
ընդ մեղաւորին, զի թէ աղբ և ցեղ
տարցէ ՚ի վաճառն ա̅յ՝ ՚ի կարմիր ոսկի
փոխէ, այլ այս պայմանաւ որ ՚ի ցխէն և
՚յաղբէն մա́ւ ինքն պահէ ո́չ, եթէ ՚ի
ցխէն կամ ՚յաղբէն պահէ ինչ՝ ՚յոսկոյն
ամենևին ո́չ ինչ առնու, այլ իւր հա-
տուծ ցեխն կրկնապատիկ դառնայ: ցեխ
և աղբ մահու չափ մեղքն է՛, և վաճառ
ա̅յ խոստովանութի̅ն, կարմիր ոսկի ա̅յ
շնորհքն է՛, թէ զամենայն մեղս խոս-
տովանես ճշմարիտ՝ կատարեալ թողու-
թի առնուս, և արժանաւորիս շնորհացն
ա̅յ, այլ թէ պահես ՚ի մեղացն մա́ւ քեզ՝
ո́չ առնուս թողութի, այլ մեղքն կր-
կնապատիկ լինի: վայն պարտ է՛ որ խոս-
տովանութի̅ն ողջ լինի և լման: Երկրորդ-
մին այս խոստովանութե̅ ճանապարհս
այս է՛, զի պարտ է՛ որ խոստովանութի̅ն
կամաւոր լինի: քանզի թէ զպատուղն բռ-
նութ̅բ կորզես ՚ի ծառէն՝ խակ լինի և թը-
թու, այլ յորժամ ինքն ՚ի վայր կաթէ՝
հասուն լինի և քաղցր: այսպէս խոս-
տովանութի̅ն որ բռնութ̅բ է՛, խակ է՛ և
թթու առաջի ա̅յ, այլ որ կամաւ լինի
յոյժ քաղցր է՛ և հասուն: վայն առնէ՛ Ա̅ծ

'ի նմա յուսացաւ սիրտ իմ , օգնեցաւ և զուարճացաւ մարմին իմ • և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա ։ 'Յայսմանէ երևի թէ պարտ է՛ որ խոստովանութիւն կամաւոր լինի ։ Երրորդ միջն այս խոստովանութե ճանապարհիս այն է՛ որ խոստովանին յուսով ողորմութեան այ , վ՟ն զի սբ՟ն Օգոստինոս ասէ՛ թէ Տ՟ր այնպէս ողորմած է՛ , որ առաւել կամի՛ ողորմութի առնել մեղաւորին , քան զայն՝ որ մեղաւորն կամի ողորմութի առնուլ 'յ այ , քան զի Տ՟ր , ամենակարող է՛ և ողորմութի նր՟ անչափ ։ վ՟ն ո՛չ է՛ պարտ որ մեղաւորն անյոյս լինի թէպէտ բազում մեղք լինի գործեալ , բայց թէ ո՛ք երթայ • բ՟• առաջին միջն , և թողու զայս երրորդ միջն՝ ո՛չ հասանէ 'ի նմանահանդիստն երկնից արքայութեան ։ զի թէ ո՛ք 'ի լման խոստովանի , և կամաւորութբ՟ խոստովանի , բայց անյոյս լինի 'յ ողորմութեն այ՝ ո՛չ կարէ տեսանել զերեսս այ , որպէս և յուդա մատնողն որ 'ի լման խոստովանեցաւ զմեղս իւր , յորժամ ասաց մեղայ զի մատնեցի զարիւն արդար ։ այլ և կամաւորութբ՟ խոստովանեցաւ , զի իւր կամաւն գնաց առ քահանայսն , և ընկեց անդ՝ զարծաթն որէառ գին Քի ։ բայց զեր_

րորդ

յորում միւս ո՛չ գնայր, զի անյայտ եղև ՚ի յողորմութենէն ա̃յ, և խեղդեալ զհոգին եհաս ՚ի նմա՛ն ահանգիստ դժոխոցն ։ Այլ որոց ասելի է՛ վ̃ն խոստովանութեան զի սատանայ ջանայ զանազան խափանումն ածել, զի նման է՛ սատանայ գայլի, զի յորժամ գայլն ոչխարի բռնէ և տանի ՚ի մայրին զի կերիցէ զնա՛, ո՛չ բռնէ զոտն ոչխարին և կամ զականջն այլ զփողն որ զձայն չածէ, որ հովիւքն և շներն լսեն և գան Թափեն, նոյնպէս յափշտակող գայլն սատանայ յորժամ բռնէ զմեղաւորն, և կամի տանել ՚ի մայրիս դժոխոց զի անդ՝ պատառեսցէ ո՛չ բռնէ զոտն մեղաւորին, զի Թողու զնա՛ երԹալ, և ո՛չ զականջն, զի Թոյլ տայ որ լսէ, այլ զփողն կալնու, որ ո՛չ աղաղակէ ՚ի խոստովանահօրն առաջի, և փրկի ՚ի բերանոյ սատանայի ։ Եւ սա գիտելի է՛ զի սատանայ որ Թշնամի՛ մեր է՛ ո՛չ իշխէ, ուր կարողուԹի չունի մերձենալ ՚յոք, եԹէ ո՛չ Թոյլ տուեալ լինի ՚յա̃յ, և Թէ ունէր իշխանուԹի ՚ի վ̃ր մարդոյն, ՚ի նմին ժամու յորժամ անկանէր ՚ի մահու չափ մեղքն՝ առ ժամայն սպանանէր զնա՛, և զհոգին տանէր ՚ի դժոխսն, վոյն գրեալ է՛, Յոբ . ա̃ . գլխ ։ Թէ յորժամ կամեցաւ սատանայ ձեռն հասուցանել Յոբ՝ ՚յա̃յ

խնդրեաց Թոյլ տալ, և Ա՟ծ Թոյլ ետ
սատանայի պայմանաւ ձգել զձեռն ՚յամե-
նայն ինչս նր՟, և ո՛չ յաղեցաւ այսու,
դարձեալ Թոյլ ետ նմա արկանել զձեռն
՚ի մարմին նր՟, այլ ո՛չ ՚ի հոգին, և ՚ի նմին
ժամու եհար զնա սատանայ ծանր հի-
ւանդութբ՟ ՚ի գլխոյն մինչև ցմատունս
ոտիցն, ՚յայսմանէ երևի թէ սատանայ
ո՛չ կարէ ձեռն արկանել ՚յոք՝ առանց Թոյլ
տալոյն այ՟: վ՟սն սատանայ յորժամ կա-
մի զձեռն արկանել ՚ի մեղաւորն՝ նախ
երթայ ՚յայ՟ դիւանն: բայց ՚յերկինքն . Բ.
ցեղ դիւան կայ, առաջինն է՛ Ողորմու-
թե դիւանն՝ և անդ ո՛չ երթայ, վ՟ս զի
ողորմութե ատեանն յոյժ քաղցր է՛. Բ.
դիւանն է՛ ատեանն դատաստանին Ար-
դարութե, անդ երթայ սատանայ զի
խիստ է՛ քննող՝ և ահագին, և ակն ունի
անդ՝ կատարել զկամս իւր: առաջի ար-
դարութեն այ՟ ամբաստանելով մատնէ զմե-
ղաւորն, և ասէ՛ թէ այս այրս մահու-
չափ մեղք է՛ գործեալ՝ հատ վճիռ և
Թոյլ տուր տանել ՚ի դժոխքն: Արդա-
րութեն պ՟ի տայ դիւին թէ դու ճշ-
մարիտ ասես թէ ՚ի մահու չափ մեղք
է՛ անկեալ, ճշմարիտ է՛ և խնդիրք քո՛:
վ՟ս զի պօղոս ասէ՛ ՚ի հռոմս: Զ. գլխ: Թէ
Թոշակ մեղացն մահ է՛: այլ դու սա-
տա-

սատանայ վասն անուան ունիս , զի անուն քո
սուտ և ստութե հայր է՛ գրած յաւե-
տարանն , երթ և վկա բեր և ապա հա-
ւատամ : դեւն ասէ՛ մեծ վկա ունիմ , և
ոչ ոք կարէ խօսել ընդ դէմ նր : ասէ՛
Արդարութին ով է՛ , ասէ՛ սատանայ , մր
Անօրէնութին , որպէս ասէ՛ Յոհն .
ա. կթղից . ե. գլխ . գ. են որք վկայեն
յերկինս , Հայր , Բանն , և Հոգին սբ ,
և սոքայ երեքեանն մին : Հայր և Որ-
դին և Հոգին սբ տեսին յորժամ այրս այս
գործեաց զմահու չափ մեղքն : և ասէ՛
սատանայ . ա. վկա յերկնից բերի . ա.
վկա այլ յերկրէ բերեմ , այսինքն ,
խիղճ մտացն մեղաւորին , որ վկայէ՛ զն-
նքեան , որպէս ասէ՛ պօղոս հռոմց .
բ. գլխ : վկայէ նոցունց խիղճ մտաց նո-
ցունց , պխե առց Արդարութին մեղա-
ւորին և ասէ՛ , թէ սատանայ . բ. վկա
երեր քեզ , և երկուքն այլ ճշմարիտք , և
երեքէք սուտ ոչ խօսին , վսյն վճիռ հա-
տանեմ զի դու զարքայութին կորուսեալ
ես , և արժանաւոր ես դժոխոցն : սա-
տանայ յոյժ ուրախացաւ և մեղաւորն
յոյժ տրտմեցաւ և աղաղակեաց թէ ես
կու երթամ յողորմութէ դատաւորն , որ
այլ մեծ է՛ և անդ` կամիմ խնձ դատաստա-
նան լինի և արժան է՛ խնձ փախչիլ յ ար-

դա,

դատութե՟ ամենևս և երթալ ՚յ ողոր-
մութե՟ դի՛ւանն որ բարձրագոյն է՛ քան
զամենայն արդարութի՟ն ։ վասն՟ Յակո-
բոս ՚ի կթղկց ․բ․ գլխ ասէ՛, բարձրա-
գլխ պարծի ողորմութի՟ն ա՛ռ դատաստա-
տանա՛ւն ։ արդարութի՟ն կու համա-
նի մեղաւորին երթալ ա՛ռ ողորմու-
թի՟ն, զի գիտէ որ նա՛ բարձրագոյն է՛ ։
իսկ ողորմութե՟ դի՛ւանն խոստովանու-
թի՟ն է՛ վ՟ս զի ողորմութի՟ն ա՟յ՝ այլ ու-
րեք ո՛չ ՚յայտնի այնպէս, որպէս ՚ի
խոստովանութի՟ն, քան զի յորժամ խոս-
տովանի Քահանայութե՟ և առնու զարձա-
կումն ՚ի նմին ժամու արձակի և ազատի
՚յ ամենայն մեղաց իւրոց թէպէտ և բա-
զում իցէ, վասն՟ ասէ՛ մեղաւորն,
ես կու երթամ ՚ի խոստովանութի՟ն զի
անդ՝ դատեցայց ։ և յոյժ դժո՛ւար
թուի այս սատանայի, զի գիտէ՝ թէ
մեղաւորն Քահանային խոստովանի փրկի ՚ի
ձեռաց իւրոց, և խափանի դատախազու-
թի՟ն սատանայի ։ յայնժամ այլ հնարս
իմացաւ սատանայ, և արար այնպէս,
որպէս առնեն նենգաւորք ՚ի դատաստա-
նսն աշխարհիս, զի յորժամ տեսանէ
թէ ո՛չ կարէ յաղթել զթշնամիս իւր՝
առաքէ ա՛ռ նա՛ ոմն սուտ բարեկամ,
որ երթեալ խօսի ՚ի կողմանէ նո՟, և ասա՛

չար խրատով խաբէ զնա՛ , այնպէս սա_
տանայ առաքէ ա՛ռ մեղաւորն . Ե. սուտ
բարեկամս , որք երթեալ խաբեն զնա՛ և
խրատ տան նմա ո՛չ խոստովանիլ . Զ.
սուտ բարեկամ է՛ ամօթն , ամօթս այս
խօսի ընդ մեղաւորին՝ ես քո՛ բարեկամ
եմ, և զքո հարկերդ կուզեմ , թէ խոս_
տովանիս՝ քո՛ հարկերդ կորընչի , և խիստ
ամօթօվ մնաս , թէ յաղբանոցն և ՚յ այլ
գարշելի տեղ էիր անկեալ մին պահ ո՛չ
կարէիր յայտնել զայն ծնօղաց քոց , և
արդ՝ այժմ անկեալ ես ՚ի պոռընկութե՟
յաղբոցն բազում ժամանակս , որ աղտե_
ղի է՛ քան զամենայն աղբոցն և զտիղմս ,
և այժմ կամիս առանկիլ և բացո՛ւիլ ա_
ռաջի քահանային : յանժամ ՚ի տարա_
կոյս անկանի մեղաւորն , և ասէ՛ խոս_
տովանիմ , թէ չխոստովանիմ : վ՟յ թէ
խելք ունի հնարք առնէ և ասէ՛ ինձ մին
Ճշմարիտ և սիրելի բարեկամ պիտոյ է՛ որ
ինձ խրատ տայ : և այս է՛ խրատիչ մե՟
Ոգին , որ անյապաղ և առատանց վարձու_
դրայ ա՛ռ մարդն , որ խնդրէ՛ զնա՛ , որ_
պէս ասէ՛ Աղ՟մ : զբերամենիմ բացի և առև
զՈգի : վ՟յն հարկէ՛ , որ այնպիսի պա_
հու , ՚յ որում մեղաւորն կարծէք ունի՝
աղաչեսցէ զմե՟ Ոգին ասելով՝ ո՛վ մե՟
Ոգի դու որ Ճշմարիտ բարեկամ ես ,

խրա_

խրատեմ զիս որպէս արարից, վասն ամօթոյս` թողում զխոստովանելն, թէ ոչ: յայնժամ Սգեն սէ ասէ` ՚ի սիրտ մեղաւորին քեզ պատշաճ է` որ փութով խոստովանիս և այդ ամօթդ որ առ քեզ եկեալ է` սուտ բարեկամ է` քո և ոչ կամի զքո հարկն և շահն: այլ կամի զքեզ խայտառակել, զի թէ այժմ ոչ խոստովանիս` ՚յաւուրն դատաստանի առաջի ամյ, և հրեշտակաց և մէջ և ամենայն արարածոց նախատեալ խայտառակիս: և գիտեմ զի Տր ոչ է` եղեալ խոստովանահայր զհրեշտակն` որ անմեղ է`, թէ պարտէր ամաչել քեզ և ոչ խոստովանել առաջի նր: այլ եղեալ է` Տր խոստովանահայր զմարդն` իբրև զքեզ յանցաւոր, որ ոչ զարմանայ ընդ մեղս քո, և այնչափ մեծամեծ մեղքէ լսել` որ քոյդ ոչ ինչ երևի: և աստ գիտելի է` զի այս սուտ բարեկամս որ է` ամօթն զբազումս արգելու ՚ի խոստովանութե և ընկենու ՚ի դժոխս: վասն գրեալ է` թէ այր ոմն մի քարոզէր ժողովրդեան իւրոյ ՚յաղուհացիցս, գալ ՚ի խոստովանութիւն և ոչ գային, և նա յոյժ զարմանայր, օրմն տեսաւ զսատանայ ՚յեկեղեցին, և հարցանէր զնա` զինչ խնդրես աստ, ասէ` սատանայ ՚ի քո ժողովրդեան գողութեան արա-

արարեր, այժմ դարձեալ զղջացեալ եմ, և յետեմ բերել զոր գողացայ ։ ասէ՛ զի՞նչ էիր գողացեր, ասէ՛ սատանայ յորժամ կամէին մեղք գործել՝ առի զամօթն ՚ի նոցանէ, որ համարձակ գործեցին զմեղքն ։ այժմ որք կամին խոստովանել՝ դարձեալ տամ ՚ի նոսա զամօթն զիմ՛ խոստովանեսցին ։ յայնժամ գիտաց սբ̅ հայրն որ ՚ի սատանայէ է՛ անամօթ գործել զմեղքն, և ՚ի խոստովանելն ամաչել, և պատմեաց զտեսիլն ժողովրդեանն, և ամենեքեանն խոստովանեցան ։ և յորժամ այս սուտ բարեկամս, որ է՛ ամօթն ո՛չ կարէ խաբել զմարդն, յայնժամ գայ երկրորդ սուտ բարեկամն և անուն նորա յոյս երկայնկենաց ։ այս սուտ բարեկամս ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին դեռ կորիճ ես և մատղաշ, բազում ժամանակ պիտի ապրիս, այժմ ո՛չ է՛ ժամանակ խոստովանելոյ, կամ ապաշխարելոյ, յորժամ ծերանաս մերձ ՚ի մահ՝ յայնժամ խոստովանիս ։ Բայց Ոգին սբ̅, որ ճշմարիտ բարեկամ է՛ ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին, շուտով խոստովանեա՛ զի այդ սուտ բարեկամ է՛ և կամի խաբել զքեզ, և ՚ի կողմանէ սատանայի ա՛ռ քեզ եկեալ է՛ և կամի սակաւ մի՛ հանգուցանել զքեզ՝

և ՚ի

և 'ի դժոխքն 'ի ցուցանել և անվախ-
ճան տանջել չար տանջանօք և չարչա-
րել ։ մի՛ ունէնար զյոյս վ̃ս փառո՛ւեանն,
թողթէ՛ մի բազում ժամանակաց ։ զի
ո՛չ գիտես , թէ վաղիւն ինչ պատահի ։
քան զի բազումք ակն ունէին ծերանա-
լոյ՝ յանկարծամահ եղեն ։ մարդ մեղա-
ւոր որ յոյս ունի ապրել բազում ժա-
մանակս՝ յիմար է՛ , քանզի ո՛չ գիտէ մահն,
որ ակնեալ է՛ զինքն , և հանապազ 'ի մէջ
մահու է՛ , այսինքն , որ է՛ 'ի մէջ մահու
չա՛փ մեղաց՝ մեռեալ է՛ ։ քանզի թէ մե-
ծատուն ո՛ք տայ ոսկի ցաղքատ ոմն , և
ասէ՛ երթ՝ և արա՛ վաճառականութի ,
և զոր ինչ շահիս 'ի կէս լինի , իսկ նա՛
գնացեալ զշահն և զգլուխն կորոյս ։
այսպէս առնէ աղքատն երկրորդ և եր-
րորդ անգամն ։ իսկ եթէ 'ի մեծատնէ
'յայնմանէ՝ դարձեալ ոսկի և կամ այլ
ինչ կամի առնուլ այս աղքատ մարդս , և
յոյս ունի շահի՝ այնպիսին յիմար է՛ ։ զի
թէ յառաջն զգ̃լխոյն 'ի տեղնէր պահեալ,
ու շահ այլ յա՛ւելեալ՝ իրա՛ւ էր թէ յու-
սայր դարձեալ շահել ։ մեծատունն այս
Ա̃Ծ է՛ , և աղքատ՝ մարդս ։ Ա̃Ծ գլուխք
կու տայ մարդոյն , յորժամ ժամանակ
և կենդանութի կու տայ մարդոյն որ
շահեցնէ , և բազում բարի գործք կա-

տա-

տարէ ։ իսկ նմա զշահն և զպտղեքն կորու-
սանէ , զի զամենայն ժամանակս իւր
անցուցանէ ՚ի մեղս ; այսինքն , Տղայու-
թեան , Մանկութեան , Երիտասարդու-
թեան , և Ծերութեան , զի զայս քան ժա-
մանակս առնու ՚յ ա͞յ և զայսոսիկ ևս
կորուսանէ , վասնզի թէ յոյս ունի առ-
նուլ ՚յ ա͞յ զայլ ժամանակ՝ յիմար է՛ ; զի որ
չմի էառ կորոյս ։ այլ պարտ է՛ երկն-
չել , գուցէ մեռանիցի յանկարծակի , և
անկանիցի ՚ի դժոխքն որպէս ասէ Սղմ։
արք արիւնահեղք մի՛ հասանիցեն զա-
*ւուրս իւրեանց ։ յորժամ այս երկրորդ-
սուտ բարեկամս ոչ կարէ խաբել զմար-
դն մեղաւոր ։ Գայ երրորդն որ է՛ ,
երկնչելն ՚ի ծանր ապաշխարութենէն ,
և ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին , դու տկար
մարմնես ու բազում մեղքես գործել ,
թէ խոստովանիս՝ ծանր ապաշխարանք
դնեն ՚ի վ͞ր քո , և չկարես դիմանալ ,
վ͞սն անօգուտ քեզ խոստովանիլն ։ այլ
Ոգին ս͞բ ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին ,
շուտով խոստովանեա՛ , զի այս երկիւղս
սուտ բարեկամ է՛ քո , և կամի զքեզ խա-
բել և ՚ի վեր առնուլ ՚ի քեզանէ զթեթև-
քեան ապաշխարութեան , և բառնալ ՚ի վ͞ր
քո՛ զծանր տանջանք դժոխոցն , այս եր-
կիւղս նման է՛ ։ Երկիւղալից ձիոյ կամ ջո-

րոյ որ 'ի չքոյն նուրոյ , կամ 'յայլ փուշ_
քանն երկնչի և դողդի , և զձիաւորն 'ի
վայր ձգէ , վասն պարտ է՛ հարկանել ուժ_
գին զայնպիսի ձին տաճկննակաւն որ
'ի ստուերէն յանց կենայ : զամենայն ա_
պաշխարութե՟ բեռն զոր խոստովանա_
հայրն դնէ՝ ստուեր է՛, և ոչ ինչ է՛ առ
ահագին տանջանս դժոխոցն , որք նբրն_
գլերինս են : վասն զի թէ մարմին քո որ
նման է՛ ձիոյ , կու երկնչի 'յայս ստուե_
րէս՝ ուժգին հար տաճկննակաւ , այս
ինքն , յիշատակաւ մահուն , որ հեշտու_
թ՟ք անցանի : Երբեք տեսեալ ես որ խոս_
տովանահայրն վ՟ս մեղաց՝ խոստովանո_
ղին զձեռն կամ զատն կտրեալ լինի , այլ
դնէ 'ի վ՟ր պահք , և աղօթք , և ողոր_
մութ՟ի որ չափ կարէ տանել : ապաու_
րեմն վ՟ս երկիւղի ծանրութե՟ ապաշխա_
րութե՟ն ոչ է՛ պարտ փախչել 'ի խոստո_
վանութե՟ն : յորժամ այս երրորդ սուտ
քարենկամս ոչ կարէ զմեղաւորն խաբել :
Չորրորդն գայ , այսինքն , երկիւղ մի_
անգամ անկանելոյ 'ի մեղս , և ասէ՛ 'ի
միտս մեղաւորին , դու սովորեալ ես 'ի
մեղք գործելն , թէ խոստովանիս ոչ կա_
րես պահել զխոստովանութի՟ն , այլ դար_
ձեալ անկանիս , 'ի մեղք , և յորժամ յետ
խոստովանութե՟ն այլ մեղք գործես ծան_

րա_

բաղդոյն լինի քո՛ մեղքն վս̃նկ լմանէ քեզ
չխոստովանիլ ։ Այլ Ոգ̃ինս ս̃բ ասէ՛ 'ի
սիրտ մեղաւորին, թէ այս երկիւղս սուտ
քարեկամ է՛ քո՛, և կամի խաբել զքեզ
դու մի՛ երկնչիր զի խոստովանութին
հաստատէ զսիրտ մարդոյն ընդ դէմ
սատանայական փորձութեցն, վս̃նկ ասէ՛
Սղմ ես կամօք իմօք խոստովան եղէց
նմա, Տր̃ զօրութի ժողովրդեան իւրոյ
տացէ ։ զայս ցուցանէ, թէ 'ի կամաւոր
խոստովանութեն 'յ ա̃յ զօրութի առնու
ժողովուրդ քրիստոնէից կալ ընդ դէմ
փորձութեց սատանայի ։ Յուդա՛ մակա_
բայեցի յոյժ յաղթող և զօրաւորէր ընդ
դէմ թշնամեաց ։ Յուդա՛ խոստովանու_
թի թարգմանի, յայտնանէ երևի թէ
խոստովանութին մեծ պատերազմող է՛
և յաղթող ընդ դէմ դիւաց, յորժամ այս
սուտ քարեկամս ո՛չ կարէ խաբել զմեղա_
ւորն ։ Հինգերրորդն գայ, այսինքն,
թեթևութի մեղացն, և ասէ՛ 'ի սիրտ
մեղաւորին, թէ քո՛ մեղքդ է՛ ներելի և
թեթև առանց խոստովանութե դու
կարես սրբիլ ։ Այլ Ոգ̃ինս ս̃բ ասէ՛ 'ի
սիրտ մեղաւորին, մի՛ հաւատալ այդ_
նենգաւոր խորամանկ սուտողիդ, այժմ թե_
թևացուցանէ զմեղս քո՛, այլ յօր մա_
հուն յոյժ ծանրացուցանէ և մատնէ

զքեզ ։ զի Թէ ո՛ք փոքր մահու չափ մե֊
ղօք յերկնա լինի՝ այնպէս ծանր է՛, որ
բովանդակ ամենայն երկինքն ո՛չ կարեն
զնա՛ բառնալ այլ անկանի ՚ի վայր որպէս
և սադաւէլ անկաւ ։ և Թէ ա͞յ ողորմու֊
Թին ո՛չ խնայէր՝ յորժամ ո՛ք գործէր զմա֊
հու չափ մեղս՝ պատառէր երկիրս և կըլ
նոյր զնա՛, և ամենևին ո՛չ կայ փրկութի
առանց խոստովանութե՝ յորժամ հնար
է՛ խոստովանիլ ։ վասն զի գրեալ է Թէ պա֊
ռաւ կին մի մահու չափ մեղք էր գոր֊
ծեալ, և ո՛չ կամէր խոստովանիլ, այլ
երԹայր ՚յ եկեղեցին և լայր դառնա֊
պէս, զի սրբեսցի մեղքն իւր, և դիւա֊
հար մի՛ էր անդ՝ յոյժ ծիծաղէր, և զնա
եհարց պատճառն Թէ զի՞նչ ծիծաղիս,
ասէ՛ զքեզ ծիծաղիմ որ առանց խոս֊
տովանութե կամիս սրբիլ ՚ի մեղացդ,
զի եԹէ ծովու չափ Ջրոյ արտասուք
հանես վ͞ն քո՛ մեղացն և ո՛չ խոստովա֊
նիս՝ ո՛չ առնուս Թողութի ։ զայս դևն
ասաց բերանօվ դիւահարին ։ Իսկ վար֊
դապետք ասեն, Թէ յորժամ դնէ ՚ի միտս
իւր մեղաւորն զխոստովանիլն, ՚ի նմին
ժամու Թողութի լինի մեղաց իւրոց ։
վասն զի գրեալ է՛ ՚Ղուկաս ․ ԺԵ․ գլխն ։
Թէ ՚Ք͞ս ցտասան բորոտսն ասաց, եր֊
Թայք ցուցէք զանձինս քահանայիցն և ե

ղև

զի նորա գնացին առժամայն սրբեցան։ այսպէս որոյ հոգին գողեցեալէ և քո_րոտեալ մահու չափ մեղօք՝ յորժամ զղ_ջանայ և 'ի միտ դնէ զխոստովանելն յայնժամ սրբի մեղք նր։ վասնի ասէ՛ Դա_՛ւիթ ։ ասացի , այսինքն , 'ի միտ եդի , թէ խոստովանեցայց ընդ դէմ իմ զմեղս իմ և դու թողցես զամենայն ամբար_շտութիւս մեղաց իմոց ։ և թէպէտ մա_հու չափ մեղքն մեղաւորին սրբի , ունե_լով 'ի միտս զկամս խոստովանութե , այլ դեռ ևս պարտական է՛ երթալ խոստո_վանիլ քահանայից , քանզի Վքն 'ի Մ՝ատթէ . ը. գլխ ։ և Մ՝րկս . ա. գլ. և Ղ՝ւկս . Ե. գլ. որ սրբեաց զայր ոմն բո_րոտ հրամայեաց երթալ առ քահանայն և ցուցանել զինքն ասելով այսպէս՝ երթ ցոյց զանձն քո՛ քահանային , այսինքն , թէ երթ և խոստովան լեր զմեղս քո՛ ։ Նու յորժամ այս . Ե. սուտ բարեկամքս ոչ կարեն խաբել զմարդն՝ նա երթա՛ և խոստովանի զմեղս իւր , յայնժամ սատանայ յոյժ տրտմի՛ և բարկանայ , և վազէ 'յ ողորմութե ատեանն և ասէ՛ այս մարդս 'ի մահու չափ մեղսէ՛ դատա_պարտեա՛ զսա՛ , զի 'յ արդարութե ա_տեանն դատապարտեցին զդա՛ երթալ 'ի դժոխքն ։ Ողորմութիւն ասէ՛ ցատա_

նոյ ստուգիւ հաստատեսցէ և վկայ քեզ՝ Թէ է՛ 'ի մահու չափ մեղս ։ սատանայ պղծն տայ վկայէ՛ ՏՐ ։ յայնժամ Ողոր-մութիւն սուտ առնէ զսատանայ ասելով Թէ զայս մարդոյս մեղքն որ խոստովա-նեալ է՝ ես չեմ գիտեցեալ յայն կողմանէն որ դատապարտեմ զդա , վ͞ն զի կամինք եմ եղեալ ձեռամբ Եզեկիէլի մարգարէին Ժը. գլխն որ ասէ՛ Թէ անօրէնն դար-ձցի յամենայն անօրէնութեանց իւրոց զոր արար՝ կենօք կեցցէ , և ամենայն անի-րաւութիւնք իւր մի՛ յիշեսցին ։ և ո՛չ ո՛ք 'ի հրեշտակաց և 'ի սրբոց իշխէ վկայել այն մեղացն , որ Ճշմարտութեամբ խոստովանեալ է՛ ։ և այսպէս մեծ է՛ խոստովանութեան խորհուրդս առաջի ա͞յ , որ Թէ գլխաւոր հրեշտակն վկայութիւն տայր վ͞ն Ճշմա-րիտ խոստովանեալ մեղացն , արտաքսէր զհրեշտակն զայն 'յ արքայութենէն ։ և յորժամ սատանայ ո՛չ գտանէ վկայ և յանօթ լինի՝ յայնժամ հրաման տայ ողոր-մութիւն՝ խոստովանահօրն որ է՛ երես-փոխան իւր զի ազատեսցէ զմեղաւորն , և խոստովանահայրն ազատէ զմեղաւորն 'ի սատանայի ձեռէն ասելով Ողորմեսցի քեզ հզօրն և մարդասէրն ՏՐ , և Թո-ղութիւն շնորհեսցէ ա͞մ յանցանաց քոց , խոստովանեցելոցն և մոռացելոցն ։ և ես

'ի կար-

'ի կարգէս քահանայութե՟ և իշխանութե՟ Ա՟ծային հրամանացն, թէ զոր արձակեսջիք 'յերկրի՝ եղիցի արձակեցեալ 'յերկինս ։ Նոյնն քանիւն՝ ես արձակեմ ✝ զքեզ 'յա՟մ մասնակցութե՟ մեղաց քոց, 'ի խորհրդոց, 'ի բանից, և 'ի գործոց, Յանուն, ✝ Հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ ։ Ամէն ։ Եւ դարձեալ տամ զքեզ 'ի խորհուրդ ս՟բ Եկեղեցւոյ՝ զորինչ գործեսցես, եղիցի քեզ 'ի բարեգործութի՟, և 'ի փառս հանդերձեալ կենացն ։ Ամէն ։ Եւ այսպէս ազատի մեղաւորն 'ի մեղաց և 'ի սատանայէ՛, և արժանաւոր լինի արքայութե՟ն ։ Դևքն տրտմին, և հրեշտակքն ուրախանան 'ի վ՟ր այսպիսի մեղաւորի որ ապաշխարեսցէ ։ Եւ Ք՟ի փառք յաւիտեան ։

Ամէն ։

# ԳԼՈՒԽ Զ.

## Վ՟ Ապաշխարութե՟:

ԱՅԺՄ ԽՕՍԵՑԱՒՔ ՚յերրորդ մ՟ուր ճանա-պարհէս, որ ապաշխարութենն է՛ այսինքն հատուցումն, և այս ևս․ գ․ մ՟լէ՛ վ՟ս զի․ գ․ կերպիւ կարէ ոք զհոգևոր պարտս իւր վճարել, այսինքն, պահօք, աղօթիւք, և ողորմութ՟բ: և Թէ ոք կատարելապէս քա՛ւէ աստ զմեղս իւր, պահօք և աղօթիւք, և ողորմութ՟բ, ոչ միայն ՚ի դժոխոցն ազատի այլ և ՚ի քաւարանէն, և ՚ի նմին ժամու Թռչի ՚յերկնից արքայութ՟ին: բայց այս․ գ․ մ՟լ ճանապարհս խիստ դժուարէ՛ և քիչ մարդ գտանի որ զիւր պարտքն իսկոյն աստ վճարել կարէ՛ պահօք և աղօթի՛ւք և ողորմութ՟բ: և որք ոչ կարեն աստ իսկոյն վճարել վասնայ-նորին զմնացորդն ՚ի քաւարանն վճարեն: Իսկ աստ գիտելի է՛, զի խոստովանահայրն կամ մ՟ւելի դնէ զկանոնն ապաշխարութ՟ենն ՚ի վ՟ր խոստովանողին քան զոր պարտէր դնել, և կամ հ՟աւասար ըստ

չա-

չափու մեղացն, և կամ փոքր քան զմեղքն, և որ յանձն էառ և կատարեաց զմեծելի ապաշխարութիւն, ամենևին ազատեցաւ 'ի քաւարանէն և 'յամենայն ապաշխարանքն կարգի նմա պատիժ յ'երկինս։ Եւ թէ հաւասար ընդ պատժոց քաւարանին՝ կատարելապէս ազատեալ է 'ի քաւարանէն ; նա թռչի 'յերկինս։ Եւ թէ սակաւ ոչ ազատի 'ի քաւարանէն մինչև վճարեսցէ ։ Բայց այս սուղ անգամ հանդիպի որ մեծ քան զմեղքն լինի ապաշխարանքն կամ հաւասար, այլ սակաւ դնել զապաշխարութիւն հասարակ սովորութիւն է՝, զի լաւ է փոքր ապաշխարութեան առաքել զնոսայ 'ի քաւարանն, քան թէ մեծ ապաշխարութեան յուսահատ առնել և առաքել 'ի դժոխս։ Եւ աստ՝ հարցումն լինի թէ զատ 'յայս երեք մեղ ճանապարհէս, որք են պահք, աղօթք, և ողորմութիւն, կայ՞ այլ ինչ՝ որ այնու քաւեն զմեղս և փրկեն 'ի քաւարանէն ։ Պատասխանեմ և ասեմ այո՞ է՝ այլ ինչ բազում, որով քաւի պատիժ մեղացն, և լինի օգնական վճարել զնոր մեղաց պարտքն ։ և գիտելի է՝, զի թէ այս · Գ · մեղ ճանապարհս որ ասացաք, պահք, աղօթք՝, և ողորմութիւն թէ դժուարին է՝ ումեք, քանզի տկար է՝ կամ

աղէտ, կամ մի այլ ուրիշ պատճա-
ռի ։ Ուրիշ այլ · դ· մի կայ կարճ և
հեշտ, որովք կարէ դիւրութբ հաստա-
տանել զպարտս իւր և եթն այսոքիկ · ա·
զի ջանայ ոք զայլս 'ի բարիս յորդորել,
քանզի ասեն թէ էր ումն յոյժ մեղաւոր
և զղջացեալ եկն առ խոստովանահայրն,
և ասէ՛ մօտէ որ ես յուսահատիմ մի
բազում մեղաց իմոց՝ և այսէ՛ պատ-
ճառն, զի ես բազում մահու չափ մեղս
եմ գործեալ և վարդապետք կու քա-
րոզեն թէ մի ամէն մին մահու չափ
մեղացն · Է· տարի ապաշխարել պարտ
է՛, և ես երբ կարեմ վճարել զիմ ա-
պաշխարանքն ։ ասաց նմա խոստովա-
նահայրն քաւ լիցի քեզ 'յուսահա-
տիլն, մի՛ յուսահատիր՝ այլ զոր աստ
ոչ կարես վճարել՝ 'ի քաւարանն վճա-
րես, նա՛ ասաց եղուկ ինձ, զի ես կար-
ծէի մխիթարիլ 'ի քէն, և դու կրկին խո-
ցեցեր զիս, զի եթէ համարեմ զմեղս իմ,
և մի ամենայն մեղաց իմոց · Է· տարի 'ի
քաւարանն մնամ՝ երբ կարեմ վճարել,
և մանաւանդ թէ նոյն հուրն է՛ 'ի դժո-
խս, որ է՛ 'ի քաւարանն ։ յայնժամ խոս-
տովանահայրն գթացաւ նմա և ասէ՛,
մի՛ երկնչիր, ես զայլ կարճ ճանապարհ
քեզ ցուցանեմ, որփութօվ կարես վճա-
րել

րել զքո պարտքն , և այսու օրինակաւ
ցուցից քեզ ։ զի Թէ ոխս տանու Տր , որ
ունի ․ ռ․ բեռուխն արտ հնձելոյ՝ Թէ ինքն
միայն սկսանի հնձել՝ յուշ կարէ վճա֊
րել , այլ Թէ զբազում մշակս բերէ 'ի
հունձս իւր՝ շուտով վճարէ ։ վն այս հն֊
ձոցս յիշէ աւետարանն , Թէ հունձք բա֊
զում են և մշակք սակաւք՝ աղաչեցէք
զՏր հնձոցն , զի հանցէ մշակս 'ի հուն֊
ձս իւր ։ հոգևոր հունձքեն ամենայն բա֊
րի գործքն , որք աստ լինին , այսինքն , խոս֊
տովանութիւն , և ապաշխարութիւն և այլքն ,
և որ յորդորէ զմեղաւորս դառնալ 'ի
մեղաց , և գործել զբարիս՝ այնպիսին
զբազում մշակս բերէ 'ի հունձս իւր ։ զի
Թէ զոք 'ի չարեաց դարձուցանես և 'ի
բարիս յորդորես՝ 'յամենայն բարութէ
զոր առնէ նա՝ դու մասն և բաժին առ֊
նուս , և 'յայնժամն է՛ կարես վճարել
զպարտս քո ։ և արդ՝ եԹէ դու զբա֊
զումս յորդորես 'ի բարիս 'ի խոստովա֊
նութիւն , և 'յապաշխարութիւն որք հունձք
հոգևորք են նոքայ օգնականն լինին քեզ՝
և ազատեն զքեզ 'ի պարտուց ։ յայնժամ
այլն յոյժ ուրախացաւ և յոյժ ուրախու֊
Թեն եղաց ։ ապաուրեմն 'յայսմիկ է՛ զմե֊
ղաւորսն դարձուցանել 'ի մեղաց՝ և յոր֊
դորել 'ի բարիս յոյժ օգուտ է՛ և կարճ

ճա֊

ճանապարհ ։ և այս հաստատի բազում
վկայիւք, նախ զի թէ ոք խնդրէ ՚ի մե֊
ծութիւն և ՚ի բարձրագոյն աստիճան հա֊
սանել ; ՚յեպարքոսութիւն, կամ ՚ի թագաւո֊
րութիւն ո՞վ առաւել օգնական լինի նմա
հասանել ՚յայն պատիւն՝ զայն առաւե֊
լագոյն սիրէ ։ Նաև Տրն մեր Յս Քս վս
փրկութեան հոգւոց եկն ՚յաշխարհս, և զոր
ինչ արար զամենայն վս օգտութեան հո֊
գւոց արար, վսնկ ասէ՛ ո՛չ եկի կոչել
զարդարս այլ զմեղաւորս ։ և դարձեալ
ասէ՛ եկն որդի մարդոյ խնդրել զկորու֊
սեալն, ապաուրեմն որ զփրկութիւն հո֊
գւոց առաւել կամի և յորդորէ զմար֊
դիկ ՚ի մեղաց դառնալ՝ առաւել սիրե֊
ցեալ լինի ՚ի քէ ։ Երկրորդ զի թագաւոր
ոք առնիցէ ընտրիս, և հրամանակալս
առաքեսցէ և ասասցէ, թէ ո՞վ ոք, որ
զբազում մարդիկս բերէ ՚ի թագաւորի
պատիւն, առաւել սիրեսցէ զնա թա֊
գաւորն ։ Իւրաքանչիւրոք Ջանայ զբա֊
զումս տանել ՚յընտրիս թագաւորին զի
առաւել սիրեսցի ՚ի թագաւորէն ։ այս֊
պէս Տրն մեր Յս Քս՝ թագաւորն
թագաւորաց ընտրիսն է՛ պատրաստեալ
՚յերկնից արքայութիւն և որ մեծի և
բազում մարդիկ տանի ՚յընտրիս երկնից
արքայութեան առաւել սիրեցեալ լինի
՚ի քէ

՚ի քէ զի զբազումս յորդորեաց ՚ի կեանս ,
վասնզի պարտ է՝ , զի իւրաքանչիւրոք Ջա-
նասցէ զբազումս յորդորել ՚ի բարիս ,
զի առաւել սիրեսցի ՚յա̅յ : Երրորդ զի
բարութիւն զօրաւորագոյն է՝ քան զչարն ,
և Ա̅Ծ̅ ողորմած է՝ , պատրաստ է՝ վարձս
բարեաց հատուցանել՝ քան թէ տանջանս
և պատիժս : և ՚ի կողմանէ չարին այսպէս
է՝ զի թէ ո՛ք զայլ ո՛ք ՚ի չարիս ընկենու
զոր օրինակ ասէ՝ թէ Թշնամին քո՛ սա
է՝ վրէժ խնդիր լեր և սպան զնա՛ և թէ
վ̅ս բանի ն̅ր սպանանէ զնա՛ , այնպիսի
խրատատողն խիստ մեծ մեղս առնէ Թէ-
պէտ ինքն իւր ձեռօքն ո՛չ եսպան՝ պա-
տիժ առնու ՚յա̅յ , զի պատճառ եղև
մեղացն : ապաուրեմն ՚ի բարութե̅ կողմա-
նէն թէ ո՛ք յորդորէ՝ և խրատէ զայլ զայն
՚ի բարի գործս ՚ի զղջումն և ՚ի խոստովա-
նութի̅՝ այն բարութե̅ն նմա՛ ասի , զի
նմա՛ եղև պատճառ բարեաց ն̅ր , բազում
առնու վարձս ՚յա̅յ , վասնզի ասէ՝ Յակոբոս
կ̅թղից . ե. գլ̅խ : եղբարք իմ եթէ ո՛ք
՚ի ձէնջ մոլորեսցի ՚ի ճշմարտութե̅ և դար-
ձուցանէ ո՛ք զնա՛ , գիտել պարտէ զի որ
դարձուսցէ զմեղաւորն ՚ի մոլորութե̅
ճանապարհէ իւրմէ փրկեսցէ զհոգի իւր
՚ի մահուանէ և ծածկեսցէ զբազմութի̅
մեղաց : Չորրորդ վ̅ս զի Ա̅Ծ̅ սիրէ

զոր-

զորսն , որպէս Իսահակ որ ասաց ցԵ_
սաւ անդրանկին իւր ա՛ռ դու զգործիս
զաղեղն եւ զկապարճ եւ գնա՛ ՚ի դաշտ եւ
որսա՛ ինձ որս եւ արա՛ ինձ խորտիկս որ_
պէս սիրեմ զի կերայց եւ օրհնեսցէ զքեզ
անձնիմ որպէս ասէ՛ Ծննդոց . Ի Է . գլխ :
այսպէս Տ՟ր ասէ՛ ընդ քրիստոնեայս , որք
էք որդիք իւր երթայք որսացէք զմարդիկ
՚ի կեանս եւ կազմեցէք ինձ խորտիկս , եւ
օրհնեսցից զձեզ : Նոյն Իսահակ յոյժ բա_
զում ունէր հօտս խաշանց , այլ համեղ
թո՛ւէր նմա՛ միս որսոյն , նոյնպէս Տ՟ր
յոյժ փարթամէ՛ ՚յ երկինս , զի բազում
ունի հօտս զդասս հրեշտակաց եւ Ս՟րբոց ,
այլ յոյժ ուրախանայ յորժամ որսա՛ որք
զմեղաւորս ՚ի կեանս , եւ որ չա՛փ որսն
գեղեցիկ լինի եւ մեծ առաւել ուրախա_
նայ թագաւորն Տ՟ր : Պողոս յոյժ գե_
ղեցիկ եւ մեծ որսէր իբրեւ զեղն , վասն
մեծ ուրախութ՟ի եղեւ վ՟ն դարձման ն՟ր
՚յ երկինս ա՛ռ հրեշտակս եւ ընդհանուր
ամենայն եկեղեցոյն` : բայց վ՟ն անբան
որսոց` յոյժ հոգան մարդիք , զի եթէ
որս ինչ գայր աստ` ամենեքեան ընթա_
նային փութով , եւ իւրաքանչիւրոք ՚ի
նոցանէ ջանայր թէ ինքն ըմբռնեսցէ
զորսն : Արդ` բազում բանական որս
կայ աստ , այսինքն , այր մեղաւոր եւ

ար_

արբեցող , կամ պոռնիկ ; և ո՛չ ո՛ք որոյ
զնա՛ բարի խրատով և բերէ ՚ի խոստո_
վանութիւն , և ՚ի միաբանութիւն ։ ՚Յ այսմանէ
լինի թէ մարդիք ո՛չ լինին նման որսորդ
շանց , որք յորժամ նշմարեն զորսն թռ_
չին զհետ , այլ լինին նման փարախ
շանց , որք ո՛չ կամին որսալ , այլ սիրեն
զհաչելն , և զխածանելն , այսինքն ,
բամբասեն և զրպարտեն զմարդիք ։ Ա_
պաուրեմն երևի թէ այս ճանապարհս
կարճ է՛ և բարի , զի բառնայ զպատիժ
մեղացն և ազատէ զմարդն ՚ի բա՛նտարա_
նէն , վ՜ս նորայ , որ դարձուցանէ զմե_
ղա՛ւորն ՚ի չարեաց և յորդորէ ՚ի բարիս,
կամ բարի խրատով , կամ օրինակ բա_
րի տալով ։ Եւ աստ գիտելի է՛ զի թէ
ո՛ք զբազում մեղս գործեալ է՛ , և զբա_
զումս յորդորեալ է՛ ՚ի մեղս և զբազում
հոգիս կորուսեալ , կամ օրինակ չար տա_
լով , և կամ չար խրատ , և կամ առա_
ջնորդ գոլով ծուլացաւ ՚յիւր գործոյն ,
նմա՛ ո՛չ է՛ բա՛ւական միայն զղջալ , և
խոստովանիլ զմեղս իւր , այլ ևս պար_
տի խոստովանիլ վ՜ս այնոցիկ՝ զորս ձգե_
ալ է՛ ՚ի մեղս , և վ՜ս բազում հոգւոցն զոր
կորուսեալ է՛ , քան զի Ա՜ծ խնդրէ զնո_
սա ՚ի ձեռաց ն՜ր ։ Այլ աստ՝ հարցումն
լինի թէ զի՞նչ կանոն պարտէ՛ դնել

խոստովանահայրն ՚ի վր̅ այնպիսոյն և
թէ քաւական է՛ նմա միայն պահք և
աղօթք, և ողորմութի̅ւ : Աստուածաբանքն
վարդապետք և ասեն թէ ո՛չ է՛ քաւա-
կան, քանզի թէ ո՛չ ունի ՚ի սրտին զցաւ,
և զղջումն դնէ ՚ի վր̅ ումեքն՝ յիմար է՛
այնպիսին, վ̅ս զի պարտ է՛ ուր ցաւն է՛
անդ՝ դնել զղջումն : Դարձեալ որ կո-
ղոպտէ զդրացիս իւր և մերկացուցանէ,
և խոստովանահայրն հրամայէ նմա պահք
կենալ՝ ո՛չ կարէ առողջացուցանել զնա,
քանզի նր̅ հի՛ւանդութի̅ն թիկանցն վր̅
է՛, վ̅ս զի մերկացոյց ՚ի հանդերձից զթի-
կունսն մարդկան : իսկ նա՛ զղջումն դնէ
՚ի վր̅ կրծոյն, այսինքն, զպահքն որք
թուլացուցանեն զփորսն : այլ՝ որպէս
ասացաք, ուր ցաւն է՛ անդ՝ պարտ է՛
դնել զղջումն, զի թէ մերկացոյց զմար-
դիկ՝ դարձեալ պարտի զգեցուցանել
զնոսա և զորինչ յափշտակեալ է՛ կամ
կողոպտեալ՝ պարտի յետ դարձուցանել
զնոսա ՚ի տեարս իւրեանց : քանզի ո՛չ
թողանին մեղքն մինչ յետս ո՛չ դարձին
առեցեալքն : և գողութի̅ն . Է . ազգ է՛
հոգևոր և մարմնաւոր : հոգևորն ծան-
րագոյն է՛, և այն է՛ որ զմարդիկ ՚ի մեղս է՛
յորդորեալ, գող է՛ որ զմարդիկ յափշ-
տակեալ է՛ ՚յ ա̅յ գանձատանէն, վասն ո՛չ է՛

նմա

նման միայն բաւական պահօք , և աղօ_
թիւք , և ողորմութ̅բ քաւել զմեղս իւր ,
այլ պարտ է՛ դարձեալ գտանել զկորու_
սեալ հոգին յորդորելովն 'ի բարիս , և
դարձուցանել զնոսա 'ի գանձն ա̅յ , վ̅ս զի
'ի սիրեցելքն . Ժ. ա. գլ̅խ գրեալ է զի գի_
տասցեն թէ որովք մեղանչէ ո՛ք նովիմբ ,
և տանջի : դարձեալ թէ ո՛ք զուր ասե_
լով և վատ անուն առնէ զոք , ո՛չ է՛ բա_
ւական նման պահօք և աղօթիւք , ա_
պաշխարել , այլ պարտի ջանալ բարի
համբաւել զանուն նր̅ , և դարձեալ ող_
ջացուցանել զոր բեկեալ կոտորեաց : վ̅ս
զի մեծ ինչ գողացաւ , այսինքն , զբարի
անուն նր̅ որ պատուականն է՛ քան զոս_
կի : և թէ ո՛ք ո՛չ կարէ զնոյն հոգին զոր
յափշտակեաց 'յա̅յ , դարձուցանել՝ զի՞նչ
արասցէ՛ : Պատասխան թէ պարտ է՛ զնոյն
հոգին դարձուցանել առ Ք̅ս զոր կո_
րոյսն , որ չափ հնար կարէ գտանել , և
թէ ո՛չ գոյ այլ հնար՝ քան զի մեռան
այն անձինքն , կամ հեռացան , նա՛ զայլ
հոգիս պարտի դարձուցանել առ Ք̅ս :
դարձեալ գիտելի է՛ զի ո՛չ է՛ արժանի
երկնից արքայութեն այն՝ որ վ̅ս ա̅յ սի_
րոյն այնչափ ո՛չ կամի աշխատիլ , որ
չափ աշխատեալ է՛ վ̅ս սատանայի և
աշխարհի սիրոյն , քանզի Պօղոս զայս_

պիսի

պետս կանոնս դնէ 'ի մէջ մեղաւորաց , թէ որ չամի աշխատեցան վ՟ս սատանայի և աշխարհիս նոյնպէս պարտին աշխատել վ՟ս ա՟յ սիրոյն , որպէս ասէ՛ հռմց. զ. գլխ : մարդկօրէն ասեմ վ՟ս տկարութեան մարմնոյ ձերոյ , զի որպէս պատրաստեցիք զանդամս ձեր ծառայս պղծութեան և անօրէնութեան 'յանօրէնութիւն , նոյնպէս և այժմ պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան 'ի սրբութիւն : զայս կամի ասել Պօղոս , թէ ես փոքր ասացի , այլ այս է՛ ճշմարիտ որ առաւել աշխատիլ պարտի վ՟ս ա՟յ սիրոյն , քան վ՟ս աշխարհի և մեղաց , այլ վ՟ս ձեր տկարութեան զայս չամի կանոնս դնեմ : այսպէս ուրեմն որպէս վ՟ս սատանայի և աշխարհիս աշխատեցար , և զբազում խաբեցեր 'ի մեղս , և զբազումս կորուսեր հոգով և զբազումս յորդորեցեր 'ի չարիս բանիւ և գործով : այսպէս վ՟ս Ա՟յ և վ՟ս արդարութեան պարտիս աշխատիլ , և փոխանակ զորս կորուսեր կամ զնոսա , կամ զայլս պարտիս գտանել յորդորելով 'ի բարին : և թէպէտ վ՟ս ուսման բազում նոյնս աշխատել և ուսեալ զարտաքին հանճարն այսու ամենայնիւ Պետրոս ա՟քլն վ՟ս բազում իմաստութեան քոյ զերկնից արքայութեան

դուռն

դուռն այնչափ ոչ բանայ, որ թէ կա-
մենաս աչօք միայն հայել 'ի ներս ։ Ա-
պաշխարեմ պիտոյ է՛ քեզ այնչափ աշխա-
տել վա̅ սիրոյ Երկնից արքայութեան, և
հոգևոր գիտութեան՝ մինչև բացցի քեզ
դուռն արքայութեան Երկնից վերինն Երուս-
աղէմի ։ Երկրորդ միջն է՛ որով բանի մե-
ղքն և աղաւթի 'ի քահանայանէն պահօք,
և աղօթիւք, և ողորմութբ̅, յորժամ ոք
տանջել հաւաչմամբ հեծեծելով, և
ցաւագին սրտիւ արտասուելով աղօթէ
առ Տր̅՝ շուտով բանի մեղք նր̅ և ազա-
տի 'ի քահանայէն ։ և այս ցուցանի ·բ·
օրինակաւ ։ առաջինն որպէս ասէ՛ Ղու-
կաս վա̅ Մարիամ Մագդաղենացւոյն,
որէր յոյժ մեղաւոր, այլ այնպէս ցաւա-
գին արտասուեաց, և Քն̅ արձակեաց
զնա 'ի մեղացն և 'ի պատժոցն, որ թէ
'ի նմին ժամու մեռանէր՝ նա ոչ էր տե-
սեալ զերեսս դժոխոցն և կամ քաւա-
րանին, որպէս ասէ՛ Քն̅ թողեալ լիցին
սմ̅ մեղք իւր բազում՝ զի յոյժ սիրեաց ։
և որպէս Ջուրն որ 'ի խորոյ վիմէ, և 'յա-
պառաժի վայրէ բղխէ գեղեցիկ լինի ։
այսպէս արտասուքն որ 'ի քարացեալ սր-
տից մեղաւորաց բղխէ, որք են 'ի խո-
րութէ̅ մեղաց, այնպիսին գեղեցիկ է՛
առաջի այ̅, և շուտով հասանի առ Տր̅,

 որ-

որպէս ասէ՝ Սղմ Եդիր զարտասուս իմ
առաջի քո ։ Երկրորդն ցուցանի դար-
ձեալ ՚ի Ղուկաս ․իբ․ գլխ աջակողմ Ա-
ւազականն, որ անմիջապէս ցաւեցաւ սրտա-
նց վս մեղաց իւրոց , վասնզի Քս ասաց
ցնա՝ այսօր ընդ իս իցես ՚յարքայութեն ,
և զայս բանս Քս ոչ էր ասացեալ ընդ-
նմա , թէ ոչ Աւազակն ցաւագին սր-
տով զամենայն պարտս իւր վճարեալ
էր , քանզի ասէ՝ Տրն ՚յաւետարանին,
թէ ոչ ելանիցես անտի՝ մինչև հա-
տուցանիցես զյետին բնիոնն ։ և այս ա-
ւազակս յոյժ իմաստունէր , զի ոչ թէ
ինքն միայն եկն ՚յապաշխարութիւն, այլ
և ս քարոզէր ընկերին իւրում գալ ՚յա-
պաշխարութիւն, մի՛ այն պատճառաւն շու-
տով քաւեաց զմեղս իւր , և յորժամ ե-
տես Քս ըզզղջումն , և զջերմութի այս
աւազակիս ասաց նմա՝ այսօր ընդ իս
իցես ՚յարքայութեն ։ և թէ ոք մեղա-
ւոր ասէ՝ թէ Այ այսպէս ողորմած է՝
յամեցից ՚ի մեղս մինչև ՚յօր մահուն ,
և յայնժամ զղջացայց ։ պատասխանելի
է՝ նմա , թէ ոչ է՝ պարտ զայդ զմտա-
ւածել , զի ոչ գիտես թէ յորժամ հա-
սանիս ՚յօր մահուն՝ կարես զղջանալ ,
թէ անզեղջ մեռալ , որպէս ձախակողմեան
Աւազակն , որ մինչ ՚ի մահ մեռաց ՚ի մե-

ղս և

ղս , և այնպէս անզեղջ մեռեալ էք ՚ի
դժոխս ։ Երրորդ միջն է՛ որով կարէ քա_
ւել զմեղս իւր , զի Թողցէ զմեղս որոց
մեղան ընդդէմ իւրն , և այսու շա_
տով կարէ քաւել զմեղս իւր , զի ասէ՛
Մատթէի․ Զ․ գլուխ , եթէ Թողուցուք
մարդկան զյանցանս նց՝ Թողցէ և Հայրն
ձեր երկնաւոր զյանցանս ձեր ։ ասէ՛ ոք
թէ ես ոչ կարեմ Թողուլ զպարտս պար_
տապանի իմոյ , զի նա խոցեալ է՛ զիս ,
կամ սպանեալ զորդի կամ զեղբայրիմ ,
կամ զիս վատ անուանէ՛ արարեալ ։ Պա_
տասխանեմ թէ դիւրինն է՛ Թողութիւն տա_
նել՝ զոր օրինակաւ հաստատեսցուք , այս_
պէս համարեա՛ թէ ունիս պարտի Թագա_
ւորին , ռ․ դեկան և եդեալ է՛ ՚ի բանտի ,
և ոչ ելանէ անտի մինչև զամենայն
վճարեսցէ , և ասիցէ ցնա Թագաւորն
ո՛վ մարդ այր ունիս պարտի քեզ ․ Ժ․
դեկան և Թուի թէ բնաւ ոչ կամի
վճարել քեզ , և թէ կամիցիս առնուլ՝
լինի թէ աւելի խարջ առնես քան զոր
պարտի , և ապա՛ կարես առնուլ , այլ
ես խրատ տամ քեզ՝ զայն պարտքն ինձ
՚ի դէմ արա՛ , և ես Թողում քեզ զամենայն
ինչ զոր պարտիս ինձ ։ այս խրատ հեշտ
Թուի բանդարկելոյն ։ Թագաւորս
այս նշանակէ զԱ͞ծ , և որ մահու չափի

մեղանչէ պարտական է՝ Ճյ . Ճ . դեկան ,
այլ թէ ո՛ք մեղուցեալ է՝ ումեք այն պար-
տի նմա . Ժ . դեկան , քանզի մեղք որք
լինին ընդ դէմ Այ՝ ծանրագոյնք են քան
զմեղս , որք լինին ընդ դէմ մարդոյ , զի
անչափ մեծ է Ած քան զմարդս ։ վասն
ասէ Ած ընդ մեղաւորն թէ դու պար-
տիս ինձ . Ճ . դեկան և ո՛չ կարես վճա-
րել , և որ սպանեալ է՝ զհայր քո կամ զոր-
դի և կամ զայլ ինչ վնաս հասուցեր՝ պարտի
քեզ . Ճ . դեկան և լինի թէ ո՛չ կարես
առնուլ ինչ ՚ի նմանէ , զի ո՛չ կարես վրէժ
առնուլ ՚ի նմանէ զի քան զքեզ զօրեղ է՝ ,
և թէ առնուս վրէժ և սպանանես զնա՛
աւելի խոարճ անկանիս , զի մահապարտ
լինիս , կամ թէ դու սպանցիս ։ Այլ ես
խոստ տամ քեզ՝ զայն պարտքն ինձ , ՚ի
դէմ արա՛ որ ինձ միայն լինիս պարտական
և ես թողում քեզ Ճ դեկանն՝ զոր պար-
տիս ինձ , և այս դիւրին է՝ . զԺ . դեկանն
թողուլ և զհազարն ո՛չ վճարել , և Ած
դիւրաւ կարէ առնուլ ՚ի նմանէ զպար-
տսն քան մարդն , զի ասէ՝ Պօղոս իմ է՝
վրէժ խնդրութի և ես հատուցից ասէ՝
Տր ։ Այլ ասէ՝ ո՛ք թէ ես կու թողում
զպարտս այնոցիկ , որք մեղուցեալք են
ինձ , այս ուխտօքս որ ես վրէժ չառնում
՚ի նոցանէ , ապա՛ թէ այլ ո՛ք չար առնէ

նչ ոչ հոգամ ես՝ այլ ուրախ լինիմ։ պա-
տասխանելի է՛ նմա թէ գրեալ է՛ յաւե-
տարանն, թէ որով դու չափես նովին
չափով և քեզ չափեսցի, և դու յաւե-
նայն օր աղօթես, թող մեզ զպարտս
մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պար-
տապանաց։ վասնզի կարէ ես ասել Տէր ընդ-
քեզ, թէ և ես թողում քեզ զպարտս քո
այս ուխտօվս որ ՚ի քէնէ վրէժ չառնում,
ապա թէ սատանայ զքեզ տանջէ ՚ի
դժոխս՝ ես ոչ հոգամ, այլ ուրախ լի-
նիմ։ Պարզեալ ասէ՛ ոք թէ այնմ որ
մեղաւ ինձ նմա ոչ ուրախանամ, թէ
չար ինչ պատահեսցի նմա, այլ ոչ կա-
րեմ սիրել այնպէս որպէս յառաջն սի-
րէի։ պատասխան տալ պարտ է՛ այնպի-
սոյն և ասել թէ, յորժամ մեղար ինձ և
թողութիւն արար քեզ, և դու կամիս որ
այնպէս սիրէ զքեզ որպէս յառաջն։ այո
ոչ այնչափ միայն՝ այլ ևս կամիս որ ևս
առաւել սիրէ զքեզ Տէր, ապաուրեմն
զմեղուցեալն քո որում թողեր զպարտսն
այնպէս պարտիս սիրել որպէս յառաջն։
Պարզեալ ասէ՛ ոք, թէ ես թողութիւն
առնեմ իմ մեղուցելոյն, և ոչ ինչ չար
առնեմ նմա, և ոչ ուրախանամ թէ
պատահի նմա չար և սիրեմ զնա սրտով,
այլ ոչ կարեմ նշան սիրոյ երևեցուցա-

նել նմա, զի ոչ կարեմ ողջոյն տալ և խօսել ընդ նմա : պատասխանելի է՝ նմա թէ նմանես դու յիմար մարդոյ որ պարտի, Ճ. դեկան և վճարէ զպարտս իւր, բայց զձեռագիրն յետ չառնու, նաև պարտատէրն խոստամանկէ, դարձեալ միւսանգամ խնդրէ զպարտսն : նոյնպէս յորժամ դու թողուս քո պարտապանին զպարտս վճարեցեր զպարտս քո, այլ ոչ առեր զձեռագիրն յետ, զի նշան սիրոյ ոչ ցուցանես, քանզի որպէս զձեռագիրն յետ առնուլն նշան է՝ թէ պարտքն վճարած է՝, նոյնպէս ողջոյն տալն նշան է՝ թէ քեզ թողութիւն եմ արարեալ : նաև սատանայ որ պարտատէրն է՝ յոյժ խոստամանկէ՝, և ՚ի կատարածի մեռանելն չարախօսէ զնմա առաջի այ, թէ մարդս այս իմ պարտապանն է՝ զի ոչ արար թողութիւն թշնամեաց իւրոց, և թէ ասես ես զիմ պարտքն վճարեալ եմ զի թողութիւն եմ արարեալ, ասէ՝ սատանայ ո՞ւր է՝ ձեռագիրն, այսինքն, նշան իւր սիրոյ զի ոչ ողջոյն տուեր և ոչ ողջոյն առեր ՚ի նմանէ : և հրամանէ այ որ ոչ միայն սրտօվ թողութիւն առնես՝ այլ և ողջունես զնմին պարտ է՝ կատարելապէս թողութիւն առնել այնմ, որ մեղուցեալ է՝ քեզ : և այս կատարեալ թողութիւն . դ. ասա_

ձան

Ճանն ունի ։ առաջինն զի ոչ առնես նման
չար ․բ․ զի ՚ի չար նր̄ ոչ ուրախանս ․գ․
զի սրտօք սիրես զնա ․դ․ զի լեզուօք
սիրոյ նշան երևեցուցանես ողջոյն տալ
և առնուլ ։ և թէ այսպէս կատարեալ
թողութի̄ որք ոչ առնէ մեղուցելոյն իւ-
րոյ՝ ոչ է՛ պատրաստ զնա ՚ի խոստովանութեան
արձակել կամ հաղորդել ։ և թէ որք ա-
սիցէ թէ ես այս երկրորդ մեղ Ճանապա-
հաւս ոչ կարեմ վճարել զպարտսիմ և
աղքատիկ ՚ի քա՛ւարանէն , զի ոչ որք է՛ մե-
ղուցեալ ինձ որ թողում նմա , որպէս
կարացից վճարել զպարտսիմ,՚ յիմ քա-
կէս ոչ կարեմ վճարել , զի ոչ կարեմ
այնչափ պահս պահել , և աղօթք , և
ողորմութի̄ առնել որ ՚ի քա՛ւարանէն ազա-
տիմ , և ՚յ այլոց քանկէ ոչ կարեմ հա-
տուցանել զի ոչ որք է՛ ինձ մեղուցեալ որ
թողում նմա ։ Պատասխանի տամ և ․գ․
ազգ խրատ տամ նմա ։ Առաջինն խրատն՝
զի մուրայ հոգևորպէս , որպ̄ պարտական
որք մոյր առնէ և վճարէ զպարտս իւր ,
այսպէս դու մոյր արա խնդրելով ողոր-
մութի̄ ՚ի սրբոց Աստուածածնէն և յամենայն
սրբոց , զի բարեխօսեն վս̄ քո առ Ած̄ , և
յանձն արա զքեզ աղոթողաց՝ ասելով
յիշեցէք զիս յաղօթս ձեր, զի այր մեղա-
ւորեմ ես , և զոր ինչ մուրաս տուր ՚ի

պարտքն ։ Երկրորդ խրատն այս է՝ զի ամենայն ազգ նեղութեան որ գայ ՚ի վերայ մեր՝ համբերեսցուք, զի Ած որ պարտաւորն է՝, զամենայն նեղութիւնս զոր կրեմք եթէ յօժարութեամբ յանձն առնումք և գոհութեամբ համբերեմք՝ ՚ի մեր պարտքն համարի զի ողորմած է՝ ։ այլ և աւազակքն և գողքն, որք ոչ կամաւ մեռանին վս իւրեանց մեղացն, թէ յօժարութեամբ համբերեն՝ զայն ՚ի հատուցումն ընդունի Ած ։ Երրորդ խրատն այս է՝ թէ չէք ոք որ զքեզ նեղէ կամ վիրաւորէ որ թողութիւն առնես, և կամ չէք այլ նեղութիւն ՚ի վր քո, որ վս նորա համբերես և այսպէս հատուցանես զպարտս քո, դու սկիզբն արա մեք կեանք սաստանալ և ապաշխարութեան յանձն առնուլ, յայնժամ բազում նեղութեանց համդիպիս, և բազումք վիրաւորեն զքեզ, զի ասէ՝ Պօղոս . բ. Տիմոթ . գ. գլխ ։ որպիսի հալածանաց համբերեցի և ՚յամենայնէ փրկեաց զիս Տր, և ամենեքեան որք կամիցին Ածպաշտութեամբ կեալ ՚ի Քս Յս ՚ի հալածանս կայցեն ։ զի յորժամ սկիզբն առնես բարւոք կենցաղավարութեան՝ ամենեքեան սկսանին ատել զքեզ որպէս ասէ՝ աւետարանն եթէ ՚յաշխարհէ աստի էիք, աշխարհ զիւրն սիրէր արդեօք,

արդեօք, բայց զի չէք՛ յաշխարհէ՛, այլ ես
ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ
զձեզ աշխարհ։ Եւ թէ ասէ՛ որ յորժամ ես
անմեղ լինեցիմ եւ տանջէ՛ որ զիս՝ ոչ կարեմ
համբերել, այլ թէ վս իմ մեղացն չար֊
չարիմ կարեմ համբերել։ Պատասխանեմ
այնպիսոյն թէ լաւէ՛ եւ օգտակար համբե֊
րել նեղութեանց եւ անմեղ գոլով, քան
զհամբերել նեղութեանց մեղաւոր գոլով, զի
յորժամ անմեղինս՝ այն զուտ եւ մաքուր
յաւակ ոսկի է՛ առաջի այ, որպէս համ֊
բերեցին առաքեալքն եւ սրբք Մ՝արտիրոսքն,
որք անմեղքին ի դատելոյ, եւ ի Քսէ
պսակեցան։ այլ յորժամ համբերես նե֊
ղութեանց եւ մեղապարտեցես՝ այն ընդ այլ
նմանութեան խառնեալ ոսկի է՛։ վասն Պետրոս
ա. կթղից .դ. գլխ խօսի։ բայց ասա մար֊
դկ որք նեղութի կրեն .դ. ազգեն, ոմանք
նմանեն Քի, եւ ոմանք աջակողմ աւա֊
զակին, եւ ոմանք նմանեն ձախակողմ ա֊
ւազակին։ Նոքա որք անմեղքեն եւ չար֊
չարանս կրեն եւ համբերեն՝ Քի նմա֊
նեն։ եւ որք վս մեղացն իւրեանց չարչա֊
րանս կրեն, բայց համբերեն՝ այնոքիկ
սրբին ի մեղաց, եւ նմանեն աջակողմ
աւազակին որ մահհաւանք խաչին եւ եմուտ
յարքայութին։ եւ որք վս մեղաց իւր֊
եանց պատժին՝ եւ ոչ համբերեն, այլ

եւ ս

Եւս չարագոյն լինին՝ նոքա նմանեն հա-
խանձողին անուաղանկին, որ խաչին և մահո-
ւամբ եղ ՚ի դժոխս : Պարձեալ գիտե-
լի է՝ զի սատանայ բազում խաբանութն
ածէ այս . դ . անուր Ճանապարհիս ,
զի մի՛ ոք մտցէ ՚յերկնից արքայութիւն :
Մինչ գրեալէ թէ . դ . սատանայ երևե-
ցան ոք հօր միում , եհարց ցնոսա ծերն
թէ ո՞վ էք դուք և զի՞նչ անուն է՝ ձեր :
Պատասխանի ետուն թէ դևքեմք և
կոչի անուն մեր միոյն կապօղ սրտի ,
միւսոյն կապօղ բերանի , և այլ միւսոյն
կապօղ քսակի : Ասաց ծերն վս է՞ր
զայսպիսի անուանս էք առել : Նոքա ասա-
ցին ՚ի գործոց մերոց ունիմք զանուանս
զայսոսիկ : վս զի առաջնոյն գործն
այն է՝ որ կապէ զմիտս մարդոյ որ ո՛չ
զղջայ ՚ի մեղաց : և թէ առաջինն ո՛չ կա-
րէ կատարել զգործս իւր՝ երկրորդն
պատրաստէ զի թէպէտ զղջանայ մարդն
՚ի մեղաց իւրոց , այլ կապէ երկրոր-
դն զբերանն նր որ ո՛չ խոստովանի , և
թէ երկրորդն ևս ո՛չ կարէ յաղթել ,
երրորդն պատրաստէ զի թէպէտ զղջա-
նայ և խոստովանի՝ սա կապէ զքսակն
բերանն, որ ըզ զրկանքն և զգողացածն և
զանիրաւ շահն յետ ո՛չտայ զի մի՛ փրկեսցի :
Այս . դ . դևքս մոլորանեալքն ըստ-
մ-

միմեանս , և բազում վաստակս առնեն
վ՟ս դժոխոցն , զի զբազումս խաբանեն
՚ի զղջանալոյ , ՚ի խոստովան լինելոյ , և
՚ի հատուցանելոյ ։ վասնզի գրեալ է՛ ՚ի գիրս
ծննդոց . ԽԹ . գլ՟խ։ և հայեցաւ Յակոբ
և ետես ջրհոր մի ՚ի դաշտի անդ՝ և
էին անդ՝ . գ . հօտք խաշանց մակա-
ղեալք ՚ի նմա՛ և ՚ի ջրոյն յայնմանէ ար-
բուցանէին զխաշինսն , և վէմ մի մեծ
կայր ՚ի վ՟ր բերանոյ ջրհորոյն ։ Հօտք
խաշանց ցուցանէ զհոյլս բարի գործոց
զորս գործեն մարդիկ , և գ . հօտք ասէ՛ ,
վ՟ս զի ամենայն բարի գործք՝ յա՟ծայինն
յերից առաքինութեանց յառաջ գան ,
այսինքն , ՚ի ճշմարիտ հաւատոյ , ՚ի յու-
սոյ , և յա՟ծայինն սիրոյ ։ Ր. ղ յորժամ
ոք անկանի ՚ի մահու չափ մեղս ջոկք
խաշանցս այսոցիկ ծարաւին և ցամա-
քին , և ոչ լինին արժանիք երկնից ար-
քայութեան , և ջրհոր զմիտս մարդոյ ցու-
ցանէ որ խորէ , յորժամ ոք բանայ զբերան
իւր , և զղջմամբ սրտի խոստովանի ար-
տասուօք՝ յայնժամ արբուցանէ զամե-
նայն հօտս խաշանց , զի կենդանանան
ամենայն գործք նո՟ր որք մեռեալք էին ,
այլ սատանայ յոյժ խորամանկէ զբերան
ջրհորոյն փակէ մեծ վիմով , յորժամ
խոստովանութեան փակէ զմիտս որ ոչ

զղջա-

զղջանայ, և ամօթով փակէ զբերանն որ ոչ խոստովանի, և ապաւհութեն փակէ զքսակն որ ոչ առնէ զողորմութի և զըղ զրկանս օտարաց ոչ դարձուցանէ ՚ի նմ̅ա։ Իսկ Յակոբ՝ որ Թարգմանի խաբող ՚ի վեր եառ զվէմն զայն ՚ի բերանոյ ջրհորոյն և արբոյց զխաշինսն։ վ̅ս զի Ա̅ծն մ̅ր խաբէ զպիղծ Ա̅ծն՝ զի զոր հրապէ պիղծ ոգին, արձակէ մ̅ր Ա̅ծն։ քանզի քառնայ ՚ի սրտէն զանզղջութիւն, ՚ի բերանոյն զամօթն, և ՚ի քսակէն զապաւհութիւն, զի մեղաւորն զղջասցի, և խոստովանլիցի, և հատուցումն արասցէ։ զի լիցի նմա կատարեալ ապաշխարութի, և թողութի։ և այս գ̅. աւուրբք ճանապարհաւս հասանիցի ՚յերկնից արքայութիւն։ վասնորոյ և մեք աղաչեսցուք զԱ̅ծ, զի զմեզ և զամենեսեան արժանիս արասցէ. գ̅. աւուրբք ճանապարհաւս հասանել ՚յերկնից արքայութիւն ՚ի ձ̅ռ Յ̅ս ՚ի Տ̅րն մեր, զոր ընդ Հօր և Հոգւոյն ս̅բյ՝ այժմ և միշտ գոհանալով փառաւորեսցուք ընդ ամենայն

Հրեշտակաց, և Ս̅բց։

Ամէն։



# ԳԻՐՔ ԵՒ ՔԱՐՈԶ

ԱՌ Է. մահու չափ մեղքն։

ԵՒ. Երևեցաւ այլ նշան յերկինս՝ և ահաւասիկ, վիշապ մեծ հրեղէն որոյ էին գլուխք եօթն, և եղջիւրք տասն, և ՚ի վերայ գլխոց նորա եօթն խոյրք։ և տուտ նորա քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից՝ և էարկ զնոսա յերկիր։ տեսիլն. ԺԲ. գլխ։ Սիրաք և Պօղոս ասեն՝ թէ նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհս։ Զի որպէս ՚ի Քէ գայ կենդանութիւն, նոյնպէս ՚ի սատանայէ մահ լինի։ Եւ որպէս Քս .Է. արփեան շնորհօք զարդարէ զեկեղեցի և լուսաւորէ, նոյնպէս սատանա‐

սատանայ խաւարեցուցանէ և կուրա_
ցուցանէ . Է. մահու չափ մեղօք : և
այսմ օրինակ ունիմք ՚ի բնութենս, զի ա_
մենայն աւուրք մեր . Է. աւուրբք չափին,
և օրն զինն չէ՛ եթէ ոչ լուսաւորութի
արեգականն : նոյնպէս սբ Հոգւոյն լու_
սաւորութիւնն է՛ ՚ի շնորհացն ԷՆ որ .
Է. կերպիւ բաշխէ ՚ի մարդիկ . ա. է՛
շնորհք իմաստութեան . բ. շնորհք իմա_
ցութեան . գ. խորհրդոյ . դ. զօրութեան . ե.
գիտութեան . զ. Ածպաշտութեան . է. եր_
կիւղի այ : Եւ այս նման է՛ . Է. աւուրց
որ լուսաւորէ զաշխարհս : իսկ Թշնա
մին սատանայ ոչ համբերեաց այսոցիկ
շնորհացս , այլ ներհակ այս . Է. լուսոյս
եմուծ ՚յաշխարհս զԷ. խաւարս և զգի_
շերս , այսինքն , զԷ. մահու չափ մեղսն :
քանզի զինն չէ՛ գիշեր եթէ ոչ պակա_
սութի լուսոյ արեգականն , այսպէս
մեղքն նման է՛ գիշերոյ զի է՛ պակասու_
թի լուսոյ շնորհացն ԷՆ, որ է՛ արեգակն
արդարութե : և յատկութիք գիշերոյն
են եօթն : Առաջին յատկութի գիշե_
րոյն այն է՛ որ հանէ ՚յերկրէ զգոլորշիս
ջերմութե արեգականն որ ՚ի ցերեկն
անկանի ՚յերկիր , և որպէս Ած առա_
քէ ՚ի վր խոնարհաց և հեզոց զշնորհս իւր
նորին ՚ի վր երկրի , նոյնպէս սատանայ

բառ_

բառնայ նախանձու զխոնարհութիւն և դնէ զհպարտութիւն 'ի տեղի ։ Բ․ յատկութի գիշերոյն այնէ, զի զհի՛ւանդն ծանրացուցանէ, նոյնպէս ամենայն մեղք ծանրացուցանեն, զհոգիս մարդկան, բայց դժո՛ւարագոյն է՛ և ծանր մեղք նախանձու, զի զբարութիւս այլոց տեսանելով ծանրանայ՝ և լոյս և պայծառութի այլոց՝ նմա խաւ՛ար և գիշեր լինի ։ Գ․ յատկութի գիշերոյն է՛ զի զպատառօղ գազանս զգողս և զա՛ւազակս արիս վստահս, և յաղթօղս առնէ, որ նշանակէ զբարկութէ մեղքն, զի որ չա՛փ արթունէ մարդն բանականութբ ո՛չ մեղանչէ խորհրդով, բանիւ, կամ գործով բայց յորժամ բարկանայ զամենայն բանականութի իւր կորուսանէ և լինի իբրև զառիւծ պատառօղ և անգութ ։ և այլն ։ Դ․ յատկութի գիշերոյն է՛, զի զլոգմոգս երկրի կապէ ընդ յամայն վասն ցրտութէ իւրոյ որ նշանակէ զագահութէ մեղքն, զի ագահք որպէս գիշեր զամենայն բարեպաշտութէ պտուղս կապեն ընդ բաղցրութէ մտաց իւրեանց, և ո՛չ առնեն ումեք զողորմութի ։ Ե․ զի 'ի գիշերին սեամաղձն շարժի 'ի մարդն և տրտմեցուցանէ և ցնորք տեսանէ, ցուցանէ զծուլութէ մեղքն որ զմարդիկ տրտմեցուցանէ

ցանկէ և անլոյս առնէ զհոգին 'ի փառ-
թաւորութէ և 'ի պայծառութէ յաւիտե-
նական լուսոյն : Վ. զի 'ի գիշերին սատանայքն
ուժովանայ և զկերակուրն հալէ, զի ջեր-
մութին որ 'ի ցերեկն ցրուեալ է՛ 'ի գիշերին
ժողովի և զկերակուրն եփէ, նշանակէ
զորկորամոլութէ մեղքն, որում հետե-
ւողքն ընդ ոչ յագեն 'յ ուտելոյ և 'յըմ-
պելոյ : Է. զի 'ի գիշերին յօժարին 'յա-
ղտեղի գործն, որ նշանակէ զպոռըն-
կական մեղքն : արդ այսոքիկ են Է. յատ-
կութիք գիշերոյն զորս և ունին, Է.
մահու չափ մեղքն, զորս եմոյծ սա-
տանայ 'յաշխարհս ընդ դեւ . Է. չոր-
հացն Տ̄ոյ՝ և սուրբ Ջանայ խափանել,
զԷ. չորրհս Որդւոյն Ա̄յ հանապազ և
արգելել զհաստատեցեալս 'ի պատուի-
րանապահութէ Ա̄յ : Եւ այսէ՛ որ
ասէ՛ Յոհաննէս 'ի բնաբանս, թէ ե-
րևեցաւ այլ նշան 'յերկինս և ահա-
ւասիկ վիշապ մեծ հրեղէն որոյ էին,
գլուխք . Է. և եղջիւրք Ժ. և 'ի վ̄ր նց̄ . Է.
խոյրք : վիշապն է՛ սատանայ, և հրեղէն
ասէ՛ զի որպէս հուրն քան զայլ տարերս
զօրաւոր է՛, նոյնպէս սատանայ 'ի վ̄ե
մեղաւորաց զօրաւոր և յաղթօղ է՛ : Է.
գլուխքն . Է. մահու չափ մեղքն են, որք
հիմունք և գլուխքեն ամենայն մեղաց .

Թ. եղջիւրքն այն նշանակեն, զի սա-տանայ ուրախանայ, ընդ յանցուածս. Ժ. պատուիրանացն։ Այս է՝ առաջին բանն Յոհաննու, որ ասէ՝ տեսի վիշապ մի՝ մեծ։ Իսկ որ ասէ՝ տտտաւքն քար-շէր զերրորդ մասն աստեղաց երկնից։ տուտն որ վերջն է՝ կենդանոյն զմահն ցուցանէ, որ զմեղաւորսն մահացու մեղօք մեռեալս իջուցանէ ՚ի դժոխքն զի վարձ մեղացն մահն է՝, որպէս ասէ՝ Պաւղոս։ այսոքիկ են. Է. մահու չափ մեղքն զորս ասացաք համառաւտաբար։ Այժմ ասասցուք առանձնակի, և նախ ՚ի հպարտութենէ որ է՝ առաջին գլուխ վի-շապին, յորմէ փրկեսցէ զմեզ Քրիստոս և նմա՝ փառք յաւիտեանս։ Ամէն։

## Վ՟ն ՀՊԱՐՏՈՒԹ՟Ն։

որ է՝

ԱՌաջին գլուխ վիշապին։ Հարց զինչ է՝ հպարտութիւն։ Սբն Օգոստինոս ասէ՝ թէ հպար-տութիւն է՝ ցանկութիւն փառաց խորոց։ և նման է՝ հպարտութիւն փրփրի փայտին, որ թէ ՚ի հող կամ ՚ի ջուր թաղի՝ շու-տով փտի, բայց թէ զնա տան գերան ձգեն՝

ձգեն՝ ոչ փոխ բնաւ։ Նոյնպէս են հպար-
տքն, յորժամ մարդիկ զնոսա մեծա-
րեն պատուեն և փառաւորեն սիրով,
նոքա բարձրանան, և ձոխանան մե-
ծամտութբ, իսկ յորժամ նախատեն
զնոսա և յանդիմանեն, նոքա դայթա-
կղին և իջանեն ՚ի ներքոյ երկրի։ որպէս
գրեալ է՝ ՚յԴ․ Թագեր․ Ե․ Թէ եր իշխան
մի անուն նորա Նէման, գնայր մե-
ծաւ ուրախութբ ՚ի պատիւ Թագաւո-
րին և Թագուհւոյն, և այր մի անուն
Մարտօքէ, ոչ մեծարեաց զնա, դար-
ձաւ տրտմութեամբ ՚ի տուն իւր և ասէ՝
զընտանիս իւր, բազում մեծութի և
ստացուածս ունիմ, և Թագաւորն զայլ
որք ոչ կոչեաց ՚յընթրիսն, բայց միայն
զիս, զայս ամենայն մեծութիս ոչ ինչ
համարիմ՝ քան զի Մարտօքէ ոչ մե-
ծարեաց զիս։ Յատկապէս այսորիկ
հպարտանայ որք, յորժամ գովի, պա-
տուի, և փառաւորի, կամ զազգէ,
կամ զփարթամութէ, և զիշխանութէ,
կամ զիմաստութէ, և զգեղեցկութէ։ իսկ
սուտք են այսոքիկ ամենեքեան և ընդու-
նայք, զի ոչ որէ՝ յինքենէ գովելի և մե-
ծարելի, այլ միմ տուողն Ած է՝, և քան
զի ամենեքեանքս ՚ի մի հօրէ և ՚ի մի
մօրէ եմք, ՚յԱդամայ և ՚յԵւայէ։ և

թէ ասէ՛ ո՞ք թագաւորեմ ես , և մե_
ծապէս՝ մի՛ թէ ո՛չ իցէ որդի Դաւթայ ։
Սաւուղ և Դաւիթ թագաւորք էին
իսրայէլի , յառաջն արածէին զխաշինս
Հարց իւրեանց , և զթագաւորութիւն
ո՛չ ունէին՝ յինքեանց , այլ ՚յԱյ ։ և թէ
այլք հպարտանան վն իմաստութեան , կամ
փարթամութեան , կամ զօրութեան , յոյժ
յիմարքեն այնոքիկ՝ քանզի բազումք են
կենդանիք , որք քան զմարդն զօրաւորք
են , որպէս Առիւծն , Ինձն , և բա_
զումք երբեմն բնութեամբ լինին իմաստունք
և գիտունք , և երբեմն ներհեղութեամբ
՚յԱյ ։ և թէ վն գեղեցկութեան հպար_
տանայ ո՛ք՝ ընդունայն է՛ և սնոտի , որ_
պէս ասէ՛ Սողոմոն ։ գեղ մարդոյ է՛ շուք
ընդունայնութեան , և խաբէութեան ։ և վս
փարթամութեան և մեծութեան ասէ՛ Պօ_
ղոս ։ առաջին Տիմոթ . զ̃ . որք կամին
մեծանալ անկանին ՚ի փորձութիւն և ՚յորո_
գայթ սատանայի ։ ապաուրեմն հպար_
տութիւն է՛ ցանկանալ մեծութեան ։ Նու_
թէ զի՞նչ է՛ հպարտութիւն ։ Ասէ՛ Գրի_
գորիոս պապն , թէ դ̃ . կերպ է՛ հպար_
տութիւն . ա̃ . որ կարծէ ո՞ք զմեծու_
թիւն ունել ինքեամբ և ո՛չ ՚յԱյ , որպէս
կարծեաց սատանայ ։ ընդ դէմ այսմ
Պօղոս ասէ՛ զի՞նչ ունիս զոր ո՛չ առեր
՚յԱյ ,

՚յ ա՟յ, եթէ առնէր զի պարծիս երբե-
ղչառեալ ։ Բ. կերպն է՝ որ զիւր բա-
րութիւն կարծէ ՚յ ա՟յ, բայց առեալ է
զիւ իւրոյ արժանաւորութե՟ն և զայլոք
անարժան լինել այնմ ։ Գ. յորժամ ոք
ընդունայն պարծի ունել զոր ոչ ունի,
և այսպիսիս նմանէ՝ տանու հաւու որ-
պէս ասէ՝ Ս՟ Խոխինայ փիլիսոփայն թէ
յորժամ մարի հաւն կուռւ ի հետ իւր
ձագին և յաղթէ նմա, յայնժամ զինքն
երբեմ զորձակ ցուցանէ բարձրացուցա-
նելով զպարանոցն ։ Դ. կերպն է՝ թէ ունի
ինչ շնորհք հասարակ և գովէ զինքն որ-
պէս փարիսեցին ։ ապատուրեմս ոչ է՝ պարտ
հպարտանել զի հակառակ է՝ ա՟յ, որ՟պ
ասէ՝ Յակոբոս, Տ՟ ամբարտաւանից հա-
կառակ կայ՝ տայ շնորհս խոնարհաց ։ և
Տ՟ն մեր Ք՟ս ասէ՝ վա՟յ քեզ Կափառ-
նաում որ մինչև ՚յ երկինս բարձրացեալ
ես՝ մինչև ՚ի դժոխս իջցես ։ զի պարտէր
նմա խոնարհութե՟ ապաշխարել ։ և Եսայի
ասէ՝ ։ վա՟յ քեզ պսակի հպարտութե՟ ։
Պարծեալ հպարտութիւն է՝ ընդ դէմ
բնութե՟, զի ամենայն բնութի հանդչի
՚ի տեղի իւր, այլ հպարտն ոչ հաւանի
տեղոյն իւրոյ զոր ետ Ա՟ծ նմա ։ Ա՟յլ
միշտ բարձրանալ և խնդրէ հաւասար
լինել մեծամեծաց և զհաւատարն յաղթել

և ներքոյ իւր ձգել ։ Դարձեալ ընդդէմ է՝ ՚իմաստութեան, զի ամենայն որ իմաստուն է՝ գիտէ թէ փառքն և պատիւն միայն այ է՝, և թէ չէ գործոյ ինչ իւրոյ մարդ զփառս խնդրէ զպատիւն այ գողանայ, այլ պարտ է՝ նմանիլ սիրամարգին զի եթէ նա՛ հայելով ՚ի փետուրն իւր հպարտանայ, բայց նա՛ հայելով ՚ի սևաւորոյն ՚յոտսն իւր՝ զամօթի հարու և խոնարհի ։ Նոյնպէս մարդն յորժամ բարձրանայ վասն գեղեցկութեան, կամ իմաստութեան, կամ մեծութեան, որպէս թէ հայի ՚ի փետուրսն իւր և հպարտանայ, բայց պարտ է՝ նմա հայիլ ՚յոտսն իւր, այսինքն, ՚ի մեղսն իւր և ՚ի մահն, և այսպէս դիւրապէս խոնարհի ։ և թէ որ քան ՚յերկիր աստ եմք ՚ի մէջ որոգայթից եմք ։ զայսոսիկ մտածելով հպարտն խոնարհի և զղջանայ ։ և թէ ո՛չ զղջանայ՝ երկնէր ո՛չ ներէ նմա այլ պատուհասէ և ընկենու ՚ի դժոխս ։ որպէս զորդիսն Կորխայ զԴաթան և զԱբիրոն, որք հպարտացան և հակառակք եղեն Մովսէսի ։ Դարձեալ չէ հպարտութեան Սաւուղ անկաւ ՚ի թագաւորութէն ։ Նաբուգոդոնոսոր անասուն եղև ։ և Յս ասէ՝ որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցի ։ Ապա ուրեմն մեզ քրիստոնէիցս

պար-

պարտէ խոնարհել և այսու ջընջնել զգլխ
այս անիծեալ վիշապին ։ բայց գլուխ
այս խորտակի որպէս ասէ՛ Սղմն մէ
՚յարարածքն ․ է․ գլխ ։ կինն սպանանեցէ
քում գլխոյդ , այսինքն , մեծի Ածածինն ,
որ խոնարհութբ խորտակեաց զհպար֊
տութին ։ և ամենայն որ յորժամ խո֊
նարհի խորտակէ զգլուխս զայս յայնժամ
բարձրացեալ լինի ։ որպէս երգէ մեծի
կոյսն զհզօրս քանդեաց՝ և զխոնարհս բար֊
ձրացոյց ։ Եւ զբազումս ունիմք պատ֊
ճառս խոնարհութե զոր ստացելով
դիւրապէս՝ խոնարհիմք , մանաւանդ
զայսոսիկ զերիս ։ նախ յիշելով զանկիզբն
մեր , թէ յոչընչէ արար զմեզ Ած , և
ստեղծ ՚ի հողոյ , ո՛չ Ածաշունչն ասէ՛ ,
և ստեղծ Տր Ած զմարդն հող ՚յեր֊
կրէ ։ և այլն ։ և թէ մեղօք եմք յղացեալք ,
և յաղտէ գոյացեալք , ո՛չ ասէ՛ Դա֊
ւիթ Անօրէնութբ յղացայ և ՚ի մեղս
ծնաւ զիս մայր իմ , և Յոբ․ Ժ․ գլխ ։
ո՛չ կաթն կթեցեր զիս և իբրև զպանիր
մածուցեր ։ Երկրորդ մէջն մեր մտածե֊
լով , որք լի եմք այն քան աղտեղութբք ,
որդովք , գարշահոտութբք , և զազրու֊
թբք , մինչ զի և բղխեն ՚ի մէնջ ։ Երրորդ
զՎախճանն մեր ՚ի միտ բերելով թէ
որդն և կերակուր որդանց լինելոցեմք ։

և թէ հող էիր անդրէն և ՚ի հող դար֊
ձցիս ։ այսուքիկ ․ Գ․ զգածմունքս սբյն
Պէրնարդոսի են , որ զգուշացուցանէ
զմեզ ասելով խորհեաց թէ զինչ էիր ,
զինչ ես , և զինչ լինելոցես ։ և մեք զայ֊
սոսիկ զմտաւ ածելով խոնարհիմք և
խորտակեմք զայս առաջին գլուխ վիշա֊
պին ։ Երկու հպարտութիւն ․ զէ․ դասերս
ունի զորս չարութե ծնեալ է՛ , և ամէ֊
նեքեանքն ունին զթիւնս մահու՝ որովք
սպանանեն զհոգիս մարդկան , որպէս
և մայրն իւրեանց ։ Առաջին դուստրն է՛
անհնազանդութիւն և սա՛ սպան զնա֊
խահայրն մեր զԱդամ ամենայն ծննդովք
իւրովք ։ իսկ դեղ սմին եղև հնազանդու֊
թիւն Քրի ։ Բ․ է՛ պարծիլն՝ որ թէ
սակաւ ինչ բարութի ունի ո՛ք ցուցա֊
նէ մարդկան , և թէ բնաւ ո՛չ ունի
ցուցանէ զինքն բարեգործ ։ Գ․ է՛ կեղ֊
ծաւորութիւն՝ որ ցուցանէ զինքն ա֊
ռաքինի և սբ , վս մարդկան և ո՛չ վս
այ ։ ընդ դէմ սորա ՚ի բազում տեղիս
ասէ՛ Քրս վա՛յ ձեզ կեղծաւորացդ ։ և
այլն ։ և սոքա են որդիք սատանայի և
ո՛չ Քրի , զի ո՛չ ցուցանեն զճշմարիտն ,
զի այլ ինքէ՝ և այլ իմք երևի ։ Դ․ է՛ հա֊
կառակութիւն՝ որ բան ինչ խօսի ընդ֊
դէմ ճշմարտութե և յետոյ ո՛չ զղջա֊
նայ ։

նայ ։ ընդ դէմ սմին ասէ՛ Պօղոս որ ո՛ք
հակառակող է՛, մեք ո՛չ ունիմք սովորու_
թիւն և ո՛չ Եկեղեցին այ ։ Ե. է՛ լրբութիւն
յորժամ թէ բան ինչ իմանայ ՚ի միտս իւ_
րում մեծաբանի և բնաւ այլոց ո՛չ հա_
ւանի, ընդ դէմ այսմ ասէ՛ Պօղոս
պաշտօնեայք ամն ծառայեցուսցեն զի_
մացուածս սրտից իւրեանց Քի ։ Զ. է՛
անմիաբանութիւն որ հպարտացեալ թո_
ղու զճանապարհս մեր, զխաղաղասէր
և զճշմարտութեան վարդապետութիւն ըն_
թհանրական և Առաքելական մր Ե_
կեղեցւոյն Քի, և սպրթեալ մուծանէ
զինքն կործանեալ, այլև այլ և այլանդակ
բանս յօդէ ։ և ո՛չ կամի միաւորիլ և
միաբանիլ ընդ Մի՛ միայնոյ Մօր լուսոյ
Կաթուղիկէ Եկեղեցւոյ ։ Եօթն Երրորդն է՛
վերջապէս անպատշաճ հետաքրքրութիւն
և յաւել հոգութիւն որ վս հպարտութեան
ո՛չ խոնարհի այլ հակաճառէ ընդ դէմ
այլոց, ո՛չ վս ճշմարտութեան, այլ վս
փառասիրութեան ։ սոքա են դստերք հպար_
տութեան, որք ծնանին զորդիս դժոխոց
և զհետևողսն իւրեանց առնեն ժա_
ռանգորդս յաւիտենականն տանջանացն ։
՚յորոց փրկեսցէ զմեզ՝ փրկիչն մեր Քս
և արժանիս արասցէ տալ մեզ այնչափ
խոնարհութիւն, զի նովաւ յաղթեսցեմք

յսկն_

՚յսկիզբն հայրապետութե , և եօթնագլխոյ վիշապին ։ և Քի յաւիտենական թագաւորին փառք յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

## Վ՟Ս ՆԵԽԵՆՁՈՐ։

որ է՛

Երկրորդ գլուխ վիշապին ։ Հայց զի՛նչ է՛ նախանձն , Պատասխանեմ , և ասեմ սէքն՝ թէ նախանձն է՛ տրտմութի ընդ դէմ բարութե այլոց ։ և սա՛ քան զամենայն մեղս առաւել իմիք օգտի առաւել վնասէ , վասնզի յոյժ չար է՛ զի ընդդէմ է՛ այնմ առաքինութե՝ որ քան զամ շահաւոր է՛ և զօրաւոր , այսինքն , Սիրոյն ։ Եւ կոչի սա՛ ՚յ ածայինն գիրսն պատառող գազան զի սպան զԱբէլ՝ և զՅովսէփ վաճառեաց , և յետոյ զՔս խաչեաց ։ և նման է՛ սատանայի , որպէս ասէ՛ Սողոմոն նախանձու բանսարկուին եմուտ մահ ՚յաշխարհս , զի նախանձեցաւ ստնայ ընդ Ադամայ և ընդ Եւայի , և եհան զնոսա ՚ի դրախտէն ճաշակմամբ պտղոյն ։ և մեղաւորն ՚յայս մեղս յերկարելով դժո՛ւարին բժշկի՝ զի է՛ ընդդէմ

դէմ Հոգւոյն սրբոյ որպէս ասէ՛ Ղու_
կաս, ամենայն հայհոյութիւնք թողցին
մարդկան, բայց որ զՀոգին սբ հայ_
հոյէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի,
և ՚ի մի՛ ՚ի հանդերձելումն, զի Հոգին սբ
սէր է՛ ։ Սակայն վարդապետք ոչ թէ
բնաւ ոչ թողցի մեղս այս մարդկան՝
թողցի, այլ դժուարապէ՛ս թողցի ։
քանզի դժուարապէ՛ս ջնջանի մեղս այս,
որպէս հուր ՚ի ծղծումք դժուարագոյն
ջնջանի, սմա օրն գիշեր է՛ և լոյսն խա_
ւար, զի ՚ի բարեգործութէ այլոց ինքն
տրտմի և խաւարի ։ ասէ՛ սբն Գրի_
գոր թէ նախանձորդքն նմանեն ջղջիկանի
որ ՚ի տուընջեան ոչ կարեն թռչել ։
զոր օրինակ գրեալ է՛ ՚յառակին Թագա_
ւորութեցն թէ Հեղի քահանայապետն
ոչ կարէր հայիլ ՚ի լապտերս վառեալս
մինչև շիջուցանէին ։ Եւ նախանձն է՛ ·
Բ· կերպիւ · Ա· որ ուրախանայ ընդ
վնաս և ընդ չարս ընկերի իւրոյ և այս
յոյժ յիմարութի է՛, որպէս հրէանդ ոք
՚ի ցաւոյ իւրում ՚ի տարածի ասեղ թուզ ՚ի
ձեռն խնդայ ընդ որ պարտակէր նմա ող_
բալ, որպէս ասէ՛ ՚յառակսն, ամենայն
որ խնդայ ընդ անկումն տան այլոյ ա_
ռանց պատժոց ոչ լիցի ։ Բ· տրտմի ընդ
բարութիւն ընկերին ։ Եւ ՚յայս չար մօ_
լես,

րէս , ծնանին . Է. դստերք չարք որպէս
մայրն նորեանց ։ Առաջինն է՛ ատելու_
թիւն , որ զբարութիւս այլոց ո՛չ կարէ
տեսանել , կամ լսել , որպէս Սա՛ւուղ
ո՛չ կամէր տեսանել զԴաւիթ՝ կամ լսել
զբարութիւն նր ։ Բ. է՛ բանսարկութիւն ,
որ ՚ի մէջ բարեկամաց զատելութի և
զաղմուկ սերմանէ , որպէս արար Աքի_
տոփել ՚ի մէջ Դաւիթի և Աբիսողոմայ ։
Գ. է՛ բամբասանքն , և գործ նր է՛ զբա_
րութիւս այլոց նուաստացանել , որպէս
Դաթան և Աբիրոն տրտնջեցին ընդ-
դէմ Մովսէսի և ցանկային քահանայա_
պետութե առանց կամացն նր ։ Դ. է՛
չարախօսել զումեքէ , որպէս կինն Պ._
փարու չարախօսեաց զՅովսէփ և ետ
արգելանել վ.ն այգոյն զոր ո՛չ վաճա_
ռեաց ։ Ե. է՛ ծածկել զբարութիւս այլոց ,
որպէս հրէայքն զՔ.ի սքանչելիսն , ա_
սելով ո՛չ նորով զօրութբ հանէ զդևս ։
այլ իշխանաւն դիւաց ։ Զ. է՛ անգոհու_
թիւն , որ զայլոց բարութիւս ուտէ և ե_
րախտամոռաց լինի և ասէ՛ զբարութիւս
զայս՝ յինէն ունիմ , և ո՛չ ՚յ այլ ումեքէ ։
Է. որ վատթարագոյն է՛ քան զամե_
նայն , զի նախանձի շնորհաց ընկերին
որ է՛ ընդ դէմ Ոգւոյն սրբ , որպէս Բա_
ղաամ որ Ոգւոյն մարգարէութե ունէր ,

և ե_

և եսես զժողովուրդն ամ̅ լցեալ Ոգւով՝
մեծ նախանձու խնդրէր պատճառ կո-
րստեան ։ Ր. յաղթիկ են ։ Է. դստերք
անխթեալ մոլին նախանձու որք հնճւան-
դպրուցանեն և կորուսանեն զհոգիս
մարդկան ։ բայց զի՞նչ է՛ հնար բժշկու-
թե ։ Ր. սեն վարդապետք թէ .Է. կեր-
պիւ հնարէ՛ բժշկել և փրկել յայսցանէ .
ա̅. է՛ սէրն սեռական , միածերով թէ
ամենեքեան եղբայրքեմք 'ի միոյ հօրէ և
'ի միոյ մօրէ ծնեալք , պարտիմք որպէս
եղբայր եղբօր ցաւակից , տրտմակից և
ուրախակից լինել , որպէս ասէ՛ Պօ-
ղոս լալ ընդ լալոցս և խնդալ ընդ խն-
դացօղս ։ Բ. է՛ սէր եղբայրական հոգե-
ւոր որպէս ասաց ՔՍ առաքելոցն՝ դուք
ամենեքեան եղբայրք էք 'ի միոյ հօրէ
ՔՍ է՛ , և 'ի միոյ մօրէ Եկեղեցւոյ յառաջ
եկեալ ժառանգ միոյ հայրենեց ։ Գ. է՛
զի ամենեքեան անդամքեմք միոյ գլխոյ
որպէս ոչ նախանձի ոտն ընդ ձեռին
կամ ձեռն ընդ ականն , թէպէտ մի՛ քան
զմի՛ պատուականէ՛ , ձեռն , այլոքն ,
քան զոտն և ակն քան 'զձեռն ։ նոյնպէս
մեզ ոչ է՛ պարտ նախանձել ընդ պատուա-
կանութի և ընդ շնորհս ընկերին , այլ
ուրախանալ ։ Դ. է՛ կատակն ՔՍ որ հրա-
մայէ 'յամենայնէ սիրել զընկերն ,
և սէրն

և սէրն այն է՝ որ զամենայն ինչ հասա-
րակաց մի՛ առնէ, ասելով այսպէս Թէ
զոր ինչ իմ է քո է՛ և քոյն իմ ։ Ե. է՛ խորհել
Թէ զինչ դառնութիւն լինի վս՟ նախան-
ձու, զի ամենայն որ նախանձի ընդ ումեք՝
նախ զինքն հարկանէ, և ապա զայլոք ։
Զ. է՛ խորհել Թէ վս՟ նախանձու կորնիք
և բաժանիմք ՚յեղբարց, և յորժամ մի՛
անդամն հատանի ՚ի մարմնոյն ո՛չ մնայ
կենդանի ։ Է. է՛ զմտաւ ածել Թէ բա-
րութիւն այլոց օգտութիւն է՛ մեր և ո՛չ պա-
կասութիւն, աստ՝ և ՚ի հանդերձեալն, զի
աստ՝ շահիմք և ՚ի հանդերձեալն յոյժ
ուրախանամք որ չա՛փ առա՛ւել ունի-
ցիմք զօրդիս արքայութեան, քանզի ա-
մենեքեան զբարութիս այլոց տեսանեմք ։
Իսկ նախանձոտք նմանեն շան, զի շունն
զայլ շունս ո՛չ Թողու ՚ի տուն տն՟ն իւրոյ,
մտածելով Թէ զնա՛ սիրէ և զիս ատէ,
և կամ վս՟ պատառուն ։ Դարձեալ նա-
խանձոտ է՛ շունն քանզի յորժամ հի՛ւան-
դանայ գիտէ խոտ մի՛ որ դեղ է՛ վս՟ իւր
՚ի ծածուկ երԹայ վս՟ նախանձու Թէ
մարդ ո՛չ տեսանէ և ուտէ զայն խոտն ։

# ՎՆ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ։

որ է՛

Երրորդ գլուխ վիշապին ։ հարց ։ Զի՞նչ է՛ բարկութիւն ։ պատասխանեմ , բարկութիւն է՛ որպէս ասէ՛ Օգոստինոս ցանկութիւն վրէժ խնդրութեան ։ և յոյժ հակառակէ ՔՆի բազում կերպիւ , նախ զի զտունն մրյ վրդովէ և խռովէ , որպէս ասէ՛ սբն Գրիգոր որ չափ բարկութիւն զխիղճն հարկանէ զբնակութիւն Հգւոյն սբյ քակէ և շարժէ , քանզի խաղաղութիւն է՛ տեղի նրա , որպէս ասէ՛ Դաւիթ ։ և Պօղոս եղբայրք մի՛ տրտմեցուցանէք զՀգին սբ ։ Բ. բարկութիւն ՚ի տաճարէ մրյ զպատկերն մրյ ապականէ՝ և զպատկերն աստուածային ՚ի ներքս մտածանէ , զի պատկերն մրյ սիրէ զհանդարտութեան տեղին , զի ինքն իսկ հանդարտ է՛ և ո՛չ երբէք փոփոխի , բայց աստուածայ որ որդի բարկութեան է՛ ո՛չ գոյ ՚ի նմա հանդարտութիւն ։ Գ. բարկութիւն զտաճարն մրյ այրէ և պղծէ որպէս ասէ՛ Դաւիթ Սղմ. հը. Ած մտին հեթանոսք ՚ի ժառանգութիւն քո՛ պղծեցին զտաճար սբ քո՛ ։ Արարին զեր-

ղերոյմ : և այն : քանզի խոցէ՛ բարկու-
թին զսիրտ բարկացողին և ապականէ :
որպէս Պօղոս ասէ՛ թէ ամենեքեան
տաճար ա՟յ էք, որ զտաճար ա՟յ ապա-
կանէ՝ ապականեսցէ զնա՛ Ա՟Ծ : Դարձեալ
յոյժ վիրաւորի Ա՟Ծ ի բարկութէ, զի
բարկացողք որք վրէժ առնուն՝ զխնա-
նութին ա՟յ խլեն : ո՟չ գրեալ է՛ ի հա-
րանց վարքն : թէ ոմն կրօնաւոր բար-
կացեալ ումեմն՝ գնաց առաջի հօր վա-
նացն որում անուն էր Փիլոն, և ասէ՛
հայր՝ կամիմ ես վրէժ առնուլ յումեմնէ
կրօնաւորէ, և Փիլոն ի ծունկս եղեալ
ասէ՛ Ա՟Ծ՝ մեզ այլ չես ի պէտք, զի ա-
մենեքեան զիւրեանց վրէժն առնուն, և
դու հրամայես բերանովդ Պօղոսի թէ
իմ է՛ վրէժ խնդրութի : յայնժամ շիջաւ
բարկութի կրօնաւորին : բայց տես թէ
որպէս ներհակ է՛ բարկութին Ա՟Յ և
դիւլին սատանայի : որպէս ասէ՛ Սո-
ղոմոն թէ բարի ծառայ իմաստուն ա-
ռաջի ա՟յ, զի որպէս բարուք թուի
իմաստուն մարդն առաջի ա՟յ, նոյնպէս
հոգւովն յիմարեալն և կուրացեալն սա-
տանայի : որ նմանէ՛ սեաւ ագռաւու,
զի յոյժ սա՛ կամի զէշ կամ զայլ ա-
նասուն մեռեալ՝ նախ զաչսն հանէ, և
ապա զայլ մարմինն գիշատէ : նոյնպէս

սատա-

սատանայ նման ջանայ զմարդն 'ի բար-
կութի շարժել, և յետոյ հայհոյել տալ
զծնօղսն, և հարկանել զզաւակսն, կամ
զայլ ոք սպանանել, և այնպէս լինել
որդի գեհենոյն և պատարագ սատանայի,
որպէս ասէ' յառակսն . ԺԵ . գլխ : Թէ
բարկութեն զողորմութի ոչ ունի : վասն
զի 'յամենայնէ վրէժ առնու 'յերոց և
յօտարաց: և զայս բարկութիս ցուցա-
նէ աւետարանն, որպէս ասէ' պատաս-
խանի ետ մինչ 'ի ժողովրդեանն և
ասէ' վարդապետ ածի զորդի իմ առ-
քեզ զի ունի այսս համր և ուր հասանէ
զարկուցանէ զնա և փրփրէ և կրճտէ
զատամունս իւր և ցամաքի : այս է' դևն
բարկութե, որ երբեմն զմարդն 'ի հայ-
հոյութի ընկենու և երբեմն 'ի սպանու-
թի և այսպէս սպա 'ի հուրն յաւիտենից:
Դարձեալ բարկութին լի է' յիմարութե,
վս զի յոյժ յիմարութի է' մարդոյ որ
վնասէ զհոգի իւր, և վասնակս ինչ բերէ
մարդկան բարկութեն իւրով' վս սակաւ
պատճառի, և կորուսանէ զմեծագին
գանձս իւր : և եթէ վրէժ առնու ոչ
կարէ կատարեալ վրէժ առնուլ, որպէս
ասէ' ոմն իմաստասէր ընդ ումեմն բար-
կացողի, թէ ինչ առնես դու յիմար' զի
զքեզ այլոց սպանանես, այսինքն, զմար-

մինն , և այս է՛ կատարեալ վիճակ խն-
դրութեն քո , և թէ առնիցես զայս՝ քեզ
յոյժ վնաս առնես , զի կամ զքեզ սպա-
նանեն ընդ նմին , և թէ ոչ՝ հոգին քո եր-
թայ ՚ի դժոխքն ՚յաւիտենականն ։ և բար-
կացողն նման է՛ խոզի , զի յորժամ խոզն
հարեալ լինի նետամբ՝ անկանի ՚ի վերայ
փշոց և կրկին վիրաւորեալ մեռանի ։
դարձեալ նման է՛ ՚մեղուի որ խայթէ
զայլս , և ինքն մեռանի ։ դարձեալ թէ
ոք դժուարահար լինի որ զկրակն բառնայ
՚ի թիկունս ։ նոյնպէս ամենայն ոք որ
զբարկութիւն պահէ ՚ի սիրտ իւր՝ զհուրն
պահէ ՚ի սրտի իւրում , և յոյժ յիմարու-
թիւն է՛ այս ։ Եւ բարկութիւն ունի դս-
տերս . Է. չարս նորին զինքն ոպ ասէ՛
սբն Գրիգորիոս ։ Առաջինն է՛ մրաւո-
տիլն , զի ՚ի չարութէ սրտին որ լինէ
թիւնօք՝ ոչ կարէ խօսիլ ընդ ոք քաղցր
և կամ հաշտութբ , այլ յոյժ դառնու-
թբ և մախանօք ։ և սոքա նմանեն կա-
նանց զօրսաան , որ ոչ խօսի , այլ չնչէ
՚յերեսս մարդոյն՝ և սպանանէ , որպէս էր
Հերոդէս , որ սպան զՅովհաննէս մկր-
տիչն և ամենայն որ բարկանայ սպանանէ
զՅովհաննէս , որ թարգմանի շնորհք այ ։
Բ. դուստրն է՛ պարսաւանքն որ հայ-
հոյէ զայլ ոք , նախատէ և արհամար-
հէ ։ և

հէ ։ Եւ այս նման է՝ դժնիկ ծառոյ որ
հիւթ ո՛չ ունի զի բնութ՟ք չոր է՝, և ՚ի
ժամանակի ամարայնի յորժամ ջերմն
հողմն հնչէ ՚յինքենէ վառի, և զամենայն
մայրին հրդեհէ ։ այնոցիկ ասէ Ք՟ս որ
բարկանայ եղբօր իւրում՝ պարտաւոր
լիցի գեհենոյն ։ Գ՟. դուստրն է՝ որ յա-
ւանէ բարկութ՟է հայհոյէ զԱ՟Ծ և
վրէժ առնու ՚յա՟յ ։ և այսպիսի վառա-
թարագոյնք են քան զհրեայսն, որք զՔ՟ս
խաչեցին, զի հրեայքն զՔ՟ն մեծութին
ո՛չ գիտէին ։ և վատթարք են քան զշուն,
որ ընդ դէմ Տ՟ն իւրոյ ո՛չ հաչէ, և սա-
քա հայհոյեն զարարիչն իւրեանց ։ և
պատիժ սոցա մեծագոյն է՝, որպէս ասէ՝
՚ի գիրս ղևտացւոց ։ Թէ ոմն ՚ի հօրէ ե-
գիպտացի և ՚ի մօրէ եբրայեցի հայհոյ-
եաց զԱ՟Ծ՝ յայնժամ հրամայեաց Ա՟Ծ
Մովսէսի թէ վկայք ․ Գ․ դնեն զձեռն ՚ի
վ՟ր գլխոյ ն՟ր ։ և հանէք արտաքոյ բա-
նակին և քարկոծեցէք ։ Նոյնպէս այժմ
պարտ է՝ առնել զհայհոյիչսն Ք՟ի, որք
են սուտ քրիստոնեայք, որպէս ասէ՝ ՚ի
աւետարնն թէ պատրաստէ հուր յաւիտե-
նական որք հայհոյեն, և ՚ի դառնութ՟ք
տանջանաց զլեզուս իւրեանց խածանեն
Դ՟. է՝ որոշումն զի սիրելիքն որք կապակ-
ցեալք են սիրով, բարկութ՟ք բաժանեն

՚ի միմեանց ։ եւ սա է՛ որ տէրէ զա_
շխարհս , որպիսի ՚ի սկզբոյն շինի , որպէս
ասէ՛ Պօղոս ։ եւ զի ոչ բնութիւն մար_
դոյն ապականի ՚յ անմիաբանութէ տա_
րերաց՝ նոյնպէս տէ՛րերն աշխարհս ՚ի
հակառակութէ եւ ՚ի թշնամութէ ։ իսկ
որք ճշմարիտ զպատուիրանս այ պահեն՝
միան անխարդախ , ոչ ասէ՛ ՚ի դիրս
թագաւորութեց ։ յորժամ եօծ Աստո_
՛ւած զԴաւիթ թագաւոր Իսրայէլի՝ յայն_
ժամ Սաւուղ բարկացաւ եւ կամէր
սպանանել զնա՛ եւ ո՛չ կարաց մինչեւ մե_
ռաւ Սաւուղ , եւ տունն Սաւուղա ո՛չ
հնազանդեցաւ Դաւիթի ։ բայց Տ՜
նուազեցոյց զտունն Սաւուղա եւ բար_
ձրացոյց զտունն Դաւիթի ։ նոյնպէս որք
միաբանեն ընդ Եկեղեցւոյ բարձրանան ,
իսկ որք հակառակին կործանին ՚ի խորս
անդնդոց ։ Ե. դուստրն է՛ կուսին, եւ կուսին
է՛ համարձակութիւն բարկութէ կործանել
եւ ապականել զմիմեանս զի ՚ի սմանէ ե_
լանեն ստախօսութիք , չարութիք ։ պա_
տահամբաւութիք , սպանութիք ։ եւ կուս_
՛ն բան զամենայն մեղք առնել ընդ_
դէմ է՛ այ , զի գտանեմք ՚յ Ածային գիրս
որ բան զհաշտութիւն պատուէական ո՛չ
ինչ է՛ առաջի այ , եւ ինքն որդին այ
կամեցաւ ծնանել ՚ի հաշտութէ ժա_

մա_

մանկանս , ո՟պ ասէ՛ Եսայի . Բ. գլուխ :
ձուլեսցեն զսուսերս իւրեանց ՚ի խոփս եւ
զսուինս իւրեանց ՚ի մանգաղս : Եւ հրեշ_
տակք երգեն փառք ՚ի բարձունս ա՟յ եւ
՚յերկիր խաղաղութի : Դարձեալ Ք՟ս
ասէր երանի խաղաղարարաց զի նոքա
որդիք ա՟յ կոչեսցին : Եւ Պօղոս ՚յեփեսց՟.
Բ. ասէ՛ Ք՟ս է՛ խաղաղութի մեր, որ ա_
րար զերկոսեանն մի՛ : ապաւրեմն ո՟պ
հաշտութին զմարդն որդի ա՟յ առնէ՛ ,
նոյնպէս կռիւն որդի սատանայի : զ՟.
դուստրն է՛ անժուժկալութին , եւ բար_
կացողն ՚յանժուժկալութեն զհամար_
ձակութի բարկութեն իւրոյ ոչ համ_
դարտեցուցանէ , եւ այս յոյժ յիմարու_
թին է՛ : քանզի եթէ տեսանէ ոք զտուն
իւր վառեալ որ իմաստունն է՛ ջանայ շի_
ջուցանել զհուրն զի ոչ ա՟ւերեսցի ժառ_
անգութի իւր : իսկ որ յիմարն է՛ , ոչ
ջանայ շիջուցանել եւ ոչ ինչ փոյթ է՛
նմա : եթէ այրի , եւ կործանի տունն
իւր այսպէս բարկութին այրէ եւ հր_
դեհէ զհոգեւոր բնակութի եւ ժառան_
գութի մարդոյն , զի գրեալ է՛ ՚ի ս՟ք գիրս
թէ բարկութի մարդոյ զարդարութին
Ա՟յ ոչ գործէ : այլ ՚ի ժամ բարկութի
պարտ է՛ համբերել եւ ոչ մեղանչել ,
քանզի ասէ՛ արքայականն մարգարէն :

քարկանայք և մի՛ մեղանչէք, այսինքն, կամ ընդ դէմ ա̄յ, կամ ընդ դէմ ընկերին, կամ ընդ-դէմ իւրն, այլ համբերել, և այսպէս համբերութ̄ք ձերով ասէ՛ Տ̄ր ստասջիք զոգիս ձեր: ապաուրեմն երևի թէ անժուժկալութիւն կորուսանէ զժառանգութիւն որ է՛ հոգին: յաղագս այնորիկ ասէ՛ Սողոմոն. յառա̄կ. ժզ. լ̄բ: լաւ է՛ հանդարտասիրտն խոնարհութ̄ք՝ քան զայն որ բաժանէ զաւարս ընդ թշնամանօղս: ՚ի մեկնութ̄ի բանիս ասեն վարդապետք թէ բարի է՛ ժուժկալութ̄ի մարդոյն, քան զբազում քաղաք և երկիր հնազանդեցուցանել, և որք ոչ ունին զժուժկալութ̄ի ոչ ինչ ունին նշան առաքինութ̄ե, վ̄ս զի մարդիկ յաշխարհս ՚ի պատերազմ են զի յաղթիցեն որք զժուժկալութ̄ի ոչ ունին ոչ գիտեն պատերազմել, և ոչ յաղթել: Է. դուստրն է՛ չարախոհութիւն: չարախոհութիւն է՛ որ ումեք չար ոչ կարէ առնել այլ ՚ի սիրտս իւր պահէ զչարն նենգութ̄քն ո̄պ ասէ՛ Դաւիթ, որպէս ածելի սուր սրեաց զնենգութ̄ի՝ սիրեաց զչարութ̄ի քան զբարութ̄ի զանօրէնութ̄ քան զխօսս արդարութ̄ե վ̄նն Ա̄ծ կործանեսցէ զնա՛ իսպառ: որպէս Սիմոն կախարդն որ ոչ կարաց յաղթել Պետրոսի

րոսի եւ Պօղոսի , բարկացաւ նենգութք
ընդ դէմ առաքելոցն գնաց առ Ներոն
զի սպանցէ զառաքեալսն , եւ նմին ինքն
կորեաւ ։ Եւ քանզի վասն բարկութե ,
հասանի մարդն առնել զեղբայր իւր
եւ զմերձաւոր իւր՝ եւ այսպէս լինի յոյժ
մեղապարտ , քանզի լինի մարդասպան
վսն ասէ՛ առաքեալն Յովհաննէս . ա.
կթղկց . գ. գլխ ։ ամենայն որ ատէ զե-
ղբայր իւր մարդասպան է՛ ։ Արդ՝ այսո-
քիկ են , Է. դստերք անիծեալ մօրն բար-
կութե ։ Ապաուրեմն որք կամին սպա-
սաւորել այ պարտէ՛ նոցա հեռանալ
՚ի բարկութէ , որպէս ասէ՛ Քս Մտ-
թէի , Է. եթէ մատուցանիցես զպատա-
րագն քո ՚ի վր սեղանոյ , եւ անդ յիշես-
ցես եթէ եղբայր քո ունի ինչ զխէթ
զքեն թող զպատարագն քո առաջի սե-
ղանոյն եւ երթ նախ հաշտեաց ընդ եղ-
բօր քում , եւ ապա եկեալ մատուցիր
զպատարագն քո ։ այսպէս արասցուք եւ
մեք , զի մի՛ մեղանչեսցուք բարկանա-
լով , այլ համբերելով ստասցուք զհոգիս
մեր՝ զոր տրն մեր Քս շնորհեսցէ
մեզ ։ Ամէն ։

# Վ̃Ս ԾՈՒԼՈՒԹԵԱՆ՝

որ է՝

ՉՈրրորդ գլուխ մեղացն ։ Հարց ։ Զ ինչ է՝ ծուլութիւն ։ Պատասխանեմ , ծուլութիւն է՝ հեղգութիւն ոգւոյ , որ անփոյթ առնէ սկսանել զբարիս գործել , կամ ՚ի սկսեալ բարեգործութիւս ձանձրանայ կատարել , և այս մեծ մեղք է՝ մահու չափ , վ̃ս զի զամենայն ինչ զոր Ա̃Ծ եստեղծ վ̃ս գործոյ ուրուք եստեղծ զի իւրաքանչիւր ոք զիւր գործն առնէ , և այս է՝ կատարելութիւն ստեղծուածոյս որ իւրաքանչիւրոք զիւր գործն կատարեսցէ , և ամենեւին ոչ ձանձրասցի որպէս արեգակն և լուսինն և այլք զօրութիւնք երկնից ոչ ձանձրանան յընթացից իւրեանց և գործոյն ըստ սահմանի Ա.̃Յ , և ծառք ՚ի ժամանակի իւրեանց տան զպտուղս ։ Մեղուն և մրջիւն ոպ̃ անդադար գործեն Թռչունքն և անասունքն և այլքն ամենայն , ունին և ճանաչեն զգործս իւրեանց ։ Նոյնպէս մարդն պարտ է՝ գործել միշտ զբարիս ՚ի ժամանակս բոլոր և ոչ երբէք ձանձրա-

ձրա-

ձրանալ, և մանաւանդ թէ մարդն ծնեալ
է՛ յաշխատանս ։ վ՟ն ո՛չ պարտի ծու-
լանալ, եթէ ո՛չ Սողոմոն յանդիմանէ զնա
այսպէս ո՜վ վատ երթ առ մրջիւն, որ
յամարայնի ժողովէ, և այլն ։ և ուսիր ՚ի
նմանէ և այլն ։ այսպ̃ վ՟ս մարդկան ա-
մառն է՛ ժամանակս այս, յորում պարտ
է՛ զբարիս գործել ։ բայց բազումք են ՚ի
գործս Տ՟ն հեղգք, և յերկրայինն գործս
խրբեանց արիք ։ որպ̃ գրեալ է՛ ՚ի վարս մեծ
հարանցն, թէ ոմն ծեր եսես զկին մի
պոռնիկ զարդարեալ յոյժ վասն պոռնկու-
թե̃ ։ և ծերն ելաց յոյժ դառնա-
պէս ։ եհարց զնա աշակերտն ընդ է՛ր
լաս հայր՝ ասէ՛ բարի ծերն, զի ա՛ր դ-
ո՛չ լամ, քանզի ես վ՟ս սիրոյն Տ՟ն ո՛չ
զարդարեցի զիս, որպ̃ կինն այդ զարդա-
րեալ է՛ զինքն վ՟ս սատանայի ։ դարձեալ
ո՛չ է՛ բնաւ սովորութ՟ի իմաստնոց աւանց
գործոյ լինել ։ որպ̃ գրեալ է՛ յարարածքն ·
Ժը· թէ փութացաւ Աբրահամ ՚ի խո-
րանն, և ասէ՛ ընդ Սառայ կինն իւր
փութա՛ և թրեա՛ գրիւս երիս ալեր ։ և
ինքն յանդեայ ընթացաւ եառ որթ և ետ
՚ի ծառայն և ասաց փութա՛ տա՛ր ՚ի տունն
՚ի մեկնութ՟ի բանիս ասէ՛ Որոգինէս ։
ծերն վազեաց, Սառայ փութացաւ, և
ծառայն երագեաց ։ զի ո՛չ ո՛ք է՛ ՚ի տանն
իմաս-

իմաստնոց հեղգ ։ դարձեալ ասաց Տէր Ադամայ քրտամբ երեսաց քոց՝ կերիցես զհաց քո ։ զի պարապութիւն բազում վնաս բերէ ոպ՞ ասէ Եզեկիէլ այս է՛ չարութիւն Սոդոմայ՝ լիութիւն հացի, և յղփութիւն գինւոյ, և պարապութիւն գործոյ ։ քանզի որպէս բուրաստան որ անխնամ է՛ խոպանանայ ։ նոյնպէս մարդն որ պարապ է՛ բարի գործոց, սերմ նր խոպանէ, և ծնանի զփուշ չարութեան մեղաց ։ որպէս ասէ Սիրաք ․ Ժդ․ մի՛ խաբեսցիս յա՛ւուր բարւոյ, և մասնիկ բարւոյ տրոյ զքեւ մի՛ անցցէ ։ և յետ սակաւ ինչ բանի, ասէ՛ տո՛ւր և ա՛ռ, և արդարացո՛ զանձն քո ։ նա՛խ քան զվախճանն քո՛ գործեա՛ զարդարութիւն ։ զի ո՛չ գոյ ՚ի դժոխս գտանել կերակուր ։ և Պօղոս գաղտ․ Զ․ ասէ ։ Մշ զբարիս գործել մի՛ ձանձրասցուք, զի ՚ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լքանելոյ ։ և Յոհան ՚ի յայտն․ Գ․ ասէ, գիտեմ զգործս քո, զի ո՛չ ցուրտ ես՝ և ո՛չ ջերմ, երանի էր թէ ցուրտ լինէիր կամ ջերմ ։ այլ քանզի գաղջ ես, և ո՛չ ցուրտ ո՛չ ջերմ, սկսեցայց զքեզ փսխել ՚ի բերանոյ իմմէ ։ ՚Ի մեկնութեան բանիս ասեն վարդապետք, թէ առա՛ւել զայս ու՛նին, որք ցուրտ են, քան զայնոսիկ որք գաղջ .

գաղջ են , զի որք ցուրտ են՝ երկնչին ։ բայց որք գաղջ են՝ անկեալ են 'ի ջերմութէ և 'ի ցրտութէ , և սակաւ յոյս ունին , թէ զբարի ևս ունին ։ և վս սակաւ յուսոյն ոչ յամենելոյն 'ի գործս բարիս այլ հեղգ մնան ։ և այնպէս հեղգանալովն՝ Ած արտաքսէ զնոսա 'ի կենաց յուսոյն ։ քան զի ոպ գաղջ ջուրն զստամոքսն շարժէ՝ նոյնպէս ծուլութին շարժէ զԱծ 'ի բարկութի ։ Տրն մեր 'ի Մտթէի . Ժբ. ասէ՛ Այլ յորժամ այսն պիղծ ելանէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդի տեղիս , խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ ։ Յայնժամ ասէ՛ դարձայց 'ի տուն իմ՝ ուստի ելի , և եկեալ գտանէ զնա՛ պարապորդ մաքրեալ և զարդարեալ ։ յայնժամ երթայ և առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն , և մտեալ բնակին անդ՝ և լինի մարդոյն այնորիկ՝ յետինն չար քան զառաջինն ։ և այս ցուցանէ զհոգիս հեղգացելոցն ։ Դարձեալ ծուլութին յոյժ վնասէ , նա՛ և զի բերէ մարդոյն նուաղութի և աղքատութի , ոպ ասէ՛ Առակս , յառկն . Ի. գլ ։ Վս ցրտոյ ծոյլն հերկել ոչ կամեցաւ , մուրացի ուրեմն 'յ ամառայնի , և մի՛ տացի նմա ։ և Ժ. Գլ. զաղքատութի գործեաց ձեռն թուլեալ ,

զեալ , նաև ձեռն հզօրաց զհաստատութիւն պատրաստէ ։ Երկրորդ զի նախատինք լինի մարդ՝ վս ծուլութէ ։ որպէս ասէ՛ Սիրաք ․ Իբ․ կաւով շաղախի ծոյլն՝ և որ բուռն հարկանէ զնմանէ թօթափէ զձե֊ ռս ։ այս կամի ասել թէ ծաղր լինի ամենեցուն և զազրելի ։ Ապաուրեմն ծուլութին , ատելի է՛ այ և յոյժ հա֊ ճելի սատանայի ։ Սա՛ ևս ունի ․ է․ դստերս վատս և անիծեալս քան զինքն , այսինքն ․ է․ գործք չարութէ , որք կո֊ րուսանեն զմարդիկ ։ ա․ է՛ հեղգութի սրտի , որով զբարիս ամենևին ո՛չ առ֊ նէ , կամ սկսանի ։ ոպ ասէ՛ Երեմիայ ընդ դէմ սորա՛ ․ Մովաբ հանգեաւ ՚ի գարշութիւն իւր , զի ո՛չ է՛ փոխեալ ՚յանօ֊ թէ ՚յանօթ ։ Մովաբ թարգմանի ՚ի հօրէ , այսինքն , զտեսակն ՚ի հօրէ ու֊ նի , քանզի ՚ի մեղս ծնեալ ՚ի մեղս մնայ , և բնաւ ո՛չ թողու զմեղսն ։ Նմանի սա խոպանացեալ ագարակի , կամ այգոյ որ ո՛չ լինի խնամեալ , և ՚ի տեղի պտղոյ բերէ փուշ , և տատասկ ։ ոպ ասէ՛ Սո֊ ղոմոն անցի ընդ ագարակս հեղգաց , և ընդ այգիս անզգամաց , և տեսի փշալից եղեալ զնա ։ Ագարակս այս նշանակէ զանկիրթս մարդկան , եթէ ո՛չ լինիցի խնա֊ մատարեցեալ՝ լնանի չար խորհրդով ։ բ․

դու֊

դուստրն է՝ ձանձրութիւն, զի սկսանին
պահք, աղօթք բարեգործութիւնք, և
յետոյ ձանձրանան և ո՛չ հաստուցանեն
՚յ աւարտ, և այս յոյժ երկնչելի է՝ ։ զի
ո՞չ ոք է՝ ՚ի մէջ սրնթաց գետոյ՝ եթէ ո՛չ
ջանայ ելանել՝ կորընչի ։ Նոյնպէս ա-
մենայն ո՛ք, որ կեայ ՚յ աշխարհս այս ո՞չ
թէ ՚ի մէջ գետոյ է՝, եթէ ո՛չ հնարի ե-
լանել, այսինքն, զբարեգործութիւն առ-
նել և աշխատիլ վասն հոգւոյ իւրոյ, մնայ
այնպէս ծոյլ ՚ի մէջ աշխարհիս, և ո՛չ
կարէ վասն հոգւոյ իւրոյ զարդիւնս ստա-
նալ՝ զի հոգք աշխարհիս հեղձուցանեն
զմարդն, վասն այսորիկ անպտուղ լինի,
և այսպէս անարդիւն և անպտուղ մե-
ռանի, ո՞չ թէ ՚ի գետ ընկղմի իջանէ ՚ի
դժոխս ։ Ապա ուրեմն պարտի ամենայն
ոք խնամալ թէ ծուլութիւն որ չափ վնաս
է՝ իւրն, վասն դժուարացեալ զբարիս գոր-
ծիցէ և մի՛ ձանձրասցի ։ և քան զի ո՞չ
ձեռն կամ ոտն մարդոյ և կամ հան-
դերձն եղտոտի, եթէ բազում անգամ
ո՛չ լուանայ, ո՛չ սպիտակի, և ո՛չ մաքրի,
այսպէս ծուլանալով ՚ի բարեգործութենէ
լնանի մարդն աղտեղութեամբ մեղաց, պարտ
է՝ նմա աշխատիլ բարեգործութեամբ զի
լո՛ւացեալ և մաքրեցեալ լիցի Հոգին ։
դարձեալ ծոյլն ցուցանէ թէ ո՛չ ունի
զսէրն

զմեղս ՔՅ ։ զի եթէ ունէր , զբարիս գործէր , որպէս ասէ՛ սբ Գրիգոր։ Թէ սէրն ՔՅ ոչ է՛ առանց գործոյ ։ զի որ զսէրն ՔՅ ունի բազում ինչ գործէ , և թէ ոչ գործէ ոչ ունի սէր , որպէս հաստատէ Մեծն Պօղոս թէ շնորհն այ ոչ է՛ ընդունայն ։ Գ. դուստրն է՛ անփութութիւն , այսինքն , անհոգ լինել , և անփոյթ առնել զբարիս գործել , զանց առնու և ոչ զգուշանայ զանցեալ մեղս իւր լալ , ներկայ մեղացն ելանել , և՛ յապառնի մեղաց պահել զինքն ։ և ոչ մտածէ թէ գնալոցէ առաջի ՔԻ համարս տալ , քանզի ամենեքեանքս կալոցեմ առաջի ատենին ՔԻ ըստ առաքելոյն Պօղոսի ։ և քան զի ամենեցուն ՔՍ ըստ իւրաքանչիւր կարեաց զատաստանս առնելոց է՛ , զի նոքօք յաշխարհի աստ օգտեցի և շահաւորեցի , այսինքն զբարիս գործեցէ և արդիւնաւոր լիցի և մի՛ ծոյլ մնասցէ ։ որպէս օրինակաւն այն , որ Մ̃տթէի · ԻԵ· Տէրն ինքն մեզ ծանուցանէ ։ Ումեմն ետ Ե· քանքար , և ումեմն Բ· ումեմն Ա· իւրաքանչիւր ըստ իւրում կարի , և գնաց ։ և վերջի ոչ է՛ անփոյթ այսորցիկ առնելոց ատաղանդացս այլ գոյ ժամանակ յորում գալոցէ՛ Տէր այս և համարս պահանջելոց ։ վերջ ասէ ։

Յետ

Յետ բազում ժամանակի գայ Տր ծա-
ռայից այնոցիկ՝ և առնէ համարս 'ի
մէջ նոցա ։ և Թէ կարիցեն պատասխա-
նել պարզ երես լինին և փառաւորին ։
և Թէ ոչ, տես զինչ հետևի զարհու-
րելի ։ Առէք 'ի դմանէ զքանքարդ՝ և
տուք ։ և զծառայդ անպիտան հանէք 'ի
խաւարն արտաքին, անդ եղիցի լալ՝ և
կրճել ատամանց ։ Արդ՝ քանքարն նը-
շանակէ զշնորհսն Քի, կամ զգիտու-
Թի, կամ զիմաստուԹի կամ զայլ բա-
րուԹի, զի նոքօք շահեսցի զարքայու-
Թին, և Թէ ոք անփոյԹ առնէ զնոսա,
ծոյլ մնալով, ամենայնն բարձի 'ի
նմանէ ։ և Թէ ոչ անփոյԹ առնէ, այլ
հոգ տանի և գործ ածէ զնոսա, տես
զինչ գովուԹի Ղուկս ։ Ժբ ։ երանի իցէ
ծառային այնմիկ, զոր եկեալ Տր իւր
գտանիցէ արարեալ այն պէս ։ Դ ։ դու-
ստրն է՝ անզգաշուԹին ։ և անզգաշու-
Թին է՝ պակասուԹի հոգևոր լուսոյ,
զոր ոչ ունելով՝ ոչ կարէ ճանաչել և
որոշել զբարին 'ի չարէն, զոր օրինակ,
եԹէ ոք կամի փախչիլ 'յուշատուԹէ և
'ի ժլատուԹէ, վատնէ անպէտ զամենայն
ինչս իւր, որ բնաւ ոչ մնայ, այս մեղք
է՝, զի ոչ գիտէ զսահման առատաար
տուԹէ, որպէս Ղուկասու որդին եաւ

զբա-

զբաժին յընչից հօրն իւրոյ և վատնեաց
զամենայն ։ Անզգուշութիւն ևս մեղք է՛
ընդդէմ իմաստութեան , զի իմաստունք
են նոքա , որք զխախճանս իւրեանց կա-
րեն 'ի բարին սովորել , և զզուշանալ
յայնմանէ իրէ , որ արգելու զմարդն 'ի
բարեգործութենէ ։ բայց իմաստութիւն
մարմնաւոր՝ ներհակ է՛ սմին , որպէս
ասէ՛ Պօղոս ․ Հռոմ ․ Ը․ իմաստութիւն
մարմնոյ թշնամութիւն է՛ յԱծ ։ ապաու-
րեմն որ իմաստունն է՛ զներհակ առաքի-
նութեան զմեղսն գիտէ , որպէս Յովսէփ 'ի
մէջ նաւաղ երընջուցն և 'ի մէջ պալատ-
տեցն ընտրութիւն արար , այսինքն , հնար
գտաւ 'ի մէջ առաքինութեան և մեղացն ։
Թէ որպէս զերծցի ։ Ե․ Դուստրն է՛ մեղ-
կութիւն , և մեղկութիւն է՛ թուլութիւն և
ցրտութիւն սրտի , այնմ իրի , որոյ պատ-
տէր նմա լինել ջեռեալ ոգւով՝ որպէս ասէ՛
Պօղոս ոգւով եռացէք ։ քանզի Ածա-
նէր հաճոյացելոց ճանապարհն այս է՛
ջերմեռանդ լինել 'ի գործս Այ և փոր-
կութեան հոգւոյ իւրոյ , և օր ըստ օրէ
յաւելուլ 'ի բարեգործութիւնս , այսինքն ,
միշտ ընթանալ 'ի բարւոյն յառ լաւն ,
և 'ի լաւէն յառ պատուականն , և ոչ
մնալ նոյնպէս , որպէս յառաջն , այլ պարտ
է՛ յառաջանալ , քանզի ասէ՛ սբ Հերո-
նիմոս

նշանս թէ չառաջանալն է՝ յետս դառ-
նալ ։ և այս ճշմարիտ է՝, վս զի ամե-
նեքեան ընթանան դու մնաս, ապա-
ուրեմն նոքա գնան, դու յետ մնաս ։
որպ յայտնի է՝ ՚ի վարս Սրբց՝ և ՚ի կարգա-
ւորութիւն նոցա, զորս տեսանեմք և
յաւէտ ընթեռնումք, որք օր ըստ օրէ
միշտ մեծանան և յաւելուն ՚ի սրբու-
թիւն իւրեանց, արիանան, և հանապազ
առաւել ջերմեռանդ լինին ։ ըստ ասա-
ցելոյն ՚յառակսն ․ դ․ Ճանապարհք ար-
դարոց իբրև զլոյս ծագեն, առաջնոր-
դեն՝ և լուսաւորեն, մինչև տիւն ծա-
գեսցի ։ քան զի որպ Արեգակն, յոր-
ժամ բարձրանայ՝ առաւել պայծառա-
նայ և ջերմանայ՝ նոյնպէս Սրբքն, որ
չափ յառաջանան, այն քան ջերմանան
՚ի սէրն ԱՅ, և պայծառանան, և որպ
Պօղոս ասէ՝ ․ա․ կորն․ ժգ․ մինչ տղայն
էի՝ իբրև զտղայ խօսէի՝ իբրև զտղայ
խորհէի, իբրև զտղայ համարէի ։ այլ
յորժամ եղէ այր՝ զտղայութիւնն ՚ի բաց
խափանեցի ։ դ․ դուստրն է՝ տրտմութիւն,
տրտմութիւն է՝ պակասութիւն ցնծութե
և ուրախութե, զոր ՚ի ծառայութեն
ԱՅ պարտէր առնել՝ որպ ասէ՝ Պօղոս,
մի՛ ան հարկի և տրտմութե, քան զի
զտուրս զուարթս առատս սիրէ ԱԾ ։

և թէ Ած սիրէ զծառայութիւս զուար-
թս , ապաուրեմն զտրտմութիւն ատէ ,
զի ոպ̃ լեղին զկերակուրն դառնացու-
ցանէ՝ նոյնպէս տրտմութիւն զբարի գոր-
ծսն , զի բարի գործք հաւատացելոցն
կերակուր է՛ Այ , քան զի կատարեալ
բարեգործութի̃ ումեք այն է՛ որ առնէ
զկամս Այ , և միանգ̃ տայ կերակուր Այ,
զի զհաճոյսն առաջի նորա առնէ , և
այս յայտ է՛ օրինակաւն ՚ի Ս̃ Աւետա-
րանին Յովհաննու , գլ. դ. յորժամ Քն
Տրն մեր եկն ՚ի քաղաք մի Սամարացւոց
որում անուն էր Սուքար մերձ ՚ի գիւղն,
և այլն ։ և Յ̃ն վաստակեալ ՚ի ճանա-
պարհէն նստէր ՚ի վ̃ր աղբերն , և կամէր
շահել զհոգի սամարուհի կնոջն , մինչ
զայս բարեգործութիւս առնէր , աղա-
չէին զնա աշակերտքն և ասէին Ռաբբի
հաց կե՛ր ։ նա ասէ՛ ցնոսա , ես կերա-
կուր ունիմ ուտել , զոր դուքն ո՛չ գի-
տէք ։ Ասէին աշակերտքն ընդ միմեանս
մի՛ թէ եբեր ինչ ո՛ք դմա ուտել ։
Ասէ՛ ցնոսա Յ̃ն իմ կերակուր այն է՛ ,
զի արարից զկամս այնորիկ որ առա-
քեացն զիս և կատարեցից զգործն նո-
րա ։ և քան զի սպասաւորութիւն ա̃յ
բազում պատճառաւ ուրախութի̃ է՛ ,
նմա որպէս յորդորէ մեզ Գրիգորիոս
պապն

պապն թէ ծառայեսն Ք՟ի թագաւո-
րելէ՛ ։ և Դա՛ւիթ ասէ՛ ուրախ եղէ
ես , ոյք ասէին ցիս ՚ի տուն տ՟ն երթի-
ցուք մեք ։ և մինն ՚ի բարեգործութե՟ց
այն է՛ , որ զՔ՟Ս միշտ իւրն ներկայ
ճանաչել ։ վասն զի ասէ՛ սոյն Մարգարէն
թէ տեսանէի զՏ՟ր առաջի իմ յամենայն
ժամ և է՛ ընդ յաջմէ իմմէ զի մի՛ սա-
սանեցայց , վասն ուրախ եղև սիրտ իմ,
և ցնծացաւ լեզու իմ ։ և այլն ։ և ո՟պ
քաղցր և հաճոյ է՛ Ք՟Ի զբարիս գործել
ուրախութ՟բ նոյնպէս սատանայի հաճոյ
է՛ տրտմութի՟ն ։ և այս ցուցանի օրինա-
կաւ Թագաւորութե՟ց գրոցն , զի յոր-
ժամ առաքեցին հրէայքն ՚ի սեղովամ բե-
րել զՏապանակն Ք՟Ի ՚յայլ ազգեացն ,
և յորժամ եհաս առ իւրեանս Տապա-
նակն , ընդ յառաջ եղեն զօրքն և ու-
րախութ՟բ ընկալան զնա՛ ։ և զայս յոր-
ժամ լուան զօրքն փղշտացւոց յոյժ
տրտմեցան և ասեն վա՛յ մեզ , զի ո՛չ
եղև մեզ որպէս յերէկն և յեռանդն ։
փղշտացիքն ցուցանէ զսատանայ , որ
յոյժ տրտմի ընդ ուրախութի՟ն Ք՟Ի , և
պաշտօնէից նորա , որք զգործս ա՟յ ու-
րախութ՟բ կատարեն ։ Դարձեալ յոյժ
վնաս է՛ տրտմութի՟ն , ո՟պ ասէ՛ Սողոմոն
ոգի տրտմեալ չորացուցանէ զոսկերս

Է. դուստրն է՝ անյուսութիւն կամ յու-
սահատութիւն, որ քան զամենայն մեղս
չարագոյն է՝, քանզի կորուսանէ զյետին
հնարն փրկութեան, և յուսահատութիւն
այս է՝ անբժշկելի տրտմութիւն քանզի
տխուր հատանէ ՚ի սիրոյն Այ, որպէս
Յուդայ, որ անյոյս եղեալ խեղդեցաւ,
էջ ՚ի դժոխս ։ և յուսահատութիւն Յու-
դայի, ըստ Ոսկեբերանից վարդապետաց
մեծ մեղ թուեցաւ առաջի այ, քան
զմատնութիւն Քի, վս զի առաւել է՝
ողորմութիւն այ քան մեղքն որք լինին ՚ի
վր յերկրի, վասնզի չէ պարտ վս մեղաց
յուսահատիլ յողորմութենէն այ, զի ո՛չ
ինչ մեղք կարեն յաղթել զչարչարանսն
Քի ։ և զատ յուսահատութենէն և ան-
զեղջ մեռանելոյն, ո՛չ ինչ մեղք գտա-
նին, որոց ո՛չ լիցի թողութիւն, յորժամ
կատարեալ սրտիւ զղջայ ։ քանզի Դա՛ւիթ
մեղանչեաց, Պետրոս ուրացաւ, Պօ-
ղոս զեկեղեցին հալածեաց, և կինն
պոռնիկ, զոր ածին Հրէայքն առ Յս,
և կամէին քարկոծ առնել զնա ։ և այլք
բազումք սոքա ամենեքեան զղջացեալք
գտին զթողութիւն, ապաշխարեցին ո՛չ է՝
պարտ ամենևին անյոյս լինել, և այս է՝
դուստր անիծից, որ կորուսանէ զհոգիս
մարդկան ։ Եւ թէպէտ վատթար է՝
մարդն

մարդն 'յամենայն իրս ծոյլ լինիլն, քայց
առաւել 'ի սպասաւորութեն այ, քան
զի անխելէ՛ նա՛ որ 'ի սեղան Թագաւո-
րական նստի, առաջի իւր ունելով զզա-
նազան և զանուշահամ խորտիկս, ինքն
քաղցած մնայ, այսպէս և սա որ զհոգևոր
կերակուրս Ածաշունչ գրոց պատրաստէ
այլոց, լսելով և քարոզելով զնոսա, ինքն
'ի սեղան այ նստեալ, ինքն ո՛չ ճաշակէ,
զի գործով ո՛չ կատարէ: և որպէս մեծ
պականութիւն է՛ ընդ ումեք խօսիլ զցայգ
և զցերեկ, և զնա ո՛չ ճանաչել: նոյն-
պէս քահանայք միշտ խօսին ընդ այ,
որպ ասէ՛ սբն Գրիգոր, Թէ յորժամ
աղօթեմք ընդ Այ խօսիմք, և յորժամ
ընթեռնումք զգիրս Ածայինս, Ած ընդ
մեզ խօսի, և արդեօք ո՛չ ճանաչեմք
զԱծ, և այս ընդե՞ր եթէ ո՛չ 'ի ծու-
լութէ: և ծուլութին նման է՛ քարակ
ցաւի, որով ո՛ք որ հիւանդացեալ է՛,
զինչ և ուտիցէ, առանց օգտութե ար-
տաքս հանէ, նոյնպէս ծոյլքն և մա-
նաւանդ ծոյլ քահանայքն, որք զամե-
նայն զգործս իւրեանց ապիկարութե առ-
նեն, և առանց օգտութե մնան, սոյն
պիսեաց պարտէ՛ կամ 'ի գործոյն հրա-
ժարիլ, կամ զարիութի ընտանալ, վասն
մեք աղաչեսցուք զմարդասէր փրկիչն մեր

Քսի՛ , տուր մեզ զարիութի՛ , և արժանիս արասցէ զմեզ միշտ զբարիս խորհիլ , խօսիլ և առնել , և օրըստ օրէ առաւելուլ ՚յարիութիւնս և ՚ի քաջութիւն , որով կարողք լիցուք զինել ընդդէմ չարին , և յաղթել զթշնամիս մեր և Սնյ , զօրութբ նորին Տն մերոյ Յի Քի որում վայելէ պատիւ և փառք յաւիտենականս յաւիտենից : Ամէն :

## Վ̈ ԱԳԱՀՈՒԹԻՒՆ :

որ է՛

Եօթներորդ մղ՝ վիշապային : հարց, զինչ է՛ Ագահութիւն · Պատասխանեն Մեքն և Աջաբանքն թէ Ագահութիւն է՛ անյագ և աննկարգ ցանկութի ընչից : ասի անյագ , զի ագահն երբէք ո՛չ յագի ընչիւք , որ քան շատ ստանայ այն քան շատ փափաքի : և ասի աննկարգ , վն զի ագահն ո՛չ գիտէ թէ որ բարի նման ստանալի է՛ : և որ հետևի ագահութե անկանի ՚ի կռապաշտութի , վսնէ Պօղոս անուանէ զնա երկրորդ կռապաշտութի : և հակառակէ հրամանացն Այ , վն զի ամենայն ո՛ք որ ագահէ ո՛չ սիրէ զԱծ , և հե-

և հետևապէս ո՛չ ծառայէ Ա͞Յ, այլ
մամոնայի, որպէս ասէ՛ Տ͞րն ՚ի Մատ-
թէի. Զ. ո՛չ կարէք Ա͞Յ ծառայել և մա-
մոնայի. զի որք զինչս սիրեն ՚յ ա͞յ հրա-
ժարին, և ապստամբեն: այս է՛. կեր-
պիւս, որպէս ծառայ ՚ի Տեառնէ, կամ
իշխան ՚ի Թագաւորէ, ասելով այսպէս,
Թէ զհաց քո ո՛չ ուտեմք, և զհանդերձս
քո ո՛չ ըզգենումք, ո՛չ ունիս իշխանութիւն
՚ի վ͞ր մեր: կամ թէ ասեն զհաց քո ու-
տեմք, և զհանդերձ քո՛ ըզգենումք ապա
ո՛չ կամիմք ծառայել քեզ, և այս չա-
րագոյն է՛ քան զառաջինն: քանզի ամե-
նեքեան գիտեն, թէ զամենայն ինչ զոր
ունիմք ՚յ Ա͞Յ է՛ և հազիւ սակաւ՛ք գտա-
նին թէ ասիցեն, իմէ՛ այս ամենայն զոր
ունիմ, և ո՛չ Ա͞Ծ է՛ տուեալ ինձ: բայց
յոլովքն, որք խոստովանին, թէ զա-
մենայն ինչ զոր ունիմք ՚ի քէն է՛ Ա͞Ծ, և
զի ո՛չ ծառայեն ն͞մ որպէս արժանն է՛,
այսինքն ո՛չ առնեն զկամս զոր հրամայէ
Տ͞րն: երևի թէ ասեն այսպէս, այս
ամենայն զոր ունիմք ՚ի քէն է՛ Տ͞ր: բայց
ո՛չ կամիմք պաշտել և սպասաւորել քեզ.
և ճշմարտի ՚ի վ͞ր սոցա բանն, որով
յանդիմանէ Ք͞Ս զանխոստութիւն նոցա ա-
սելով այսպէս, զի՛ կոչէք զիս Տ͞ր Տ͞ր, և
զոր ասեմս ո՛չ առնէք: ապստամբեն այսո-

քին որք ա͞յ ոչ սպասաւորեն այլ ընչից
աշխարհիս , երեւի թէ զինչսն սպասեն
և ոչ զԱ͞Ծ , զի զամենայն հոգ և մտա-
ծմունս իւրեանց յայն եդեալ են : և
զի՞նչ է՛ սպասելն եթէ ոչ ՚յամենայնէ
սրտէ՛ սիրելն , և զլոյս իւր դնել ՚յայն
զոր սիրէ , այսպէս որք ՚յինչս աշխարհիս
յուսացեալք են , զայնոսիկ սիրեն , և
հետեւապէս զայնոսիկ սպասեն և ոչ
զԱ͞Ծ : և Սիրաք ասէ՛ ոչ ինչ է՛ վատթա-
րագոյն քան զընչասիրութի͞ , զի այնոքիկ
զհոգիս իւրեանց վաճառեն , և նա ու-
նի կշեռք թիւրութե͞ ՚ի ձեռս Քանա-
նու : Քանանամ թարգմանի վաճա-
ռական , կամ այն որ ունի և տուր առ-
նէ , և կշեռք անիրաւութե͞ ունի , պի-
ղծ է՛ առաջի Ա͞Յ , վա͞յ ագահութե͞ն
ընդ դէմ է՛ ա͞յ : Ընդ դէմ և սէ՛ քնու-
թե͞ , քան զի ո͞չ ՚հողն քան զամենայն
տարերս խոնարհագոյն է՛ և ցած , այն-
պէս զոր կոխեն մարդիք , այսպէս ՚ի
մէջ բարոյականութե͞ց ինչքն են , որք
ո͞չ զհող համարելիքեն ըստ իմաստնոյն
թէ ամենայն ոսկի և արծաթ , ո͞չ թէ
են սակաւ ինչ աւազ · վա͞յ ոչ է՛ պարտ
պահել զնոսա ՚ի վեր քան զգլուխն , այլ
արկանել ՚ի ներքոյ ոտիցն , ո͞չ առնէին
այնոքիկ բարիք առաջին քրիստոնեայքն ,

զորս

զորս ունիմք գրեալս 'ի գործս Առաքե-
լոցն ։ գլ· դ· և շնորհք մեծամեծք էին
'ի վր̄ ամենեցուն նոցա ։ և ո՛չ ոք կարօ-
տիւր 'ի նոսա ։ զի որք միանգամ տեարք
էին գիւղից կամ ապարանից՝ վաճառէին
և բերէին զգինս վաճառելոցն , դնէին
ա՛ռ ոտս Առաքելոցն ։ այսպէս և մեք
հետևողքս այնոցիկ բարի օրինակաց
զինչս ամենայն 'ի ներքս ոտից պահես-
ցուք , այս ինքն , մի՛ այն քան սիրես-
ցուք , որք պատո՛ւիրանազանցք լիցուք ,
այլ զերկնայինսն պարտիմք խորհել , ա՛ռ
յորս գնալոցեմք , մի՛ զայս որ 'յ երկրի
աստ է , զի ոչինչ բերաք 'յ աշխարհս և
ո՛չ տանել ինչ կարասցուք , և քան զի
հոգի մեր բնութ̄ք նոսր է՛ և երկնային ·
վս̄յ պարտ է՛ նմա՛ միշտ բարձրագոյնն
խորհիլ և գանձել գանձս 'յ երկինս , ուր
ո՛չ ցեց և ո՛չ ուտիչ ապականեն , և
գողք գողանան , և թէ միշտ զերկրայ-
ինսն խորհիմք , և 'ի հողեղէն բնակու-
թիւնս հաստիմք , նախատէ զմեզ եսայի
ասելով այսպէս վա՛յ այնոցիկ , որք յա-
րեն տուն 'ի տուն և ագարակ ա՛ռ ա-
գարակս մերձեցուցանեն ։ և Յոհ̄ս տե-
ս̄լն · ը· Ես տեսի և լո՛ւայ զձայն հրեշ-
տակի թռուցելոյ 'ի մէջ երկնից զի ասէր
'ի ձայն մեծ , վա՛յ՝ վա՛յ՝ վա՛յ՝ որ բնա-
կեալք

կեալք են յերկրի ։ արդարև այսոքիկ եր-
եգեան վայքս զյաւիտենական կուսութեան
ցուցանեն, քանզի որք կամին յերկրի առատ
մեծանալ ընչիւք 'ի հարկէ կորուսանեն
զերկնայինս, և ինքեանք անկանին 'ի դժո-
խս, զի ըստ առացելոյն Պօղոսի, մեծու-
թիւ և ինչք աշխարհիս ընկղմեն զմարդիկ
'ի սատակումն և 'ի կորուստ, զի արմատ
ամենեցուն չարեաց, ասէ՛ արծաթսի-
րութիւն՛, որում ոմանց ցանկացեալ վրի-
պեցան 'ի հաւատոցն, և զանձինս ար-
կին ընդ բազում ցաւս օք ։ և պատ-
ճառն այս է՛, զի ագահութիւն առա-
ւել մօտ 'ի նիրտս մարդկանց քան այլ
մեղքն, զի մանաւանդ նախ ցանկայ ագա-
հութեան առաւել քան պոռնկութեան, զի
'ի տանէն նոք գողանայ ։ դժուարապէս
և յետոյ ելանէ 'ի սրտէն, քանզի տե-
սանեմք զի ամենայն մեղք 'ի ծերս պա-
կասին և վերջանան, սա սկսանի, այլ
մեղքն ալևորին և հնանան 'ի ծերսն, սա
տղայանայ, և նորի ։ վա՛յ բժիշկն երկ-
նաւոր կամելով բժշկել զայս ախտս 'ի
մարդկանէ, քանիցս անգամ զգուշացոյց
զմեզ մանաւանդ այսու, որպ պատմէ
Ղկս, գլ. ժբ. տեսէք և զգուշ լերուք
յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ 'ի
մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա ։

և եր-

և երբեմն պատուիրելով՝ Մի՛ գանձէք
ձեզ գանձս ՚յերկրի ։ երբեմն մի՛ ստա-
նայք ձեզ ոսկի և մի՛ արծաթ ։ երբեմն
յորդորէր ՚ի կատարելութիւն ասելով, եթէ
կամիս կատարեալ լինել՝ երթ զոր ինչ
ունիս վաճառեա՛ և տուր աղքատաց ։ և
թէ մի՛ հոգայք վն վաղուեան ։ և երբեմն
անհաւանեցուցանելով օրինակօք , թէ դիւրին
է՛ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել
քան մեծատան արքայութիւն այ մտանել ։
իսկ յետինս այս քան զամենայն անհա-
գին է՛ , որ ՚ի Ղկս Ժզ. անուամբ Մեծա-
տանն և աղքատին Ղազարոսի օրինակաւն
խելամուտս առնէ զմեզ , թէ մեռաւ
մեծատունն և թաղեցաւ և ՚ի դժո-
խսն ամբարձ զաչս իւր ։ և այլն ։ Յու-
դա վն ագահութե մատնեաց զՔսն .
և կորեաւ ։ Անանիա և Սափիրա կին նր ,
վն ագահութե խորեցին ՚ի գնոց ագա-
րակին զոր վաճառեցին ։ և յորժամ յան-
դիմանեցան ՚ի սրբն Պետրոսէ , մի՛ յետ
միւսումն անկան և մեռան ։ ահա՛ ա՛ռ
այս քան կորուստ հասուցանէ զմարդն
այս անիծեալ չար վիշապին , հինգ երրդ
գլուխս ագահութե ։ Նու ՚յ յայտնանէ յա-
ռաջ գան Թ. գործք չարութե , որպէս
Թ. չարագոյն դստերք ՚ի չար մօրէ ծնե-
ալք ։ Առաջինն է՛ ախմնականն , և ախ-

մո-

մնացական է՛ չարաճնար կամք գնելոյ
կամ վաճառելոյ զձրի պարգևս Հոգւոյն
սրբոյ, այսինքն, եթէ ո՛ք գնէ և կամ վա-
ճառէ զայն ամենայն, զոր Տէրն մեր ու-
սոյց իւրոց սրբոց առաքելոցն թէ ձրի ա-
ռէք, ձրի տուք։ և այս նմանի վասն է.
խորհրդոյ եկեղեցոյ և այլոցն ամենայնի,
որք ըստ հոգևորին պատկանին, և կամ
ընդ հոգևոր իրի կապակցին։ մեծագոյն
և չարագոյն մեղքս այս զանուանն էառ ՚ի
Սիմոնէ կախարդէ, որպէս պատմէ ․ը․
գլ․ գործք առաքելոց այսպէս՝ Տեսեալ
սիմոնի թէ զձեռն ՚ի վերայ դնելով ա-
ռաքելոցն տուեալ լինի Հոգին սուրբ՝ մա-
տոյց նոցա ինչս՝ և ասէ՛, տուք և ինձ
զիշխանութիւս զայս, զի յոյր վերայ դնի-
ցեմ զձեռս առցէ զՀոգին սուրբ։ և թէ որ-
քան յանդիմանեցաւ և ՚ի բաց հերքե-
ցաւ, հետևակայ բանից սրբոյն Պետրոսի
լուիցուք․ լուիցեն ամենեքեան և եր-
կիցեն, որք զայս առնեն մինչև ցայսօր։
և Պետրոս ասէ՛ ցնա՛ Արծաթ քո ընդ
քեզ լիցի ՚ի կորուստ, զի զպարգևսն Աստուծոյ
համարեցար ընչիւք ստանալ։ ո՛չ գոյ
քեզ մասն և վիճակ ՚ի բանիդ յայդմիկ,
և այլն։ և քան զի մեղքս այս ձգէ զքրիս-
տոնեայն ՚յանհաւատութիւն․ վասնի ասէ՛
Դամասոս պապն թէ ամենայն մեղք հա-
մեմա-

մեծամտեն սխտմնական մեղաց , բայց ա-
ռաւել անհաւատութիւն , զի անզգին
իրաց զէն դնեն , և զէն հաստատեն , և
ոպ̄ անհաւատ և հերձուածող հաստատեին
՚յեկեղեցւոյն ։ և զայս եցոյց Քս̄ յոր-
ժամ եհան ՚ի տաճարէն զգնողսն և զվա-
ճառողսն ասելով՝ տուն իմ տուն աղօ-
թից կոչեսցի, և դուք արարէք զդա այր
աւազակաց , տեսէք զմեծութիւն մե-
ղացս ։ Քս̄ զամենայն մեղս բանիւ
բառնայր , և այս մեղացս ոչ կարաց տա-
նել , այլ բռնութբ̄ եհան ՚ի տաճարէն ,
և եհար խարազանաւ ։ Նմանապէս և
Պետրոս ոչ համբերեաց այլ ա́ռժամայն
՚յանդիմանեաց զՍիմոն ։ Սպաուրենն է-
պիսկոպոսք , որք վաճառեն զեկեղեցիս և
զկարգս քահանայից , և քահանայք զխոր-
հուրդս եկեղեցւոյ , ՚ի վր̄ քրիստոնէից ,
և ամենայն որք որ այսպիսի կերպիւ մե-
ղանչեն՝ ա́ռժամայն ոպ̄ գոթի ՚ի միջոյ
ժողովրդեանն երանեն ։ հաստատուսի այս
օրինակաւն Գեհեզի պատահնեկին Եղի-
սէի որ ՚ի չրրդ թգց . Ե. գլ. յորժամ
որքեաց Եղիսէ զբորոտութիւն ՚Նէեմա-
նա , խնկ սա́ վս̄ շնորհակալութե մա-
տուցաներ պարգևս Եղիսէի և աղաչէր
զնա́ զի առցէ ՚ի նմանէ ինչս ։ ասելով
այսպէս ահա գիտացի եթէ ոչ գոյ Այ̄

յա-

՚յ ամենայն երկրի , բայց միայն ՚ի մէջ
Իսրայէլի ։ և արդ ա՛ռ օրհնութիւն ՚ի
ծառայէ քումմէ ։ և ասէ՛ Եղիսէէ կեն_
դանի է՛ Տէր , որոյ կացի առաջի նորա ,
եթէ առից ինչ , և ստիպեաց զնա առ_
նուլ և ո՛չ հաւանեցաւ ։ այսպէս այս
ս̄բ այրս Ա̄Ծ Մարգարէս Եղիսէ վ̄ն
հոգևոր իրաց ո՛չ թէ միայն ո՛չ էառ ,
այլ և ս և ո՛չ կամք էր առնելոյ ինչ այ_
մինքն , ամենևին իսկ ո՛չ հաւանեցաւ ։
իսկ ծառայն իւր Գէեզի յաղթեալ ՚յ ա_
գահութ̄ե գնաց զկնի Նէեմանայ և սուտ
ասելով թէ Տ̄ր իմ առաքեաց զիս առ
քեզ՝ և ասէ՛ ահա եկին առ իս երկու
պատանեակք ՚ի լեռնէ եփրեմի ՚յ որդւոց
մարգարէից տուր նոցա տաղանդ մի՛
արծաթոյ և երկուս պատմուճանս հան_
դերձեալ ։ իսկ Նէեման ո՛չ միայն մի՛
այլ զերկս տաղանդս արծաթոյ և երկուս
պատմուճանս յօժարութ̄բ ետ նմա՛ ,
բայց յորժամ դարձաւ առ Եղիսէ , ս̄բս
իմացաւ , զի առեալ էր ՚ի Նէեմանայ
զյոլով դրամս , եհարց զԳէեզի ուստի՛
գաս ։ նա՛ վերստին ստեաց թէ ո՛չ ու_
րեք գնացի , յայնժամ ս̄բ Մարգարէն
անէծս ետ նմա՛ այսպէս ասելով թէ և
բորոտութիւն Նէեմանայ յարեսցի ՚ի քեզ ։
և ՚ի զաւակ քո յաւիտեան ։ անհաւա_

նակ

սիկ ա՛յս քան չարութիւն հատուցանէ ա-
գահութիւն ։ Պարզեալ ասէ՛ սբն Օ-
գոստինոս, թէ քան զամենայն մեղք
ագահութիւն չարէ՛, և սա զեկեղեցին
ապականէ ։ զոր օրինակ ումեք ո՛չ է՛
վնաս թէ զհոգի նորա ո՛չ առնուն ։ նոյ-
պէս ո՛չ ինչ կարէ զեկեղեցի ապականել.
Բայց միայն, որ զոգին սբ բաժանէ
՚յեկեղեցւոյ, և մեղօքս այս բաժանի
Ոգին սբ ՚յեկեղեցւոյ ։ օրինակ ունիմք
՚ի Մակաբայեցւոցն հՈւրն սբ, որով
զպատարագն մատուցանէին անծախելի
մնաց ՚ի ներքոյ Ջրոյն ։ Բայց յորժամ
Անտիոքոս զքահանայութիւն վաճառեաց
Յասոնի, յայնժամ հուրն շիջաւ ։ Ասէ՛
սբն Օգոստինոս թէ այն մեղաց ագա-
հութե շիջաւ հուրն, և մեղքս այս բա-
ժանի ՚յերկուս, այսինքն, ՚ի գնելն, և
՚ի վաճառելն. գնելով ըստ Սիմոն կա-
խարդն, և վաճառելով որպէս Գեեզի ։
Իսկ այսպիսի գնել և վաճառելն երբեմն
լինի դրամով, երբեմն մարդահաճութբ
և աղաչանօք, երբեմն այն ազգակա-
նութե, և երբեմն այն ծառայութե թէ
որ կերպի յայսպիսեաց լինի՝ սիմոնական
է՛, քան զի դիտաւորութի կամ զիր
հոգևոր տուողին, կամ առնողին այն իր
օգուտ և շահի է՛, և ո՛չ ձրի ըստ Այ ։

վս̄յ միշտ խոստելին է՝ , քան զի խոստեսցեն
այնոքիկ , որք ընտրեալք են արծաթով և
արծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ ։
'յերեք Թգ̄ւրթեց · Ժգ· գ̄լ· Յերոբովամ
զկուռս կանգնեաց , և ամենայն ոք ,
որ լնոյր զաջ նորա ոսկով , կամ արծա_
թով , քահանայ լինէր ։ այսպէս ասէ՝
Ա̄ծաշունչն , ո՛չ դարձաւ Յերոբովամ 'ի
չարեաց իւրոց , և դարձաւ և արար 'ի
մասնէ ժողովրդեանն քուրմս բարձանց,
որ կամէր լնոյր զձեռս իւր , և լինէր
քուրմ բարձանց ։ վնկ ապա ա՛ւերեաց
Ա̄ծ զտունն նորա , և ինքն պատժեցաւ ։
որ չա՛փ և ս առա՛ւել մեղանչէ ո՛ք 'ի նոր
օրէնս , որ 'ի տաճարի Ա̄յ զհոգևոր և
զսրբազան ի̄ք խորհուրդս , կամ գնէ,
կա՛մ վաճառէ , և զամենամեծն Ա̄ծ
քարկացուցանէ ։ և յ̄ս մարդահաճու_
թեան ասէ՝ Սղմ· իւղ մեղա՛ւորի մի՛ օծցէ
զգլուխ իմ ։ որ նշանակէ զմարդահա_
ճոյսն , և յայտնանէ գլխա՛ւորապէս
երկնչել պարտէ՝ , քան զի ասէ՝ · Տ̄ր
ցրո՛ւէ զոսկերս մարդկան մարդահա_
ճոյից ։ յ̄ս աղաչանացն ունիմք զօրինակն
զկին Զեբեդեայ , որ եկաւ զիւր ·Բ̄· որ_
դիսն , այսինքն , զՅակոբոս և զՅո_
վաննէս և եկն առ Յ̄ս և աղաչէր զնա՛
զի տացէ որդւոց իւրոց զբարձրագոյն
աստի_

աստիճան , այսինքն , նստել մի՛ ընդ֊
՚յաջմէ Յի և միուսն ընդ ձախմէ , յոր֊
ժամ թագաւորեսցէ ։ և այս խնդրուա֊
ծացս ոչ հաւանելով Քս̄ ասաց , ոչ
գիտէք զինչ խնդրէք ։ վս̄ ազգականու֊
թեան ևս զօրինակն ունիմք ՚ի նոյնոյ Տէ,
որ ՚ի մէջ աշակերտացն իւրոց ոչ ընտրեաց
գլուխ լինել եկեղեցւոյ ՚ի վր̄ երկրի կամ
զՅակոբոս մեծն կամ զՅովհաննէս
Աւետարանիչն զորդիսն զեբեդեայ , վս̄
զի սոքա ազգականք էին իւրն , այ֊
սինքն , մօրաքւեր որդիք , թէպէտ յոյժ
սիրելիք էին իւրն վս̄ կուսութեան իւր֊
եանց , և վս̄ սրբութե̄ և իմաստութե̄,
քան զայլսն ։ այլ զգլխաւորութիւն եկե֊
ղեցւոյ իւրոյ ՚ի վերայ երկրի ետ սբ̄ն
Պետրոսի , և զսբ̄ն Պետրոս միայն
կարգեաց իւրն աթոռակալ և փոխանորդ
Ճշմարիտ , գլուխ և հովիւ և իշխան
ընդհանրականի սբ̄յ եկեղեցւոյ ։ այսու
ամենայնիւ իմանամք թէ սխմնականն
է՛ չարագոյն դաւսար ապահութե̄ , է՛
ծանրագոյն մեղք մահացու և ամենաքեան
էն ՚ի ներքոյ այսորիկ մեղաց , որք բռ֊
նութք̄ և ոչ արժանաւորութք̄ առնուն
զբարձրագոյն աստիճան , կամ զեկեղե֊
ցի , և կամ զգործաւորութիւն իմն եկե֊
ղեցական և հոգևոր , այսինքն , Եպիս֊

 կոպոս

կոպրոս լինելն , և առաջնորդ , հովիւ , քահանայ , և այլ աստիճանաւորք , և նմանիք են այնոցիկ որք , զոք պատակն տապականեն , չնման և պոռընկին ընդ ամուսնոյ այլոյ , քան զի պատուական է՛ ամուսնութի և մե անկողին : բայց զշունս և զպոռնիկս դատէ ԱԾ : այլ և ս նմանք են գողոց , որք զիրս այլոց գողանան , սոքա մինչ պարտք ունին , և պարտին հատուցանել ստ տեարս իւրեանց , վերջապէս նմանք են ՚յափշտակողաց , որք կամ զկանայս և կամ զինչս այլոց բռնութե ՚յափշտակեն : վասն սոքա ամենեքեան խոտան և անպիտան դատանին առաջի ԱՅ , և վասն ոչ ընդունին զԱգին ԱՅ : այլ սատանայապէս պատժին ըստ ՚ի հին օրէնսն , յորում բազումք և դրէ թէ անհամարք մեղօք լիք քահանայք և հոգևոր բանի սպասաւորք , զի անարժանք դատան և պատժեցան , զոմանս , պատառեցաւ երկիր և եկուլ , զոմանս , հուրէջ ՚յերկնից , և այրեաց , և զոմանս , սուրն խողխողեաց , և այլք այլ ազգ կերպիւ պատուհասեցան : վասն պարտ է՛ զի հոգևոր իրաց , և աստիճանաց փափաքողն , ընտրեալ լիցի և կոչեցեալ ՚յԱՅ , որպ ասէ՛ Պօղոս ՚յեբրայց . Ե. և ոչ եթէ անձամբ ոք առնու զպատիւ ,

այլ կոչեցեալն ՚յԱյ որպ և Ահարօն ։ Արդ այսպիսաբար պարտին լինել Տր ածուքն և քահանայապետքն , և ամենեքեան որք հոգևորաց իրաց , և կամ եկեղեցւոյ պաշտօնեայք , և սպասաւորք լինին ։ Նախ զի ԱԾ ընտրեաց կամ ձայնիւ , և կամ հրաշիւք և սքանչելեօք կոչէ , որպ Յեսուայ զոր ԱԾ կոչեաց ։ Հ. Ծերքն , որք զուգեն մարգարէութե ընկալան ։ Սամուէլ . և Դաւիթ որպէս ՚յայլ ընտրեցան ։ և այլքն ։ և ՚ի նոյն , սբն Աստուածային վիճակաւ առաքելոցն ։ Բառնաբաս և Պօղոս ընտրութբ Հոգւոյն սբյ , որպ պատմէ գործք առաքելոցն . Ժգ. գլ. այսպէս , Մինչ դեռ ՚ի պաշտամանն Տն կային և պահէին , ասէ Հոգին սբ . որոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍօղոս ՚ի գործ ՚յոր կոչեալ եմ զդոսա ։ Յայնժամ պահեալ և աղօթս արարեալ եդին զձեռն ՚ի վր նոցա և արձակեցին ։ և սբն Պօղոս որպ ընտրեաց զՏիմոթէոս և զՏիտոս , և զայլսն ։ նա և զերիցունսն եփեսոսի , ամենեքեան սոքայ , ընտրութբ և արժանաւորութբ կոչեցան , և ո՛չ արծաթով ։ սքանչելեօք , որպ սիւնլուսոյ երևեալ ՚ի վր սբյն Գրիգորի , որ լինէր պապ Հռոմայ , և ձայն ՚ի վր Նիկօղայոսի , որ լինէր Եպիսկոպոս ։ Ա.Ղ

 կերպ

կերպ հաստատեալ և մնացական, մինչև
ցայսօր եկեղեցին Քի̃ զընտրութիւն առ_
նէ այսպէս, այսինքն, հարց և փորձ
առնելով բազմիցս, ՚ի վր̃ նուիրելոյն,
յաղագս սբ̃ութեան նորին, և գիտութեան,
և հաստատելոյն, և ողջամտութեան, և քա_
ղաքավարութեան և այլն; ոպ̃ պիտոյ է,
վս̃ այսպիսի բարձրագոյն աստիճանի,
որ է՛ լինել եկեղեցական, կղերիկոս,
պաշտօնեայ տեառն: և սպասաւոր նո_
րոյ ուխտիս: արդարև այսպիսի պարտ
է՛ լինել ընտրութիւն, ըստ արժանաւո_
րութեան, ըստ այ̃, և ո՛չ ըստ դիպլման, և
օգտի մարմնաւորի, և կամ արծաթով,
քանզի խոտեսցին ամենեքեան, և այլն:
Երկրորդ դուստր ագահութեան է՛ վաշխ
առնուլն ՚ի փոխ տալոյն, այս ինքն, յոր_
ժամ գայ մինն, և կամի փոխ առնուլ
՚ի քէն, դու ասես նմա, թէ ինձ մին
շահ տաս, տամ քեզ փոխ, թէ ո՛չ տամ՝
ո՛չ տամ քեզ փոխ: և այս է՛ յոյժ ծանր
մեղք մահացու, և ընդ դէմ հրամա_
նացն Քի̃, և անիրաւութիւն է՛: ցուցանի
բանիւ Տն̃ մերոյ, որ ՚ի Ղուկս · զ̃· գլ̃·
լե̃· հնիր ասէ՛ այսպէս և տու՛ք փոխ,
ուստի ո՛չ ակն ունիցիք առնուլ: ուստի
ո՛չ ակն ունիցիք առնուլ՝ նշանակէ, թէ
փոխ տուեալ դրամն վարձ, կամ շահ

չառ_

չառնուք , թէ փոխ առնուն ։ ապաուրեմն ՚յայս կողմանէ Բ՟ն հետեւող քրիստոնեայն պարտի , որ , ով ո՛ք կամիցի
՚ի նմանէ փոխ առնուլ , եթէ ունիցի
յօժարութ՟ք տացէ , ո՛չ ինչ յուսալով ՚ի
նմանէ առնուլ , այս միօքս թէ փոխ
ետու ։ նաեւ եթէ իւր դրամն իւրն պիտոյ էր ․ քանզի կամէր կամ զջորեան
առնուլ , եւ կամ զայլ ինչ պիտանացու
եւ հարկաւոր , եւ կամ թէ զտուն իւր
պարտէր շինել եւ կամ նորոգել փոխ ետ,
վասնզի ո՛չ կարաց զայսոսիկ առնել՝ յայնժամ կարեւորաւ տեղոյն սովորութեան մին
զատ առնուլ փոխ առողէն այս միօքս
թէ ինձ մնաս դիպեցաւ զի ետու փոխ ․
բայց զայս նախ պարտէ՛ սակ արկանել ընդ փոխ առողն , զի ամենեւիմբ
ո՛չ ունիցի զդժուարութ՟ի թէ միայն
վ՟ս փոխ տալոյն առնու ինչ , վ՟ս զի ՚յամենայն է՛ կողմանէ պարտաւոր զգուշանալ , զի զպատուիրանս Ա՟յ պահեսցուք , եւ զայս առնելով մի՛ որոշիցուք
՚յա՟յ եւ ՚ի խորանէ նորա եւ ՚ի լեռնէ, որ է՛
եկեղեցի Ա՟յ եւ արքայութ՟ի , քան զի
հարցանելով մարգարէն Դաւիթ զՏ՟րն ,
թէ , Տ՟ր ո՞վ կացցէ ՚ի խորանի քում
կամ ո՞վ բնակեսցէ ՚ի լեառն սբ՟ քո ։
պատասխանէ Տ՟րն որ գնայ ՚յանբիծ ;

գործէ զարդարութիւն , և ընդ այլ բազում բարեգործութեանս , դասէ ևս զայս՝ թէ , որ զարծաթ իւր ՚ի վարձու ոչ տայ , և կաշառս ՚ի վերայ անմեղաց ոչ առնու ։ այսպէս և մեք պարտիմք առնել , զի արժանիք լիցուք արքայութեան և մի՛ սասանիցուք յաւիտեան ։ վարդապետք ասեն թէ քան զգողութիւն չար է՛ և դառն , շահ առնուլն ՚ի փոխ տալոյն , քան զի գողն ՚ի դրուց , սա՛ ՚ի տանէ գող և աւազակ է՛ , և առնուն առաւել ապականի ՚ի սմանէ քան յաւազակաց , զի գողք և աւազակք ոչ կարեն յամենայն ժամ գողութիւն առնել , և ոչ յամենայն տեղիս , իսկ շահ առնողն ՚ի փոխէն , հանապազ զցայգ , և զցերեկ , և յամենայն տեղիս ՚ի մէջ մարդկան , ՚ի տան և ՚ի հրապարակի , և զամենեսեան զրկէ զթագաւոր , զիշխան , զաղքատ , զարհեստաւոր , և զամենայն ոք , ապաուրեմն առաւել անիրաւութիւն է՛ և չարութիւն քան զգողութիւն ։ Դարձեալ շահ առուն արհեստ արքու է՛ , և ոչ միայն զօտարսն սպանանէ , այլ և զընտանիսն իւր և զ զաւակսն , քանզի սնուցանէ զնոսա անիրաւութեամբ , և զրկանօք , և սա նմանի այն ցաւին , որ կոչի ցեց , և կերցաւ , զի յորժամ պատահի

տանհի մարդոյն ուտէ զնա , նոյնպէս
մեղքս այս անխրատ շահատուութե յոր-
ժամ անկանի 'ի քաղաք մի՛ ուտէ , և
հալէ զամենայն ինչս այն քաղաքին ։ որպ՟
ասէ՛ Դաւիթ քննեսցէ փոխատուն զա-
մենայն ինչս նորա , յափշտակեսցեն
օտարք զվաստակս նորա ։ և վ՟ն այսպիսի
գողոյս և աւազակիս ասէ՛ սբ Երոնի-
մոս Թէ պարտէ՛ զգուշանալ յոյժ ու-
տել 'ի նոցանէ , որք արտասուօք աղքա-
տաց են կենդանիք , և ապրին , որ ո՛չ
ասէ՛ զբան սաղմոսին ինձ , Թէ տեսա-
նէիր զգողն ընԹանայիր ընդ նմա , և
ընդ շունան դնէիր զբաժին քո ։ գրեալ
է՛ 'ի վարս Փուլխերիոսի , Թէ յորժամ մե-
ռաւ հրեշտակք , և դևք տարին զհոգի
նորա 'ի դատաստան առ Քն և ասեն
դևքն Ով Տր Հոգի Փուլխերիոսի մերէ՛ ,
զի զհանդերձս շահատուութեաց մաշեաց ,
ասէ՛ Քն էր արարեր , Փուլխերիոս ասէ՛
ո՛չ գիտացի Տր , և կենդանացոյց Տր
զՓուլխերիոսն , որ ապաշխարեաց զմեղսն
և գնաց առ Քն ։ բայց սատանայ ,
միայն ապտակ մի՛ էած Փուլխերիոսի , և
որ չա՛փ կենդանի էր սպին երևէր ։
Դարձեալ բազում պատիժս առնու շա-
հատուն , զի որպ ինքն զայլս յափշտա-
կեաց , այսպէս այլք զինքն յափշտակեն ,

որպէս ասէ՛ Եսայի, վա՜յ քեզ որ յա-
փշտակէիր, զի դու յափշտակեսցիս, և
Երեմիայ ասէ՛ ոպ̄ կաքաւ, որ սնու-
ցանէ զայն որ ոչ ծնաւ, այնպէս են
որք ժողովեն զինչս թիւրութբ̄ և զրկա-
նօք: քանզի ասեն բնութե̄ քննիչքն
թէ կաքաւն, այնպէս ագահ է՛, որ զձուս
այլոյ հաւուց, զորս գտանէ ժողովէ ՚ի
բունն իւր, իսկ յորժամ ելանեն ձագքն,
և տեսանեն, որ ոչ է՛ ճշմարիտ ծնողն
իւրեանց, թողուն զնա, և գնան: նոյն-
պէս շահառուքն ժողովեն զբազում ինչս,
անիրաւաբար, և քանզի ոչ է՛ արդա-
րապէս հաւաքեցեալ՝ ամենայնն կորն-
չի: Երրորդ դուստր ագահութե̄ է՛ յափ-
շտակութիւն, և յափշտակութիւն այն է՛
որ բռնութբ̄ զիր ինչ առնուն ՚յայլոց,
և կոչի ևս աւազակութի̄, և այս է՛ ընդ-
դէմ արդարութե̄, քանզի իւրաքան-
չիւրոյ իր ինչ եթէ ճշմարտապէս և ար-
դարապէս ստացեալ է՛, Ըստ նորա է՛
պատրաստեալ, և եթէ ոք առնու բռ-
նութբ̄ զիր ինչ այլոյ, զանիրաւութի̄
առնէ, և հետևապէս ընդ դէմ արդա-
րութե̄: Արդարութիւն ըստ իմաստնոց
և վարդապետաց սահմանի այսպէս.
Արդարութիւն է՛ հատուցանել իւրա-
քանչիւրոյ զիւրն: նմին հետե արդարու-
թե̄

Թէ այն է՝ որ ումեք զխօսս ո՛չ հաստատա-
նէ կամ պահպանութի·, Երկրորդն, որ
ընդ հանուր բարոյն սպասաւորէ, և
օգնական լինի ։ Չորրորդ դուստր ա-
գահութեան է՝ գողութիւն ։ և գողութիւն
է՝ ակամն հատանել, և առնուլ ծածուկ
զինչ այլոյ առանց կամաց Տն իւրոյ և
այս է՝ ներհակ հրամանացն Այ, որ
ասէ՝ ՚յելից ․ Ի․ Մի՛ գողանար ։ գիտե-
լի է՝ զի գողութիւն Բ․ ազգ է՝ ծածուկ
և յայտնի ։ յայտնի է՝, որ ըմբռնի ՚ի գո-
ղութեան, և ծածուկ, որ ո՛չ իմանայ
ո՛ք ։ յայտնի գողութեան պատիժ կախա-
նաւ է՝, դարձուցանել միոյն ․ Դ․ Իսկ
ծածուկ գողութեան միոյն ․ Բ․ և Թէ ո՛ք
՚ի գողութեան և կամ ՚յաւազակութեան մե-
ռանի, ո՛չ ո՛ք կարէ առնել վն նորա
պատարագ, կամ աղօթք, վն զի ՚ի մա-
հու չափ մեղս մեռաւ, և էջ ՚ի դժոխս։
և Թէ ո՛ք գող մինչ կենդանի է՝, և կամի
դառնալ առ Տր՝ զամենայն զոր գողա-
ցեալ է՝ պարտ է՝ նմա դարձուցանել առ
տեարս իւրեանց, և Թէ ո՛չ ունիցի զոր
հատուցանելոյ, պարտ է՝ նմա ունել
զյօժար կամս հատուցանելոյ, և յոր-
ժամ ունիցի, հատուցանիցէ, քանզի
միշտ պարտական է՝ հատուցանել ։ և
Թէ պարզապէ՛ս միայն վն պիտոյից և

վն

մը անձարութեան գողացաւ , կամ դրամ, և կամ կերակուր ՚ի նոցանէ , որք ունէին աւելի , ո՛չ է՛ պարտական հատուցանել : բայց եթէ ՚յայնցանէ գողացաւ, որք ո՛չ ունէին , և կամ զգործիսն նոցա , որովք զապրելիսն ըստանային , զոր օրինակ զասեղն դերձկին , զծակիչս կօշկարին , զգրիչս ՚ի նօտարին : և այլն : մահացօրէն մեղանչէ և միշտ պարտական է՛ , որ քան զհասանեաց աւելորդով հատուցանել : և թէ կինն ՚յառնէն , որդին ՚ի ծնողացն , ծառայն ՚ի Տեառն գողանան ինչ , առանց կամաց և հրամանաց մեծաւորաց իւրեանց , պարտականք են հատուցանելոյ , և թէ ո՛չ այս վերաստացելոց , և կամ զի աղտ և եղէ , որ կամիցի հատուցումն առնել , բայց ասիցէ թէ կամ տեարք ընչիցն մեռան , և կամ թէ ամաչեմ յետ տալն , նոցա պատասխան են Լ՟ծաքանքն այսպէս , եթէ մեռան նոքայ ՚յորոց զինչսն գողացար , որ քան մերձ ազգայինն ունի , նորա պարտ է՛ դարձուցանել , և թէ ո՛չ՝ ա՛պա աղքատաց բաժանել , և թէ ասէ՛ ամաչե՛մ : պարտի այնպիսի կերպիւ տալ , որ տեարքն իմանան ո՛չ , կամ տալ ուրիշին , որ նա տայ , կամ ընծայ և պարգև տալ, և կամ փոքր փոքր տալ , զինչ կերպիւ

և եղէ

և իցէ միայն թէ նոյն 'ի Տ՟ր հաստատնիցի : կարէ զայս ամենայն խոհեմ խոստովանահօր խորհրդով կատարել և հաստացուցմն առնել : Զինչ եր՟դ դուստր ագահութեան է' սուտն : Սուտն ոչ այլ ինչ է' եթէ ոչ ասել ընդ դէմ մտաց , այսինքն , յորժամ զիր ինչ հաստատես , զոր համարիս , որ ոչ է' : կամ ուրես , զոր համարիս , որ է' : և այս չէ խաբէլոյ : Իսկ սուտ ասելն պիղծ է առաջի Տ՟յ , ոպ՟ ասէ' 'յառակ՟ց . Ժբ . Պիղծք են առաջի Տ՟ն շրթունք սուտք : և նա որ հանապազ սուտ խօսի 'ի կորուստ է' վերջ նորա , քան զի ասէ' Ս՟րբն Դաւիթ , կորուսանես զամենեսեան , որք խօսին սուտ : Անանիայ և Սափիրա կին նորա ո՟չ վ՟ս սուտ ասելոյն անկան և մեռան : Եւ քան զի ամենայն սուտ ոչ է' մեղք մահու չափ : վասայնորիկ պարտ է' զսուտն բաժանել : Ս՟բն Օգոստինոս բաժանէ զսուտն 'ի վեց մասունս : ա՟. սուտնէ յուսուցմն և 'ի կրթութ՟ե ընդ դէմ հաւատոյն և օրինացն : ամենայն սուտ , որ ընդ դէմ Ոգւոյն ս՟բյ է', այսինքն ընդ դէմ հաւատոյն և կրթութ՟ե օրինացն վատթարագոյն մահու չափ մեղք է' , որպէս ստութիւն Արիոսի , և այլոց հերձուածողացն , որք սուտ խօ-

սեցան

ւեցան ընդ դէմ Ք̄ն ։ Ե. սուտն է՛, որ ոչ ումեք է՛ շահ, նաև այլոց զուարճութիւն բերէ, ոպ̄ զուր ասել ՚ի վր̄ մարդոյ, որ նուրբեամն ոչ է՛ բարի և զայլս գայթակղեցուցանէ ։ Զ. սուտն է՛, որ ումեք շահ է՛, և այլ ումեք պակասութիւն, ոպ̄ ասել սուտ ումեք, թէ ունիմ առ քեզ Ճ. դահեկան, որ յիւր կողմանէն շահ է՛, և ՚ի նորա կողմանէն վնաս և պակասութիւն ։ Է. սուտն է՛, որ սովորութիւն է՛ արարեր սուտ խօսիլն, և ՚ի խօսելոյ զսուտն շահ ոչ ունի, և զայլս ՚ի ցանկութիւն շարժէ խօսելովն ։ Ը. սուտն է՛, որ այլոց ոչ է՛ վնաս, և իւրն շահ է՛, ոպ̄ ասէ՛ առաքինաց յիմ տունս իրք չկայ ։ նուրբեամն շահ է՛, և առաքինացն ոչ է՛ վնաս ։ Թ. սուտն է՛ վս̄ փառասիրութէ, զի համբոյ լինի առաջի մարդկան ։ Առաջին . Գ. սուտքն մահու չափ մեղք են, չորրորդն երբեմն լինի մահու չափ, և երբեմն ոչ ։ Ե. րդն ոչ է՛ մահուչափ, այլ ներելի ։ Զ. Երր̄դն է՛ մահու չափ մեղք, բայց երբեմն կարէ լինել ներելի ։ Գիտելի է՛ զի ոչ է՛ պարտ ամենևին սուտ ասել, փոքր կամ մեծ, ոչ վս̄ սպանմնութէ մարդոյ, և ոչ վս̄ ընչից ։ և ոչ վս̄ փառասիրութէ, բայց որ կարէ երբեմն զճշմարտութիւն ծածկել

կամ

կամ լռել վս բարեխառնելոյ այլոց և կեն_
դանութեց : Գ. Երդ չար դուստրն ա_
գահութեն՝ է. սուտ երդնուլն : սուտ
երդնուլն է՝ երդմնազանցութիւն 'ի սուտն
հաստատելով : և այս է՝ ընդդէմ եր_
կրորդ պատուիրանին ԱՅ, որ ասէ՝ Մ՛ի
առնուցուս զանուանն ԱՅ քո 'ի վր սնո_
տեաց : և այսպիսիս պարտական է՝ մա_
հու : ընդէ՞ր : Եթէ ո՞ք զմատանի
Թագաւորին առանց հրամանի Թագա_
ւորին դնէ 'ի Թղթի , որ ո՛չ է՝ արժան
դնել , այնպիսին մահու մեռցի , զի
զհրաման Թագաւորին խոտեաց : Դար_
ձեալ Թէ զմատանին Քահանայութեան առ_
նու ո՞ք , և զԹուղԹ ումեմն մատնա_
հարէ Թէ երէցէ՝ , և ո՛չ լինի , այն_
պիսին ընդ կապանօք է՝ և անէծս ժա_
ռանգէ : և յայնժամ ո՞ք զԹագաւո_
րաց Թագաւորին , և զեպիսկոպոսաց
Եպիսկոպոսին Քրի մատնեհարն առ_
նու , որ ճշմարիտ երդմամբ հաս_
տատէ զբանս ուղիղս : Իսկ այնոքիկ ,
որք երդմնազանցք լինին , կամ զսուտ
երդնուն : կամին զի ամենաբարի և ա_
մենաճշմարիտն ԱԾ զիւրեանց չարու_
Թիւն և ստուԹիւն հաստատեսցէ ,
քանզի սուտ երդնուլն ո՛չ այլ ինչ է՝ ե_
Թէ ո՛չ զԱԾ. վկայ բերել իւրոյ չա_

րու_

րութեան։ Գիտելի է՝ զի գիրք սբք Ե. կեր-
պիւ զգուշացուցանեն զմեզ ՚ի բաց կալ
յօժարութենէ երդմանն, և զսէր երդմանն
՚ի մէնջ հեռացուցանել։ Նախ սբն Յա-
կոբոս եղբայր Տն կամելով հեռացու-
ցանել ՚ի մէնջ զամենայն փափաք և ցան-
կութիւն երդմանն, այսպէս առաքելա-
կան սիրով մեզ հրամայէ։ Յառաջ քան
զամենայն ինչ եղբարք իմ մի՛ երդնու-
ջուք, մի՛ յերկինս և մի՛ յերկիր՝ մի՛
յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր՝ այոն,
այո՛։ և ո՛չն, ո՛չ։ զի մի՛ ՚ի կեղծաւո-
րութիւն ինչ անկանիցիք։ Թէ որքան զգու-
շանալի է՝ յերդմանէն, այս քան բանիւ
առաքելոյս պարտ է՝ վերանկատել, մա-
նաւանդ այն որ ասէ՝ յառաջ քան զա-
մենայն։ և այլն։ Բ. զգուշութիւն է՝ մի՛
ուսուցանել զբերանն իւր հանապազ
յերդումն։ վսյ Սիրաք. իգ. գլ. Թ.
համր. ասէ՝ երդման մի՛ ընդելացուս-
ցես զբերան քո, զի բազում վրիպումն
է՝ ՚ի նմա։ Գ. զգուշութիւն է՝ մի՛ երդ-
նուլ առանց մեծի հարկաւորութեան, և
այն ճշմարտապէս ամենևին իմն, և վս
հաստատելոյ զճշմարտութիւն։ և ո՛չ եր-
բեք սուտ։ որպ ասէ՝ Երեմիայ. Դ. գլ.
Բ. համր. և երդնուցու եթէ կենդանի
է՝ Տր ճշմարտութբ և իրաւամբք և ար-
դարու-

դարութ՟ք, օրհնեսցեն նովաւ ազգ, և նովին գովեսցեն ։ Դ. զգուշութ՟ին է՛, մի՛ վ՟ս ամենայն դատարկ բանի երդնուլ, զի անհաճոյ է՛ Ա՟յ, ոպ՟ս ասէ՛ Մովսէս ՚ի յեր֊կրդ օրէն . Ժա. Հմր. Մի՛ առնուցուս զանուն Տ՟ն Ա՟յ քո ՚ի վ՟ր սնոտեաց, զի ո՛չ սրբեսցէ Տ՟ր Ա՟ծ քո զայն՝ որ առնու֊ցու զանուն նորա ՚ի վ՟ր սնոտեաց ։ Ե. զգուշութ՟ին է՛ որ ամենևին պարտ է՛ պահել, քան զի Ք՟ս ինքն Տ՟րն ևս ա֊մենօրհնեալ ան սուտ բերանովն պա֊տուիրեաց Մ՟տթէի . Ե. Գլ. Հմր. Լդ. այսպէս ։ Դարձեալ լուարուք զի ա֊սացաւ առաջնոցն՝ մի՛ երդնուցուս սուտ բայց հատուսցես Տ՟ն զերդմունս քո ։ Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդ֊նուլ, մի՛ ՚յերկինս՝ զի աթոռ է՛ Ա՟յ, և մի՛ ՚յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, և մի՛ ՚յԵ՟մ, զի քաղաք է՛ մեծի արքայի ։ և մի՛ ՚ի գլուխ քո երդնուցուս՝ զի ո՛չ կարես մազ մի՛ սպիտակ առնել կամ Թուխ ։ Ահա այս քան կերպիւ Տ՟ր արգելէ զմեզ ՚յերդնլոյ, և ամփոփա֊կէ զամենայն մուտ երդմանն, ասելով Թէ ամենևին մի՛ երդնուլ . Իսկ եզ կերպ խօսելոյ մեզ պարզաբա՛ր և յստա֊կօրէն և միամտաբար՛ ուսուցանէ, ա֊սելով . Այլ եղիցի ձեր բան այոն, այո՛,

և ոչն,

և ո՛չն , ո՛չ ։ զի ամենեքին քան զայն ՚ի
չարէն է՛ ։ և այս բան արգելմունս երդ‐
մանցն եթէ Տ͞րն և եթէ աշակերտքն
իւր և ո͞րք Հետևողքն , վս͞ն երդ‐մն , զի
մի՛ արհամարհեսցի պատիւ արարչին
մերոյ սուտ երդ‐մամբն , և եկցէ ՚ի յայն‐
մանէ կուապաշտութի ։ Եօթն ե͞րդ‐
դուստր ագահութե͞ է՛ առնել զխաբէ‐
ութի ՚ի գնելն և ՚ի վաճառելն , գնելն ,
և վաճառելն ըստինքեան արդ‐արապէ՛ս
բարի է՛ , քան զի կամի Ա͞Ծ զի ամենե‐
քեան բարեպէ՛ս , և արդ‐արապէ՛ս ապրի‐
ցին ըստ իւրաքանչ իւր պիտոյից ՚ի յայսմ
աշխարհիս ։ Իսկ որք զխաբէութի առ‐
նեն ՚ի գնելն , և ՚ի վաճառելն՝ այն չար է՛
առաջի Ա͞Յ ։ քան զի արդ‐ար է՛ Տ͞ր և
զարդ‐արութի սիրէ ։ ե͞· կերպիւ արատ‐
քին և վնաս ՚ի գնելն , և ՚ի վաճառելն ,
ա͞· յորժամ ո՛ք ջանայ յոյժ գնով վաճա‐
ռել զիրն որ չափ կարէ , և ո՛չ հայի թէ
արժէ այն քան , թէ ո՛չ ։ և տգետ գնո‐
ղի ծանրագին վաճառէ , կամ ՚ի տգետ
վաճառողէ թեթևագին առնու զիր ինչ ,
որ ծանրագին է՛ , և այսպիսի գործոյս
հեռի է՛ ուղղութի և արդ‐արութի ,
և հետևապէս Ա͞Ծ հեռի է՛ ՚ի յայնպիսի
գնողէ և վաճառողէ ։ բ͞· սուտ ասելն ։
գ͞· սուտ երդ‐նուլն ՚ի գնելն , և ՚ի վա‐
ճա‐

ճառելն, որ յոյժ յիմարութիւն է՛, քանզի չեւ պարտական թէ ասեմ այս քան զնեցի, որ նեղն ընկնիմ, և սուտ ասեմ, կամ սուտ երդնում, այլ պարտիմ ասել ես այսքան ծախեմ ։ և այլն ։ Դ. ՚ի չափելն և ՚ի կշռելն, որ զկանոնն պակաս դնէ, կամ զքարն ։ Ե. որ զիւրն այլ այլէ, և փոփոխէ ։ զչորն, թաց առնէ, որ ծանր լինի, կամ զհինն ՚ի նորի տեղ ։ և զվատն լաւի տեղ վաճառէ ։ Զ. որ վաճառէ պայմանաւ աւելի, որ է՛ շահ առնուլն ։ կամ զայլ իրք ցուցանէ, և զայլ իրք տայ գնողին ։ զորօրինակ ոսկի ցուցանէ՝ և արծաթ տայ նմա, կամ զարծաթ ցուցանէ՝ և կլեկ տայ ։ կամ լաւն ցուցանէ՝ վատթարն տայ ։ և այլն ։ Է. որ զվատութիւն և զպարատութիւն վաճառած զատին՝ գաղէ և ծածկէ, թէ կերակրեղէն է՛ որպէս ցորենոյ, գինոյ, ձիթոյ, իւղոյ, մսի և այլ ։ թէ հանդերձեղէն է՛, որպէս կտաւոյ, չուխի, տիպակի, մորթոյ և այլն ։ և թէ վայելելոյ է՛ որպէս ձիոյ, ապարանկի, տան և այլն, և կամ այլոց իրաց զպակասութիւն թագուցանէ ։ Ը. որ զիւրս ճշմարտակարս, ՚ի մութն և ՚ի խաւարի տեղ վաճառէ որ գոյնն ոչ երեւի, և այս քան զամենայն չարագոյն է՛ զի որ զչար գործէ ատեայ զլոյսն

և ո՛չ գայ առ լոյսն զի մի՛ յանդիմանա-նեսցին գործք նորա ։ Ութերորդ դուստր ամբարտաւանութեան է՛ կաշառ առնուլն , և այս է՛ մեծ անիրաւութին , զի վասն մամոնա-ոյ շահի , կամ դրամի զճշմարտութին ստեն , և զարդար դատաստանն ծռեն , զորբն և զայրին զրկեն , և ո՛չ առնեն իրաւունս , զոր հրամայական սաստեցո-ղութբ գոչէ Տէր սբ Եսայի Մարգա-րէին բերանովն , ա․ գլ․ ժէ․ հմր ։ խնդ-րեցէք զիրաւունս , փրկեցէք զզրկեալն , դատ արարէք որբոյն , և տուք իրաւունս այրւոյն ։ և յոյժ յիմարէ այնպիսին , որ վասն դատաստանի և կամ վասն այլ քարե-րարութին առնելոյ միոյն՝ առնէ կաշառս , և զրկէ զմիւսն , լուծցէ զինչ ասէ՛ նմա Յոբ․ Ժե․ Գլ․ Լդ․ Հմր․ Հուր այրես-ցէ զտունս կաշառ առուաց ։ և քահա-նայքն և ս յորժամ առնուն ՚ի ժողովրդե-նէն զողորմութին թէ վասն նոցա արտա-ցեն աղօթս , և պատարագս , և ո՛չ առ-նեն՝ այնպէս կաշառ է՛ ։ քանզի վս յն-տայ ժողովուրդն քահանային , զի վասն նո-րա առաջի Այ խնդրեսցէ զմեղաց թո-ղութին , կամ զայլ քարերարութին , և քահանայն ո՛չ առնելով զայս , զրկեալս առնէ տուողին , զի զինչս նորա առ-նու , և վասն մեղաց նորա ո՛չ մատուցանէ , կամ

կամ աղօթէ , նորա մեղքն մնան 'ի նորին
վերայ , և այսպէս նոքն ունին , որպ ասէ՛
Ովսեայ . Դ. Գլ. Ը. Համր. Զ մեղս ժո-
ղովրդեան իմոյ կերիցեն , և անիրաւու-
թեանց նորեանց առցեն զանձինս նորեանց:
և սոյնպիսի քահանայքն միշտ զհաց մե-
ղաց ուտեն , և հետևապէս զհաց ցա-
ւոց : Այլ զարդուցանէ զնոսա 'ի յայս
մահացու նիրհմանէս առաքեալն մար-
գարէն ասելով այսպէս : Արդ՝ արիք
մինչ չև էք ննջեցեալք , որք ուտէք զհաց
ցաւոց : այսինքն , արդ այժմ , արիք ելէք
արիք լերուք : մինչ չև էք ննջեցեալք ,
մինչ չև էք մեռեալք : զպարտս հատու-
ցէք , զքէ պատարագս մատուցէք , զա-
ղօթս արարէք , դուք՝ որք ուտէք զհաց
ցաւոց , այսինքն , զգին մեղաց ժողո-
վրդեանն : Ամենէրդ և վերջին չարագոյն
դուստր ագահութեան է՛ անգթութիւն , և
այս է՛ մին այնպիսի չար խոճ և սէր պա-
հելոյ ընչից ոսկոյ , և արծաթոյ , որ
զմարդն բազում և ազգի ազգի փոր-
ձութեց , վշտաց և նեղութեց հասու-
ցանէ , և այս է՛ սկիզբն ամենայն չա-
րեաց , ըստ նոյն Պօղոսի , որ առ Տի-
մոթէոս առաջին Թուղթն , Զ. Գլ. Ժ.
Համր. ասէ՛ այսպէս : Զի արմատ ա-
մենեցուն չարեաց արծաթսիրութիւն է՛ ,

որում ոմանց ցանկացեալ վրիպեցան ՚ի հաւատոցն, և զանձինս արկին ընդ բազում ցաւօք ։ Հաստատէ բանս այս օրինակն Յուդայի, որ վ՟ս արծաթսիրութե մատնեաց զՏ՟րն իւր, ապա յուսահատեալ խեղդեցաւ ։ վա՜յ, որ այս քան չար է՛, և վնասակար չարահընար ախտս այս ագահութե, հանդերձ ամենաչար դստերօքն իւրօք, պարտ է՛ Ա̅ծասէր քրիստոնէից, սաստկապէս ատել զսա, և ամենայն արիութբ և ջանիւ փախչիլ ՚ի սմանէ և երթալ զհետ առատաձեռնութե և ողորմածութե, արդարութե և ճշմարտութե, և մանաւանդ զմտաւ ածել զԱ̅ծային բանն այն, զոր ՚ի նոյն գլ. ՛Նախադրէ սոյն սբազան առաքեալն, ասելով այսպէս Այլ շահավաճառ մեծ Ա̅ծ պաշտութի է՛ բաւականութբ հանդերձ ։ զի ո՛չ ինչ բերաք ՚յաշխարհ, և ո՛չ տանել ինչ կարասցուք ։ Այլ ունիմք զկերակուր և զհանդերձս, և այնու շատասցուք ։ Վայն բոլորով սրտիւ աղաչեսցուք զբարեգութ և մարդասէր փրկիչն մեր Ք̅ս զի զմեզ իւր ամենամեծ ողորմութբն, և շնորհիւն ազատեսցէ ՚յայս ամենաչար ախտէ ագահութե, որում պատիւ և փառք յաւիտեանս ։ Ամէն ։

# Գ՛ ՈՐԿՈՐԱՄՈԼՈՒԹԻՒՆ ։

որ է՛

ԱՅՍ երրորդ գլուխ մեղապարտին ։ որկորամոլութիւն նոյն է՛ որովայնամոլութի, և սա է՛ բերան և դուռն ամենայն մեղաց ։ վասնզի ընդ դէմ սորա եդ ԱԾ զառաջին պատուիրանն, ո՛չ ուտել 'ի պտղոյն ։ որպէս ցուցանէ գիրքն ծննդոց ։ գլ. բ. համր. ժզ. Եւ պատուիրեաց Տր ԱԾ Ադամայ և ասէ ։ 'յամենայն ծառոց որք են 'ի դրախտի ուտելով կերիցես ։ բայց 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի մի՛ ուտիցէք, զի 'յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ՝ մահու մեռանիցիք ։ բայց նախ պարտ է՛ գիտել թէ զինչ է՛ որովայնամոլութիւն ։ որովայնամոլութիւն է՛ անյագապէս ուտելոյ տռփումն, այսինքն, ցանկալ լնուլ զորովայնն կերակրօք անյագապէ՛ս և անկարգաբա՛ր ։ և այս է՛ ընդ դէմ բնութեան, քան զի բնութիւն սակաւ ասէ զաւելորդն ։ և է՛ ընդ դէմ ԱՅ՝ քանզի ԱԾ կարգ և չա՛փ եդ ամենայն ըստեղծուա-

ծոց նորոց , և ոչ գրէ մեք առաքեալն Պօղոս առ կորն. Ժդ. գլ. Խ. համր. և ամենայն ինչ ձեր պարկեշտութբ և ըստ կարգի լինիցի ։ Է՛ ևս ընդ դէմ եղբօրն և ընկերին , զի նոր անչափ ուտելովն և ըմպելովն գայթագղեցուցանէ զմերձաւոր ընկերն իւր , և մանաւանդ է՛ ընդ դէմ իւր հոգւոյն և մարմնոյն , զի վնասէ , և ՚ի մէջ վտանգի ձգէ զինքն , և երբեմն վս անյագ ուտելոյն և ըմպելոյն , ՚ի մէջ մեծամեծ նեղութեց և փորձութեց անկանի ։ ընդ դէմ ևս է՛ բնութե , վս զի բնութիւն և Տր բնութեն Ած զբերան անբան անասնոցն , և այլոց կենդանեացն մեծ լայն և դէպ ՚ի վայր ըստեղծեաց , իսկ զմարդոյն բերանն նեղ փոքր , և դէպ ՚ի վեր ըստեղծեաց , և նորա , որք անյագ և անչափ ուտեն և ըմպեն , ոչ զանազանին ՚ի յանբան կենդանեաց , և հետևապէ՛ս կորուսանեն զբանականութիւն իւրեանց ։ դարձեալ է՛ ընդ դէմ Ած , ՚Նախ քան զի որկորամոլն Թողու զառաքինին իւր և զօրովայն իւր պաշտէ , որոց վս երանելին Պօղոս լալով խօսի , առ փիլիպպեցիսն , գ. գլ. ԺԹ. համր. ( բայց արդ՝ և լալով խօսի ասեմ ) զԹշնամեաց խաչին Քի ։ որոց կատարածն կորուստ է՛ , որոց Ած որովայնն

վայնն է՛ , և փառք ամօթն իւրեանց : որք զերկրաւորս ևեթ խորհին : 'ի վե-րայ այսմ բանի ասէ՛ սբն Օգոստինոս , թէ մարդիկք զայն իրքն պաշտեն , որք քան զամենայն իրս առա́ւել սիրեն : երկրորդաբա́ր է՛ ընդ դէմ Քի որովայ-նամոլութիւն , քան զի սէրս քրիստոնէին է՛ տաճար Քի : որպ քարոզէ Պօղոս ա́ռ կորնթ. Երկրդ. գ. գլ. ժզ. համր. ապաքէն դուք տաճար Քի կենդանւոյէք , որպ և ասաց Քս թէ բնակեցայց 'ի նոսա , և այլն : և ա́ռ կորն. առաջին թուղթն. գ. գլ. ժզ. համր. ո́չ գիտէք՝ եթէ տա-ճար էք Քի , և Ոգի Քի բնակեալ է՛ 'ի ձեզ : զայս ցուցանեն վկայութիւնք սբյս թէ պարտի բարի քրիստոնեան նախկնա-պէ՛ս և գլխաւորապէ՛ս հոգալ զայն՝ , որ Քի պատկանի , այսինքն , որ պահել զանձն , զաղօթս առնել , որպ արժան է՛ տաճարն Քի , քանզի ասէ՛ Բն Տրն մեր տուն իմ տուն աղօթից կոչեսցի : իսկ որք հեռանին որկորամոլութե , և զո-րովայնն խնձոյեն և պարարեն , այ-սինքն , ընուն զորովայնն իւրեանց առ-կարգաբա́ր ո́չ կարեն երբէք աղօ-թել , և կամ 'յերկար ժամանակ որք կեալ , և սրբութբ ապրել , ապատու-քեմս , անեղն աղօթից , ա́ռ աղանօք

ճանանի , այսինքն , ազգի ազգի յափշտա-
կութ̄ք , և զրկանօք , և տաճարն Ա̄յ պղ-
ծի , կերպիւ կերպիւ աղտեղութ̄ք և
անմաքրութ̄ք , այսպէս որկորամոլութ̄ն
ածէ զմարդն 'ի յորովայնա պաշտութ̄ն ,
և այսպէս այնու հետև ոչ զԱ̄րարիչն
իւր , այլ զորովայնն պաշտէ , և 'յ ամե-
նայն պահու , 'յորում զորովայնն լնու-
անչափապէ՛ս , զոհս և մատաղս մատու-
ցանէ որովայնին իւրոյ և գոլոշիք կերա-
կրոցն և գինւոյն՝ ծուխ խնկոցն է՛ վ̄ն
իւրոց կռոց ։ Ա̄յլ ևս ընդդէմ է՛ ըն-
կերին իւրոյ և մերձաւորին ախտն որ-
կորամոլութ̄ն , քանզի չար օրինակ տայ
և զրկումն առնէ այլոց ։ որ̄պ ասէ՛ 'Դա-
ւիթ գերեզման բացէ՛ կոկորդ նոցա ։
քանզի որ̄պ բաց գերեզմանէն գարշելի
հոտ գայ , և զազիր երևի մարդոյ՝ այս-
պէս , որ լիապէ՛ս յագեալ է՛ և արբեալ
գարշելի հոտ գայ , և մարդիկ զզուին
'ի նմանէ , այսպէս չար օրինակ լինի նո-
ցա , և գայթագղեցուցանէ զնոսա ,
որ յոյժ լա՛ւ էր նմա , եթէ վէմ երկա-
նաքար կախէր զպարանոցէ , և անկա-
նէր 'ի ծով ։ քան թէ գայթագղեցուցա-
նէ զմի 'ի փոքրկանցս յայսցանէ , որպէս
ասէ՛ Տ̄րն մեր 'ի Ղուկս . Ժէ . բ . Համր .
և տես որպէս ամենօրհնեալ և ամենատր̄

վար-

վճարողապետին հետևի, և համաձայնի ամենաքաջն առաքելոյն Պօղոսի, որ 'ի առաջին կոր՟ն. Ը՟. Գլ. Համր. Ժգ. արտաքարշելով զմեզ 'ի գայթագղեցուցանելոյ հոգւով սրբով այսպէս խօսի ։ Վ՟ն թէ կերակուր գայթագղեցուցանէ զեղբայրն իմ, ո՛չ կերից զմիս յաւիտեան ։ զի մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից ։ յայսցանէ յայտ է՛ թէ որքան ծանրագոյն մեղք է՛ որկորամոլութիւն և մահացու, զի ածէ զպատուէրն Ա՟յ, այսինքն, զեղբայրն իւր 'ի գայթագղութիւն ։ որ ըստուգիւ պատուէր և գործ Ա՟յ է՛, որ գայթագղեցուցիչ ոչ՟ թէ քանի, վա՟յ սոյն առաքելոյն 'ի հռոմ՟ց, Ժդ. Գլ. Ի. Համր. պատուիրէ ասելով՝ մի՛ վ՟ս կերակրոյ քակեր զգործ Ա՟յ ։ ապա յետ սակաւոյ, յորդորէ այսպէս՝ լաւ է՛ ո՛չ ուտել զմիս և ո՛չ ըմպել զգինի, և ո՛չ՝ որով եղբայրն քո՛ գայթագղի, կամ գթէ, կամ տկարանայ ։ Արդ պարտ է՛ ապաւուրեմն ամենևիմք զգուշանալ 'յ որկորամոլութ՟է, և անկարգ ուտելոյ և ըմպելոյ զի մի՛ գայթագղեցուսցուք զեղբարս. և զմնկերս մեր ։ Արդ 'յ այսմանէ ամենաչար և մահաբեր մօրէ որկորամոլութ՟է ծնանին. Է. ամենաչարք, և անհիծեալք դստերք, առաջին դուստրն է՛, յորժամ

ո՛ք

ո՛ք նախ քան զժամանակ հասցեն ուտել ,
զայնպիսիսն յանդիմանէ Աղոտս ։ յեկեղե֊
սիաստիկեայ . Ժ. գլ. Ժզ. Հա͞մր . վայ
քեզ քաղաք , որոյ թագաւոր քո մա֊
նուկ է՛ , և իշխանք քո ընդ առաւօտս
ուտեն ։ Հոգևորապէ՛ս քաղաքն նշա֊
նակէ զմարդն , զի որպ͞ ՚ի քաղաքն են բա֊
զում ժողովուրդ ՚ի՛ներքոյ միոյ հրամա֊
նի և դատաւորի ։ Նոյնպէս ՚ի մարդս
են բազում յօժարութիւք , և ախտանք ,
բազում զգայութիւք , որք պարտին լի֊
նել ՚ի ներքոյ բանականութեան , որ է՛
գլուխ և թագաւոր ՚ի մարդս , և զա֊
մենայն կարգաւորէ , և պատժէ զայն
որ սխալէ ։ այսպէս բանականութեան
պարտ է՛ կարգաւորել զորովայնն զի պար֊
կեշտ լիցի , և զժամանակն պահեսցէ և
նախ աղօթս արասցէ , և զզգայսն Ե͞յ
կատարեսցէ և տայ ՚ի պարգևացն Ե͞յ
վայելեսցէ պարկեշտութ͞բ ։ զի մի՛ մե֊
ղանչիցէ , օրինակ ուսանիք ՚յ այսմ ՚յ առա֊
ջին Թգ͞րթց . Ժդ. գլ. յորժամ Սաւուղ
պատերազմէր ընդ այլ ազգիսն , հրա֊
մայեաց զօրացն , ո՛չ ուտել մինչև ցե֊
րեկոյն , և այսպէս ամենայն ժողովուրդն
հնազանդեցաւ թագաւորական հրա֊
մանին , իսկ Յովնաթան որդին նոր , չէր
լու՛եալ՝ եթէ երդմնեցոյց հայր նորա

զժո֊

զժողովուրդն , որպ՟ ասէ՛ Ա՟Ծաշունչն : և
կառկառ զծայր գաւազանի իւրոյ որ 'ի
ձեռին իւրում , և եհար 'ի խորիսխս մե_
ղու , և դարձոյց զձեռն իւր 'ի բերան
իւր : այսինքն , սակաւ ինչ մեղր ետես ,
էառ և եկեր : և յորժամ լո՛ւաւ զպայս
հայրն իւր : որ յետ բազում բանից 'ի
նոյն գլուխն : հետևի այսպէս : Եւ
ասէ՛ Սաւուղ ցՅօնաթան : պատմեա՛
ինձ՝ զինի՞չ արարեր : և պատմեաց նմա
Յօնաթան և ասէ՛ , ճաշակելով ճաշա_
կեցի ծայրիւ գաւազանին , որ 'ի ձեռին
իմում զսակաւ մի՛ մեղր : և ահա մեռա_
նիցի՞մ ես : Եւ ասէ՛ Սաւուղ ծնևծն
արասցէ ինձ Ա՟Ծ և ծնևծն յա՛ւելցէ ,
եթէ ո՛չ մահու մեռանիցիս այսօր : յայ_
սմանէ յայտ է , թէ որ քան վտանգ է՛
ճաշակելն առանց կատարելոյ նախ զգոր_
ծն Ա՟Յ : և ապա՛ ուտել : Եկիր դուս_
տր որկորամոլութեան՛ , որ զփափկու_
թի կերակրոցն խնդրէ 'ի վեր քան զկար
իւր , և յորժամ չկարէ գտանել տրտն_
ջայ , որպ՟ որդիքն Իսրայէլի 'յանապա_
տին , 'յորում զմանանայն ուտէին , տր_
տնջէին , թէ ո՛չ կարեմք կեալ այս կե_
րակրովս , ետ նոցա Ա՟Ծ լորամարգ , և
կերան յագ : բայց բարկութիւն Ա՟Յ եկն
'ի վերայ նոցա , և սպան զբազումս 'ի
նոցա_

նոցանէ ։ Նոյնպէս այժմ բազումք ո՛չ հաւանին հասարակ կերակրօք լնուլ զքաղցս իւրեանց, այլ խնդրեն զքաղցրահամ խորտիկս, որ ՚ի վեր է՛ քան զապրելոյն իւրեանց, նոքա մեղանչեն ։ Եւ եթէ քան զչափն առաւել տամք մարմնոյս մերոյ, մեզ թշնամութի առնէ եւ զինի ընդդէմ հոգւոյս մեր, այլ պարտիմք տալ այն քան կերակուր, որ ո՛չ տկարանայ, եւ ո՛չ ուժովանայ ։ Եւ վ̄ս փափկութե կերակրոյն ասէ՛ սբ̄ն Բեռնարտոս, բաժանական է՛ թէ լիցի կերակուր ինչ՝ եւ ո՛չ է՛ պարտ, թէ լիցի յոյժ համով ։ Եւ յորժամ բառնեմք զմարմինս մեր զանազան եւ ազնիւ կերակրովք սովորի, եւ հանապազ խնդրէ, ոպ̄ ձի, շուն, եւ կամ այլ անասուն ումեմն, որ յորժամ սովորի ՚ի միս, եւ ՚ի վատթարութի ինչ, յոյժ դժուարին է, դարձուցանել զայն ՚յ այն չար սովորութէն, այսպէս եւ մարմին մեր, յորժամ պարարտացեալ եւ բառնեալ անկանի ՚յ աղտս եւ ՚ի չարաչար սովորութիս, եւ ապա դժուա́ր թէ անհընարէ բերել զնա՛ առ սովորութիւն բարի ։ վասնորոյ պարտ է՛ զգուշանալ ՚ի փափկութէ կերակրոցն ։ Երրորդ դուսար որովայնամոլութէ է՛ յոլով ուտելն եւ ըմպելն ։ Եւ այս յոյժ ներհակ է՛ բնու-

թէ,

թե, զի ոչ հանդարտ անձրեւն շահա-
կանէ՝ անդոց, եւ սերմանց, բայց յոյժ
սաստիկն ճմլէ, եւ կորուսանէ զսեր-
մն եւ ապականէ զերկիրն: Այսպէս
չափաւորապէ՛ս ուտելն եւ ըմպելն, բարի է՝
զի պահէ ամբողջ զմարմինն: Իսկ ան-
չափ ուտելն եւ ըմպելն ճմլէ եւ ապա-
կանէ զմարմինն: Նախ զի ածէ զնա ՚ի
ներքոյ ազգի ազգի ցաւուց եւ հիւանդու-
թեց: Երկրորդ կարճէ զժամանակն եւ զկե-
անսն իւր, որպէս ասէ՝ Սենեքայ իմաս-
տասէր, սակաւք ՚ի մարդկանէ հասա-
նեն ՚ի թիւս ժամանակաց ծերեանց, զոր
բնութիւն յաջողէ, վա՛ս անյագ ուտե-
լոյն: Եւ ասէ՝ թէ ո՛չ կամի յերկարա-
կեաց լինել՝ զգուշասցի ՚ի յոլով կերակրոց:
Չորրորդ դուստր որովայնամոլութե՛ է՝
ջանք եւ հոգք առնել զբազում խորտիկս
պատրաստել եւ ՚ի յայս հոգս զժամա-
նակն կորուսանել, զոր մեզ տուեալ է՝
Ած, զի զբարիս գործեսցուք, եւ սր-
բութեամբ ապրեսցուք, եւ իմաստութե՛
հետեւեսցուք: Յայսպիսի մեղքս էին որ-
դիքն Հեղեայ, որք հանապազ հոգս
առնէին կերակրոցն եւ մսոյ եւ, ՚ի զոհելոցն
աւելի առնէին, եւ ո՛չ հաւանէին, զոր
Ած պատուէրեալ էր նոցա, բռնութե՛ եւ
ուժգին առնէին զմիս ՚ի ժողովրդենէն

զայ.

զայլայլուցանէին զնոսա , բայց առա֊
ւել բարկացուցանէին զԱ՟ծ , վա՟յ որ՟ց
ասէ՛ առաջին Թգրթց · Գլ· Բ· Համր·
ԺԷ· Թէ կամելով կամէր Տ՟ր եղծանել
զնոսա : որ՟ք և պատժեցան յԱ՟յ : ուս֊
տի յայտ է Թէ , ծանր մեղք է՛ քանզի չա֊
փն առաւել վ՟ն ուսելոյ հոգս տանելն :
և այսպիսիքս նմանք են անասնոց , որք
ո՛չ ցանկան իմաստութե , այլ զտիւ և
զգիշեր ցանկան կերակրոց , և ամենև
ինք զծառայելն Ա՟յ Թողուն , և քան֊
զի Ա՟ծ սահմանեալ է՛ պատշաճաւոր
ժամանակ , յորում մարդ զիւր կարևոր
պէտքն ուսելոյ և ըմպելոյ հոգասցէ , և
զմնացեալ ժամանակն տացէ 'ի սպա֊
սաւորութիւն Ա՟յ , և 'ի խնդրել զի֊
մաստութի : Ե· Երր՟ դուստրն որկորա֊
մոլութե է՛ , անկարգ և անխտիր ուտելն ,
և որ՟ք զայլ յափշտակելն , երևելով Թէ
քնաւ ո՛չ յագի , այսու մեղաւ և վաճա֊
ռեաց Եսաւ զանդրանկութիւն Յակո֊
բայ , զի ո՛չ ժուժկալեաց սակաւ սովոյն ,
և այսու ճանաչի անպայտ ուտելն, զի յոր֊
ժամ որկորամոլն տեսանէ զկերակուրն , և
զըմպելին դողայ ձեռն , որպէս Ջերմա֊
տի , և զինքն վստահ ընկենու 'ի սեղան,
որպէս կատու , և այն չափ անյագապէս
ուտէ , որ ո՛չ կարէ ծամել և մարսել :

ընդ դէմ ապաշխարեաց ասէ՛ մեծն Բեռ-
նարդոս և դնէ կանոնս այսպէս, թէ
՚յամենայն պատարագի մէջ մին տուն Սաղ-
մոս ասէ՛, կամ ողջոյն Մարիամ, մին-
չև ՚ի սահմանն և ՚ի չափ. և մեծն Օգոս-
տինոս ասէ՛, ո՛չ է՛ պարտ զականջն խզել
և ՚ի կար ուտել, այլ սրբել զականջն ՚ի
լսել զբանն Ա՟յ։ վասն սովորութեան
կարգաւորեալ տեղեաց յորժամ ՚ի սե-
ղան նստին, մինն զգիրս հոգևորս,
կամ զպատմութիւն և զվարս սրբոց հարց
ընթեռնու և այլքն լսեն։ և թէ գիրք ո՛չ
լինի սաղմոսատուն ասէ՛, կամ ողջոյն
Մարիամ։ և թէ պէտք է՛ այս կարգ և
կանոն կրօնաւորաց։ նոքայ որք ՚ի մէջ
աշխարհի են; և բարի քրիստոնեայք,
թէ այսպէս ո՛չ կարեն առնել, պարտին
յորժամ ուտեն զբանն ինչ հոգևոր քաղ-
ցրութեամբ և համառօտապէ՛ս ընդ միմեանս
խօսակցիլ, և թէ գիտուն լիցի ՚ի միջի
նոցա խօսեսցի այլքն ունկն դիցեն։ և
թէ ո՛չ զԱ՟ծն ամենաբարին այն բան
բարեաց պարգևողն օրհնեսցեն զմիմեա-
ցեն, և շնորհակալ լիցին, և զխրատս
վերս առաքեսցեն որպ ասէ՛ մեծն Պօղոս,
Որ՝ եթէ ուտիցէք, և եթէ ըմպիցէք,
եթէ զինչ և արասջիք զամենայն ինչ ՚ի
փառս Ա՟յ արասջիք։ Վեցերորդ դուստ
ուր-

որովայնամոլութեան է՝ բազում անգամ ՚յաճախուրն ուտելն, և այս Թշնամի է՝ բնութեան, քան զի ասեն բժիշկք թէ կերակուր ՚ի վր̃ կերակրոյ ապականէ զբնութիւն, վ̃ս զի ՚ի բազում անգամ ՚յաճախուրն ուտելոյն, ստամոքսն տկարանայ և ո՛չ կարէ բարեպէս մարսել զկերեալսն, վասն այն փութով ապականի, և կարճի բնութիւն ։ իսկ եթէ մարդ, որ կարգաւորեալ ունի իւր բնութիւն, նմա պարտ է՝, որ ՚յաճախուրն միանգամ, կամ երկիցս զհաց, և զկերակուր ճաշակել զի առողջ և ամբողջ մնասցէ ։ իսկ եթէ ՚յաճախուրն բազմիցս ուտիցէ, զատ նորա բնութեան ապականութեան, այնպիսի մարդն նմանէ անասնոյ, և այս ծննանի ՚ի պարապորդութէ և ՚ի դատարկութէ, որպ̃ ասէ՝ Սողոմոն ՚յառակսն, ցանկութիւք սպանեն զվատս (այսինքն զպարապորդսն) զի ո՛չ յօժարին ձեռք նորա գործել ինչ ։ և այսպէս զօրն ամենայն դատարկութբ, և պարապութբ շրջի, և յամենայն ՚յոչինչ ցանկութիւնս, ամենայն ընդգայյարանօքն, ականջն ՚ի լսել զայլև այլ համբաւս աշխարհիս ։ աչքն ՚ի տեսանել զվայրապարիս, և զունայնութիւնս, բերանն ՚ի զանազան կերակուրս ։ և այլն ։ և սոյնպիսին, ո՛չ զերանելին, այլ

զվա՛յն

գլխոյն ընդունելի ՚ի Քրիստոսէ , քանզի ասէ՛
Քրիստոս , Ղուկաս . Զ. ԻԵ. համր. վա՜յ ձեզ,
որք յագեցեալքդ էք այժմ , զի քաղցիցիք ։
նոյն զերանելին եւս նախ ՚ի սոյն գլ. Իա.
համր. այսպէս երանէ՝ որք քաղցեալք են
այժմ, զի յագեսցին ։ Եօթն երրորդ դուս-
տր որկորամոլութեան է՛ , յորժամ ոք ո՛չ
հաճանի , եւ ո՛չ բաւականանայ մի՛ ազգ
կերակրոյ , այլ զզանազան , եւ զանու-
շահամ կերակուրս ջանայ ։ Յայս մե-
ղքս էր մեծատունն այն , որ պատմէ
Ղուկաս գլ. ԺԶ. համր. ԺԹ. որոյ դրանն՝
կայր աղքատ ոմն անուն Ղազարոս ,
եւ սա՛ ցանկայր յագել ՚ի փշրանացն՝ որք
անկանէին ՚ի սեղանոյ մեծատանն ։ բայց
ո՛չ ոք տայր նմա ։ եւ այս մեղքս է՛ ընդ-
դէմ Աստուծոյ , եւ ընդդէմ բնութեան , քանզի
զանազան կերակուրքն ծանրացուցանեն
զսիրտս մարդկանց , եւ թուլացուցանեն
զնոսա եւ յամս ծոյլս առնեն , ՚ի պա-
տուիրանապահութենէն Աստուծոյ ։ եւ ՚ի մտա-
ծելոյ զօր մահուան եւ դատաստանին,
վասն որոյ հրամայէ մեզ Քրիստոս ՚յ իւր սուրբ աւե-
տարանին ըստ Ղուկասու , գլ. Իա.
համր. ԼԴ. այսպէս , Զգոյշ լերուք ան-
ձանց , գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր
շուայտութեամբ եւ արբեցութեամբ , եւ հոգովք
աշխարհականօք , եւ յանկարծակի հա-



սանիցէ

սանեցի ՚ի վր̅ ձեր օրն այն ։ այսինքն, որ մահուան և դատաստանին ։ ընդ դեմ է՛ բնութե̅, քան զի ամեն բժիշկք թէ զանազան կերակուրն տկարացուցանէ զկազմուած մարդոյն ։ զոր օրինակ ե-թէ որք ՚ի մի՛ ժամու ուտէ ձուկն, կաթն, միս, և այլ զանազան իրք, իւր ստա-մոքսին յոյժ վնաս հասուցանէ քան զի այս զանազան կերակուրքս՝ զզանազան ծամկուճս, և մարսել խնդրեն ։ վս̅ յն տայ ինքն իւր բնութին խոտէ և ապա-կանէ ։ Իսկ Արիստոտել ասէ՛ թէ բնու-թին սնանի ՚ի նմանութե̅ կերակրոյ ։ ապա ուրեմն զզանազան կերակուրս ու-տելն ոչ է՛ ՚ի բնութե̅, այլ Որովայնա-մոլութե̅, և յորժամ այս մեղօք մեռանի ոք, նորա գերեզմանն դժոխքն է՛, որպ̅ թաղեցաւ մեծատունն, ՚յոր մե̅ փրկե-սցէ զմեզ Ք̅ս̅ իւր ամենատես ողոր-մութե̅ն, և արժանիս արասցէ, միշտ փախչել ՚յայս չար ախտէ որովայնամո-լութե̅ և ամենայն մեղաց հեշտութե̅, և տացէ մեզ իւր ս̅բ̅ ժուժկալութին և պահեցողութին ։ զի անբիծ փառօք և պարկեշտութե̅ կերով արժանիք լիցուք յաւիտենական կենացն, և նմա փառք ՚յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

# ԿԷ ԲՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ։

որ է՝

Յօթն եր̄դ գլուխ մեղսապետն ։ Բողջախոհութիւն սահմանի յՐ̄ջաբանից այսպէս ։ Բողջախոհութիւն է՝ անկարգ ցանկութի մարմնաւոր հեշտութեց , կամ փափկութեց ։ է՝ մեղ մահացու ։ Եւ այս անձծից գլխովս սատանայ առաւել պատերազմի , եւ ըմբռնէ զմարդիկ , քան այլովք վերոյ ասացեալ մեղօքն , քան զի մեղք այս ունի զահեցողական բնութի ։ զազիր եւ գարշելի է՝ քան զամենայն մեղս ։ վն̄ս եւ յոյժ ատելի է՝ , եւ հեռանալի ։ քան զի զբազում վնասս բերէ մարդոյն ։ Դ̄· պատճառաւ ցուցանի ։ Նախ ո̄րպ Օգոստինոս ասէ՝ թէ սատանայ նման է՝ հաւորսի , զի ո̄պ հաւորսն խայծ դնէ եւ որոգայթ լարէ , ըմբռնէ զթռչունս , նոյնպէս սատանայ , զբողջախոհութիւն առաւել խայծ դնէ , եւ չար որոգայթ լարէ եւ զբազումս որք թռչին յերկրէս իջուցանէ ՚ի դժոխս ։ ո̄պ ասէ՝ յառակս Է. Դ̄Լ. ԻԳ. հմր. վ̄ս այս ան-

տես այսպէս ։ Ոի զբաղումն տապաստ արկեալ է՛ նորա խոնջոտելով, և անթիւք են սպանեալքն 'ի նմանէ ։ մի՛ թէ ո՛չ են այս մեղացս եկն ջրհեղեղն, և կորոյս համանգամայն զաշխարհս ամենայն, մի՛ թէ, ո՛չ են այս մեղացս եկն հուր 'յերկնից և հրդեհեաց զհինգ քաղաքսն Սոդոմացւոց և Գոմորացւոց ։ ո՛հ թէ որ քան սպանմունթիւք, և զմեծամեծ վնասս եբեր որդւոց Ադամայ մեղքն այս անիծեալ ։ և ատելի ։ ո՛վ իմաստուն քան զՍողոմոն, որ պատրեցաւ յիմարութք 'ի կնոջէն, և անկաւ 'ի կռապաշտութի ։ ո՛վ զօրաւոր քան զՍամսոն, որ կապեցաւ 'ի կնոջէն, և եղաւ 'ի ձեռս թշնամոյն ։ ո՛վ սբ քան զԴաւիթ որ ըմբռնեցաւ 'ի կնոջէն Ուրիայ ։ Այլ մեղքն սատանայի կարթք են, բայց սա ցանցէ՛, և վարմ, ոպ ասէ՛ Ամբակում. Գլ. Ա. համր. ԺԵ. են այնորիկ ախուեաց զձկանց իւր՝ և միշտ կոտորել զազգս ո՛չ խնայեսցէ ։ Երկդ վնաս բղջախոհութե է՛, զի յոյժ զօրաւոր է՛ պոռնկութին, են ըմբռնելոյ, քան զի նմանէ հաստ քանտի, 'յորմէ ո՛չ ոք կարէ փախչիլ, և ոպ խորխորատ խորին է՛, եթէ ո՛ք անկանի 'ի նա, 'յինքնին ո՛չ կարէ ելանել անտի ամենևինբ, ոպ գրեալ է՛ ոգւով սրբով

'յԵկլէ

՚յԵկղեսիաստիկեայ, գլ. Թ. համր. Գ. Մի՛
հայեսցիս ՚ի կին բազմակամ, մի՛ գուցէ
անկանիցիս ՚ի գուբս նորա: զի որպ̄ ան-
կանի որ ՚ի մեծ խորխորատ, կամ ՚ի գուբ,
ոչ կարէ ելանել ՚ի նմանէ հեշտութբ̄,
նոյնպէս որք ըմբռնին ՚ի գեղս կանանց
դժուարին ազատին ՚ի նմանէ, և այսպէս
կորուսանեն զհոգիս իւրեանց, և զար-
քայութին յաւիտենական: որպ̄ պարզա-
պէ՛ս ՚ի սոյն գլխոյ. Զ. համր. նմանապէ՛ս
ասէ՛ Ոգին սբ̄: Մի՛ տացես պոռնկու-
թեց զանձն քո ներ միում ումեք, զի
մի՛ կորուսցես զանձն քո և զժառանգու-
թի: Երրորդ վնաս բղջախոհութեն է՛
զազրութին, քան զի մեղքս այս, քան
զայլ ամենայն մեղք գարշելի է՛ և զազիր:
որպ̄ ասէ՛ Յովէլ. ա. գլ. Ժէ. համր. նե-
խեցան անասունք ՚յաղբս իւրեանց:
՚ի մեկնութի բանիս ասէ՛ սբն Գրիգոր
պոռնիկքն հոտին ՚յաղբս իւրեանց,
յորժամ մեռանին ՚ի հոտս պոռնկութե:
ասէ՛ Սղ̄մս սատակեցան նոքա յականս
դօվրայ, և եղեն որպ̄ զաղբ երկրի: սա-
տակեն նոքա որք ՚ի պոռնկութե են և
լինին որպ̄ զաղբ: մանաւանդ որպ̄ ասէ՛
Ոգին սբ̄ բերանովն Սողոմոնի, ՚յեկղես̄
գլ. Թ. համր. Ժ. Ամենայն կին՝ որ է՛
պոռնկացեալ իբրև զաղբ ներ ձանա-

պարհուիլ կոխան լինել ։ Վա՜յ այսպիսի
դարշութեան , և զազրութեան հեռանալ
պարտ է՛ ամենևին մեք նմա, որ կամի ոչ կո-
խան լինել , և ոչ սատանայել ։ չորրորդ վնաս
բղջախոհութե՛ է՛ ծառայ լինելն. մեղաց ,
զի ամենայն որ գործէ զպոռնկութիւն
ծառայ առնէ զինքն մարմնոյն , և բո-
ղեն ։ և լինի բոլորովին մարմին ։ ասէ՛
Թուլիոս իմաստասէրն , վա՛յ ասեմ, կեն՝
որ այր ոչ ունի , և ոչ ոք ունի իշխա-
նութի՛ ՚ի վ՟ր նորա , որ խրատէ՛ զնա ՚ի
գնալ և ՚ի գալ , ՚ի տալ և ՚յ առնուլ , և
՚յ այլ ամենայն կենցաղավարութիւն իւր՝
զի ազատ լիցի ՚ի մեղաց՝ զայնպիսին ոչ
ասեմ միայն ծառայ, այլ զազիր և գար-
շելի ծառայ , քան զի ոչ ինչ է՛ այլ ա-
նարգ և արհամարհելի քան զնա , որ
յաղթի ՚ի մարմնոյն ։ զի որով իւիք յաղթի-
ցի ոք՝ նորին և ծառայ է՛ ասէ՛ սբ՟ Պե-
տրոս ։ և ոչ ինչ է՛ պատուականագոյն
քան զայն՝ որ յաղթէ ախտից մարմնոյն
և ցանկութեանց ։ Արդ՝ որպէս վերոյ ա-
սացաք սահման բղջախոհութե ։ Ասէ՛
սբ՟ն Գրիգորիոս , բղջախոհութիւն է՛
տռփումն փափկութե անարգ ։ և ս է՛ մեղ
մահացու. և այս մեղքս յոյժ ատելի է՛ ա-
ռաջի Ա՟յ քան զամենայն մեղք ։ քան զի
գրէ սբ՟ն Պետրոս ՚յ երկր՟դ կթղից . բ.

գլ.

Գլ. Թ. համր. գնալէ առ զԱԾ ապաշաւ մր-
կել ՚ի փորձութէ , և զանձնխրատաւս պահել
՚ի տանջանս ՚յաւուրն դատաստանի :
մանաւանդ՝ որք զհետ մարմնոյ պղծա-
լից ցանկութեց իցեն երթեալք : առ-
համարհողք Տէրութեն՝ ծպխրհք յանդը-
գունք չզանգիտեն զփառաւն հայհոյել :
և յայսմանէ յայտ է թէ որ քան ատէ
Տրն զմեղս զայս , քան զի ուր ուրեք ,
եթէ հինքն տրն , և եթէ նոր մք Աշա-
կերտքն խօսին զայսմանէ զազիր ՚յաղ-
տեղութէս , համայնգամայն նորն հետ
սպառնան զպատուհասն և զտանջանսն :
որպէս ՚ի բազում տեղիս ՚յաւետարա-
նին գտանեմ այսպէս , երթալ ՚ի գե-
հեն՝ ՚ի հուրն անշէջ : ուր որդն ոչ
մեռանի՝ և հուրն ոչ շիջանի : քան զի
բովանդակ մարդն ապականի և պղծի
այսու մեղօք , զբովանդակ մարդն ա-
սեմ , զոր ԱԾ ստեղծեալ է՝ միայն վս
իւր : քան զի հաճի տր ՚յորդիս մարդ-
կան եթէ են սբք և անբիծք , և այսպէս
սրբութբ , անբծութբ ապրիցեն : վս զի
այս է՝ կամք Այ սրբութի ձեր , որպէս
պատգամէ՛ս ասէ՝ երանելին Պօղոս : ՚ի
բաց կալ ձեզ ՚ի պոռնկութէ : և յորժամ
ոք զգաստ և զգուշասցի կամս մարմնոյ
իւրոյ կատարէ , և կամ թէ միայն կամք

տայ , և հաւանի , արդարև նոյնժա-
մայն պղծի և ապականի մարմին նորա
և հոգին , որ է՛ գեղեցիկ տաճար Այ :
ըստ յանդիմանէ նոյն մեծ Ոգելից առա-
քելոյն , ա. կորն : գլ. գ. համր. ժզ. Ոչ
գիտէք՝ եթէ տաճար էք Այ , և Ոգի
Այ բնակեալ է՛ ՚ի ձեզ : ընդ նմին և ս
ըստ սպառնայ սաստկապէ՛ս , ասելով :
եթէ ո՛ք զտաճար Այ ապականէ՝ ա-
պականեսցէ զնա Ած , զի տաճար Այ
սուրբ է՛ , որք էք դուք : և ՚ի զ. գլ. ժթ.
համր. զնոյն բանն հաստատէ այսպէս :
եթէ ո՛չ գիտէք՝ զի մարմինք ձեր տա-
ճարքեն Ոգւոյն սրբոյ՝ որ է՛ ՚ի ձեզ՝ զոր
ունիք ՚յ այ , և չէք անձանց ձեր : Քանզի
գնոց գնեցայք փառաւո՛ր արարէք զԱծ
՚ի մարմինս ձեր և ՚յ ոգիս , որ է՛ ՚յԱյ :
և ՚յ երկրորդ կորն . զ, գլ. ժզ. համր. Ապա-
քէն դուք տաճար Այ կենդանւոյ էք :
ապաուրեմն , որ պոռնկի , կամ զոր ինչ
և ընչի կերպիւ ըստ մարմնաւոր հեշտու-
թեց և փափկութեց , մեղս գործէ , կամ
հաւանի կամաւ , զայս մաքուր և սբ տա-
ճարն Այ պղծէ և դիւաց բնակարան
առնէ , քան զի եթէ զինչ և ընչի մար-
մնաւոր մեղքն , որք են հասարակօրէն
